ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Կ., ՂԱԶԱՐՅԱՆ Ա. Փ.,
ՂՈՒԿԱՍՅԱՆ Լ. Հ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

(ԲՈՒՀԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 37.013.42(075.8)
ԳՄԴ 74.6g 73
Հ 422

Հրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը

Հեղինակներ՝

Ն. Կ. Հարությունյան – *Գլուխ առաջին*

Ն. Կ. Հարությունյան, Ա. Փ. Ղազարյան – *Գլուխ երկրորդ*

Լ. Հ. Ղուկասյան – *Գլուխ երրորդ*

Խմբագիր՝

Նազիկ Կարապետի Հարությունյան
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գրախոսներ՝

Ռ. Ա. Մարդոյան
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ի. Կ. Կարապետյան
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Կ., ՂԱԶԱՐՅԱՆ Ա. Փ., ՂՈՒԿԱՍՅԱՆ Լ. Հ.
Հ 422 Սոցիալական մանկավարժություն (բուհական ձեռնարկ)/
Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ.: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 336 էջ:

«Սոցիալական մանկավարժություն» բուհական ձեռնարկի նպատակն է ապագա սոցիալական մանկավարժներին ներկայացնել սոցիալական մանկավարժության հիմնահարցերը և սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները, գործունեության ոլորտները, մեթոդներն ու տեխնոլոգիաները:

«Սոցիալական մանկավարժություն» բուհական ձեռնարկը սոցիալական մանկավարժության վերաբերյալ հայերեն առաջին գիրքն է:

Բուհական ձեռնարկը նախատեսված է բոլոր մանկավարժների, մասնավորապես սոցիալական մանկավարժների, ինչպես նաև ուսանողների համար:

ՀՏԴ 37.013.42(075.8)
ԳՄԴ 74.6g 73

ISBN 978-5-8084-2198-1

© ԵՊՀ հրատ., 2017
© Հեղ. խումբ, 2017

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԵՊՀ մանկավարժության ամբիոնը կրթության ոլորտում մշտապես ներկայանում է նորարարի և նախաձեռնողի իր ինքնատիպ ձեռագրով: Այս առումով ուշագրավ է 2010 թվականին մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ ու ջանքերով բակալավրիատում «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի հիմնումը:

Մանկավարժության ամբիոնի բազմամյա փորձը, վաստակաշատ պրոֆեսորադասախոսական կազմը, հրավիրյալ մասնագետները և երիտասարդ գիտնականների ներուժը շատ լավ հնարավորություն և խոստումնալից հիմքեր էին ստեղծում մի նոր մասնագիտական կրթական ծրագրի ներդրման համար, որը ժամանակի հրամայական էր դարձել հայ հասարակության առջև:

Սոցիալական մանկավարժի մասնագիտության ձևավորումն ու կայացումը պայմանավորված էին պատմամշակութային նախադրյալներով, որոնք ունեին սոցիալ-հոգեբանական, ինչպես նաև ազգագրական առանձնահատկություններ, և որոշվում էին հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով:

Չնայած այս մասնագիտությունը նոր է մեր երկրում, սակայն սոցիալ-մանկավարժական աջակցությունն արմատավորված է հայ հասարակությունում, և հատկապես փոխօգնության պատրաստակամությունը մեզանում նոր երևույթ չէ: Աջակցության կարիք ունեցող երեխաներին օգնությունը հայ հասարակությունում կարգավորված է բարոյական նորմերով և բխում է ազգային արժեքների առանձնահատկություններից: Այդ ավանդույթը չի մարում «օրինակի» ուժով, քանզի ծառայողների կերպարներն ընդօրինակվում են,

ներքնայնացվում, որի արդյունքում տեղի է ունենում նույնականացում, ինչն էլ մեր ազգային ինքնության կարևոր բաղադրիչն է:

Արդի հասարակական ձևափոխումների, սոցիալ-տնտեսական ճգնաժամերի, հետպատերազմական հոգեբանության, բնական աղետի թողած հետևանքների, մշակութային ու ազգային արժեքների պահպանման պայմաններում մեր հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունները վերջին տասնամյակներում առաջ են բերել հրատապ լուծում պահանջող նոր հիմնախնդիր, այն է՝ երեխաների սոցիալականացման համապատասխանեցումը 21-րդ դարի պահանջներին: Այսօր մեծաթիվ են մանկատան երեխաները, և աճում է շեղվող վարք ունեցող երեխաների, անչափահասների շրջանում հանցագործությունների, ալկոհոլի, ծխախոտի նկատմամբ հակում ունեցող պատանիների թիվը: Հենց այս ամենն էլ իր հերթին պատճառ է դառնում ֆիզիկական զարգացման հապաղումների ու արատավոր այլ երևույթների տարածման համար:

Այս բոլորը կազմում էին այն նախադրյալները, որոնք տեսական և գործնական հիմք էին ստեղծում Հայաստանում սոցիալական մանկավարժի մասնագիտության ներմուծման և հետագա կայացման համար: Նախ սոցիալական մանկավարժի մասնագիտության ներմուծումը ՀՀ-ում կարգավորվեց իրավական հիմքերով. ստեղծվեց և կառավարության կողմից հաստատվեց ՀՀ հանրակրթության պետական կրթակարգ, որտեղ ամրագրվեց, որ ՀՀ բոլոր հանրակրթական դպրոցները պետք է ունենան սոցիալական մանկավարժի հաստիք:

Եվս մի կարևոր հանգամանք: Մեր դպրոցներում այսօր ներառական կրթություն է իրականացվում: Սահմանափակ կարողություններով երեխաները ներառվում են հանրակրթական դպրոց, իսկ այդ երեխաները հաղորդակցական խնդիրներ ունեն, որով-

հետև նրանք տարբեր կարիքների տեր են, հետևաբար այստեղ դարձյալ կա սոցիալական մանկավարժի կարիք, որպեսզի նա կարողանա հեշտացնել երեխաների միասնական կրթական գործունեությունը:

Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնում սոցիալական մանկավարժության բակալավրիատի կրթական ծրագրի նպատակն է Հայաստանի հանրակրթական դպրոցների համար պատրաստել սոցիալական մանկավարժներ, որոնք կնպաստեն վերոնշյալ խնդիրների լուծմանը՝ ելնելով իրենց մասնագիտական գործունեության նպատակից, խնդիրներից, գործառույթներից, թիրախային խմբերի առանձնահատկություններից, տեխնոլոգիաներից և այլն:

Սոցիալական մանկավարժի գործունեության նպատակն է երեխաների արդյունավետ սոցիալականացման ու սոցիալական հարմարման համար ստեղծել անվտանգ պայմաններ, երեխայի պահանջմունքների բավարարմամբ սոցիալական, իրավական, հոգեբանական, բժշկական և սոցիալ-մանկավարժական մեխանիզմներով կանխարգելել ու հաղթահարել բացասական երևույթները երեխայի կյանքում, նրա ընտանիքում, դպրոցում, մոտակա միջավայրերում:

Սոցիալական մանկավարժի գործունեության մասնագիտական խնդիրն է օգնել սոցիալականացման և հասարակություն ներառվելու գործընթացում աջակցության կարիք ունեցող երեխաներին:

«Սոցիալական մանկավարժություն» բուհական ձեռնարկի ստեղծումը «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի տրամաբանական շարունակությունն է:

Հայ իրականության մեջ առաջին անգամ է հայերեն լույս տեսնում բուհական ձեռնարկ՝ սոցիալական մանկավարժության վերաբերյալ:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբներին ռուսերեն հրատարակվել են բազմաթիվ գրքեր՝ սոցիալական մանկավարժության պատմության և սոցիալական մանկավարժության հիմունքների վերաբերյալ (Ա. Վ. Մուդրիկ, Մ. Ա. Գալագուզովա, Գ. Ն. Շտինովա, Վ. Դ. Սեմյոնով, Լ. Բ. Մարդախաևա, Յ. Բ. Վասիլկովա, Տ. Ա. Վասիլկովա, Ֆ. Ա. Մուստաևա և ուրիշներ):

«Սոցիալական մանկավարժություն» հայերեն բուհական ձեռնարկի ստեղծման կարևոր գործը հանձն առավ ԵՊՀ մանկավարժության ամբիոնը: «Սոցիալական մանկավարժություն» բուհական ձեռնարկը ներառում է սոցիալական մանկավարժության գրեթե բոլոր հիմնահարցերը. սոցիալական մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում, սոցիալական մանկավարժության օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, հիմնական հասկացությունները, սոցիալական մանկավարժության սկզբունքները, գործառույթները, մեթոդները, սոցիալականացման փուլերը, կենսաբանական և սոցիալական գործոնները, սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները, մեթոդներն ու տեխնոլոգիաները:

«Սոցիալական մանկավարժություն» բուհական ձեռնարկն ունի հետաքրքիր և կուռ կառուցվածք. յուրաքանչյուր ենթագլխի նյութի վերջում տրված են հարցեր՝ նյութի բովանդակության ընկալումը ստուգելու համար, դուրս են բերված նոր ու դժվարընկալելի և օտարալեզու բառերը, առաջարկված է վարժությունների մի մեծ համակարգ՝ ներառելով ինքնուրույն փոքրիկ հետազոտական աշխատանքներ, առաջադրանքներ, տարբեր հիմնախնդիրների վերա-

բերյալ լսարանային քննարկումներ, խնդիր-իրավիճակներ, սոցիոլոգիական փոքր հարցումներ և այլն: Բուհական ձեռնարկի վերջում զետեղված է բառարան՝ ըստ գլուխների:

Ձեռնարկն ամփոփվում է մասնագիտական ժամանակակից գրականությամբ:

Հարգելի՛ գործընկերներ և սիրելի՛ ուսանողներ, «Սոցիալական մանկավարժություն» բուհական ձեռնարկը գրված է Ձեզ համար՝ որպես մասնագիտական մեծ աջակցություն ու աղբյուր՝ սոցիալ-մանկավարժական արդյունավետ գործունեություն իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1.1. Սոցիալական մանկավարժությունը որպես գիտություն. օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը

Գիտությունը մարդկային գործունեության ոլորտ է, որն ուղղված է գործունեության վերաբերյալ նոր, օբյեկտիվ գիտելիքների և պատկերացումների ձեռքբերմանն ու համակարգմանը: Այսպես՝ փիլիսոփայությունը գիտություն է բնության, հասարակության և մտածողության զարգացման համընդհանուր օրենքների մասին, սոցիոլոգիան գիտություն է հասարակության՝ ինչպես մի ամբողջական համակարգի մասին, հոգեբանությունը գիտություն է մարդու հոգեկանի զարգացման և օրինաչափությունների մասին, մանկավարժությունը գիտություն է աճող սերնդի կրթության, դաստիարակության և զարգացման մասին[1]:

Մանկավարժությունը, որը որպես գիտություն ձևավորվել է 17-րդ դարում (հիմնադիր՝ Յան Ամոս Կոմենսկի), ունի իր գիտությունների համակարգը՝ գիտաճյուղերը. ընդհանուր մանկավարժություն, տարիքային մանկավարժություն, մանկավարժության պատմություն, ժողովրդական մանկավարժություն, շտկողական մանկավարժություն, մասնավոր մեթոդիկաներ, համեմատական մանկավարժություն, կրթության կառավարում, նախադպրոցական մանկավարժություն, դպրոցի մանկավարժություն, ընտանիքի մանկավարժություն, մանկավարժական անտրոպոլոգիա, մանկավարժական աքսեոլոգիա, մանկավարժական վալեոլոգիա, մանկավարժա-

[1] **Галагузова М. А. и др.,** Социальная педагогика, М., 2000, стр. 52.

կան ախտորոշում, մանկավարժական ֆուտուրոլոգիա, արվեստի մանկավարժություն, սպորտի մանկավարժություն, համագործակցության մանկավարժություն, երջանկության մանկավարժություն: Սրանց շարքերն է լրացնում սոցիալական մանկավարժությունը: Այն փաստը, որ սոցիալական մանկավարժությունն առանձնացել է մանկավարժությունից, նշանակում է, որ նրա տեսադաշտում գտնվում են նույն գործընթացներն ու երևույթները, որոնք ուսումնասիրում է մանկավարժությունը, սակայն դրանք դիտվում են որոշակի, առանձնահատուկ մեկնակետով:

Ակնհայտ է, որ մանկավարժական գիտելիքների նոր ոլորտի առանձնահատկությունն արտացոլված է «սոցիալական» բառում: Նախքան մեկնաբանելը, թե ինչ է ուսումնասիրում սոցիալական մանկավարժությունը՝ տալով մի քանի գիտնականների տարբեր մեկնություններն ու սահմանումները, ներկայացնենք **«սոցիալական»** հասկացության բացատրությունը:

«Սոցիալական» հասկացությունն ունի լատինական ծագում՝ «socialis», որը նշանակում է «ընդհանուր», «հասարակական»:

«Սոցիալական» հասկացության տակ միավորվում է այն ամենը, ինչը կապված է մարդկանց համատեղ կյանքի հետ՝ նրանց համագործակցությանն ու հաղորդակցմանը տարբեր ձևերով հանդերձ: Եվ եթե մանկավարժությունը գիտություն է մարդու (աճող սերնդի) դաստիարակության, կրթության և զարգացման մասին, ապա սոցիալական մանկավարժությունը մարդու դաստիարակության և կրթության գործընթացներում առանձնացնում է այն հայեցակետերը, որոնք կապված են երեխային հասարակությունում համատեղ կյանքին ներառելու հետ, մեկ խոսքով՝ երեխայի ներառումը (ինտեգրումը) հասարակություն: Այն գործընթացը, որի ընթացքում երեխան ձեռք է բերում որոշակի սոցիալական փորձ (գի-

տելիքներ, արժեքներ, վարքագծային նորմեր, կանոններ), կոչվում է ***սոցիալականացում:***

Սոցիալականացումը երկար և շատ բարդ գործընթաց է: Իր կառուցվածքով հասարակությունը տարբեր սոցիալական ինստիտուտների բազմակերպություն է, որոնք միմյանց հետ փոխկապվածության և փոխհամաձայնության մեջ են: Այս սոցիալական ինստիտուտները դիտվում են որպես մարդու հասարակական կյանքի կազմակերպման և կարգավորման պատմականորեն ձևավորված կառույցներ: Եվ հենց այս կառույցներում է երեխան ծանոթանում հասարակական նորմերին ու վարքագծային կանոններին և յուրացնում դրանք: Այստեղ հարկ է նշել, որ տարբեր սոցիալական ինստիտուտների դերը երեխայի սոցիալականացման գործընթացում նույնը չէ: Դրանցից մի քանիսն ունի տարերային ներգործություն երեխայի վրա նրա զարգացման և հասարակական էակ դառնալու գործընթացում, մյուսներն իրականացնում են նպատակասլաց ներգործություն նրա անձի ձևավորման վրա: Այսպիսի սոցիալական ինստիտուտներ են ընտանիքը, կրթությունը, մշակույթը և կրոնը[2]:

Ընտանիքը դիտվում է երեխայի սոցիալականացման գլխավոր սոցիալական ինստիտուտը, որտեղ երեխան յուրացնում է սոցիալական հիմնական գիտելիքները, ձեռք է բերում բարոյահոգեբանական կարողություններ և հմտություններ, ընդունում է որոշակի արժեքներ և գաղափարներ, որոնք անհրաժեշտ են նրան այդ հասարակությունում ապրելու համար:

Երեխայի արդյունավետ սոցիալականացման համար կարևոր նշանակություն ունի նաև կրթությունը: Կրթության միջոցով նույնպես երեխան շփվում և հաղորդակցվում է այն արժեքների հետ,

---

[2] **Галагузова М. А. и др.**, Социальная педагогика, М., 2000, стр. 54.

որոնք տիրում են այդ հասարակությունում: Կրթական գործընթացում ձեռք բերելով գիտելիքներ՝ նա ոչ միայն զարգանում է, այլ նաև հարմարվում կյանքին այդ հասարակությունում:

Մշակույթն այն սոցիալական ինստիտուտն է, որն ընդգրկում է մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքները: Որպես մշակութային ազգ՝ մենք՝ հայերս, ստեղծել ենք մեր ազգային արժեքները, որոնցից շատերը դուրս են եկել ազգային շրջանակից, ճանաչվել և դարձել են համամարդկային արժեքներ (գիտություն, երաժշտություն, գրականություն, նկարչություն):

Ազգային նկարագիրը պահպանելու համար յուրաքանչյուր երեխա նախ և առաջ պետք է ճանաչի իր ազգային, մշակութային արժեքները և միաժամանակ զարգացած մարդ դառնալու համար հաղորդակից դառնա համամարդկային արժեքներին, որ ստեղծել է մարդկությունը:

Կրոնը՝ որպես սոցիալական ինստիտուտ, բարդ սոցիալական երևույթ է, միաժամանակ յուրահատուկ պատկերացումների, զգացմունքների, պաշտամունքային արարողությունների, կազմակերպությունների և հավատացյալների տարբեր միությունների մի ամբողջական համակարգ: Հավերժական բարոյական արժեքները (սերը և հոգատարությունը մերձավորների նկատմամբ, ազնվությունը, համբերատարությունը և այլն), որ քարոզում է եկեղեցին, կրոնական տոներն ու ավանդույթները, կրոնական երաժշտությունը և այլն, կարող են ունենալ մեծ ազդեցություն երեխայի կողմից հասարակության բարոյական նորմերի և վարքագծային կանոնների յուրացման գործում: Հետևաբար կրոնը կարող է խաղալ մեծ դեր երեխայի սոցիալականացման գործընթացում[3]:

---

[3] **Галагузова М. А. и др.,** Социальная педагогика, М., 2000, стр. 54-55.



Գծապատկեր 1. Երեխայի մուտքը հասարակություն սոցիալական ինստիտուտներով՝ ըստ Մ. Գալագուզովայի

Ներկա ժամանակաշրջանում շատ է սրվել մարդ-հասարակություն հակամարտությունը, անձ-միջավայր համագործակցությունը: Տեղի է ունենում երեխայի ակտիվ սոցիալականացումն ընտանեկան, քաղաքացիական, կրոնական և իրավական դաստիարակության ոլորտում[4]:

Միջավայրի այսպիսի նպատակասլաց ներգործությունն էլ մարդու վրա կոչվում է սոցիալական դաստիարակություն: Սոցիալական դաստիարակություն ասելով՝ հասկանում ենք այն նպատակասլաց գործընթացը, որի ընթացքում տեղի է ունենում երեխայի անձի սոցիալական կարևոր հատկությունների ձևավորումը, որոնք նրան անհրաժեշտ են արդյունավետ սոցիալականացման

[4] **Мудрик А. В.,** Социализация, «Магистр.», 1993, N 3.

համար: Սոցիալական դաստիարակությունը բազմամակարդակ գործընթաց է, գիտելիքների, վարքագծային նորմերի, հասարակությունում միջանձնային փոխհարաբերությունների իմացություն: Եվ սրա արդյունքում անձը դառնում է հասարակության լիիրավ անդամ: Սոցիալական մանկավարժությունը դաստիարակության գործընթացը, անձի սոցիոլոգիան դիտարկում է տեսական և կիրառական տեսանկյուններից: Այն ուսումնասիրում է մարդու վարքագծի համապատասխանությունը միջավայրին և վարքագծային շեղումները:

Ներկայացնենք սոցիալական մանկավարժության ժամանակակից մեկնաբանությունները:

Յ. Վ. ՎԱՍԻԼԿՈՎԱ «Սոցիալական մանկավարժությունը առանձին մարդու կամ մարդկանց խմբերի ուսուցման և դաստիարակության տեսությունն ու պրակտիկան է, նրանց սոցիալականացումը. մարդիկ, որոնք միավորվել են սոցիալական խնդիրներով և կարիք ունեն վերականգման կամ բուժման»:

Ա. Վ. ՄՈՒԴՐԻԿ «Սոցիալական մանկավարժությունը մանկավարժության այն ճյուղն է, որը դիտարկում է տարիքային բոլոր խմբերի և սոցիալական շերտերի մարդկանց սոցիալական դաստիարակությունը դրա համար ստեղծված տարբեր կառույցներում»:

Վ. Դ. ՍԵՄՅՈՆՈՎ «Սոցիալական մանկավարժությունը կամ միջավայրի մանկավարժությունը մի գիտաճյուղ է՝ մարդկանց վրա սոցիալական միջավայրի դաստիարակչական ներգործությունների մասին»:

Գ. Ն. ՇՏԻՆՈՎԱ, Մ. Ա. ԳԱԼԱԳՈՒԶՈՎԱ «Սոցիալական մանկավարժությունը մանկավարժական գիտելիքների մի բնագավառ է, որն ուսումնասիրում է նպատակասլացորեն կազմակերպված մանկավարժական ներգործության (սոցիալական դաստիարակություն, սոցիալական ուսուցում, սոցիալ-մանկավարժական օգնություն) երևույթն ու օրինաչափությունները, որոնք ազդում են մարդու սոցիալական զարգացման, կայացման ու ձևավորման վրա՝ անկախ նրանից, թե այն տեղի է ունենում «նորմերի» կամ «նորմերից շեղման» պայմաններում»:

Գ. ՆՈԼ և Գ. ԲՈՅՄԵՐ «Սոցիալական մանկավարժության ուսումնասիրության առարկան անտուն, թափառաշրջիկ երեխաներին տրված սոցիալական օգնությունն է և անչափահասների իրավախախտումների կանխարգելումը»:

Գծապատկեր 2. Սոցիալական մանկավարժության սահմանումները

Ըստ Յ. Վ. Վասիլկովայի՝ «սոցիալական մանկավարժությունն առանձին մարդու կամ մարդկանց խմբերի ուսուցման և դաստիարակության տեսությունն ու պրակտիկան է, նրանց սոցիալականացումը. մարդիկ, որոնք միավորվել են սոցիալական խնդիրներով և կարիք ունեն վերականգնման կամ բուժման»[5]:

Ա. Վ. Մուդրիկի կարծիքով՝ «սոցիալական մանկավարժությունը մանկավարժության այն ճյուղն է, որը դիտարկում է տարիքային բոլոր խմբերի և սոցիալական շերտերի մարդկանց սոցիալական դաստիարակությունը դրա համար ստեղծված տարբեր կառույցներում»[6]:

---

[5] **Василькова Ю. В., Василькова Т. А.**, Социальная педагогика, М., 1999, стр. 14.
[6] **Мудрик А. В.,** Введение в социальную педагогику, М., 1997, стр. 17.

Ըստ Վ. Դ. Սեմյոնովի՝ «սոցիալական մանկավարժությունը կամ միջավայրի մանկավարժությունը մի գիտաճյուղ է, որը ներառում է տարբեր գիտությունների գիտական ձեռքբերումները և դրանք կիրառում է հասարակական դաստիարակության պրակտիկայում»[7]:

Գ. Ն. Շտինովան և Մ. Ա. Գալագուզովան գրում են. «Սոցիալական մանկավարժությունը մանկավարժական գիտելիքների մի բնագավառ է, որն ուսումնասիրում է նպատակասլացորեն կազմակերպված մանկավարժական ներգործության (սոցիալական դաստիարակություն, սոցիալական ուսուցում, սոցիալ-մանկավարժական օգնություն և այլն) երևույթն ու օրինաչափությունները, որոնք ազդում են մարդու սոցիալական զարգացման, կայացման և ձևավորման վրա՝ անկախ նրանից, թե այն տեղի է ունենում «նորմերի» կամ «նորմերից շեղման» պայմաններում»[8]:

Ըստ Ա. Բ. Բասովի՝ «սոցիալական մանկավարժությունը մի գիտություն է, որն ուսումնասիրում է միջավայրի սոցիալական գործոնների ազդեցությունը աճող սերնդի սոցիալականացման վրա՝ մշակելով ու իրականացնելով միջոցառումների արդյունավետ մի համակարգ՝ ուղղված անձի, խմբի դաստիարակության արդյունավետացմանը, հաշվի առնելով սոցիալական միջավայրի կոնկրետ պայմանները»[9]:

Խ. Միսկեսի կարծիքով՝ «սոցիալական մանկավարժությունը մի գիտություն է, որը բացահայտում է ընդհանուր մանկավարժության սոցիալական գործառույթը և ուսումնասիրում է դաստիարակ-

---

[7] **Семенов В. Д.,** Взаимодействие школы и социальной среды, М., 1986, стр. 16.
[8] **Штинова Г. Н., Галагузова М. А.,** Социальная педагогика, М., 2008, стр. 141.
[9] **Мустаева Ф. А.,** Основы социальной педагогики, М., 2001, стр. 31.

չական գործընթացը տարիքային բոլոր խմբերում»[10]:

Սոցիալական մանկավարժության հասարակական իմաստը այն մարդկանց օգնելն է, որոնք այս կամ այն խնդիրն ունեն, ընտանիքին և հատկապես երեխային օգնելը՝ գտնելու իր ուղին կյանքում, ինքնահաստատվելու, զարգանալու իր սեփական ունակությունների և նախադրյալների հիման վրա: Սոցիալական մանկավարժության հասարակական իմաստն է օգնել մարդուն իր ձգտումներում, որպեսզի նա կարողանա դուրս գալ բարոյական հարաբերությունների ճանապարհ:

Սոցիալական մանկավարժության հիմքում ընկած է անձի դաստիարակությունը հասարակությունում և հասարակության համար: Հետևաբար սոցիալական դաստիարակության խնդիրն է ձևավորել քաղաքացիական անձ՝ ինքնուրույն, ստեղծագործող, մարդկանց հետ դրական հարաբերությունների ունակ, պատասխանատու՝ իր առողջության և ժամանակի համար:

Ժամանակակից սոցիալական դաստիարակության հումանիզմն այն է, որ երեխայի (անչափահասի) և դաստիարակի հարաբերությունները պետք է կառուցել ոչ թե ճնշման, այլ երկխոսության և փոխհասկացողության հիման վրա, ոչ թե բախումների (կոնֆլիկտների), այլ փոխապրումակցման և իրար ընդունելու հիման վրա:

Իսկ այժմ անդրադառնանք սոցիալական մանկավարժության օբյեկտին և առարկային:

---

[10] **Мустаева Ф. А.,** Основы социальной педагогики, М., 2001, стр. 31.



Գծապատկեր 3. Սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան

Սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտը մարդն է (երեխան), իսկ նրա ուսումնասիրության առարկան՝ անձի սոցիալական դաստիարակությունը, սոցիալականացման օրինաչափությունները:

Սոցիալական մանկավարժության՝ որպես մեթոդաբանական հիմք են հանդես գալիս դաստիարակության փիլիսոփայությունը, փիլիսոփայական անտրոպոլոգիան և մարդաբանության ժամանակակից տվյալները:

Մինչև սոցիալական մանկավարժության հիմնական հասկացություններին, սկզբունքներին, գործառույթներին և մեթոդներին անդրադառնալը համառոտ ակնարկով ներկայացնենք «սոցիալական մանկավարժություն» եզրույթի զարգացման, առաջին անգամ

գործածության և հետո սոցիալական մանկավարժության՝ որպես գիտության ձևավորման կարճ պատմությունը:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Համագործակցություն, վարքագծային նորմ, սոցիալական փորձ, սոցիալական երևույթ:

ՀԱՐՑԵՐ

1. Մանկավարժությունը գիտություն է ինչի՞ մասին (ի՞նչ է ուսումնասիրում մանկավարժությունը):
2. Ե՞րբ է ձևավորվել մանկավարժությունը որպես ինքնուրույն գիտություն, և ո՞վ է հիմնադիրը:
3. Որո՞նք են մանկավարժության գիտաճյուղերը:
4. Ի՞նչ է ուսումնասիրում սոցիալական մանկավարժությունը:
5. Ի՞նչ է սոցիալականացումը:
6. Ի՞նչ են սոցիալական ինստիտուտները:
7. Ի՞նչ է սոցիալական դաստիարակությունը:
8. Ո՞րն է սոցիալական մանկավարժության հասարակական իմաստը:
9. Ո՞րն է ժամանակակից սոցիալական դաստիարակության հումանիզմը:
10. Ի՞նչն է սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտը:
11. Ի՞նչն է սոցիալական մանկավարժության ուսումնասիրության առարկան:
12. Որո՞նք են սոցիալական մանկավարժության մեթոդաբանական հիմքերը:
13. Ինչպիսի՞ ժամանակակից սահմանումներ գիտեք սոցիալական մանկավարժության մասին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լսարանում կազմակերպե՛ք քննարկում՝ «Մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում» թեմայով՝ ներկայացնելով և համեմատելով, թե որ գիտություններն են ուղղակիորեն ուսումնասիրում մարդուն, և որոնք՝ անուղղակիորեն:

Լսարանը բաժանե՛ք փոքր խմբերի՝ ապահովելու համար բոլորի մասնակցությունը:

1.2. Սոցիալական մանկավարժության պատմության համառոտ ակնարկ

«Սոցիալական մանկավարժություն» եզրույթն առաջին անգամ գործածության մեջ է դրել **Կ. Մագերը** 1844 թվականին, և հետո այն կիրառվել և տարածվել է Ա. Դիստերվեգի կողմից:

«Սոցիալական մանկավարժություն» հասկացության ի հայտ գալու պահից մինչև մեր օրերը գերմանական գիտամանկավարժական գրականության մեջ պահպանված են նրա երկու տարբեր մեկնաբանությունները, որոնք ներկայացնում են տարբեր մոտեցումներ այս ճյուղի զարգացման հարցում:

Ըստ **առաջին** մեկնաբանության (Կ. Մագեր)՝ սոցիալական մանկավարժությունը դաստիարակության մեջ հատկապես առանձնացնում է սոցիալական կողմը:

Երկրորդ մեկնաբանության համաձայն (Ա. Դիստերվեգ)՝ սոցիալական մանկավարժությունը հանդես է գալիս որպես մանկավարժական օգնություն որոշակի սոցիալական պայմաններում և իրավիճակներում:



Գծապատկեր 4. Սոցիալական մանկավարժության մեկնաբանություններն ըստ Կ. Մագերի և Ա. Դիստերվեգի

Այս երկու մոտեցումներն ունեն որոշ նմանություններ, սակայն միաժամանակ ունեն նաև էական տարբերություններ:

Այսպես՝ առաջին դիտարկմամբ խոսքը դաստիարակության սոցիալական կողմին է վերաբերում, որն ընդգրկում է բոլոր մարդկանց և առաջին հերթին երեխաներին, որոնց էլ հենց ուղղված է դաստիարակչական ներգործությունը:

Երկրորդ մոտեցմամբ խոսքը վերաբերում է միայն այն մարդկանց սոցիալական զարգացման մանկավարժական կողմին, որոնք ունեն ինչ-որ հատուկ խնդիրներ: Հետևաբար եզրակացնենք, որ այն գործնական խնդիրները, որոնք ընկած են այս երկու մոտեցումներում, լիովին տարբեր են:

Կ. Մագերի հետևորդները եղան Պաուլ Նատորպը (1920 թ.), Ե. Բորնեմանը, Ֆ. Շլիպերը (1960 թ.), Դ. Պեգելերը (1980 թ.) և ուրիշներ:

Այս ուղղության ներկայացուցիչները սոցիալական մանկավարժության գիտաճյուղում ուսումնասիրում են մարդու դաստիարակության նախադրյալները, մեթոդներն ու միջոցները հասարակությունում, հասարակության համար և հասարակության միջոցով: Այս ուղղության առավել փայլուն ներկայացուցիչը և հետագայում սոցիալական մանկավարժության հիմնադիրը Պաուլ Նատորպն է (1854-1924), որը սոցիալական մանկավարժությունը դիտարկում էր որպես ընդհանուր մանկավարժության մաս:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ



ՊԱՈՒԼ ՆԱՏՈՐՊ
(ԳԵՐՄԱՆԱՑԻ ՓԻԼԻՍՈՓԱ , ՄԱՆԿԱՎԱՐԺ)
(1854 – 1924)

Ուսումնասիրելով մարդկային գոյության հիմնական գործառույթները՝ Պ. Նատորպը տվեց սոցիալական մանկավարժության երեք հիմնական գործառույթները: Առաջին գործառույթը կապված է երեխայի սեռական կյանքի հետ և բացահայտվում է նրա մեջ ընտանեկան շրջանակում ու մոտակա շրջապատի հետ հաղորդակցման ժամանակ:

Երկրորդը կապված է կամքի հետ, որը ձևավորվում է դպրոցում՝ գիտելիքների փոխանցման գործընթացում, որի ժամանակ երեխայի մոտ զարգանում են զգայական, սոցիալական և շարժողական կարողություններ:

Երրորդը կապված է մտքի հետ, որը բացվում է հանրության մեջ հաղորդակցմամբ:

Պ. Նատորպը սոցիալական մանկավարժությունը դիտում էր բոլոր երիտասարդ մարդկանց մանկավարժություն, որի խնդիրն է երիտասարդության մեջ դաստիարակել համախմբվածություն և հասարակականություն: Պ. Նատորպի մեծ վաստակն այն էր, որ նա լուսավորեց սոցիալ-հոգեբանական խնդիրների ամբողջական տեսադաշտը, որոնք մանկավարժությունը ստիպված եղավ ընդունել որպես իր թեմա:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ՝
Պ. ՆԱՏՈՐՊԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

- Սոցիալական մանկավարժությունը մարդու սոցիալական դաստիարակության վերաբերյալ գիտելիքների մի բնագավառ է, որը տեղի է ունենում մարդու ողջ կյանքի ընթացքում:
- Սոցիալական մանկավարժության խնդիրն է երիտասարդության մեջ դաստիարակել համախմբվածություն և հասարակականություն:
- Մարդը մարդ է դառնում միայն մարդկային հասարակայնության-մարդկային շփման շնորհիվ:

Գծապատկեր 5. Սոցիալական մանկավարժությունը՝
Պ. Նատորպի մեկնաբանությամբ

Զարգացնելով Պ. Նատորպի գաղափարները՝ այս ուղղության ներկայացուցիչները՝ Ե. Բորնեմանը, Ֆ. Շլիպերը, Դ. Պեգելերը և ուրիշներ, սոցիալական մանկավարժությունը դիտարկել են որպես ինտեգրատիվ գիտություն:

Երկրորդ ուղղության գաղափարներն արտահայտվել են Ա. Դիստերվեգի (19-րդ դարի 40-50 թթ.), Գ. Նոլի, Գ. Բոյմերի (20-րդ դար 20-30 թթ.), Կ. Մոլենհաուերի (1950-ական թթ.) և ուրիշների աշխատություններում: Նրանք փորձում են տալ իրենց ժամանակի սոցիալական այն հարցերի պատասխանները, որոնց թվում են բանվոր դասակարգի սոցիալական անպաշտպանվածությունը, ժողովրդի կրթությունը, ամենաթողությունը և այլն:

1960-ական թվականներին այս ուղղությունը վերջնականապես ամրապնդեց իր դիրքերը որպես տեսական մտածելակերպի և սոցիալական դաստիարակության հիմնավորման մի բնագավառ, որը հասկացվում էր որպես արտադպրոցական աշխատանք բնակության վայրում, օգնություն օրինախախտ երեխաներին, դաստիարակչական աշխատանք երեխայի ընտանիքում, գիշերօթիկ դպրոցներում, սահմանափակ կարողություններով երեխաների դպրոցում և այլ կառույցներում:

1.2.1. Սոցիալական մանկավարժության ձևավորումը Ռուսաստանում

Իսկ ինչպիսի՞ն էր սոցիալական մանկավարժության ձևավորման ընթացքը Ռուսաստանում: Սոցիալական մանկավարժության արմատները և նախադրյալները կարելի է գտնել այնպիսի դասական մանկավարժների աշխատություններում և պրակտիկ գործու-

նեության մեջ, ինչպիսիք են՝ Կ. Դ. Ուշինսկին, Պ.Ֆ. Լեսգաֆտը, Լ.Ն. Տոլստոյը, Վ. Պ. Վախտերովը, Պ. Ֆ. Կապտերևը:

Կ. Դ. Ուշինսկին գտնում էր, որ դաստիարակության և զարգացման համար անհրաժեշտ է իմանալ մարդուն այնպիսին, ինչպիսին նա կա իրականության մեջ՝ իր բոլոր թուլություններով և վեհություններով, պետք է ճանաչել մարդուն ընտանիքում, ժողովրդի մեջ, մարդկության մեջ... բոլոր տարիքներում...:

Այլ հայտնի մանկավարժներ և հոգեբաններ նույնպես կարևորեցին միջավայրի դերը երեխայի զարգացման գործում և իրենց գործերով մեծ ներդրում բերեցին սոցիալական մանկավարժության զարգացմանը Ռուսաստանում: Նրանց թվում են՝ Ա. Ֆ. Լազուրսկին, Ա. Ս. Մակարենկոն, Ս. Տ. Շացկին, Վ. Ն. Սորոկա - Ռոսինսկին, Պ. Ժ. Բլոնսկին, Լ. Ս. Վիգոտսկին, Ա. Բ. Զալկինդը, Մ. Ս. Իորդանսկին, Ա. Պ. Պինկևիչը, Վ. Ն. Շուլգինը, Վ. Գ. Բոչարովան, Մ. Վ. Կրուպենինան և ուրիշներ:

Մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում միջավայրի մեծ դերակատարությունը կարևորել են նաև 19-րդ դարի հայ անվանի մանկավարժներն իրենց աշխատություններում: Կարևորելով ընտանիքի, դպրոցական կոլեկտիվի և այլ միկրոմիջավայրերի անմիջական ներգործությունը երեխայի սոցիալականացման գործընթացում՝ 19-րդ դարի այնպիսի տաղանդավոր հայ մանկավարժներ, ինչպիսիք են՝ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Ա. Բահաթրյանը, Ն. Զորայանը, Գ. Էդիյանը և ուրիշներ, գտնում էին, որ երեխան հասարակական էակ է դառնում՝ միայն իր նմանների հետ շփվելով ու հաղորդակցվելով, որ այդ միջավայրն էլ իր անմիջական ներգործությունն է ունենում երեխայի անձի ձևավորման գործում:

Սոցիալական մանկավարժությունն իր զարգացումը ստացավ նաև 20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբին: Դրանում իրենց

ներդրումը բերեցին և շարունակում են այսօր էլ բերել Վ. Դ. Սեմյոնովը, Ա. Վ. Մուդրիկը, Վ. Ի. Զագվյազինսկին, Յ. Վ. Վասիլկովան, Տ. Ա. Վասիլկովան, Մ. Ա. Գալագուզովան, Յ. Ն. Գալագուզովան, Գ. Ն. Շտինովան, Ֆ. Ա. Մուստայեվան, Գ. Ն. Ֆիլոնովը, Վ. Ա. Ֆոկինը, Լ. Վ. Սարդախայևը, Ե. Ռ. Սմիրնովը, Վ. Ն. Յարսկայան և ուրիշներ:

Այսօր ժամանակակից հայ մանկավարժ գիտնականներն իրենց հոդվածներում առավել հաճախակի են անդրադառնում սոցիալական մանկավարժության բնագավառում արծարծվող բազմաթիվ կարևոր հարցերին, քննարկում են դրանք տարբեր տեսանկյուններից և արտահայտում իրենց վերաբերմունքը դրանց նկատմամբ: Հայաստանում մանկավարժության բնագավառում ներկայումս նկատվում է կտրուկ շրջադարձ դեպի սոցիալական մանկավարժություն:

Սոցիալական մանկավարժության բնագավառում իրենց արդյունավետ գործունեությունն են իրականացնում սույն դասագրքի հեղինակները՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արևիկ Ղազարյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսիկ Ղուկասյանը: Նրանք մտահոգ են սոցիալական մանկավարժների որակյալ մասնագիտական կրթության ապահովման, տարբեր ոլորտներում մասնագիտության ներդրման խնդիրներով: Արժեքավոր են նրանց տասնյակից ավելի հոդվածները՝ ոչ լիակազմ ընտանիքների հիմնախնդիրների, երեխայի սոցիալականացման, սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտի և առարկայի, սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտների, մեթոդիկայի և տեխնոլոգիաների վերաբերյալ:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Մանկավարժական օգնություն, ասպեկտ, հասարակականություն, ինտեգրատիվ գիտություն:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ւմ կողմից է առաջին անգամ գործածվել «սոցիալական մանկավարժություն» եզրույթը:

2. Ինչպիսի՞ մեկնաբանություններ են մինչ օրս պահպանված «սոցիալական մանկավարժություն» հասկացության վերաբերյալ գերմանական գիտամանկավարժական գրականության մեջ:

3. Ո՞վ է սոցիալական մանկավարժության հիմնադիրը:

4. Ինչպիսի՞ն է Ուշինսկու մեկնակերպը սոցիալական մանկավարժության վերաբերյալ ռուսական իրականության մեջ:

5. Ովքե՞ր մեծ ներդրում ունեցան Ռուսաստանում սոցիալական մանկավարժության զարգացման գործում 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին:

6. Ինչպիսի՞ն են 19-րդ դարի հայ մանկավարժների տեսակետները մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում միջավայրի մեծ դերակատարության վերաբերյալ:

7. Ինչպիսի՞ն է սոցիալական մանկավարժության դրվածքը Հայաստանում 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին:

ՊԱՏՐԱՍՏԵ՛Ք ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

Ուսումնասիրե՛ք և պատրաստե՛ք զեկուցումներ սոցիալական մանկավարժության ոլորտում արևմտյան, ռուս և հայ մանկավարժ-երախտավորների գործունեության և ներդրումների մասին:

1.3. Սոցիալական մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում. կապն այլ գիտությունների հետ

Քանի որ սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտը մարդն է, նա լայնորեն կիրառում է մարդուն ուսումնասիրող այլ գիտությունների ձեռքբերումները մարդու մասին: Սոցիալական մանկավարժությունը սերտորեն կապված է հետևյալ գիտությունների հետ. փիլիսոփայություն, հոգեբանություն, սոցիոլոգիա, ֆիզիոլոգիա, կենսաբանություն, սոցիալական աշխատանք, էթիկա, մարդաբանություն, քաղաքագիտություն, բժշկագիտություն, ժողովրդագրություն և այլն:



Գծապատկեր 6. Սոցիալական մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում. կապն այլ գիտությունների հետ

Փիլիսոփայություն: Փիլիսոփայությունը հասարակական բոլոր գիտությունների մեթոդաբանական հիմքն է: Փիլիսոփայությու-

նը մշակում է ինչպես գիտական ճանաչողության ընդհանուր սկզբունքների և միջոցների համակարգ, այնպես էլ կյանքի և այդ կյանքում մարդու տեղի վերաբերյալ հայացքների ընդհանրական համակարգ:

Հոգեբանություն: Հոգեբանությունը գիտություն է հոգեկան փաստերի, օրինաչափությունների և մեխանիզմների մասին, որոնք որոշում են մարդու կողմից իրականության ըմբռնումը և իր վարքի կարգավորումը: Հոգեբանությունը հետազոտում է հոգեկան տարբեր որակներ (մտածողություն, հիշողություն, երևակայություն, զգացմունքներ, կամք և այլ), որոնք ձևավորվում են մարդու զարգացման, դաստիարակության և միջավայրի հետ հարակցման գործընթացում:

Հոգեբանությունը մանկավարժությանը զինում է մարդու անձի ձևավորման ներքին գործընթացների շատ մեխանիզմների ու պայմանների մասին գիտության կողմից արդեն ճանաչված գիտելիքներով:

Սոցիոլոգիա: Սոցիոլոգիան հետազոտում է միջավայրի ազդեցությունը մարդու և մարդկանց միջև գոյություն ունեցող հարաբերությունների վրա: Այն մտահոգված է կրթության պլանավորմամբ, բնակչության շերտերի և այս կամ այն խմբերի զարգացման հիմնական միտումների բացահայտմամբ, նաև սոցիալական տարբեր ինստիտուտներում երեխայի սոցիալականացման ու դաստիարակության օրինաչափությունների վերհանմամբ:

Կենսաբանությունը (բիոլոգիա) կենդանի բնության մասին գիտությունների ամբողջություն է, որն ուսումնասիրում է կենդանի էակների կառուցվածքն ու գործառույթը, տարածվածությունը, աճը, ծագումն ու էվոլյուցիան, ինչպես նաև կապը միմյանց և անկենդան բնության հետ:

Ֆիզիոլոգիա: Ֆիզիոլոգիան դիտվում է ինչպես մանկավարժության, այնպես էլ հոգեբանության բնագիտական հիմքը. տվյալներ՝ բարձրագույն նյարդային համակարգի տիպաբանական առանձնահատկությունների, առաջին և երկրորդ ազդարարային համակարգերի, զգայարանների, հենաշարժական ապարատի, սրտանոթային և շնչառական համակարգերի զարգացման և գործողության մասին:

Էթիկա: Էթիկան զբաղվում է բարոյականության մշակմամբ, կապված է բարոյական դաստիարակության հարցերի հետ:

Էսթետիկա: Էսթետիկան ուսումնասիրում է մարդու՝ իրականության ու արվեստի նկատմամբ գեղագիտական հարաբերությունների զարգացման օրինաչափությունները և գեղագիտական իդեալի ձևավորումը:

Մարդաբանություն: Գիտություն է, որը մարդ-երևույթի (ֆենոմենի) մասին գիտելիքները միավորում է միացյալ տեսական կառույցի մեջ՝ դիտարկելով պայմանական մարդու բնույթն իր բազմաչափանիշներով:

Բժշկագիտություն: Կապը բժշկագիտության հետ հանգեցրեց շտկողական մանկավարժության ձևավորմանը՝ որպես մանկավարժության ճյուղերից մեկը: Համագործակցաբար բժշկագիտության հետ մշակվում է միջոցների մի համակարգ, որի միջոցով հնարավոր է լինում հասնել թերապևտիկ արդյունքների:

Քաղաքագիտություն: Կրթական քաղաքականությունը միշտ եղել է իշխող կուսակցության գաղափարախոսության արտացոլանքը՝ վերարտադրելով այդ գաղափարախոսությունը հայեցակարգային ծրագրերում, մոդելներում, սխեմաներում և տեսություններում:

Սոցիալական աշխատանք: Սոցիալական մանկավարժությունը սերտորեն կապված է սոցիալական աշխատանքի հետ: Որպես գիտություն՝ սոցիալական աշխատանքը ներկայացնում է մարդ-

կային գործունեության այն ոլորտը, որի գործառույթն է ձեռք բերել և տեսականորեն համակարգել օբյեկտիվ գիտելիքներ որոշակի իրականության՝ սոցիալական ոլորտի և հատուկ սոցիալական գործունեության մասին:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Օրինաչափություն, մեխանիզմ, թերապևտիկ, հայեցակարգային, սխեմա:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն է սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտը:
2. Ո՞ր գիտությունների հետ է սերտորեն կապված սոցիալական մանկավարժությունը և ինչո՞ւ:
3. Ինչպիսի՞ն է փիլիսոփայության և սոցիալական մանկավարժության կապը:
4. Ինչպիսի՞ն են հոգեբանության և սոցիալական մանկավարժության աղերսները:
5. Ինչո՞վ է պայմանավորված մարդուն ուսումնասիրող գիտությունների մասին սոցիալական մանկավարժի իմացությունը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լսարանում անցկացրե՛ք քննարկում՝ «Ինչի՞ն են նպաստում մարդուն ուսումնասիրող տարբեր գիտությունների կապն ու փոխգործակցությունը» թեմայով՝ ուշադրություն դարձնելով և մեկնաբանելով, թե դրանցից որոնք են ուղղակիորեն ուսումնասիրում մարդուն, իսկ որոնք՝ անուղղակիորեն:

1.4. Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունները

Յուրաքանչյուր գիտություն տարբերակում են գիտելիքների իր համակարգով, որն ուղղորդված է բացատրելու տվյալ գիտության ուսումնասիրության առարկան:

Գիտության գիտելիքների համակարգն արտացոլվում է իր հասկացություններում:

Հասկացությունն իրական կյանքի արտացոլման ձևերից մեկն է նրա գիտակցման գործընթացում:

Ինչպես ամեն մի գիտություն, սոցիալական մանկավարժությունը նույնպես ունի իր հասկացությունների համակարգը: Դրանք են՝ *սոցիալ-մանկավարժական գործունեություն, սոցիալական ուսուցում, սոցիալական դաստիարակություն, սոցիալականացում, սոցիալականացման գործոններ, սոցիում, սոցիալական ինստիտուտ, սոցիալական կարգավիճակ, սոցիալական դեր, սոցիալական աշխատանք, սոցիալական մանկավարժ, սոցիալական հարմարում* և այլն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Սոցիալ-մանկավարժական գործունեություն
- Սոցիալականացում
- Սոցիալականացման գործոններ
- Սոցիալական ինստիտուտ
- Սոցիալական կարգավիճակ, դեր
- Սոցիալական դաստիարակություն
- Սոցիալական աշխատանք
- Սոցիալական մանկավարժ
- Սոցիալական հարմարում
- Սոցիալական ուսուցում
- Սոցիում

Գծապատկեր 7. Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունները

Դուրս գալով ընդհանուր մանկավարժության կառուցվածքից՝ սոցիալական մանկավարժությունը կիրառում է նաև ընդհանուր մանկավարժության գրեթե բոլոր հասկացությունները:

Իսկ այժմ առանձին-առանձին ներկայացնենք վերը նշված հասկացությունները, որոնց լավ իմացությունը խիստ անհրաժեշտ է սոցիալական մանկավարժին՝ իր սոցիալ-մանկավարժական գործունեությունն արդյունավետ կազմակերպելու համար:

Սոցիալ-մանկավարժական գործունեություն

Սոցիալ-մանկավարժական գործունեությունը պրոֆեսիոնալ

գործունեության տարատեսակ է, որն ուղղված է օգնելու երեխաներին և երիտասարդներին նրանց սոցիալականացման, սոցիալական զարգացման, նրանց կողմից սոցիալական նորմերի և արժեքների յուրացման գործընթացում, հասարակությունում նրանց ինքնահաստատման համար պայմանների ստեղծման գործում:

Սոցիալականացում

Սոցիալականացումը մարդու զարգացումն է ամբողջ կյանքի ընթացքում՝ շրջակա միջավայրի հետ փոխգործակցությամբ, սոցիալական նորմերի և մշակութային արժեքների յուրացման և վերարտադրության գործընթացում, ինչպես նաև ինքնազարգացում և ինքնահիրացում այն հասարակությունում, որին նա պատկանում է:

Սոցիալականացման գործոններ

Սոցիալականացման գործոնները մարդու վրա ներգործող պայմաններ են: Սոցիալականացումը տեղի է ունենում մարդու և մեծ թվով բազմատեսակ պայմանների փոխգործակցությամբ, որոնք ներազդում են նրա զարգացման վրա:

Սոցիում (հասարակություն)

Սոցիումը (հասարակություն) այն շրջակայքն է, որտեղ ձևավորվում է մարդը: Այն տարբեր խմբերի, միավորումների, կազմակերպությունների և շարժումների մի ամբողջություն է: Սոցիումը միջավայր է, որի ներգործությունը մարդն զգում է իր ամբողջ կենսագործունեության ընթացքում, առարկայական, մշակութային, հոգեվոր տարածություն է, որտեղ մարդն իր ակտիվությունն է իրականացնում:

Միկրոսոցիում

Միկրոսոցիումը մարդու ամենամոտ շրջապատն է՝ ընտանիք, դպրոց, բնակության վայրի ազատ հաղորդակցում, միավորումներ, մարդու և միջավայրի անմիջական փոխգործակցության գոտի, որ-

տեղ իրականանում են նրա ամենօրյա գործունեությունը, հարաբերությունները և հաղորդակցումը:

Սոցիալական ինստիտուտ

Մարդկանց համատեղ գործունեության կազմակերպման պատմականորեն ստեղծված կայուն ձև է: Սոցիալական ինստիտուտներ են ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը, աշխատանքային կոլեկտիվը և այլն:

Ապասոցիալական ինստիտուտներ

Քրեածին, ոչ ֆորմալ, դեռահասային խմբերն են, հանցագործ խմբավորումներ, հարբեցողների, թմրամոլների, թափառաշրջիկների համախմբումներ, ինչպես նաև անբարո կամ ապասոցիալական տիպի ընտանիքներ:

Սոցիալական կարգավիճակ

Սոցիալական կարգավիճակը (լատ. **status** - վիճակ, դիրք, դրություն) մարդու՝ հասարակության մեջ զբաղեցրած դիրքն է՝ տարիքին, սեռին, ծագմանը, մասնագիտությանը, ընտանեկան դրությանը համապատասխան:

Կարգավիճակները լինում են.

1. ի ծնե կարգավիճակներ (ազգությունը, սեռը, սոցիալական ծագումը),

2. ձեռքբերովի կարգավիճակներ (կրթությունը, որակավորումը):

Սոցիալական դեր

Սոցիալական դերը սոցիալական կարգավիճակի շարժուն կողմն է, նրա գործառույթը, սպասվող վարքագծով, որը կախված է հասարակության մեջ մարդու ունեցած դիրքից:

Սոցիալական դերը սոցիալական գործառույթ է, վարքագծի մոդել (կաղապար), որն օբյեկտիվորեն տրված է անձի սոցիալական դիրքորոշմանը հասարակական կամ միջանձնային հարաբերությունների համակարգում:



Գծապատկեր 8. Սոցիալական կարգավիճակ, սոցիալական դեր

Սոցիալական հարմարում (ադապտացիա)

Անհատի, սոցիալական շերտի, խմբի ակտիվ հարմարվողականության գործընթաց և արդյունք է նոր սոցիալական պայմաններին, կյանքի փոփոխվող կամ արդեն փոփոխված հասարակական պայմաններին:

Սոցիալական բարձիթողություն

Երեխայի սոցիալական զգացողությունների, հետաքրքրությունների, կարողությունների և հմտությունների չձևավորվածություն, սեռատարիքային սոցիալական դերերի անհամապատասխանություն:

Սոցիալական ուսուցում

Սոցիալական ուսուցում ասելով՝ հասկանում ենք, որ մարդը սոցիալականացման գործընթացում տարբեր սոցիալական ինստիտուտներում յուրացնում է (տիրապետում) մեծ թվով գիտելիքներ հասարակության, հասարակական հարաբերությունների, սոցիալական կարգավիճակների և դերերի, սոցիալական վարքագծի նորմերի և կանոնների մասին: Նա ձեռք է բերում նաև տարբեր կարողություններ և հմտություններ, որոնք նպաստում են նրա ներառմանը հասարակություն: Այս գործընթացն առավել ինտենսիվորեն տեղի է ունենում մանկության տարիներին:

Սոցիալական դաստիարակություն

Սոցիալական դաստիարակությունը երեխայի անձի սոցիալապես կարևոր հատկությունների ձևավորման նպատակասլաց գործընթաց է. հատկություններ, որոնք անհրաժեշտ են նրան հաջող սոցիալականացման համար: Սոցիալական դաստիարակությունը ունի գործնական-կողմնորոշիչ բնույթ: Սոցիալական դաստիարակության հետաքրքիր մեկնաբանություն է տալիս Յ. Վ. Վասիլկովան. «Սոցիալական դաստիարակությունը մարդուն օգնող մի գործընթաց է նրա կատարելագործման, որոշակի կենսական իրավիճակներում հաջողության հասնելու, հարաբերություններում կողմնորոշվելու կարողությունների զարգացման նպատակով:

Սոցիալական դաստիարակությունը բազմամակարդակ հասկացություն է.

ա. հասարակության օգնությունն է ապագայի սերունդներին,

բ. հասարակության, կոլեկտիվի, այլ մարդու կողմից օգնությունն է մարդուն՝ ընդունելու և յուրացնելու բարոյական հարաբերություններ, որոնք ձևավորվել են ընտանիքում և հասարակությունում, ընդունելու իրավական, տնտեսական, քաղաքացիական և

կենցաղային հարաբերություններ: Օգնել մարդուն նշանակում է սովորեցնել նրան գտնել նոր ուղի իր կյանքում, կարողանալ փոփոխվել կյանքի նոր իրավիճակներում»[11]:

Սոցիալական աշխատանք

Մասնագիտական գործունեության առանձնահատուկ մի տեսակ է, որի ժամանակ տեղի է ունենում պետական և ոչ պետական աջակցության ցուցաբերում մարդուն՝ նրա կյանքի մշակութային, սոցիալական և նյութական մակարդակն ապահովելու նպատակով: Այն իրականացվում է՝ մարդուն, ընտանիքին և խմբին անհատական օգնություն ցուցաբերելով:

Սոցիալական մանկավարժ

Սոցիալական մանկավարժը մասնագետ է, որը կազմակերպում է դաստիարակչական աշխատանք երեխաների, երիտասարդների և մեծահասակների հետ տարբեր սոցիալ-մշակութային միջավայրերում (ընտանիք, կրթօջախ, նախադպրոցական կրթադաստիարակչական հաստատություն, մանկատուն, աշխատանքային կոլեկտիվ, լրացուցիչ կրթության հաստատություններ և այլն): Սոցիալական մանկավարժն ուսումնասիրում է անձի և նրա շրջապատող միկրոմիջավայրի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները, բացահայտում է անձի հետաքրքրություններն ու պահանջմունքները, վարքագծային շեղումները, կոնֆլիկտային իրավիճակները և ցույց է տալիս ժամանակակից օգնություն և աջակցություն, նպաստում է մարդկանց (հատկապես երեխաների և երիտասարդության) իրավունքների և ազատությունների իրականացմանը՝ նրանց կյանքի և առողջության պահպանումն ապահովելու համար:

---

[11] **Василькова Ю. В., Василькова Т. А.,** Социальная педагогика, М., 1999, стр. 16.

Սոցիալական մանկավարժն այն մասնագետն է, որն իրազեկ է մարդկանց մանկավարժական, սոցիալական, հոգեբանական, հոգեթերապևտիկ օգնություն ցուցաբերելու հարցերում:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞վ է տարբերակվում յուրաքանչյուր գիտություն:
2. Ի՞նչ է հասկացությունը:
3. Ինչո՞վ են տարբերվում սոցիալական մանկավարժության հասկացություններն ընդհանուր մանկավարժության հասկացություններից:

ՀԱՐՑՈՒՄ ՇՐՋԱՊԱՏԻՆ

Ձեզանից յուրաքանչյուրը թող փասը անձի ենթարկի հարցման՝ հետևյալ բովանդակությամբ.

Հարց. Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը դպրոցում սոցիալական մանկավարժի գործունեության մասին:

Պատասխան՝

ա) դրական

բ) բացասական

գ) չգիտեմ, տեղյակ չեմ

Արդյունքներն ամփոփե՛ք լսարանում և տվե՛ք Ձեր մեկնաբանությունները:

1.5. Սոցիալական մանկավարժության սկզբունքները

Յուրաքանչյուր գիտություն և համապատասխանաբար նրա պրակտիկ գործունեության ոլորտ իր զարգացման ընթացքում ղեկավարվում է որոշակի սկզբունքներով՝ հիմնարար դրույթներով, որոնք ձևավորվում են գիտության մշակած օրինաչափություններով:

Յուրաքանչյուր գիտություն ունի իր սկզբունքները, որոնց իրացումը տեղի է ունենում որոշ կանոնների միջոցով: Սկզբունքներն ու կանոնները գոյություն ունեն օբյեկտիվորեն, մեզանից անկախ, և նրանցից հետ կանգնել հնարավոր չէ, քանի որ հակառակ պարագայում իրականացրած գործունեությունը կա՛մ կլինի արդյունավետ, կա՛մ էլ վտանգավոր[12]:

Սոցիալական մանկավարժությունը՝ որպես ընդհանուր մանկավարժության ճյուղ, վերցրել է նրա սկզբունքները:

Մանկավարժության սկզբունքներն արտահայտում են հասարակության մեջ ձևավորված այն պահանջները, որոնք ուղղված են անձի որոշակի տեսակի վերարտադրողականությանը: Սկզբունքները որոշում են ռազմավարությունը, նպատակները, դաստիարակության բովանդակությունը և մեթոդները, նրա սուբյեկտների փոխգործակցության ոճը:

Հաստատենք նաև, որ մանկավարժության սկզբունքները տալիս են անձի կրթության և դաստիարակության ընդհանուր ուղղությունը և ծառայում են որպես հիմք մանկավարժական կոնկրետ խնդիրների լուծման համար:

Մանկավարժության մեջ կան տարբեր մոտեցումներ մանկա-

---

[12] **Штинова Г. Н. и др.,** Социальная педагогика, М., 2008, стр. 196.

վարժության սկզբունքների վերաբերյալ, մենք կներկայացնենք բոլորի կողմից առավել ընդունելի տարբերակը:

Սոցիալական մանկավարժության մեջ ընդունված են հետևյալ սկզբունքները՝

- բնահարմարության սկզբունք,
- մշակութահարմարության սկզբունք,
- հումանիզմի սկզբունք:



Գծապատկեր 9. Սոցիալական մանկավարժության սկզբունքները

Վերլուծենք դրանք առանձին-առանձին:

Բնահարմարության սկզբունք: Այս սկզբունքին կարելի է հանդիպել եվրոպական, ռուս և հայ ականավոր մանկավարժների աշխատություններում, որոնք տվել են իրենց հետաքրքիր մեկնաբանությունները նրա տարբեր ասպեկտներին: Մինչ այդ մեկնաբանություններին անցնելը նախ և առաջ ներկայացնենք «բնահարմարության սկզբունքի» էությունը, այն է՝ յուրաքանչյուր սոցիալական

մանկավարժ իր պրակտիկ գործունեության ընթացքում պետք է ղեկավարվի մարդու (անչափահասի) բնական զարգացման գործոններով, այսինքն՝ հաշվի առնի նրա բնածին հատկությունները, տարիքային, անհատական և հոգեբանական առանձնահատկությունները:

Առաջին անգամ այս սկզբունքը հանդիպում ենք մանկավարժության հիմնադիր Յան Ամոս Կոմենսկու մոտ: Նա միանգամայն արդարացիորեն գտնում էր, որ մարդը՝ որպես բնության մի մասնիկ, ենթարկվում է բնության օրենքներին: Սակայն Կոմենսկին այս սկզբունքի տակ նկատի չուներ միայն բնության օրենքները, այլև երեխայի անձի հոգեբանությունը: Կոմենսկին կառուցել է դաստիարակության և ուսուցման իր համակարգը՝ հենվելով երեխաների անհատական, տարիքային առանձնահատկությունների վրա:

Հետագայում Յ. Ա. Կոմենսկու մշակած բնահարմարության սկզբունքը հիմք հանդիսացավ մանկավարժական և սոցիալ-մանկավարժական տարբեր տեսությունների ձևավորման համար: Այսպես, ֆրանսիացի փիլիսոփա-մանկավարժ Ժան Ժակ Ռուսոն գտնում էր, որ երեխայի դաստիարակությունը պետք է տեղի ունենա բնությանը համապատասխան, բնության միջոցով: Դա պետք է տեղի ունենա մարդկային ունակությունների և զգայական օրգանների ներքին զարգացմամբ: Այստեղ առաջին պլան է մղվում երեխայի բնությունը, որով և պետք է ուղղորդվել, երբ իրականացնում ենք մարդու (երեխայի) նախապատրաստումն ապագա կյանքին:

Մեկ ուրիշ տաղանդավոր շվեյցարացի մանկավարժ Իոհան Պեստալոցցին գտնում էր, որ դաստիարակության նպատակը մարդու (երեխայի) բնածին ուժերի և ունակությունների զարգացումն է, ընդ որում՝ այդ զարգացումը պետք է լինի համակողմանի և ներդաշնակ:

Գերմանացի հանրահայտ գիտնական-մանկավարժ Ադոլֆ Դիստերվեգը նույնպես կարևորում էր բնահարմարության սկզբունքը՝ նշելով, որ պետք է հետևել երեխայի բնական զարգացմանը, ինչպես նաև ուսուցման ու դաստիարակության գործընթացներում հաշվի առնել նրա տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Բնահարմարության սկզբունքին իր աշխատություններում անդրադարձել է նաև ռուս մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին: Նա շեշտում էր, որ երեխայի ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը լավ իմանա ոչ միայն դաստիարակության սկզբունքներն ու կանոնները, այլև զինված լինի մարդկային (մարդու) բնության հիմնական օրենքներով և կարողանա դրանք կիրառել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, յուրաքանչյուր կոնկրետ երեխայի համար: Դրա համար նա պետք է գիտելիքներ ունենա ֆիզիոլոգիայից, հոգեբանությունից, հիգիենայից[13]:

Բնահարմարության սկզբունքի զարգացմանը կարելի է հանդիպել նաև խորհրդային ժամանակաշրջանի մանկավարժների աշխատություններում (Պ. Պ. Բլոնսկի, Ս. Տ. Շացկի, Վ. Պ. Կաշենկո, Ա. Ա. Մակարենկո, Վ. Ա. Սուխոմլինսկի, Յ. Կ. Բաբանսկի, Տ. Ի. Իլյինա և ուրիշներ):

Սոցիալական մանկավարժության տեսանկյունից հատկապես ուշագրավ է Վ. Պ. Կաշենկոյի գործունեությունը սահմանափակ կարողություններով երեխաների հետ: Զարգացնելով բնահարմարության սկզբունքը՝ Վ. Պ. Կաշենկոն հանգամանորեն ուսումնասիրել է երեխաների ֆիզիկական և հոգեկան շեղումները, որոնք, նրա խորին համոզմամբ, անհրաժեշտ էր հաշվի առնել նմանատիպ երե-

[13] **Галагузова М. А. и др.,** Социальная педагогика, М., 2000, стр. 121-122.

խաների դաստիարակության և կրթության գործում:

Սոցիալական մանկավարժության մեջ բնահարմարության սկզբունքի կիրառության ժամանակ հատկապես անհրաժեշտ է հաշվի առնել, թե որ կատեգորիայի երեխայի մասին է խոսքը. նորմալ, կենսաբանորեն առո՞ղջ երեխա է, թե՞ ունի ֆիզիկական, հոգեկան կամ սոցիալական զարգացման շեղումներ: Այդ իսկ պատճառով սոցիալական մանկավարժը, հետևելով բնահարմարության սկզբունքին, իր գործունեության ընթացքում պետք է հաշվի առնի հետևյալ կանոնները.

- հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները,
- հաշվի առնել երեխաների սեռային առանձնահատկությունները,
- հաշվի առնել երեխաների անհատական առանձնահատկությունները՝ կապված նորմայից նրանց շեղումների հետ,
- հենվել երեխայի դրականի, նրա անձի ուժեղ կողմերի վրա,
- զարգացնել երեխայի նախաձեռնողականությունն ու ինքնուրույնությունը:

Սոցիալական մանկավարժության հաջորդ սկզբունքը մշակութահարմարության սկզբունքն է:

Մշակութահարմարության սկզբունք: Այս սկզբունքը, կարելի է ասել, բնահարմարության սկզբունքի տրամաբանական շարունակությունն է: Ինչո՞վ են պայմանավորված այս սկզբունքի անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Նախ նշենք, որ մարդը ծնվում է որպես կենսաբանական էակ: Նա դառնում է անձ՝ յուրացնելով վարքագծի սոցիալական փորձը, որը փոխանցվում է նախորդ սերունդներից նրա անձի դաստիարակության և զարգացման գործընթացում:

Մշակութահարմարության սկզբունքը մանկավարժության մեջ առաջ է քաշել 19-րդ դարի գերմանացի տաղանդավոր մանկավարժ Ա. Դիստերվեգը: Ըստ նրա՝ դաստիարակության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն տեղի ու ժամանակի պայմանները, որտեղ ծնվել է մարդը, և որտեղ նա հետագայում պետք է ապրի: Սա կարելի է մեկնաբանել այսպես. մարդու դաստիարակության գործընթացում պետք է հաշվի առնել ժամանակի մշակույթն իր լայն և ընդգրկուն իմաստով: Ամբողջ մարդկությունը, յուրաքանչյուր ժողովուրդ և յուրաքանչյուր սերունդ մշտապես գտնվում են մշակույթի զարգացման որոշակի աստիճանի վրա: Դա այն ժառանգությունն է, որ թողել են նախնիները՝ որպես արդյունք իրենց պատմության: Մարդն իր ժամանակի արդյունքն է, չնայած նրա զարգացումը կախված է նաև բնատուր նախադրյալներից:

Ռուսական մանկավարժության մեջ Ա. Դիստերվեգի մշակած մշակութահարմարության սկզբունքին հանդիպում ենք 19-րդ դարի ռուս տաղանդավոր մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու աշխատություններում: Այն ձևակերպվել է որպես «ժողովրդայնության սկզբունք»: Ուշինսկին այս սկզբունքը բացատրում է հետևյալ կերպ. եթե մենք ուզում ենք դաստիարակել կրթված մարդ և քաղաքացի, պետք է սկսենք գրել, կարդալ, հաշվել կարողություններից, նրա հայրենիքի, բնության, աշխարհագրության, պատմության, մշակույթի, կրոնի մասին գիտելիքներից: Այս սկզբունքի տակ Ուշինսկին հասկանում և ընդունում էր յուրաքանչյուր ազգի ինքնատիպությունն ու առանձնահատկությունները: Կ. Դ. Ուշինսկու այս գաղափարին հարեցին Մ. Բ. Լոմոնոսովը, Վ. Գ. Բելինսկին:

Մշակութահարմարության սկզբունքի գաղափարներն իրենց արտահայտումն են գտել նաև հայ մանկավարժներ Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Ա. Բահաթրյանի, Ս. Մանդինյանի և ուրիշների աշխատություններում:

Մշակութահարմարության սկզբունքն ենթադրում է նաև ազգային և համամարդկային մշակութային արժեքների հաշվի առնում, քանի որ համամարդկային արժեքները ենթադրում են մարդու խոստովանությունը՝ որպես ինքնարժևորում, ընտանիքը՝ որպես գոյության բնական միջավայր, աշխատանքը՝ որպես կենսագործունեության հիմք, խաղաղությունն աշխարհում՝ որպես գոյատևման պայման, գիտելիքը՝ որպես գործունեության հիմք, մշակույթը՝ որպես պատմականորեն ձևավորված սոցիալական փորձ[14]:

Երեխայի շփումն ու հաղորդակցումը մշակույթին դժվար խնդիր է, որի լուծումն իրականացնում են ընտանիքն ու հասարակությունը, տարբեր հիմնարկներ (կառույցներ) և միավորումներ (մանկապարտեզ, դպրոց, արտադպրոցական հաստատություններ, երիտասարդական կազմակերպություններ և այլն), որտեղ երեխան գտնվում է իր կյանքի տարբեր ժամանակահատվածում: Եթե երեխան նորմալ է զարգանում, ապա նա յուրացնում է հասարակության մշակույթը և բնականոն ճանապարհով ներառվում հասարակություն:

Սահմանափակ կարողություններով երեխաների համար ազգային մշակութային արժեքներին հաղորդակցվելը բավականին դժվար է: Այդ իսկ պատճառով նմանատիպ երեխաների համար մշակվել են մշակութային արժեքներին հաղորդակցման մեթոդիկա և տեխնոլոգիա, որոնք կօգնեն նրանց նույնպես ներառվել հասարակություն:

Այսօր ամբողջ աշխարհում և Հայաստանում նույնպես իրականացվում է սահմանափակ կարողություններով երեխաների ներառական ուսուցմամբ կթություն հանրակրթական դպրոցներում, որի

---

[14] **Галагузова М. А., Штинова Г. Н. и др.,** Социальная педагогика, М., 2000, стр. 125.

գլխավոր նպատակն է, որ նմանատիպ երեխաները հնարավորություն ունենան շփվելու և հաղորդակցվելու իրենց հասակակիցների հետ, որ բոլորի հետ հավասար պաշտպանվեն նրանց իրավունքներն ու ազատությունները, որ նրանք իրենց զգան լիարժեք մարդ և լիիրավ քաղաքացի տվյալ հասարակությունում և պետությունում:

Հումանիզմի սկզբունք: Հումանիզմի սկզբունքը բացատրելուց առաջ ներկայացնենք «**հումանիզմ**» բառի ստուգաբանությունը: Այն ծագել է լատիներեն «**humanus**» բառից, որը նշանակում է «**մարդկային**»: Հումանիզմը հայացքների մի համակարգ է, որն ընդունում է մարդու արժեքը որպես անհատականություն, նրա ազատության իրավունքը, երջանկությունը, զարգացումը, ընդունակությունների դրսևորումը:

Մարդկայնությունը, մարդասիրությունը հումանիզմի տարբեր ուղղությունների իդեալն է, նրա նպատակը, մարդու մտքի, զգացմունքների, արժեքավոր ունակությունների զարգացումն է, մարդկային մշակույթի ու բարոյականության և անձի համապատասխան վարքագծի բարձրագույն զարգացումը և նրա վերաբերմունքն աշխարհին:

Այսօր լայնորեն կիրառվում է նաև «հումանացում» հասկացությունը, որի էությունն առանձին մարդկանց և ընկերակցությունների, միությունների գործունեությունն է հանուն հումանիզմի իրագործման՝ մարդու արժեքի ընդունումը որպես անձնավորություն, նրա իրավունքների պաշտպանությունն ազատ զարգացման, սեփական ունակությունների դրսևորման գործում:

Երբ խոսում ենք հումանիզմի մասին, այն ուղղակիորեն կապված է մարդու հետ:

Հումանիզմի գաղափարը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը արծարծվել է թե՛ փիլիսոփայության, թե՛ հոգեբանության և

թե՛ մանկավարժության հումանիստական ուսմունքներում (Ն. Բերդյաև, Վ. Սոլովյով, Վ. Վերնադսկի, Ժ. Պիաժե, Կ. Ռոջերս, Կ. Ուշինսկի, Վ. Սուխոմլինսկի, Խ. Աբովյան, Ա. Բահաթրյան), որոնց համաձայն՝ մարդու էությունը չի ներառում միայն կենսաբանական կամ սոցիալական կողմերը. այն միշտ լրացված է հոգևոր հարաբերություններով:

Մանկավարժության և սոցիալական մանկավարժության մեջ հումանիզմի գաղափարի ծաղկումն իր զարգացումն է ստացել Վերածննդի ժամանակաշրջանում (14-16-րդ դդ.), երբ տիրում էր «ամեն ինչ մարդու համար» կարգախոսը: Սակայն պետք է նշենք նաև, որ հումանիստական դաստիարակության գաղափարներն իրենց արտացոլումն են ստացել դեռևս հին շրջանի փիլիսոփաների աշխատություններում (Սոկրատ, Պլատոն, Արիստոտել):

Իսկ ո՞րն էր հումանիստական դաստիարակության իդեալը. դա ազատ, համակողմանի զարգացած անձնավորության դաստիարակությունն է (Թ. Մոր, Ֆ. Ռաբլե, Մ. Մոնտեն):

Ներկայումս մանկավարժության և սոցիալական մանկավարժության մեջ հումանիզմի ժամանակակից հասկացությունն արտացոլում է դաստիարակության փոփոխման գործընթացն ազգային և համամարդկային մշակույթի արժեքների հիմքի վրա՝ հրահանգելով, որ անձի դաստիարակությունը պետք է տեղի ունենա մտավոր, բարոյական և ֆիզիկական բարձր արժեքներով:

Հումանիզմի գլխավոր և առաջատար դրսևորումը սերն է երեխաների հանդեպ և երեխաների մեջ սիրո դաստիարակումը: Առանց բացառության՝ մանկավարժության և սոցիալական մանկավարժության հանրաճանաչ և տաղանդավոր դասականների աշխատությունները տոգորված են մեծ սիրով երեխաների հանդեպ (Յ. Ա. Կոմենսկի, Ի. Պեստալոցցի, Ժ. Ժ. Ռուսո, Ա. Դիստերվեգ,

Կ. Ուշինսկի, Յ. Կորչակ, Վ. Սուխոմլինսկի, Շ. Ամոնաշվիլի, Ա. Սուվորով, Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Ա. Բահաթրյան և ուրիշներ):

Սոցիալական մանկավարժի խնդիրն է այլ մասնագետների հետ միասին (ուսուցիչ, դաստիարակ, հոգեբան) ոչ միայն սիրել երեխաներին, այլև սովորեցնել նրանց սիրել մարդկանց: Սիրել, որպեսզի կարողանա հասկանալ և լինել հասկացված, սիրել, որպեսզի կարողանա համագործակցել և բարին գործել:

Սոցիալական մանկավարժության մեջ հումանիստական գաղափարներն առավել ուշադրության են արժանի հատկապես այն ժամանակ, երբ տեսադաշտում զարգացման խանգարումներ, սահմանափակ կարողություններով երեխաներն են: Այս երևույթի հետ կապված՝ Ա. Սուվորովն իր աշխատություններում «հումանիզմ» հասկացությունը համեմատում է «գթասրտություն», «բարեգործություն» հասկացությունների հետ[15]:

Երեխաների նկատմամբ մարդկային վերաբերմունքը ներառում է՝ սեր նրանց հանդեպ, հետաքրքրասիրություն նրանց ճակատագրի և լավատեսական հավատ նրանց ունակությունների նկատմամբ, շփում նրանց հետ՝ հիմնված վստահության վրա, համբերատարություն երեխաների թերությունների նկատմամբ:

Հումանիզմի սկզբունքը պահանջում է հետևյալ կանոնների պահպանումը[16]:

- Երեխաների հանդեպ հասարակության արժանի վերաբերմունք՝ անկախ նրանից, թե նրանք ինչպիսի ֆիզիկական, նյութական կամ սոցիալական վիճակում են գտնվում:
- Յուրաքանչյուր երեխայի իրավունքների ընդունում, հարգալից վերաբերմունք նրա հանդեպ:

---

[15] **Суворов А. В.,** Школа взаимной человечности, М., 1995, стр. 41.

[16] **Галагузова М. А., Штинова Г. Н.,** Социальная педагогика, М., 2000, стр. 130.

- Օգնություն խնդիրներ ունեցող երեխաներին՝ նրանց մեջ ձևավորելու «Ես ինքս» դիրքորոշումը:
- Գթասրտության հասկացում՝ որպես հումանիզմի առաջին աստիճան, որը պետք է հենվի ոչ թե խղճահարության և ցավակցման, այլ օգնության ցանկության վրա՝ նրանց հասարակություն ներառելու նպատակով:
- Ձգտել չտարանջատել խնդիրներով երեխաներին հատուկ խմբերում և չհեռացնել նրանց կենսաբանորեն առողջներից:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Ռազմավարություն, կատեգորիա:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է սկզբունքը:
2. Ի՞նչ դեր են խաղում սկզբունքները յուրաքանչյուր գիտության համար:
3. Ի՞նչ են արտահայտում մանկավարժության սկզբունքները:
4. Ի՞նչ ենք հասկանում՝ «բնահարմարության սկզբունք» ասելով:
5. Ո՞վ է «բնահարմարության սկզբունքի» առաջին հեղինակը մանկավարժության մեջ:
6. Ո՞րն է «մշակութահարմարության սկզբունքի» էությունը, և ո՞վ է առաջին անգամ այն մեկնաբանել:
7. Ո՞րն է Ուշինսկու կողմից տրված «ժողովրդայնության սկզբունքի» մեկնաբանության տարբերությունը:
8. Ի՞նչ է հումանիզմը: Ո՞րն է «հումանիզմի սկզբունքի» էությունը:
9. Ո՞րն է հումանիզմի դրսևորումը մանկավարժության մեջ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Անցկացրե՛ք լսարանում քննարկում՝ «Հումանիզմի դրսևորման պակասը հասարակությունում. ծնող պատճառներն ու հետևանքները» թեմայով: Քննարկման ավարտին կազմե՛ք «Հումանիզմի հոչակագիր»՝ ուղղված մարդկանց (մարդկությանը):

1.6. Սոցիալական մանկավարժության գործառույթները

Ինչպես և ցանկացած գիտություն, սոցիալական մանկավարժությունը նույնպես ունի իր գործառույթները: Դրանք երեք խմբի են բաժանվում՝

- դաստիարակչական,
- սոցիալ-իրավական,
- սոցիալ-վերականգնողական (ռեաբիլիտացիոն):



Գծապատկեր 10. Սոցիալական մանկավարժության գործառույթները

Դաստիարակչական գործառույթը ենթադրում է երեխայի ներառումը նրան շրջապատող միջավայր, նրա սոցիալականացման գործընթացը, նրա հարմարումն ուսուցման և դաստիարակության գործընթացին:

Սոցիալ-իրավական գործառույթ ասելով՝ հասկանում ենք պետության խնամքն ու հոգատարությունը երեխաների հանդեպ, նրանց իրավունքների պաշտպանությունը:

Սոցիալ-վերականգնողական գործառույթը դաստիարակչական և կրթական աշխատանք է հաշմանդամ, ֆիզիկական և հոգեկան ոչ լիարժեք երեխաների (սահմանափակ կարողություններով) հետ, որտեղ հիմնական սոցիալական գործառույթներն իրականացնում է մանկավարժը:

Սոցիալական մանկավարժության գործառույթների վերոհիշյալ երեք խմբում ներառված են հետևյալ սոցիալական գործառույթները:

1. Երեխայի (անչափահասի) ուսումնասիրում. նրա վերաբերմունքն ընտանիքին, դպրոցին, բակի երեխաներին, նրա վիճակը բախումների ժամանակ:

2. Օգնության ցուցաբերում երեխային (անչափահասին), որն հայտնվել է դժվարին իրավիճակներում: Կարևոր է գտնել ճգնաժամից դուրս գալու ուղիներ և տարբերակներ, աջակցել դժվարության ժամանակ:

3. Սոցիալական դաստիարակության վիճակի վերլուծությունը տարբեր սոցիալական ոլորտներում, որոնք շրջապատում են երեխային և ներգործում նրա վրա:

4. Սոցիալական մանկավարժությունը կոչված է վերլուծել, ընդհանրացնել, տարածել և քարոզել դրական փորձը:

5. Երեխայի (անչափահասի) գործունեությունը ուղղորդել դե-

պի ինքնադաստիարակություն, ինքնուսուցում և իր կյանքն ու արարքները ինքնուրույնաբար կազմակերպելու կարողություն:

6. Սոցիալական մանկավարժը զբաղվում է տարբեր մասնագետների և կազմակերպությունների կոորդինացմամբ և միավորմամբ, որոնք լուծում են երեխայի խնդիրները:

7. Սոցիալական դաստիարակության տարբեր խնդիրների ուսումնասիրության կազմակերպում, նաև տարբեր մանկավարժական կենտրոնների, կոլեկտիվների, սոցիալական մանկվարժների աշխատանքի վերլուծություն[17]:

Սոցիալական մանկավարժության գործառույթներից բխում են կիրառական հետևյալ խնդիրները[18].

1. երեխայի գիտակցության մեջ սերմանել (դաստիարակել) բարու և արդարության, փոխհասկացության, հարազատի, ստեղծագործության նկատմամբ սիրո հասկացությունները,

2. նպատակ դնել ինքնուրույնաբար դուրս գալու ճգնաժամից, մատնանշել ելքի ճանապարհները, որոշարկել կյանքի նպատակն ու իմաստը,

3. զարգացնել ձգտումը՝ ճանաչելու շրջապատող աշխարհը, մարդուն, նրա ինքնատիպությունը, ֆիզիկական և հոգևոր առանձնահատկությունները, իրավունքներն ու պարտականությունները հասարակությունում,

4. զարգացնել սեփական արժանիքների ինքնուրույնության, ինքնավստահության զգացումը,

5. երեխայի մեջ սերմանել կարողություն և ցանկություն հաղորդակցվելու մարդկանց հետ փոքր և մեծ խմբերում, հասակակիցների միավորումներում, ընտանիքում, դպրոցում, աշխատան-

---

[17] **Василькова Ю. В., Василькова Т. А.,** Социальная педагогика, М., 1999, стр. 18.
[18] Տե՛ս նույն տեղում, էջ 19:

քում: Այստեղ սոցիալական մանկավարժին անհրաժեշտ է երեխաների տարիքային առանձնահատկությունների իմացություն:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Ինքնադաստիարակություն, կոորդինացում:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է «գործառույթ» հասկացությունը:
2. Ի՞նչ է ներառում «դաստիարակչական» գործառույթը:
3. Ի՞նչ է «սոցիալ-իրավական» գործառույթը:
4. Ո՞րն է «սոցիալ-վերականգնողական գործառույթի» էությունը:
5. Որո՞նք են սոցիալական մանկավարժության գործառույթներում ներառված սոցիալական գործառույթները:
6. Ինչպիսի՞ կիրառական խնդիրներ են բխում սոցիալական մանկավարժության գործառույթներից:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լսարանում անցկացրե՛ք քննարկում՝ «Սոցիալական մանկավարժության գործառույթների հարաբերակցությունը» թեմայով՝ ներկայացնելով և վերլուծելով գործառույթների փոխկապակցվածությունն ու փոխլրացումը:

1.7. Սոցիալական մանկավարժության մեթոդները

«Մեթոդ» բառն ունի հունական ծագում՝ **methodos,** որը նշանակում է **ուղի, եղանակ**: Ընդհանուր առմամբ մեթոդը կարելի է բնութագրել որպես նպատակին հասնելու ուղի:

Սոցիալական մանկավարժությունը, ինչպես ամեն մի գիտաճյուղ, ունի իր մեթոդները, որոնք դասակարգվում են երեք խմբի[19].

1. գիտական հետազոտության մեթոդներ,
2. դաստիարակության մեթոդներ,
3. սոցիալ-հոգեբանական օգնության մեթոդներ:



Գծապատկեր 11. Սոցիալական մանկավարժության մեթոդները

Գիտական հետազոտության մեթոդներ: Այս խմբի մեթոդները գիտական տեղեկատվության ստացման եղանակներ են օրինաչափ կապերի, հարաբերությունների կախվածության հաստատման և գիտական տեսությունների կառուցման նպատակով: Այս խմբի մեթոդները նպաստում են սոցիալական մանկավարժության հետագա զարգացմանը:

Գիտական հետազոտության մեթոդախմբի մեջ են մտնում հետևյալ մեթոդները՝ դիտում (իր տեսակներով), մանկավարժական գիտափորձ, հարցում, զրույց, հարցազրույց, անկետավորում, մոդելավորում, առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրում և ընդհանրացում, մաթեմատիկական ուսումնասիրության մեթոդներ՝ կարգավորում և սանդղակավորում:

---

[19] **Мустаева Ф. А.,** Основы социальной педагогики, М., 2001, стр. 44.

Նշված մեթոդախմբից ամենատարածվածը դիտման մեթոդն է, որը համարվում է մանկավարժական երևույթների ճանաչողության մեթոդ՝ հիմնվելով նրանց (երևույթների) անմիջական ընկալման և ըմբռնման վրա: Այս մեթոդի հիմնական գործառույթը ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ տվյալների ընտրողական հավաքումն է՝ սոցիալական մանկավարժի և դիտման օբյեկտի միջև ուղիղ և հետադարձ կապի գոյության պայմաններում:

Գոյություն ունեն դիտման տարբեր տեսակներ՝ անմիջական դիտում, միջնորդավորված, բաց, թաքնված (գաղտնի), անընդմեջ, նեղ մասնագիտական դիտումներ:

Անմիջականն այն դիտումն է, երբ օբյեկտի և նրա ուսումնասիրողի (սոցիալական մանկավարժի) միջև կան ուղիղ հարաբերություններ, երբ կապերը հաստատվում են առանց միջանկյալ ցուցանիշների, անցումների և ինդիկատորների (ցուցիչների):

Միջնորդավորված դիտումն իրագործվում է լիազորված անձանց միջոցով, որոնք աշխատում են ըստ ծրագրի և հետազոտողի հանձնարարությամբ:

Բաց դիտում անվանում ենք այն դիտումը, որը տեղի է ունենում օտար դիտորդների ներկայությամբ:

Գաղտնի դիտումը տալիս է երևույթի ռեալ պատկերը: Այն գաղտնի ուսումնասիրում է օբյեկտների գործունեությունը: Չնայած այս մեթոդի վերաբերյալ եղած հակասականությանը՝ այն շատ արժեքավոր է:

Անընդմեջ դիտումը կիրառվում է այն ժամանակ, երբ անհրաժեշտություն է առաջանում կոնկրետ մի մանկավարժական գործընթաց ուսումնասիրելու սկզբից մինչև ավարտը:

Նեղ մասնագիտական դիտումը ցանկալի է կիրառել այն ժամանակ և այնտեղ, երբ խնդիր է առաջանում ամբողջական օբյեկ-

տից առանձնացնելու այնպիսի մանկավարժական երևույթ, որը որոշակիացվում է գիտական հետազոտության նպատակով:

Գիտահետազոտական մեթոդախմբի մեջ մտնում է **մանկավարժական գիտափորձը**: Մանկավարժական գիտափորձը դիտվում է հետազոտության մեթոդների ինքնատիպ մի համալիր, որն ապահովում է ճշմարիտի գիտական, օբյեկտիվ և ապացուցված մի ստուգում, որն ուսումնասիրության սկզբում հիմնավորել էին վարկածները:

Մանկավարժական գիտափորձը հնարավորություն ունի առավել խորությամբ, քան մյուս մեթոդները, ստուգելու այս կամ այն նորամուծության արդյունավետությունը սոցիալական մանկավարժության ոլորտում: Այն կարող է համեմատել տարբեր գործոնների նշանակությունը մանկավարժական գործընթացի կառուցվածքում և ընտրել լավագույնը համապատասխան իրավիճակի համար: Այն ունի հնարավորություն վերհանելու այն անհրաժեշտ պայմանները, որոնց պարագայում կլուծվեն որոշակի մանկավարժական խնդիրներ:

Մանկավարժության մեջ առանձնացվում են գիտափորձի մի քանի հիմնական տեսակներ՝ բնական գիտափորձ և լաբորատոր գիտափորձ:

Հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններում առանձնացվում են հաստատող և ձևավորող գիտափորձերը: Հաստատող գիտափորձի ժամանակ սոցիալական մանկավարժ-հետազոտողը փորձարարական ճանապարհով որոշում է միայն ուսումնասիրվող մանկավարժական համակարգի վիճակը, հաստատում է կապերի փաստը, երևույթների միջև կախվածությունը: Իսկ երբ սոցիալական մանկավարժ-հետազոտողը կիրառում է միջոցների հատուկ համակարգ, որն ուղղված է հետազոտողի անձնային որակնե-

րի ձևավորմանը և նրա գործունեության ակտիվացմանը, այս դեպքում արդեն գործ ունենք ձևավորող գիտափորձի հետ:



Գծապատկեր 12. Գիտական հետազոտության մեթոդներ

Սոցիալական մանկավարժության հետազոտական մեթոդների շարքում կարևոր տեղ ունեն **հարցման մեթոդները**: Նրանց մեջ մտնում են զրույցը, հարցազրույցը, անկետավորումը: Սոցիալական հոգեբանները սրանց շարքում են դասում նաև թեստերը, գնահատող սանդղակները:

Զրույցը և հարցազրույցը բանավոր հարցումներ են, որոնք ուղղվում են մարդկանց այս կամ այն թեմայի վերաբերյալ, իսկ անկետավորումը գրավոր հարցում է: Հարցման ենթարկվածներին անվանում են **հարցվածներ և պատասխանողներ:**

Հարցազրուցի և անկետավորման ժամանակ շատ կարևոր նշանակություն ունի հարցերի ձևակերպումը: Դրանք կարող են լինել **բաց, փակ, կիսափակ**:

Առավել շարժուն և ճկուն մեթոդ է դիտվում **զրույցը**: Այս մեթոդի միջոցով ձեռք բերված տվյալները, ըստ Ֆ. Ա. Մուստաևայի, մեծ մասամբ օբյեկտիվ բնույթ ունեն[20]:

Զրույցները լինում են **անհատական** և **կոլեկտիվ**: Զրույցի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է լավ նախապատրաստվել, նախապես որոշել զրույցի նպատակը, ծրագիրը, խոսակցության (զրույցի) օբյեկտը, առարկան, հարցերը, ինչպես նաև անցկացման տեղն ու ժամանակը:

Զրույցի հաջողությունը մեծապես կախված է նաև նրանից, թե զրույց վարողը կկարողանա զրուցակցին տանել դեպի անկեղծություն:

Հարցազրույցը զրույցի մի տեսակ է: Այս դեպքում սոցիալական մանկավարժը հարցեր է տալիս ուսումնասիրվողին՝ զերծ մնալով հարցի վերաբերյալ սեփական կարծիքը հայտնելուց: Հարցազրույցները լինում են անհատական և խմբային:

Նշված մեթոդախմբում ներառված է նաև **անկետավորումը**: Այս մեթոդի արդյունավետությունը կախված է մի քանի պայմաններից.

ա. հարցերի ընտրություն, հատկապես այնպիսիները, որոնք առավել լավ են բնութագրում ուսումնասիրվող երևույթները,

բ. հարցերի ձևակերպում. տրվում են ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարցեր՝ բացառելով հուշումը ձևակերպումների մեջ,

գ. զգուշացում երկակի իմաստ արտահայտող հարցերի վերաբերյալ:

Վերջին ժամանակներում սոցիալական մանկավարժության ոլորտի գիտական հետազոտություններում հաճախ է կիրառվում **մոդելավորման մեթոդը**: Մոդելը տարրերի մի համակարգ է, որը

[20] **Мустаева Ф. А.,** Основые социальной педагогики, М., 2001, стр. 48.

վերարտադրում է ուսումնասիրվող առարկայի որոշակի կողմերը, կապերը, գործառույթները:

Մոդելավորումը ինչ-որ մի օբյեկտի բնութագրման վերարտադրումն է մեկ այլ օբյեկտի համար՝ հատուկ նրա համար ստեղծված:

Մոդելավորման հիմքում ընկած է ուսումնասիրվող օբյեկտի (բնականի) և նրա մոդելի միջև որոշակի համապատասխանություն[21]:

Այսօր լայն կիրառություն ունի **մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և ընդհանրացման մեթոդը:**

Մեծ ուշադրություն է դարձվում մանկավարժական առաջավոր փորձի կիրառման չափանիշային կողմին:

Ներկայացնենք դրանք.

ա. սոցիալ-մանկավարժական աշխատանքի արդյունավետության բարձրացում,

բ. նորույթ, նորարարություն,

գ. մանկավարժական գիտության պահանջների համապատասխանություն,

դ. հասարակական զարգացման միտումների, գիտության առաջադիմական գաղափարների համապատասխանություն,

ե. սոցիալ-մանկավարժական գործունեության ոլորտի ընդլայնում,

զ. մանկավարժական գործընթացի որակի բարձրացում,

է. սոցիալական մանկավարժի աշխատանքի բարձր արդյունքի ձեռքբերում,

ը. դաստիարակվողի անձի համակողմանի զարգացման համար պայմանների ստեղծում,

---

[21] **Мустаева Ф. А.,** Основые социальной педагогики, М., 2001, стр. 49.

թ. մանկավարժական նոր փաստերի բացահայտում:

Սոցիալական մանկավարժության մեջ տվյալների մշակման համար կիրառվում են **հետազոտության մաթեմատիկական մեթոդները՝ կարգավորման և սանդղակավորման մեթոդներ:**

Կարգավորման մեթոդի կիրառման ժամանակ հավաքած տվյալները տեղադրվում են որոշակի հաջորդականությամբ՝ ցուցանիշների աճման կամ նվազման կարգով և այդ շարքում յուրաքանչյուր տվյալի տեղի որոշում:

Սանդղակավորումը քանակական մեթոդ է, այն տալիս է հնարավորություն մանկավարժական երևույթների առանձին կողմերի գնահատման մեջ ներդնելու թվային ցուցանիշներ:

Մաթեմատիկական այս մեթոդները կիրառվում են գրեթե բոլոր գիտություններում հետազոտական աշխատանքներ իրականացնելիս:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սոցիալական մանկավարժության մեթոդների երկրորդ խումբը **դաստիարակության մեթոդախումբն** է: Այս մեթոդները սոցիալական մանկավարժի և դաստիարակվողի համատեղ փոխկապակցված գործունեության ուղիներն են, որոնք ուղղված են դաստիարակչական նպատակի ձեռքբերմանը և դրված խնդիրների լուծմանը:

Դաստիարակչական գործունեությունը բնութագրվում է հետևյալ կերպ. դաստիարակության օբյեկտը՝ ուրիշ մարդու անձը, նպատակը՝ այդ անձի զարգացումը և դաստիարակությունը որոշակի ուղղվածությամբ, բովանդակությունը՝ անձի հաղորդակցումը սոցիալական փորձին, միջոցները՝ դաստիարակության օբյեկտի հա-

մապատասխան գործունեության կազմակերպումը: Դաստիարակչական գործունեության առանձնահատկությունն այն է, որ դաստիարակության օբյեկտը միաժամանակ մանկավարժական գործունեության սուբյեկտ է: Իսկ նրա հիմնական դժվարությունն այն է, որ նույն մանկավարժական ներգործությունը՝ իրականացրած միևնույն պայմաններում, որոշ մարդկանց վրա ունենում է դրական, որոշների վրա՝ չեզոք, իսկ մյուսների վրա՝ բացասական ազդեցություն: Այդ է պատճառը, որ չափազանց բարդ ու պատասխանատու է դաստիարակվողի վրա ներգործության առավել արդյունավետ մեթոդի ընտրությունը:

Ժամանակակից մանկավարժական գիտության մեջ շատ բազմատեսակ են դաստիարակության մեթոդները: Դրանք են՝ **օրինակը, պատմելը, բանավեճը, դասախոսությունը, մանկավարժական պահանջը, հասարակական կարծիքը, վարժությունը, ստեղծագործական խաղերի կիրառման մեթոդը, խրախուսանքը, պատիժը, «պայթյունը»**:



Գծապատկեր 13. Դաստիարակության մեթոդները

Օրինակի մեթոդի դաստիարակչական ուժը հիմնված է դաստիարակվողի ընդօրինակման կարողության վրա:

Օրինակը՝ որպես մարդու համոզող վարքագծի, գործունեության, միջոցի նմուշ, ներթափանցում է դաստիարակության բոլոր մեթոդներ:

Նշված խմբի տարածված մեթոդներից է **բանավեճը**:

«Բանավեճ» բառը լատինական ծագում ունի (dispute), որը նշանակում է «խորհում եմ» (մտածում եմ), «վիճում եմ»: Այս մեթոդը նպաստում է բանավիճողների մոտ մտորումների, համոզմունքների, գնահատումների ձևավորմանը, որոնք հիմնված են վաղուց բացահայտված օրինաչափությունների վրա: Այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել կարծիքների բախման ընթացքում, միշտ աչքի են ընկնում բարձր ընդհանրականությամբ և կայունությամբ: Փաստենք, որ բանավեճ-դիսպյուտը չի պահանջում որոշակի և վերջնական լուծումներ: Իսկ ինչի՞ն է այն նպաստում: Բանավեճ-դիսպյուտը մասնակիցներին հնարավորություն է տալիս վերլուծելու հասկացություններն ու փաստարկումները, պաշտպանելու իրենց տեսակետները (հայացքները), դրանցում համոզելու մյուսներին:

Պատմելու մեթոդը՝ որևէ բարոյագիտական թեմայի շուրջ, սոցիալական մանկավարժը կարող է կիրառել առավելապես նախադպրոցական և կրտսեր դպրոցական երեխաների հետ աշխատելիս: Որևէ պատմության բովանդակություն պետք է շարադրվի պարզ և զգացմունքորեն, որպեսզի երեխաների վրա թողնի մեծ տպավորություն:

Դաստիարակության մեթոդախմբում իր ուրույն տեղն ունի **դասախոսություն մեթոդը:**

Դասախոսությունն այս մեթոդախմբում ունի հետևյալ ձևակերպումը. դասախոսությունը սոցիալ-քաղաքական, բարոյական, գե-

ղագիտական բովանդակությամբ այս կամ այն հիմնախնդրի էության համակարգված շարադրանք է՝ ձևակերպված մատչելի լեզվով:

Դասախոսությունը՝ որպես մեթոդ, տարբերվում է ներառած փաստերի հիմնավորվածությամբ, համոզեցուցչությամբ, սոցիալական մանկավարժի կենդանի խոսքով:

Մանկավարժական պահանջ մեթոդը: Մանկավարժական պահանջը պետք է առաջ անցնի ոչ միայն անձի զարգացումից, այլև վերածվի իր անձի նկատմամբ դաստիարակվողի պահանջի: Իսկ ինչպե՞ս է որոշվում մանկավարժական պահանջների բովանդակությունը: Վերջինս որոշվում է տիրող հասարակության մեջ գործող բարոյական նորմերով:

Ըստ ներկայացման ձևի՝ պահանջները լինում են **ուղիղ** և **անուղղակի**: Ուղիղ պահանջներից են՝ **հրամանը, ցուցումը, կարգադրությունը, հրահանգը**:

Անուղղակի պահանջներն են՝ **խնդրանքը, խորհուրդը, ակնարկը:** Սրանք հենվում են դաստիարակվողների մոտ ձևավորված նպատակի, համոզմունքի և խթանի վրա:

Հաջորդ մեթոդը **հասարակական կարծիքն** է: Այն գործունեության կազմակերպման խթանման մեթոդ է, ինչպես նաև հանդես է գալիս որպես անձի վրա կոլեկտիվի դաստիարակչական ներգործության ուղի: Այն արտահայտում է կոլեկտիվի կողմից տրված գնահատականը, պահանջը, կարծիքը: Հասարակական կարծիքը չի ձևավորվում տարերայնորեն, այլ կախում ունի դաստիարակչական գործընթացի կառավարման բնույթից:

Այս մեթոդախմբում իր ուրույն տեղն ունի **վարժություն մեթոդը**: Վարժությունը գործողությունների կանոնավոր, հաջորդական կրկնությունն է: Պայմանների կայունությունը (անփոփոխությունը),

հստակությունը, հետևողականությունը դաստիարակչական վարժությունների կարևոր ցուցիչներն են, որոնք բերում են մեծ արդյունք դաստիարակվողի վարքագծում:

Դաստիարակության մեթոդների շարքում բավականին հետաքրքիր ու արդյունավետ մեթոդ է **ստեղծագործական խաղերի կիրառման մեթոդը**:

Խաղային գործունեությունն իր էությամբ միշտ ստեղծագործական է: Խաղալով ստեղծագործական խաղեր՝ երեխաները ձգտում են դեպի հետաքրքրող նպատակը:

Խաղի դաստիարակչական նշանակությունն այն է, որ խաղային վարքագծում արտահայտվում է որոշակի բարոյական կերպար, օրինակ, որը գրավում է երեխային: Հենց այդ կերպարն է նա մարմնավորում խաղում:

Այս մեթոդի կիրառման ժամանակ հարկ է, որ սոցիալական մանկավարժը պահպանի մի քանի պահանջներ: Դրանք են.

- խաղի գաղափարը կարելի է առաջարկել երեխաներին, բայց ոչ պարտադրել,
- դերերի բաշխման ժամանակ հնարավորության սահմաններում բոլորին գոհացնել,
- յուրաքանչյուր երեխայի դնել այնպիսի դերում, որն առավել բարենպաստ կլինի նրա անձի ձևավորման համար,
- խաղը չավարտել այնքան ժամանակ, մինչև խնդիրը լուծվի[22]:

Մանկավարժական գործընթացում երեխաների գործունեության խթանման մեթոդ է **խրախուսանքը**:

Ի՞նչ է խրախուսանքը: Խրախուսանքն առանձին մարդու կամ

---

[22] **Мустаева Ф. А.,** Основы социальной педагогики, М., 2001, стр. 55.

կոլեկտիվի գործողությանը, արարքին տրված դրական գնահատականն է: Այս մեթոդը նպաստում է մարդու վարքագծում և բնավորության մեջ դրական գծերի զարգացմանն ու ամրապնդմանը: Խրախուսանքները լինում են նյութական (նաև դրամական) և բարոյական բնույթի: Դրանցից առանձնացնենք՝ հավանություն տալը, շնորհակալությունը, գովեստը, վստահությունը, պարգևը, մրցանակը, նվերը, պատվավոր պարտականությունների հանձնարարումը և այլն: Պետք է խրախուսել միայն իսկական հաջողության դեպքում: Պետք չէ խրախուսել միևնույն մարդուն շատ հաճախ, անձին խրախուսելիս պետք է ստանալ կոլեկտիվի աջակցությունը և հավանությունը: Խրախուսանքի միջոցներն ընտրելիս պետք է անպայմանորեն հաշվի առնել դաստիարակվողի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Իր դաստիարակչական արդյունավետությամբ հետ չի մնում **պատիժը**: Ի՞նչ է պատիժը: **Պատիժն** առանձին մարդու կամ կոլեկտիվի գործողությանը, արարքին տրված բացասական գնահատականն է:

Պատիժը շտկողական և կանխարգելիչ բնույթ ունի, այն օգնում է մարդուն վարքագծում և բնավորությունում տեղ գտած բացասական գծերի գիտակցմանն ու դրանց վերացմանը:

Պատիժները լինում են **նյութական** և **բարոյական տեսակի**. նկատողություն, դատապարտում, որոշակի իրավունքների սահմանափակում կամ զրկում, հավանություն չտալը, նախազգուշացում, արարքի քննարկում, հաճելի զբաղմունքից զրկում, հանդիմանություն, պարսավանք, նախատինք, դրամական փոխհատուցում: Պատժի մեթոդի կիրառման ժամանակ պետք է հաշի առնել դաստիարակվողի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Յուրաքանչյուր պատժի պետք է ուղեկցի պատճառի և պայմանների վերլուծությունը, որոնք և ծնել են այս կամ այն արարքը:

Պատժի արդյունավետ կիրառումը սոցիալական մանկավարժից պահանջում է տակտ և որոշակի վարպետություն:

Հաջորդ մեթոդը **«պայթյունն»** է: Մեթոդի այս անվանումը տվել է խորհրդային ժամանակաշրջանի տաղանդավոր մանկավարժ Ա. Ս. Մակարենկոն: Ո՞րն է այս մեթոդի էությունը և նրա դաստիարակչական նշանակությունը:

Սա երեխայի վերադաստիարակությանն այնպիսի մոտեցում է, երբ մանկավարժն այլևս չի կարող գործել աստիճանաբար, դանդաղ՝ կուտակելով դրական փոփոխություններ: «Պայթյունը» այնպիսի մի միջոց է, երբ կտրուկ կերպով սոցիալական մանկավարժը քանդում է, «պայթեցնում է» դաստիարակվողի մոտ ձևավորված սխալ դիրքորոշումը, տեսակետը: Այս մեթոդի տարբերակիչ գծերն են՝ հանկարծակիությունը և բարձր էմոցիոնալ լիցքավորումը: Իր հանկարծակիությամբ նա մարդուն շփոթմունքի է մատնում, իսկ զգացմունքային ուժեղ տպավորությունը զրկում է նրան իր սովորական պատասխանից: Եվ ի՞նչ է ստացվում: Շփոթմունքի այդ պահին դաստիարակվողը կորցնում է իր դիրքորոշման հանդեպ նախկին վստահությունը և հստակ չգիտակցելով իր քայլը՝ ընդունում է իրեն առաջարկած նոր ուղին: Այս մեթոդը կարելի է հաջողությամբ կիրառել այն ժամանակ, երբ դաստիարակվողը տատանվում է, իրենից դժգոհ է և զգում է, որ «փակուղի է մտել»: Այս մեթոդը պետք է շատ զգուշությամբ կիրառել՝ հաշվի առնելով դաստիարակվողի տարիքային, անհատական առանձնահատկությունները և այն հոգեվիճակը, որում գտնվում է նա:

ՍՈՑԻԱԼ - ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Սոցիալ-հոգեբանական օգնության մեթոդախմբում ընդգրկված են հետևյալ մեթոդները՝ **հոգեբանական խորհրդատվություն, սոցիալ-հոգեբանական թրեյնինգ (մարզում), աուտոթրեյնինգ (ինքնամարզում), գործնական խաղ**[23]**:**



Գծապատկեր 14. Սոցիալ-հոգեբանական օգնության մեթոդներ

Բնութագրենք սրանք առանձին-առանձին:

Հոգեբանական խորհրդատվություն: Այս մեթոդը շատ կիրառելի մեթոդ է ինչպես սոցիալական մանկավարժի աշխատանքում, այնպես էլ հոգեբանամանկավարժական ծառայություններ մատու-

[23] **Мустаева Ф. А.,** Основы социальной педагогики, М., 2001, стр. 58.

ցելիս: Այս մեթոդն իր էությամբ հոգեբանական օգնություն է՝ լուծելու համար անձնային, երեխա-ծնող, միջզույգային խնդիրները, որոնք ունեն հոգեբանական բնույթ: Այս մեթոդի կիրառման ժամանակ ներգործության միջոց է հանդես գալիս զրույցը:

Աուտոթրեյնինգ (ինքնամարզում): Սա հատուկ վարժությունների մի համալիր է՝ հիմնված ինքնաներշնչման և վարքագծի ինքնակառավարման վրա:

20-րդ դարի 30-ական թվականներին աուտոթրեյնինգի հնարները (եղանակներն ու միջոցները) մշակել է գերմանացի հոգեթերապևտ Ի. Շուլցը: Այսօր այս մեթոդի վերաբերյալ հրատարակություններն անցնում են չորս հազարի սահմանը, հետևաբար յուրաքանչյուր սոցիալական մանկավարժ պետք է գիտակցի, որ աուտոթրեյնինգի հնարների ընտրությունը պետք է կատարի՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները:

Նշված մեթոդի կիրառման ժամանակ երեխային (մարդուն-պացիենտին) պետք է սովորեցնել մկանների թուլացում, ինքնաներշնչում, ուշադրության կենտրոնացման և պատկերացման ուժերի զարգացում, ինքնաբերական մտավոր ակտիվության վերահսկողության կարողություն:

Սոցիալ-հոգեբանական թրեյնինգ: Այս մեթոդը խմբային մեթոդների համադրություն է, որը միտված է ինքնագիտակցության կարողությունների և հմտությունների ձևավորմանը, խմբում մարդկանց հաղորդակցմանն ու համագործակցությանը: Այս մեթոդի նպատակն է անձի ընդհանուր հաղորդակցական պատրաստվածության, պատրաստակամության ձևավորումը, ինչպես նաև կատարելագործումը: Այս մեթոդի հիմնական միջոցներն են խմբային բանավեճը և դերային խաղը:

Գործնական խաղ: Սոցիալական մանկավարժի աշխատանքում տարածված են այն գործնական խաղերը, որոնց նպատակն է մոդելավորել որոշակի մանկավարժական իրավիճակներ: Այս մեթոդի կիրառման ժամանակ տեղի է ունենում մասնակիցների յուրահատուկ (խաղային) գործունեության ծավալում՝ նմանակման մոդելի վրա, այսինքն՝ իրականացվում է որոշակի գործունեության առարկայական և սոցիալական բովանդակության վերստեղծում:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Վարկած, ցուցանիշ, հրահանգ, տակտ, խորհրդատվություն, թրեյնինգ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է մեթոդը:
2. Որո՞նք են սոցիալական մանկավարժության մեթոդախմբերը:
3. Ի՞նչ մեթոդներ են ներառված գիտական հետազոտության մեթոդախմբում: Ինչի՞ն են նպաստում այս մեթոդները:
4. Ո՞ր մեթոդներն են ընդգրկված դաստիարակության մեթոդախմբում:
5. Ինչպիսի՞ն են իրենց բնույթով սոցիալ-հոգեբանական օգնության մեթոդախմբի մեթոդները:
6. Ինչպիսի՞ն է այս երեք մեթոդախմբի հարաբերակցությունը՝ փոխկապվածությունն ու փոխլրացումը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լսարանում կազմակերպե՛ք քննարկում՝ «Սոցիալական մանկավարժության մեթոդների արդյունավետ կիրառման գոր-

ծոնները» թեմայով՝ հանգամանորեն մեկնաբանելով, թե ինչ գործոններ պետք է հաշվի առնի սոցիալական մանկավարժն իր գործունեության ընթացքում սոցիալական մանկավարժության մեթոդները կիրառելիս: Քննարկումն ավարտելիս եզրահանգումները ներկայացրե՛ք սխեմատիկ ձևով (գծագրով):

1.8. «Նորմեր» և «շեղում նորմերից» հասկացությունները սոցիալական մանկավարժության մեջ

Ցանկացած հասարակությունում, զարգացման ինչպիսի աստիճանում էլ նա գտնվելիս լինի՝ տնտեսապես զարգացած կամ զարգացող երկիր, կան մարդիկ, որոնք կարիք ունեն հատուկ ուշադրության: Դրանք այն մարդիկ են, որոնք զարգացման այս կամ այն շեղումն ունեն՝ ֆիզիկական, հոգեկան կամ սոցիալական: Այս մարդիկ առանձնանում են հատուկ խմբերում: Եվ տվյալ հասարակությունում ու պետությունում ձևավորվում է հատուկ վերաբերմունք նրանց հանդեպ: Սակայն հետաքրքիրն այն է, որ տարբեր ժամանակաշրջաններում այս կատեգորիայի մարդկանց նկատմամբ տարբեր է եղել վերաբերմունքը: Օրինակ՝ Հին Սպարտայում վերաբերմունքը ծայրահեղ դաժանությամբ էր դրսևորվում, ընդհուպ մինչև ֆիզիկական ոչնչացումը, այլ ժամանակներում վերաբերմունքը եղել է գթասիրտ:

21-րդ դարաշրջանում Ամերիկայի Միացյալ Նահանգներում զարգացման այս կամ այն խնդիրներն ունեցող մարդկանց անվանում են «խնդիրներով մարդիկ», իսկ Եվրոպայում՝ «սահմանափակ կարողություններով մարդիկ»: Զարգացած եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում իրականացվում է զարգացման շեղումներ ունեցող

մարդկանց հասարակություն ներառելու հայեցակարգը, ըստ որի՝ այս մարդիկ դիտվում են տվյալ հասարակության լիիրավ անդամներ՝ պարզապես որոշ խնդիրներով և սահմանափակ հնարավորություններով:

Այսօր ամբողջ աշխարհում զարգացման շեղումներ ունեցող մարդկանց թիվը բավականին մեծ է և ունի միտում աճելու: Եվ ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի (ЮНЕСКО) կանխատեսումների՝ այս խնդիրը համաշխարհային հասարակայնությունը մոտակա ժամանակներում չի կարողանա լուծել: Ահա թե ինչու այս երևույթը պահանջում է պլանավորված սոցիալական լուծումներ: Չնայած այն բանին, որ այսօր աշխարհում տեղի է ունենում զարգացման շեղումներ ունեցող մարդկանց (երեխաների) հասարակություն ներառելու գործընթաց, այնուամենայնիվ դրանով իսկ պարզ է դառնում, որ այն արտաքին հանգամանքները, որում նրանք գտնվում են, կամ նրանց առողջական վիճակը չեն համապատասխանում տվյալ հասարակությունում ընդունված որոշակի նորմերի:

Մարդկանց գիտակցության մեջ «նորմալը» միշտ ունի իր սահմանները, իսկ այն ամենը, ինչը գտնվում է այդ սահմաններից դուրս, բնորոշվում է որպես «ոչ նորմալ»:

Պրակտիկայում գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար անձի գնահատումը տեղի է ունենում նորմերին համապատասխանության կամ ոչ համապատասխանության չափանիշներով:

«Նորմ» հասկացությունը կիրառվում է տարբեր գիտություններում, ինչպես՝ բժշկագիտությունը, հոգեբանությունը, մանկավարժությունը, սոցիոլոգիան և այլն:

Նպատակ չհետապնդելով տալ «նորմի» սահմանումները տարբեր գիտություններում՝ շեշտենք, որ սոցիալական մանկավարժության համար «նորմ» և «նորմից շեղում» հասկացությունները չա-

փազանց կարևոր են, քանի որ դրանք կիրառվում են մարդու զարգացման գործընթացի և սոցիալական վարքագծի բնութագրման համար:

Իսկ շեղումները կարող են ունենալ ինչպես բացասական, այնպես էլ դրական բնույթ: Այսպես, օրինակ՝ երեխայի զարգացման նորմից շեղում դիտվում են ինչպես մտավոր հետամնացությունը, այնպես էլ տաղանդավոր լինելը:

Մարդկանց (երեխայի) վարքագծում այնպիսի բացասական շեղումները, ինչպիսիք են՝ հանցագործությունը, հարբեցողությունը, թմրամոլությունը և այլն, բացասական ներգործություն են թողնում և՛ մարդու սոցիալական կայացման գործընթացի, և՛ հասարակության զարգացման վրա ամբողջությամբ: Իսկ դրական շեղումները վարքագծում, ինչպես, օրինակ՝ տնտեսական նախաձեռնողականությունը, գիտական և գեղարվեստական ստեղծագործությունը և այլն, նպաստում են սոցիալական համակարգի զարգացմանը, հին նորմերը նորով փոխելուն:

Սոցիալական մանկավարժության մեջ «նորմ» և «շեղում» հասկացությունները թույլ են տալիս պարզաբանել, թե ինչպես են նրանք ազդում անձի սոցիալականացման գործընթացի վրա:

Սոցիալական մանկավարժության մեջ նորմից շեղումները պայմանականորեն բաժանվում են չորս խմբի՝ **ֆիզիկական, հոգեկան, մանկավարժական** և **սոցիալական**[24]**:**

Ի՞նչ է նորմից **ֆիզիկական շեղումը**: Այն հիմնականում կապված է մարդու առողջության հետ և որոշվում է բժշկական ցուցանիշներով:

Բժշկագիտության մեջ տարիքային և սեռային յուրաքանչյուր

---

[24] **Штинова Г. Н., Галагузова М. А., Галагузова Ю. Н.,** Социальная педагогика, М., 2008, стр. 161.

խմբի երեխաների համար որոշվում են ցուցանիշներ (քաշը, հասակը, կրծքավանդակի ծավալը), որոնք բնորոշում են երեխայի առողջությունը:

Առողջության շեղումները (ֆիզիկական շեղումներ) կարող են առաջանալ ինչպես ժառանգական գործոններով, այնպես էլ արտաքին հանգամանքներով. ծանր տնտեսական պայմանները, խմելու ջրի անորակությունը, ընտանիքի կենսամակարդակի վատթարացումը և այլն:

Հատուկ մանկավարժության մեջ ֆիզիկական շեղումները որոշվում են՝ ելնելով առողջության սահմանափակ հնարավորություններով երեխաների ուսուցման հնարավորություններից: Սրան վերաբերում են այն երեխաները, որոնք ունեն ֆիզիկական և (կամ) հոգեկան արատներ, որոնք խոչընդոտում են յուրացնել կրթական չափորոշիչները՝ առանց ապահովելու հատուկ պայմաններ՝ կրթություն ստանալու համար:

Ֆիզիկական արատներին են վերաբերում մարդու օրգանիզմի մեկ օրգանի կամ օրգանների զարգացման և գործողությունների ժամանակավոր կամ մշտական արատները, ինչպես նաև քրոնիկական (տևական) սոմատիկ (մարմնական-օրգանական) կամ ինֆեկցիոն հիվանդությունները:

Երեխայի ֆիզիկական զարգացման շեղումների շարքում կարելի է դասել հիվանդությունը, տեսողության, լսողության և հենաշարժողական ապարատի խանգարումները:

Նորմից հոգեկան շեղումներ: Այս տիպի շեղումները նախ և առաջ կապված են երեխայի մտավոր զարգացման, նրա հոգեկան արատների հետ: Շեղման այս խմբին են պատկանում երեխայի հոգեկան զարգացման ուշացումը (ՀԶՈՒ) և երեխայի մտավոր հետամնացությունը (օլիգոֆրենիա - հունարեն oligos՝ փոքր և phren՝ միտք): Մտավոր հետամնացությունը կարող է պայմանավորված լի-

նել նյարդային համակարգի ժառանգական թերություններով կամ որպես հետևանք՝ հիվանդության, տրավմայի և այլ պատճառի:

Երեխաների մոտ կարող են դրսևորվել մտավոր հետամնացության տարբեր աստիճաններ՝ թեթևից, որն է դեբիլությունը, մինչև խորը՝ հիմարությունը (ապուշությունը):

Հոգեկան շեղումների թվին են դասվում երեխայի հուզակամային ոլորտի խանգարումը, խոսքի խանգարումն իր տարբեր բարդություններով՝ արտասանության խանգարումը, կակազը, ընթերցանության և գրավոր խոսքի խանգարումները: Եվ որպես հոգեկան շեղման ծայրահեղ ձևեր հանդես են գալիս աուտիզմը (հուն. aytos՝ ինքս) և սուիցիդը՝ ինքնասպանության փորձը: Աուտիզմը հոգեկանի այն վիճակն է, որը բնութագրվում է ինքնամփոփվածությամբ, հաղորդակցման բացակայությամբ:

Շեղման յուրահատուկ մի խումբ է **երեխաների օժտվածությունը**: Օժտվածությունը երեխայի (մարդու) ընդունակությունների մի ինքնատիպ միացություն է, որն ապահովում է այս կամ այն գործունեության կատարման հաջողությունը:

Օժտվածության և տաղանդի չափը որոշվում է ոչ թե ընդունակությունների բնութագրմամբ, այլ գործունեության արդյունքների բնույթով, որոնք տարբերվում են իրենց նորույթով, ոչ ստանդարտությամբ, ինքնատիպությամբ և ուրիշ ցուցանիշներով:

Երեխաների մոտ կարող են դրսևորվել տարբեր ընդունակություններ՝ երաժշտական, մաթեմատիկական, լեզվական, արվեստի և այլն: Անհրաժեշտ է ստեղծել բոլոր անհրաժեշտ ու նպաստավոր պայմաններն օժտվածության զարգացման համար:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

«Մանկավարժական շեղում» հասկացությունը դեռևս քիչ է կիրառվում ինչպես մանկավարժության, այնպես էլ սոցիալական մանկավարժության մեջ: Սակայն մանկավարժական գործունեության մեջ մանկավարժական նպատակներ իրականացնելու և անձի զարգացումը խթանելու համար կիրառվում են տարբեր նորմեր: Վերջիններիս օգնությամբ կարգավորվում է սովորողների գործունեությունը՝ համեմատության մեջ դնելով նորմը ցուցանիշների հետ, որոնք բնութագրում են այդ գործունեության գործընթացը և արդյունքները: Նախ և առաջ սա վերաբերում է չափորոշիչներին, որոնք որոշում են կրթության մակարդակը, հեռանկարները, որին ձգտում է սովորողը: Դրանք կարող են լինել սովորողի անհատական զարգացման նորմերը, որոնք կապահովեն առավել բարձր արդյունքներ ուսման մեջ և այլն[25]:

Մանկավարժական շեղում կարելի է դիտարկել «կրթություն ստանալ» նորմից «կրթություն չստանալ» շեղումը:

Յուրաքանչյուր երկիր, հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքը, մշակում է «Ընդհանուր կրթության չափորոշիչներ», որոնք և դիտվում են որպես մանկավարժական կամ կրթական նորմ: Այսպես, օրինակ՝ ՀՀ-ում, ըստ ՀՀ Սահմանադրության «Կրթության մասին» հոդվածի (1995 թ.) և ՀՀ «Կրթության մասին օրենքի» (1999 թ.), յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք և պարտավոր է ստանալ ընդհանուր միջնակարգ կրթություն (հիմնական դպրոց = կրտսեր դպրոց + միջին դպրոց՝ 9 տարի տևողությամբ՝ ըստ 12-ամյա կրթության):

---

[25] **Штинова Г. Н., Галагузова М. А.,** Социальная педагогика, М., 2008, стр. 165.

Ընդհանուր միջնակարգ 9-ամյա կրթությունը, ըստ ՀՀ «Կրթության մասին» օրենքի, համարվում է հանրապետությունում պարտադիր կրթություն: Սա դիտվում է որպես կրթություն ստանալու նորմ: Սակայն այսօր մեր հանրապետությունում կան որոշ թվով երեխաներ, որոնք այդ պարտադիր կրթությունը չեն ստանում, չեն հաճախում դպրոց, կամ նրանք հաճախել են միայն կրտսեր դպրոց, իհարկե, տարբեր պատճառներով. սոցիալական վատ պայմանները, անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտն ընտանիքում կարող են երեխային նետել փողոց, իսկ այնտեղ նա դիմում է թափառաշրջության, մուրացկանության, հակահրավական քայլերի (գողություն, խուլիգանություն, զանցանք, հանցանք, հանցագործություն): Պատճառ կարող են լինել նաև ծնողազրկությունը, հիվանդությունները, սահմանափակ կարողությունները և այլն:

Վերոհիշյալ ցանկացած պատճառով կրթություն չստանալը դիտվում է որպես մանկավարժական շեղում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Սոցիալական շեղումը, բնականաբար, կապված է «սոցիալական նորմ» հասկացության հետ: Իսկ ի՞նչ է սոցիալական նորմը:

Սոցիալական նորմն առանձին մարդկանց կամ սոցիալական խմբի գործողության կանոնն է, օրինակը կամ նրանց գործունեության, վարքագծի թույլատրելի չափը, որոնք պաշտոնապես սահմանված կամ ձևավորված են հասարակության զարգացման այս կամ այն փուլում: Այլ կերպ ասած՝ սոցիալական նորմերը հանդես են գալիս որպես պատշաճ վարքագծի, գործունեության, հասարակական հարաբերությունների մոդել, որը ստեղծվում է մարդկանց

կողմից՝ հիմք ընդունելով սոցիալական իրականության ճանաչումը:

Սոցիալական նորմերը բաժանվում են երկու խմբի՝ 1) համընդհանուր և 2) մասնավոր: Համընդհանուր նորմերը տարածվում են հասարակության յուրաքանչյուր անդամի վրա, իսկ մասնավորները վերաբերում և կարգավորում են մարդկանց մասնագիտական գործունեության որոշակի ոլորտ կամ կենսագործունեություն: Այսպես, օրինակ՝ բժիշկ, սոցիալական մանկավարժ, դերասան (մասնագիտական ոլորտ), եղբայր, քույր, ընկեր (կենսագործունեություն):

Մարդու վարքագծում սոցիալական նորմերը և դրանցից շեղումները հանդես են գալիս որպես յուրաքանչյուր հասարակության գործառության անբաժանելի գործոններ:

Սոցիալական շեղումները կարող են պայմանավորված լինել մարդու սոցիալական կարգավիճակով, նրա սոցիալական դերով՝ որպես գործունեության սուբյեկտի, գործունեության բնույթով, արժեքային չափանիշներով և ուրիշ գործոններով:

Երեխաների համար սոցիալական նորմը նաև այն է, որ դրանք դիտվում են որպես դաստիարակության գործոններ, որի ընթացքում տեղի են ունենում սոցիալական նորմերի և արժեքների յուրացում, մուտք սոցիալական միջավայր, սոցիալական դերերի և սոցիալական փորձի յուրացում:

Եվ մանկավարժության, հոգեբանության և սոցիոլոգիայի մեջ կիրառվում է «դժվար», «դժվար դաստիարակվող», «վարքագծային շեղումներ ունեցող երեխա» (երիտասարդ) եզրույթը, ինչպես, օրինակ՝ մանկական հարբեցողությունը, թմրամոլությունը, մարմնավաճառությունը, խուլիգանությունը, թափառաշրջությունը, օրինախախտությունը և հանցագործությունը: Այս դեպքերում մարդու վարքագիծը չի համապատասխանում տվյալ հասարակության մեջ ընդունված համապատասխան նորմերին և կանոններին:

Սոցիալական նորմերից երեխաների վարքագծային շեղումներն ունեն մի շարք պատճառներ, ինչպես, օրինակ՝ երկրի զարգացման անկայունությունը, ծայրահեղ (էքստրեմալ) իրավիճակները, հասարակությունում սոցիալական դիրքի անորոշությունը, դեռահասության անցումային տարիքի դժվարությունները, որոնցից անչափահասը չի կարողանում ինքնուրույնաբար դուրս գալ:

Սոցիալական զարգացման շեղումներ ունեցող երեխաների շարքում կարելի է առանձնացնել նաև այնպիսի մի կատեգորիա, ինչպիսին են ծնողական խնամքից զուրկ երեխաները: Նրանք «որբ երեխաներն են, կամ, ինչպես անվանում են, «սոցիալական որբերը», որոնք ունեն կենսաբանական ծնողներ, սակայն այս կամ այն պայմաններից (հանգամանքներից) ելնելով՝ չեն ապրում նրանց հետ: Այս երեխաների համար կան մանկատներ, գիշերօթիկ դպրոցներ, սոցիալ-վերականգնողական կենտրոններ, սոցիալական-ընդունիչ-բաշխիչ կենտրոններ, որտեղ ընդունում են նմանատիպ երեխաներին և կազմակերպում նրանց խնամքն ու դաստիարակությունը:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Նորմ, սոմատիկ, տրավմա, դեբիլություն, աուտիզմ, սուիցիդ, «սոցիալական որբ»:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է նորմը և շեղումը նորմից:
2. Այսօր Ամերիկայում և Եվրոպայում ինչպե՞ս են անվանում զարգացման շեղումներ ունեցող մարդկանց:
3. Ի՞նչ բնույթի կարող են լինել շեղումները:
4. Սոցիալական մանկավարժության մեջ նորմից շեղումները

պայմանականորեն քանի՞ խմբի են բաժանվում:

5. Ի՞նչ է նորմից ֆիզիկական շեղումը:
6. Ի՞նչ է նորմից հոգեկան շեղումը:
7. Ի՞նչ եք հասկանում՝ մանկավարժական շեղում ասելով:
8. Ինչպիսի՞ն են սոցիալական շեղումները:

ՊԱՏՐԱՍՏԵՔ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐ

Լսարանը բաժանե՛ք չորս խմբի, և յուրաքանչյուր խումբ թո՛ղ ուսումնասիրի նորմից շեղման մի տեսակ՝ ուշադրությունը բևեռելով այդ շեղումը ծնող պատճառների և լուծման եղանակների վրա: Այնուհետև չորս խումբն էլ թո՛ղ իրենց ուսումնասիրությունները ներկայացնեն լսարանին զեկուցմամբ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ. ՄԱՐԴՈՒ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. Սոցիալականացումը որպես սոցիալական մանկավարժության գլխավոր հիմնախնդիր

Յուրաքանչյուր գիտական ոլորտի զարգացման և կայացման հեռահար նպատակները ձևավորվում են այն հիմնախնդիրների շուրջ, որոնք ժամանակի մարտահրավերներին համահունչ լուծումներ են ենթադրում՝ հիմք ընդունելով տվյալ ժամանակի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային առանձնահատկությունները, պետության սոցիալական պատվերը, կրթական պահանջմունքները, արժեքային համակարգի կողմնորոշումները, միջանձնային հաղորդակցման առանձնահատկություններն ու հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը: Եթե այս դիրքորոշմամբ դիտարկենք, սոցիալական մանկավարժության գլխավոր հիմնախնդիրը **սոցիալականացումն** է, ապա նրա շուրջը տրամաբանական փոխառնչություններով կհամալրվեն սոցիալական **զարգացում, սոցիալական դաստիարակությունն** ու **սոցիալական ուսուցում** հիմնահարցերը:

Սոցիալականացումը դիտարկելով որպես սոցիալական մանկավարժության գլխավոր հիմնախնդիր՝ անհրաժեշտ է.

- ուսումնասիրել սոցիալականացումը որպես առանձին գիտաճյուղի գիտելիքների բնագավառ,
- քննարկել սոցիալականացումը որպես սոցիալ-մանկավարժական գործունեության ուսումնասիրության օբյեկտ,
- կարևորել սոցիալականացումը որպես երեխայի սոցիալա-

կանացման առանձնահատկությունների և օրինաչափությունների բնութագրական չափանիշ, անձի կայացման մեխանիզմ:

«Սոցիալականացում» եզրույթը հումանիտար գիտություններում շրջանառության մեջ է դրել ամերիկացի սոցիոլոգ Ֆրանկլին Գիդդինկսը՝ իր «Սոցիալականացման տեսություն» աշխատության մեջ: Նա սոցիալականացումը դիտարկում է որպես «սոցիալական կյանքին» հարմարվելու միջոց: **«Սոցիալականացում»** եզրույթն անցել է զարգացման երկարատև ընթացք, որի ժամանակ հստակեցվել է եզրույթի ընկալման բովանդակությունը[26]:

Ներկայումս «սոցիալականացում» եզրույթը բնութագրվում է այսպես. «Սոցիալականացումը մարդու զարգացումն է ամբողջ կյանքի ընթացքում շրջակա միջավայրի հետ փոխգործակցությամբ, սոցիալական նորմերի և մշակութային արժեքների յուրացման և վերարտադրության գործընթացում, ինչպես նաև ինքնազարգացում և ինքնահիրացում այն հասարակությունում, որին նա պատկանում է»[27]:

Սոցիալական մանկավարժությունն իր զարգացումն ու կայացումն ունի նաև ՀՀ-ում: Օգտագործելով հայ իրականության մեջ առկա սոցիալական մանկավարժության ձևավորման նախադրյալները՝ այն որպես գիտաճյուղ ունի իր հստակ նպատակը, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հասկացությունների համակարգը, կապն այլ գիտաճյուղերի հետ, զարգացման նախադրյալներն ու պատմությունը:

Դիտարկելով սոցիալականացումը որպես սոցիալական ման-

---

[26] **Гиддингс Ф. Г.,** Основания социологии. Анализ явлений ассоц. и соц. орг. / Пер. с англ. Спиридонова Н. Н., М., 1898, стр. 164.

[27] **Мудрик А. В.,** Социализация человека. Учеб. пособие для студ., М., 2004, стр. 28-34.

կավարժության գլխավոր հիմնախնդիր՝ այն չպետք է տարանջատել մանկավարժական գործընթացից: Հետևաբար, այն մանկավարժական օրինաչափությունները, որոնք բնորոշ են մանկավարժական գործընթացին, բնորոշ են նաև սոցիալականացմանը, քանի որ այդ ընթացքում է մարդը կրթվում, դաստիարակվում և զարգանում:

«Մանկավարժական գործընթաց» և «սոցիալականացում» երևութների, գործընթացների միջև գործում են դարձելի, երկկողմանի կապեր: Մի կողմից մարդը ուսումնառության ժամանակ սոցիալականացվում է, և այս դեպքում ուսուցման գործընթացն ու դաստիարակությունը նպատակին հասնելու միջոցներ են, մյուս կողմից սոցիալականացման առանձնահատկություններով, սոցիալական գործոններով, սոցիալական միջնորդներով են պայմանավորված շարունակական սոցիալականացման մակարդակների աստիճանական փոփոխություններն ամբողջ կյանքի ընթացքում: Սոցիալականացման յուրաքանչյուր փուլում, կախված անձի անհատական, տարիքային, հոգեբանական, ազգային առանձահատկություններից, փոփոխվում են մանկավարժական գործընթացի մեթոդներն ու ձևերը[28]:

Եթե ընտանիքում և կրթադաստիարակչական հաստատություններում սոցիալականացումն ունի ուղղորդված և նպատակային բնույթ, ապա փողոցում, բակում, ռիսկային խմբերում սոցիալականացումը կարող է ունենալ տարերային, հակասական բնույթ, որը կառավարելը լրացուցիչ դժվարություններ և բարդություններ է ստեղծում: Միջավայրում մարդու վրա տարերային սոցիալականացման ներգործությունը հանգեցնում է անձի սոցիալական, վար-

[28] **Сластенин В. А.,** Социальная педагогика и социальная работа, Тула, 1992, стр. 265.

քագծային, մանկավարժական, հոգեբանական շեղումների:

Միաժամանակ մարդու հարմարումը տարբեր սոցիալական միջավայրերում հնարավորություն է տալիս նոր որակներ և վարքագծային փոփոխություններ ձեռք բերելու մարդու զարգացման ներքին և արտաքին հակասությունների զարգացման արդյունքում: Սոցիալական մանկավարժությունը կարևորում է մարդու սոցիալական զարգացվածության մակարդակը, որը հնարավորություն է տալիս տարբեր սոցիալական ինստիտուտների միջոցով ներգրավվելու հասարակություն: Այսպիսով՝ ներդաշնակվում են անձ-հասարակություն փոխհարաբերությունները: Մարդու սոցիալականացումը ուղեկցվում է միջավայրի և մանկավարժական պայմանների պարբերաբար փոփոխությամբ: Այս դեպքում սոցիալական միջավայրը միջոց է մանկավարժական ներգործությունն արդյունավետ և որակյալ դարձնելու համար: Գիտելիքային-վերարտադրողական կրթական հարացույցից նոր՝ անձնակողմնորոշիչ-ձևավորող-զարգացնող հարացույցին անցնելիս առավել ակնառու դրսևորվում են սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունները, որոնք ենթադրում են կարևորել ոչ միայն ԳԿՀ-ը, այլև սովորողի սոցիալականացման գործընթացը: Այս տեսակետից սոցիալական մանկավարժությունը ներդաշնակ փոխլրացնում է սոցիումի և մարդու սոցիալականացման զարգացման տարաբնույթ համագործակցության հնարավորությունները: Սոցիալական մանկավարժության հիմնախնդիրներից մեկն էլ սոցիումի մանկավարժական ներուժի և մարդու սոցիալականացման փոխառնչություններն են:

Սոցիալականացումը՝ որպես սոցիալական գիտելիքի բնագավառ, ունի երկու բնութագրիչներ՝ **կենսաբանական** (անձի կազմաբնախոսական, հոգեբանական, տարիքային, անհատական, սեռային առանձնահատկությունները) և **սոցիալական** (մարդու հար-

մարումը արտաքին և ներքին միջավայրին, սոցիալական միջավայրի պահանջներին, պայմաններին համապատասխան զարգացում)[29]:

Արդյունավետ սոցիալականցմանը նպաստում է սոցիալական միջավայրը (մարդկանց հանրությունը, սոցիումը): Սոցիումի մանկավարժական ներուժը միջոց է երեխայի սոցիալականացման և ինքնիրացման համար: Փաստացի ստեղծվում են սոցիալ-մանկավարժական պայմաններ, որոնք ներդաշնակորեն ապահովում են երեխայի սոցիալականացումը, ուսումնառությունը և դաստիարակությունը:

Սոցիալականացման ընթացքում սերունդներին փոխանցվում է սոցիալական փորձ, որի արդյունքում ոչ միայն յուրացվում են սոցիալական միջավայրի պայմանները, այլև առաջանում են սոցիալ-մանկավարժական նոր խնդիրներ, խոչընդոտներ, որոնք մարդը սոցիալականացման հետագա ընթացքում փորձում է հաղթահարելով լուծել: Սոցիալական փորձի փոխանցման ընթացքում առաջանում են մի շարք խնդիրներ՝ սոցիալական պահանջմունքների բավարարում, սոցիալական արժեքային կողմնորոշումներ, ապահարմարման խնդիրներ, սեփական առողջության պահպանման և դիմացինի առողջությունը գնահատելու և հարգելու անհրաժեշտություն, իրավունքների և պարտականությունների հավասարարժեքություն: Թվարկված խնդիրների լուծման, հաղթահարման մեջ իր դերակատարությունն ունի սոցիումը, որի առանձնահատկությունների և օրինաչափությունների մասին պատկերացումներ են տալիս սոցիոլոգիայի, սոցիալական հոգեբանության բնագավառների գիտելիքները:

Սոցիալականացման գործընթացում ծագած խնդիրները հաջո-

---

[29] **Никитина Л. Е.,** Социальная педагогика. Учеб. пособие для вузов, М., 2003, стр. 272.

ղությամբ և որակյալ լուծելու համար սոցիալական մանկավարժությունն օգտագործում է միջառարկայական կապերը: Այս դեպքում սոցիալականացման բովանդակությունը դիտարկվում է որպես սոցիալ-մանկավարժական երևույթ:

Եթե փորձենք սոցիալականացումը բնութագրել որպես սոցիալ-մանկավարժական երևույթ, ապա այն բարդ է, երկկողմանի, շարունակական, հակասական, բազմամակարդակ, նպատակային և տարերային: Սոցիալականացումը՝ որպես սոցիալ-մանկավարժական երևույթ, բարդ է, քանի որ միաժամանակ ընթանում են և՛ զարգացման, և՛ կրթության, և՛ դաստիարակության գործընթացներ: Շարունակական է, քանի որ սոցիալականացման փուլերին համապատասխան՝ սոցիալականացումն ընթանում է մարդու ամբողջ կյանքի ընթացում: Սոցիալականացումը հակասական է, քանի որ սոցիալականացման տարբեր փուլերում, սոցիալական զարգացման տարբեր մակարդակներում կարող են առաջանալ հակասություններ, որոնք դրդապատճառներ, խթան կարող են լինել սոցիալական հետագա զարգացման համար: Սոցիալականացումը բազմամակարդակ է, քանի որ միկրո, մեզո, մակրո և մեգա սոցիալական համակարգերից յուրաքանչյուրն ունի իր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Սոցիալականացումը նպատակային է, քանի որ սոցիալական տարբեր ինստիտուտներում իրականացվում է նպատակային ներգործություն: Սոցիալականացումը երկկողմանի է, քանի որ սոցիալական միջավայրում անընդհատ երկկողմանի փոխհամագործակցում են սոցիումը և մարդը:

Սոցիալականացումը, դիտարկելով որպես սոցիալական մանկավարժության գլխավոր հիմնախնդիր, կարող ենք ասել.

- սոցիալականացումը **սոցիալ-մանկավարժական երևույթ** է,

որտեղ սոցիալական մանկավարժի և կրթվողի սուբյեկտ-սուբյեկտային, սոցիալ-մանկավարժական համագործակցություն է տեղի ունենում:

- Սոցիալականացումը **գործընթաց** է, քանի որ սոցիումի ներգործությամբ անձի ձևավորման և զարգացման քանակական և որակական փոփոխություններն են կատարվում:
- Սոցիալականացումը սոցիալական մանկավարժ, սոցիալական միջնորդ-երեխա **փոխհարաբերությունների համակարգ** է, որտեղ յուրաքանչյուրը ստանձնում է տարբեր սոցիալական դերեր, փոխլրացնելով իրականացնում օբյեկտ-սուբյեկտային, սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերություններ:

Սոցիում-մարդ փոխհարաբերությունների ընթացքում կարևորվում է անձի ինքնահիրացման խնդիրը հասարակության մեջ: Մարդն իր հիմնախնդիրներով **օբյեկտ** է, երբ ներգործվում է սոցիալական միջավայրում, իսկ սոցիալական մանկավարժը, սոցիալական միջնորդը՝ **սուբյեկտներ**: Նրանք օգտագործում են սոցիումի ներուժը, սոցիալ-մանկավարժական պայմանները, միջոցները, ներազդում տարբեր մեթոդներով և մեխանիզմներով: Սուբյեկտ-սուբյեկտայինի դեպքում միջանձնային ակտիվ համագործակցություն է ընթանում սոցիալական միջնորդի և սոցիալականացվողի միջև: Սոցիալական միջնորդների դերում կարող են հանդես գալ ինչպես սոցիալական մանկավարժը, սոցիալական ինստիտուտները, կոլեկտիվները, սոցիալական որոշակի ոլորտի փորձառու մասնագետները, այնպես էլ ծնողները, հարազատները, ազգակցական կապեր ունեցող մարդիկ, որոնք կարող են տվյալ իրավիճակում օգտակար լինել սոցիալականացվողի խնդիրը լուծելու, իրականացնելու ախտորոշող, կանխարգելիչ և վերականգնո-

ղական աշխատանքներ: Սուբյեկտ-սուբյեկտ համագործակցության ընթացքում կարևորվում են միջանձնային հարաբերությունների ճիշտ կառուցումը, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծումը, սոցիալականացվողի պահանջմունքների, հետաքրքրությունների բավարարումը, ինքնագնահատականի ձևավորումը, ռեֆլեքսիայի երևույթը: Սոցիալական միջնորդը բազմընդգրկուն ոլորտներում իր պարտականությունները կատարելիս կարող է համագործակցել տարբեր նախարարությունների հետ, խնդիրներ առաջադրել և հետամուտ լինել դրանց լուծմանը: Սոցիալական միջնորդի լիազորություններն ու պարտականությունները պետք է համահունչ լինեն սոցիալականացվողի իրավունքներին և պարտականություններին, բխեն նրա շահերից: Սոցիալական մանկավարժության մեջ սոցիալականացման՝ որպես գերակա խնդրի լուծման ընթացքում օգտագործվում են մանկավարժական ներուժի և սոցիումի հնարավորությունների երեք խումբ տիպային ենթահամակարգեր՝

- **ոչ ֆորմալ ենթատիպ**՝ միկրոմիջավայրի ներուժի հնարավորությունները (ընտանիք, հարևաններ, ընկերներ),
- **ֆորմալ ենթատիպ**՝ տարբեր կոլեկտիվները, սոցիալական մանկավարժի գործունեությունը բազմամասնագիտական թիմում,
- **ներկայացուցչական ենթատիպ**, որտեղ ընդգրկվում են տարբեր ֆոնդերը, հասարակական կազմակերպությունները, կամավորները, ակումբները[30]:

Վերը թվարկված մանկավարժական ներուժի և սոցիումի հնարավորությունների ենթատիպերը հիմնականում գործում են որպես ամբողջական, մեկ գործառական համակարգ, սակայն սոցիալա-

[30] **Галагузова М. А.,** Социальная педагогика, курс лекции, М., 1999, стр. 265.

կանացման առանձին փուլերում և իրավիճակներում կարող են հանդես գալ որպես առանձին բաղադրատարրեր: Իր հերթին՝ մարդու սոցիալականացումը համապատասխան ենթատիպում կարող է ունենալ ինչպես ժամանակավոր բնույթ, այնպես էլ երկարատև ընթացք: Սոցիալականացման տևողությունը, համապատասխան մանկավարժական ներուժի և սոցիումի հնարավորությունների, ենթատիպերում կախված է մարդու սոցիալականացման առանձնահատկություններից, սոցիալականացումը բնութագրող չափանիշներից, սոցիալականացման նպատակից, խնդիրներից և ակնկալվող վերջնարդյունքներից:

Այսպիսով՝ սոցիալականացումը՝ որպես սոցիալական մանկավարժության գլխավոր խնդիր, դիտարկվում է տարբեր մոտեցումներով՝ որպես հիմնական հասկացություն, երևույթ, գործընթաց, գիտելիքների բնագավառ:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Ներուժ, սոցիալական միջնորդ:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ ենք սոցիալականցումը դիտարկում որպես սոցիալական մանկավարժության գլխավոր հիմնախնդիր:
2. Ո՞ր հասկացություններն են փոխլրացնում «սոցիալականացում» եզրույթը:
3. Ներկայացրե՛ք «սոցիալականացում» և «մանկավարժական երևույթ» հասկացությունների հարաբերակցությունը:
4. Որո՞նք են սոցիալականացում եզրույթի բնութագրիչները:
5. Ո՞ր դեպքում է սոցիալական միջավայրը դիտարկվում որ-

պես միջոց սոցիալականացման համար:

6. Ինչպե՞ս է ձևավորվում սոցիալականացման ընթացքում սոցիալական մանկավարժ, սոցիալական միջնորդ-երեխա փոխհարաբերությունների համակարգը:

7. Ովքե՞ր են սոցիալականացման օբյեկտները և սուբյեկտները:

8. Որո՞նք են մանկավարժական ներուժի և սոցիումի հնարավորությունների երեք խումբ տիպային ենթահամակարգերը:

ՔՆՆԱԿՈՒՄ

1. Լսարանում կազմակերպե՛ք քննարկում՝ «Սոցիալականացումը որպես սոցիալական մանկավարժության գլխավոր հիմնախնդիր» թեմայով:

2. Լսարանում կազմակերպե՛ք «Մանկավարժական գործընթացի և սոցիալականացման հարաբերակցությունը» թեմայով բանավեճ:

3. Պատրաստե՛ք ցուցադրություններ՝ հիմնավորելով «Սոցիալականացումը երևույթ», «Սոցիալականացումը գործընթաց», «Սոցիալականացումը մարդու ինքնահիրացման մեխանիզմ» թեմաներով:

2.2. Սոցիալականացման գործոնները

Սոցիալական մանկավարժության եզրույթաբանության մեջ սոցիալականացման գործընթացը բնութագրելիս տարբերում են **կենսաբանական** և **սոցիալական գործոններ:**

2.2.1. Կենսաբանական գործոններ

Կենսաբանական և սոցիալական գործոնների հարաբերակցության ներկայացման առաջին հաջողված փորձը արվել է Վ. Շտերնի կողմից[31]: Նա իր «Կոնվերգենցիոն տեսության» մեջ պնդում էր՝ ներքին ժառանգական տվյալները հարմարեցվում են արտաքին միջավայրի պայմաններին[32]: Հետագայում կենսաբան Է. Կոնկլին, զարգացնելով կենսաբանական կոնվերգենցիոն տեսությունը, փաստում է, որ կենսաբանական և սոցիալական գործոնները, միջավայրը հավասարարժեք են[33]:

Ըստ նրա՝ մարդը ստանում է կենսաբանական և սոցիալական ժառանգականություն, որոնք գտնվում են բարդ հարաբերակցության մեջ, փոխադարձորեն պայմանավորում են միմյանց լինելիությունը:

Ժառանգականությունը օրգանիզմների՝ իրենց հատկանիշները, հատկությունները պահպանելու և զարգացման առանձնահատկությունները հաջորդ սերունդներին փոխանցելու երևույթն է:

Ժառանգականությունն այն հիմքն է, որը որոշում է տվյալ տեսակի աճման և զարգացման ընթացքը, նրան բնորոշ առանձնահատկությունները:

Գենները ժառանգականությունը պայմանավորող կառուցվածքային և գործառութային միավորներն են, որով և պայմանավորված, կենսաբանական գործոնները հազարամյակների ընթացքում

---

[31] http://azps.ru/articles/age/teoriya_konvergencii_v_schterna.html

[32] **Обухова Л. Ф.,** Детская психология: теории, факты, проблемы, М., 1998, стр. 352.

[33] Конвергенция биологических, информационных, нано- и когнитивных технологий: вызов философии. Вопросы философии, № 12, Декабрь, 2012, стр. 3.

սերնդից սերունդ են փոխանցում թե՛ դրական, և թե՛ բացասական հատկանիշների նախադրյալները: Կյանքի շարունակականությունը երկրի վրա պայմանավորված է գեների ներգործությամբ, ուստի ամեն նոր սերունդ իր կենսագրությամբ պարտական է նախնիների գեներին: Կենսաբանական ժառանգականության հիմքը **քրոմոսոմային տեսությունն** է.

Գեները գտնվում են **քրոմոսոմներում**: Յուրաքանչյուր քրոմոսոմ գեների շղթայակցման խումբ է: Գենը ԴՆԹ-ի (դիզոռիբոնուկլեյնաթթու) եզակի, յուրահատուկ հատվածն է, որը տեղեկատվություն ունի տվյալ սպիտակուցի կենսասինթեզի մասին: Կյանքը սպիտակուցային գոյության ձև է[34]:

Գեները ժառանգական նյութի գործունեության միավորներն են: Գեների փոխանցումով է պայմանավորված ծնողական հատկանիշների անցումը սերունդներին: Տեսակի չափանիշները չափազանց բազմազան են: Դրանք լինում են ձևաբանական, բնախոսական, կենսաքիմիական, կազմաբնախոսական, իմունոլոգիական, գենետիկական և այլն: Երեխաները նմանվում են ծնողներին, սակայն նրանց նմանությունը բացարձակ չի լինում: Պատճառը սերունդների օրգանիզմում գեների ճակատագրերի տարբերությունն է: Գենը կարող է փոխանցվել կամ չփոխանցվել: Տևական ժամանակահատվածում «բանական տեսակում» կուտակվում են գեների որոշակի տեսակ և քանակ: Անհատները կրում են այդ գենոֆոնդի որոշակի մասերը, որոնք տարաբնույթ զուգակցումներով են արտահայտվում: Նախապես ընտրել գեները կամ իրենց ցանկացած գենային զուգակցումները փոխանցել հաջորդ սերնդին հնարավոր է գենային ինժեներիայի բարձր տեխնոլոգիաների ներդրմամբ:

---

[34] **Галтон Г. Г.,** Описание наследственности признаков, М., 2004, стр. 46.

Եթե ժառանգականությունը երևույթ է, ապա ժառանգումը մեխանիզմ է, որի արդյունքում փոխանցվում են հատկություններն ու հատկանիշները:

Առաջին պատկերացումները ժառանգման մեխանիզմների մասին հիշատակվել են դեռևս 5-րդ դարում: Տարբերակվել են ուղղակի և անուղղակի ժառանգման մեխանիզմները: Հատկանիշների ուղղակի ժառանգման մեխանիզմի մասին խոսել է Հիպոկրատը: Նա գտնում էր, որ ժառանգական նյութը հավաքվում է մարմնի տարբեր մասերից, և դրա շնորհիվ օրգաններն ուղղակիորեն ազդում են ժառանգման վրա: Հիպոկրատի կարծիքով՝ մարմնի առողջ օրգանները փոխանցում են առողջ ժառանգական նյութ, իսկ հիվանդ օրգանները՝ հիվանդ: Թվարկված մեխանիզմների արդյունքում կյանքի ընթացքում ձեռք են բերվում օգտակար հատկանիշներ, որոնք ժառանգաբար փոխանցվում են սերունդներին[35]:

Այս տեսության հակակշիռ է Արիստոտելի տեսությունը[36]: Նա պնդում էր, որ ժառանգումը կատարվում է անուղղակի մեխանիզմով: Ժառանգման նյութը ոչ թե փոխանցվում է մարմնի տարբեր մասերից, այլ արտադրվում է սննդարար նյութերի կողմից, որոնք մասնակցում են մարմնի տարբեր մասերը կազմելուն: Ուղղակի ժառանգման տեսությանը հարում է «Պանգենեզիսի» տեսությունը:

Ժամանակակից գենետիկները պնդում են, որ ժառանգման մեխանիզմները երկուսն են:

Ուղղակի ժառանգում, երբ հատկանիշների նախադրյալները փոխանցվում են անմիջապես ծնողներից՝ հորից, մորից, օրինակ՝ արտաքին ֆիզիկական տվյալները՝ աչքերի գույնը, մազերի որակը, հասակը):

---

[35] **Гиппократ,** О природе человека, 2010, М., стр. 346.

[36] **Аристотель,** О возникновении животных. Пер. с греческого. Вступительная статья и примечания В. П. Карпова, М.- Л., 1940.

Թռիչքաձև. այս կամ այն ցեղային հատկանիշը երկար ժամանակ չի դրսևորվում (լատենտ վիճակ) և հանկարծ շատ անսպասելի արտահայտվում է ինչ-որ մեկի մեջ, մի քանի սերունդների ընթացքում, օրինակ՝ հավկուրությունը, ճաղատությունը, էպիլեպսիան, կաղությունը, երևանյան հիվանդությունը և այլն): Առավել տիպիկ դրսևորումներ դիտվում են 7 սերնդի ընթացքում: Ժողովուրդն ասում է յոթ սերնդի ընթացքում, իսկ Գոշը նշում էր 13 սերունդների ընթացքում:

Կենսաբանական գործոնների, ժառանգական մեխանիզմների առանձնահատկություններն ուսումնասիրվում են երկու մոտեցմամբ:

1. Ժառանգականության ազդեցությունն ուսումնասիրվում է՝ միևնույն միջավայրում տարբեր գենոտիպ, նախադրյալներ ունեցող օրգանիզմների զարգացումը դիտարկելով:

2. Միջավայրի, դաստիարակության ազդեցությունն ուսումնասիրվում է տարբեր պայմաններում՝ գենետիկորեն միանման օրգանիզմների զարգացումը դիտարկելով:

Վերը թվարկած մոտեցումները գործնականորեն կիրառվում են միաձվային և տարաձվային երկվորյակների ուսումնասիրության ընթացքում: Առանձին դաստիարակված միաձվային երկվորյակների ուսումնասիրությունն արժեքավոր նյութ է տալիս այն հարցի մասին, թե միջավայրը որքանով կարող է փոխել ժառանգական հատկանիշները: Երկվորյակների առանձին-առանձին դաստիարակության ժամանակ միջին տարբերությունները, ըստ բնավորության գծերի, առաջադիմության, անհատական առանձնահատկությունների, մեծանում են այնքան ավելի շատ, որքան ավելի մեծ են տարբերությունները նրանց դաստիարակությամբ զբաղվող ընտանիքների միջև՝ սոցիալական և հոգևոր: Դիտարկվող տարբերություն-

ները որոշվում են միջավայրով, եթե միաձվային երկվորյակները ձևավորվում ու զարգանում են միևնույն ընտանիքում և միևնույն ժամանակ: Եթե տարաձվային երկվորյակներ են, ուրեմն ավելի մեծ տարբերություններ են ցուցաբերում, քան՝ միաձվայինները: Միջավայրում այս կամ այն հատկանիշի դրսևորումը կարող է նաև պատահական բնույթ ունենալ, փոխվել՝ կախված միջավայրի պայմաններից:

Ընդգծելով միջավայրի կարևորությունն անձի ձևավորման ընթացքում՝ տարբերում են հատկանիշների **ժառանգական (բնածին)** և **ոչ ժառանգական (ձեռքբերովի) բնույթը**: Բարձր գենետիկական և մտավոր գործակից ունեցող անձինք մեծ հավանականություն ունեն հաջող սոցիալականացման գործընթացի, իսկ ոչ նպաստավոր նախադրյալների դեպքում կարող են լինել բազմաբնույթ դժվարություններ:

Յուրաքանչյուր հատկանիշ՝ նորմայում կամ նրանից դուրս, զարգացման գործընթացի արդյունք է և որոշվում է գեներով, միջավայրով, դաստիարակությամբ: Վճռորոշ գործոններից յուրաքանչյուրի գերակայումը պայմանավորված է սոցիալականացման համապատասխան փուլով, տարիքային շրջաբաժանման առանձնահատկություններով:

Թեև ժառանգականության և միջավայրի հարաբերական մասնակցությունն առանձին հատկանիշների համար տարբեր է, միայն սակավաթիվ հատկանիշներ են լիովին որոշվում ժառանգականությամբ, իսկ միայն լիովին միջավայրով որոշվող հատկանիշներն ավելի քիչ են:

Ժառանգաբար փոխանցվում են **երկու** խումբ հատկանիշներ:

1. **Համամարդկային հատկանիշներ**, որոնք փոխանցվում են բանական էակին՝ անկախ ռասայական, ազգային պատկանելիու-

թյունից, մաշկի գույնից, հոգեկերտվածքից, սոցիալական վիճակից, դավանանքից և այլն: Դրանք են.

- ուղղաձիգ կեցվածք
- մտածելու ունակություն,
- խոսելու կարողություններ:

2. **Անհատական հատկանիշներ**, որոնք բնութագրում են կոնկրետ մարդուն: Դրանք փոխանցվում են ժառանգման ուղղակի և թռիչքաձև մեխանիզմներով.

- արտաքին ֆիզիկական տվյալները՝ աչքերի գույնը, ձևը, մազերի որակը, հասակը, կազմվածքը և այլն,
- բնավորության որոշ ժառանգական գծեր, որոնց հիմքը նյարդային համակարգն ու խառնվածքն են,
- խառնվածքն ու նյարդային համակարգը,
- հիվանդությունները, որոնք կարող են ունենալ և՛ ժառանգական, և՛ ձեռքբերովի բնույթ, օրինակ՝ շաքարային դիաբետը, էպիլեպսիան, երևանյան հիվանդությունը, սրտանոթային, երիկամային հիվանդությունները, արյան բաղադրության հիվանդությունները, ուռուցքները՝ բարորակ, չարորակ և այլն: Երբեմն ժառանգական հիվանդությունների զարգացմանը նպաստում են ինֆեկցիոն հիվանդությունները՝ կարմրախտ, տոքսոպլազմոզ, սիֆիլիս, թոքախտ, ոչ ճիշտ սննդակարգը, ապրելակերպը,
- մտավոր և ֆիզիկական արատները,
- բնատուր շնորհներն ու օժտվածությունները, ընդունակությունները՝ ըստ չափի և աստիճանի, աշխատասիրության, փորձառության չափի (Բախերի ընտանիքը, Սյունի գերդաստանի երաժշտական ունակությունները և այն): Ֆենոմենը և գենները թաքնված են համեստության քողի տակ այնպես, ինչպես մարգարիտը՝ մարգարտախեցիում:



Գծապատկեր 15. Սոցիալականացման կենսաբանական գործոնները

Վիճակագրական տվյալները ցույց են տվել, որ յուրահատուկ ընդունակություններով օժտված երեխաների մեջ նկատվում է վաղաժամ մահացություն, մյուսներն ավելի մեծ տարիքում այդ ընդունակությունները կորցնում են, մի այլ խումբ, հասնելով որոշակի դիրքի, մեծամտանում է, չի աշխատում իր վրա, չի զարգացնում եղած ընդունակությունները: Քանի որ տաղանդն առանց աշխատանքի նման է անպտուղ սերմի, առանց հողի, ջրի, որն ի վերջո չորանում է: Բնական օժտվածությունները չզարգացնելու դեպքում այն հնարավոր է չարտահայտվի, հաջողություն չբերի: Անհրաժեշտ են անձի ինքնազարգացման, ինքնակրթության երևույթները: Ուշագրավ են Նյուտոնի խոսքերը: Երբ նրան հարցնում են, թե ինչպես է իր գյուտերն արել, նա պատասխանել է՝ շարունակ դրանց վրա մտածելով: Ինքնատիպ են նաև օժտվածության ուշ դրսևորումները: Օրինակ՝ հայտնի մաթեմատիկոս Լիզին դպրոցում շարունակ «երկու» գնահատական է ստացել մաթեմատիկայից, իսկ Էյնշտեյնը սովորելիս այնքան աննկատ է եղել, որ մաթեմատիկայի ուսուցիչը

շարունակաբար պնդել է՝ նրանից ոչինչ դուրս չի գա: Վերդին չի կարողացել ընդունելության քննությունները հաղթահարել կոնսերվատորիայում: Օժտվածություններն ուշ են բացահայտվել նաև Լեոնարդո դա Վինչիի, Լուի Պաստյորի, Օնորե դը Բալզակի մեջ:

Ինքնատիպ է նաև օժտվածությունների վաղաժամ արտահայտումը: Պիրոգովը 17 տարեկանում ավարտեց բժշկական ֆակուլտետը: Կիբեռնետիկայի հայր Վիները 14 տարեկանում ավարտել է համալսարանը, իսկ 18 տարեկանում՝ արդեն փիլիսոփայության դոկտորի աստիճան ստացել: Լինում են դեպքեր, երբ օժտվածությանը նպաստում են իրավիճակային պահերը, որոնք աշխատասիրության արդյունքում հրաշքներ են գործում: Օրինակ՝ Ցիալկովսկին մանկական հասակում ծանր հիվանդացել է և կորցրել լսողությունը, դպրոց չհաճախելով՝ նա էքստեռն կարգով քննություններ է հանձնել և 20 տարեկանում ստացել ուսուցչի որակավորում: Հայտնի են նաև մի շարք օրինակներ հայ մտավորականների կյանքից: Արամ Խաչատրյանը երաժշտական մասնագիտական կրթությունը ստացել է 19 տարեկանում, Գ. Սունդուկյանն իր առաջին գործը գրել է 38 տարեկանում, իսկ Պ. Դուրյանը՝ 16 տարեկանում («Վարդ և Շուշան» մելոդրաման), Մ. Մեծարենցը և Վ. Տերյանը հանրությանը հայտնի են երիտասարդ տարիքից:

«Բացառություն է, երբ մարդու մեջ զարգանում են ընդունակություններ՝ գիտության տարբեր բնագավառներից: Դրա փայլուն օրինակ կարող է ծառայել գերմանացի գրող, փիլիսոփա Գյոթեն, որը միաժամանակ նաև նշանավոր բնագետ էր: Նա կռահել էր զարգացման տեսությունը, հայտնաբերել էր գանգի կազմության մեջ մարդու միջծնոտային ոսկորի առկայությունը»[37]:

Բազմաբնույթ ընդունակություններով հայտնի է նաև Լեոնար-

[37] **Теплов Б. М.,** Проблемы индивидуальных различий, М., 1961, стр. 76.

դո դա Վինչին՝ նկարիչ, բնագետ, փիլիսոփա, ինժեներ:

Հայ նշանավոր կոմպոզիտոր, շախմատիստ Ա. Դոլուխանյանի երաժշտական և շախմատային ընդունակությունները երևան են եկել վաղ տարիքում, և դրանք երկուսն էլ նշանակալից զարգացման են հասել:

Այն փաստը, որ միևնույն երեխան օժտված է տարբեր տեսակի ընդունակությունների սաղմերով, հազվադեպ չէ: Հազվադեպ է, երբ այդ տարբեր տիպի ընդունակությունները միաժամանակ զարգանում, կատարելագործվում և հասնում են որոշակի հաջողությունների:

Ըստ Բ. Մ. Տեպլովի՝ գոյություն ունեն ընդունակությունների քանակական և որակական տարբերություններ: «Քանակական տարբերությունների տակ պետք է հասկանալ ընդունակությունների աստիճանը, դրանց մակարդակը: Ինչն ավելի շատ է աչքի ընկնում, հաճախ դրսևորվում է՝ առանց հատուկ հետազոտությունների:

Ընդունակությունների որակական տարբերությունը դրանց բաղկացուցիչ մասերի համակեցությունն է: Որակականը շատ ավելի բարդ է. շատ հաճախ քանակականից որակական տարբերությունը չի բացահայտվում ոչ միայն միջավայրի, այլև իր՝ տվյալ անհատի համար: Ամեն մի ընդունակություն իր բնույթով անհատական է և կրում է տվյալ երեխայի անհատական դրոշմը»[38]:

Օժտվածությունը, ըստ ընդգրկված բնագավառների, դասակարգվում է երեք տիպի՝ **գեղարվեստական, տրամաբանական** և **խառը**: **Գեղարվեստական տիպի** ընդունակությունները կարող են լինել տարածուն և տարբերակված: Տարածուն ընդունակությունների տեր երեխան հետաքրքրվում է գրականության և արվեստի ասպարեզով: Երեխան լավ նկարում է, ունի ձայնի նուրբ զգացողու-

[38] **Теплов Б. М.,** Проблемы индивидуальных различий, М., 1961, стр. 78.

թյուն, լավ է արտասանում: Հանդիպում է նաև գեղարվեստական այնպիսի տիպ, որտեղ շեշտված է գեղարվեստի մի բնագավառ, ասենք՝ նկարչություն, գծանկար և այլն: **Տրամաբանական տիպի** երեխաներին բնորոշ է կոնկրետ մտածողությունը՝ վերացական, մաթեմատիկական ընդհանրացումներ կատարելու կարողությունը:

Ըստ օժտվածության՝ **խառը տիպի** երեխաների հատուկ կարողությունները սահմանային ձևով հնարավոր չէ տարբերել: Խառը տիպով օժտված երեխաներին դժվար է բացահայտել թե՛ ծնողների, թե՛ ուսուցիչների և թե՛ միջավայրի համար:

Օժտվածությունները կարելի է դասակարգել ըստ շնորհալիության արտահայտման տիպի ուժի: Օրինակ՝ Բ. Լիխաչևը տալիս է շնորհալիության մի քանի տիպեր[39]. **ռացիոնալ-մտածողական տիպը** երևան է գալիս երեխայի հակումներում՝ դեպի վերացական հասկացությունները, վերացական մտածողությունում, տարբեր բնույթի տեսական ընդհանրացումներում: Նման տիպը Բ. Տ. Լիխաչևն անհրաժեշտ է համարում գիտնականին, քաղաքագետին, տնտեսագետին, հասարակական գործչին: Հաջորդ տիպը հեղինակը համարում է **պատկերավոր-գեղարվեստական**, որի տարբերակիչ գիծը պատկերներով մտածելն է, պատկերատեսողական, պատկերալսողական պատկերացումներով ընդունակությունների օգտագործումը՝ երևակայության մեջ ստեղծելով նոր կառույցներ, մոդելներ, ինչյունների տեսողական, լսողական և խոսքային կառույցներ:

Պատկերավոր մտածողությունը լայնորեն կիրառվում է հատկապես գեղարվեստաստեղծագործական, դիզայնային, կոնստրուկտորական մասնագիտություններում և արդյունավետ լուծումներ գտնելու հնարավորություն է տալիս:

---

[39] **Лихачев Б. Т.,** Проблемы индивидуальных особенностей, М., 2001, стр. 178.

Ընդունակությունները կարող են լինել թե՛ **բնատուր**, թե՛ **ձեռքբերովի**: Որպես նման ընդունակությունների օրինակ՝ կարելի է նշել հաղորդակցման արդյունավետ մեթոդները, որոնք մի մարդկանց տրվում են հեշտորեն, մյուսներին՝ դժվարությամբ: Բերենք նաև ձեռքբերովի ընդունակությունների մի քանի օրինակներ՝ գրավոր և բանավոր հաղորդակցում, կառավարելու, բանակցելու ունակություն և այլն: Լինում են ընդունակություններ, որոնք մինչև վերջ մնում են չբացահայտված, եթե համապատասխան պայմաններ չստեղծվեն: Եզրակացությունն այսպիսին է. յուրաքանչյուրից կարելի է պահանջել այնքան, որքան նրա իմացական կարողությունների սահմանն է թույլ տալիս: Չի կարելի ամեն մեկից պահանջել մաթեմատիկոս կամ ֆիզիկոս դառնալ, եթե նա համապատասխան տարրական ձիրք չունի:

Այսպիսով՝ ժառանգականությամբ փոխանցվում են երկու խումբ հատկանիշներ՝ **համամարդկային** և **անհատական**: Հատկանիշների, հատկությունների նախադրյալների փոխանցումն իրականացվում է կենսաբանական գենետիկական կոդի միջոցով:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Գեն, ժառանգականություն, ժառանգման մեխանիզմներ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է գործոնը:
2. Որո՞նք են կենսաբանական գործոնները:
3. Բնութագրի՛ր ժառանգականության երևույթը:
4. Ի՞նչ է գենը:
5. Որո՞նք են քրոմոսոմային տեսության հիմնադրույթները:

6. Որո՞նք են համամարդկային և անհատական հատկանիշները:
7. Թվարկի՛ր հատկանիշների ժառանգման մեխանիզմները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Պատրաստե՛ք ինքնանկար՝ բնութագրելով Ձեզ՝ «Ումից ի՞նչ եմ ժառանգել, ի՞նչ մեխանիզմով»:
2. Պատրաստե՛ք զեկուցում՝ «Ժառանգականության և միջավայրի հարաբերակցությունը» թեմայով, և ներկայացրե՛ք լսարանին:

2.2.2. Սոցիալական գործոններ

Սոցիալականացման գործոնները մարդու վրա ներգործող պայմաններ են: Սոցիալականացումը տեղի է ունենում մարդու և մեծ թվով բազմատեսակ պայմանների փոխգործակցությամբ, որոնք ներգործում են նրա զարգացման վրա:

Ըստ Ա. Մուդրիկի՝ սոցիալական գործոնները դասակարգվում է չորս հիմնական խմբերի[40]:

Առաջին խումբ՝ մեգագործոններ (շատ մեծ գործոններ): Դրանց թվին են դասակարգվում տիեզերքը, մոլորակը, աշխարհը, որոնց ներգործությունը կարող է դրսևորվել միջնորդավորված այլ գործոնների հետ:

Երկրորդ խումբ՝ մակրոգործոններ (մեծ, հունարեն «makros»): Դրանք են՝ կոնկրետ երկիրը, ազգը, հասարակությունը, պետությունը:

---

[40] **Мудрик А. В.,** Социальная педагогика: Учеб. для студ. пед. вузов /Под ред. В. А. Сластенина, 3-е изд., М., 2000, стр. 10.

Երրորդ խումբ՝ մեզոգործոններ (հունարեն «mesos»՝ միջին, ընթացիկ): Սրանց թվին են պատկանում սոցիալական խմբերի սոցիալական այն պայմանները, որոնք դասդասվում են ըստ բնակության վայրի, տեղանքի (գյուղ, քաղաք, ավան, հարթավայր, լեռնային գոտի, այլ տարածաշրջան), զանգվածային լրատվական միջոցներ, ինչպես նաև ենթամշակութային պատկանելիություն: Մեզոգործոնները կարող են ներգործել ինչպես ուղղակիորեն, այնպես էլ՝ միջնորդավորված:

Չորրորդ խումբ՝ միկրոգործոններ (հունարեն «mikros»՝ փոքր)՝ ընտանիքը, դպրոցը, հարևանները, հասակակիցների խումբը, հասարակական, կրոնական, քաղաքական կազմակերպությունները: Դրանք կոնկրետ, անմիջականորեն ներազդում են մարդու վրա: Միկրոգործոններն ազդում են մարդու զարգացման վրա սոցիալական ինստիտուտների և սոցիալական գործակալների օգնությամբ: Սոցիալականացման յուրաքանչյուր փուլում թե՛ գործակալները, թե՛ սոցիալական ինստիտուտները տարբեր են: Ըստ Ի. Կոնի՝ «Յուրաքանչյուր հասարակության ընդհանուր, միաժամանակ առանձնահատուկ գիծն այն է, որ սոցիալական ինստիտուտները, սոցիալական գործակալները տարբեր են: Դրանք տրամաբանված, խիստ հիերարխիա են ձևավորում՝ որպես համակարգ, որի յուրաքանչյուր մակարդակ ունի իր սեփական կանոններն ու օրենքները: Սակայն միաժամանակ դրսևորվում են որպես կուռ համակարգ»[41]: Սոցիալական գործոնների հարաբերակցությունն ընդգծելու համար կարելի է դրանք ներկայացնել համակենտրոն շրջանակների տեսքով, որտեղ ամենակենտրոնում միկրոգործոններ են, այնուհետև՝ մեզոգործոնները, ապա՝ մակրոգործոնները: Սոցիալական գործոնների ներգործությունը կարող է լինել նպատակամետ

[41] **Кон И. С.,** Социология личности, М., 1967, стр. 383.

կամ տարերային: Ընտանիքը, կրթօջախը, սպորտային, երաժշտական խմբակների ներգործությունը նպատակամետ է, իսկ փողոցի, բակի, ապասոցիալականացված խմբերի ներգործությունը՝ տարերային, ինչը կարող է հանգեցնել ապասոցիալականացման:

Ապասոցիալականացումը սոցիալականացման գործընթացի նորմայից շեղումն է, որը կարող է ընթանալ ապասոցիալական ինստիտուտներում: Դրանք քրեածին, ոչ ֆորմալ, դեռահասային խմբերն են, հանցագործ խմբավորումները, հարբեցողների, թմրամոլների, թափառաշրջիկների համախմբերն են, ինչպես նաև անբարո կամ ապասոցիալական տիպի «ընտանիքները»:

ՄԱԿՐՈԳՈՐԾՈՆՆԵՐ

Երկիրն աշխարհագրորեն սահմանազատված որոշակի տարածք է, որը բնութագրվում է աշխարհագրական, բնական պահպանության, կլիմայական պայմաններով: Երկիրն աշխարհագրական-մշակութային հասկացություն է: Երկրի բնակլիմայական, էկոլոգիա-աշխարհագրական պայմաններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգործում են բնակչության աճի, մասշտաբային տարածվածության, խտության, կյանքի տևողության, կենսագործունեության վրա: Աշխարհակլիմայական պայմանները ձևավորում են մարդկանց որոշակի կյանքի փորձառություն, կարողություններ, հմտություններ, որոնք սերնդեսերունդ կարող են փոխանցվել, նորացվել՝ անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով տվյալ տարածքին հարմարվելու, գոյատևելու համար: Ենթադրվում է, որ տարածաշրջանային առանձնահատկությունները, կլիմայական պայմանները ներգործում են մարդու սոցիալականացման որոշակի հատկությունների, հատկանիշների ուղղվածության վրա (օրինակ՝ մաթեմատիկական, երաժշտական, հումանիտար, բնագիտական, նկարչական և այլն):

Աշխարհակլիմայական պայմանները կարգավորում են երկրի բնակչության աճն ու խտությունը, ազդում առողջության վրա, երբեմն նաև տվյալ տարածքին բնորոշ որոշակի հիվանդությունների, էթնիկական առանձնահատկությունների պատճառ են: Երկիրն ունի պետական լրիվ կամ սահմանափակ ինքնուրույնություն, կարող է գտնվել այլ պետության տարածքային շրջանակներում, լինել գաղութային ձևով:

Ազգը հանրագիտարանում բնութագրվում է երկու դիրքորոշմամբ:

1. Մարդկանց պատմական հանրույթ, որն առաջանում է նրանց տարածքի, տնտեսական կապերի, գրական լեզվի, մշակույթի և բնավորության որոշակի առանձնահատկությունների ընդհանրության ձևավորման ընթացքում: Տարբեր տնտեսակարգերի ձևավորման ընթացքում ազգերի բնութագրումները տարբեր են:

2. Որոշակի տնտեսական և հասարակական միասնություն, ընդհանուր ազգակցական, արյունակից ընտանիքների խումբ:

Ազգերը բնութագրվում են ընդհանուր ազգային հոգեկերտվածքով (մենտալիտետով), ծագումով, գենետիկական նախադյալներով, լեզվամտածողությամբ, ազգային ինքնագիտակցությամբ, հոգեբանությամբ, վարքագծային դրսևորումներով, ավանդույթներով, ծեսերով, յուրօրինակ մշակույթով: Ազգերի սոցիալականացումը բնութագրում են կենսական և հոգևոր առանձնահատկություններով: Կենսական առանձնահատկություններ ասելով՝ ընկալում ենք ազգերի կազմաբնախոսական, սովորութային դրսևորումները, իսկ մշակութային, հոգևոր, հոգեբանական որոշ վարքագծային դրսևորումներն արտահայտվում են հոգևոր առանձնահատկություններում:

Հասարակությունն ամբողջական օրգանիզմ է իր սոցիալա-

կան կառուցվածքներով, բնորոշ գաղափարախոսությամբ, տնտեսությամբ, մշակույթով, որն ունի որոշակի լծակներ և մեխանիզմներ մարդկանց համախմբելու, նրանց կարգավորելու համար: Յուրաքանչյուր հասարակություն իր որակական արտացոլումն է ունենում տվյալ հասարակությունը կազմող տարիքային տարբեր խմբերի վրա: Հասարակությունն ունի դրսևորման տարբեր ոճեր, գործառույթներ, արժեքային համակարգ, սոցիալական, իրավական, գեղագիտական նորմեր, տարբեր շերտերին բնորոշ վարքագծային առանձնահատկություններ: Դաստիարակությունն իր վրա է կրում հասարակության սոցիալական կառուցվածքի ներգործությունը: Սոցիալական տարբեր խմբեր համապատասխան պահանջներ, պատկերացումներ ունեն հասարակության և պետության նկատմամբ: Ըստ այդմ էլ ձևավորվում է պետական, հասարակական պատվեր կրթական համակարգի, աշխատաշուկայի, սոցիալական ինստիտուտների համապատասխան գործառույթների նկատմամբ: Հասարակությունը կայանում և զարգանում է տարբեր սոցիալական ինստիտուտների սերտ համագործակցության արդյունքում, որտեղ օգտագործվում են հասարակության մարդկային և այլ ռեսուրսները, բավարարվում տնտեսական, քաղաքական, մշակութային, հոգևոր պահանջները: Եթե դիտարկենք դաստիարակությունը որպես սոցիալական երևույթ, ապա այն ունի խիստ որոշակի շարժիչ ուժեր, առանձնահատկություններ և օրինաչափություններ՝ պայմանավորված պատմականորեն ձևավորված տնտեսակարգով, հասարակական շերտերով, սոցիալ-տնտեսական մակարդակով, քաղաքական կազմակերպվածությամբ, մշակույթով, արժեքային համակարգով, դինամիկությամբ և հավերժությամբ:

Պետությունը հասարակության քաղաքական համակարգի որոշակի օղակ է, որն ունի կառավարման գործառույթներ: Պետու-

թյունը հիմնարկությունների, կազմակերպությունների փոխկապակցված ամբողջություն է, որն իրականացնում է պետական կառավարում: Պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը նախատեսված է նաև ՀՀ Սահմանադրությամբ. Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիներն ունեն անմիջականորեն կամ ընտրված ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու իրավունք:

Քաղաքացին այն անձն է, որը տվյալ պետության հետ գտնվում է հատուկ հանրային-իրավական կապի մեջ: Նա տվյալ պետության անդամն է: Այլ մարդկանց համեմատությամբ նա արտոնյալ է, քանի որ միայն քաղաքացիներն ունեն այդ պետության սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված բոլոր իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև կրում են պարտականություններ, որոնք դրսևորվում են նրանց սոցիալականացման ընթացքում: Քաղաքացու կարգավիճակ չունեցող մարդու իրավունքները սահմանափակ են: Պետական կառավարումն ընդգրկում է օրենսդիր, գործադիր, դատական մարմինների գործունեությունը:

Պետությունն ունի համապատասխան իրավունքներ և պարտականություններ իր քաղաքացիների նկատմամբ, փոխադարձաբար յուրաքանչյուր քաղաքացի նույնպես ունի իրավունքներ և պարտականություններ պետության նկատմամբ: Իրավունքներն ու պարտականությունները դիալեկտիկորեն շաղկապված են: Պետությունը պարտավորվում է համապատասխան պայմաններ ստեղծել անձի ձևավորման և համակողմանի զարգացման, ինքնադրսևորման, ինքնակրթության համար: Պետությունը որոշակի գաղափարախոսության, քաղաքականության, ռազմավարության արդյունքում համապատասխան սոցիալական պատվեր է ներկայացնում

սոցիալական տարբեր ինստիտուտներին, սոցիալական միջավայրին:

Կառավարման նպատակամետ գործունեության արդյունքում կրթությունը կրում է շարունակական, սոցիալական բնույթ՝ կարևորելով ազգային և համամարդակային արժեքները: Մշակվում են հայեցի դաստիարակության հայեցակարգային մոտեցումներ, ռազմավարություն, մարտավարություն՝ երեխաների ներդաշնակ, որակյալ սոցիալականացում ապահովելու համար: Դաստիարակության համակարգի արդյունավետությունը պայմանավորված է դաստիարակության նպատակի, բովանդակության, սկզբունքների, ձևերի, մեթոդների և գործառույթների, ոճերի, կառավարման առանձնահատկությունների ամբողջությամբ, որոնք կիրառվում են մշակութահամապատասխանության համատեքստում:

ՄԵԶՈԳՈՐԾՈՆՆԵՐ

Տարածաշրջանը սոցիալ-տնտեսական ամբողջական համակարգ է, որը պետության բաղկացուցիչ մասն է կազմում: Այն կարող է ունենալ տնտեսական, քաղաքական, հոգևոր կյանքի ընդհանրություն, պատմական անցյալ, մշակութային և սոցիալական յուրօրինակություն: Տարածաշրջանի բնակլիմայական պայմաններն ուղղակիորեն դրսևորվում են երեխայի սոցիալականացման վրա՝ աշխատունակության, հոգեկան վիճակի, երկարակեցության և այլն: Տարածաշրջանի սոցիալ-աշխարհագրական բնութագրիչներից են՝ բնակչության խտությունը, ավանդույթները, հաղորդակցման միջոցներն ու ձևերը, տեղեկացվածությունը, կրթության, դաստիարակության և զարգացվածության մակարդակն ու չափանիշները: Տարածաշրջանը բնութագրվում է նաև սոցիալ-վիճակագրական ցուցանիշներով՝ բնակչության կազմը, սեռային հարաբերակցությունը,

տարիքային ընդգրկվածությունը, ընտանիքների տեսակները, արտագաղթի ու ներգաղթի վիճակագրությունը: Տարածաշրջանային պատմական ու մշակութային տարբերություններով և առանձնահատկություններով են պայմանավորված բնակչության բնորոշ նորմերը, սովորույթները, ժողովրդական տոները, բանահյուսությունը, պարերն ու խաղերը, ժողովրդական նկարագիրը: Երբեմն, ըստ տարածաշրջանի, փորձում են բնութագրել անձին՝ նրան վերագրելով որակական տարբեր գծեր, օրինակ՝ ազնվություն, հանդուրժողականություն, հարգանք մեծերի նկատմամբ, բարություն, առատաձեռնություն, ժլատություն, խորամանկություն, հպարտություն և այլն:

Գյուղական բնակավայր: Գյուղական բնակավայրում կենտրոնացված է բնակչության զգալի մասը: Սոցիալ-տնտեսական որոշակի դժվարությունների արդյունքում վերջին տարիներին նկատվում է միգրացիա դեպի քաղաքային բնակավայրեր, որտեղ աշխատաշուկան առավել լայն հնարավորություններ է ընձեռում մարդու սոցիալականացման համար: Գյուղերում և ավաններում մարդու սոցիալականացումն արտահայտվում է որոշակի առանձնահատկություններով, քանի որ բնակչությունն ավելի քիչ է, հետևաբար միջավայրում կապերն ավելի ամուր են և ջերմ: Մարդիկ իրար ճանաչում են, ավանդույթներն ու սովորույթներն առավել պահպանված են: Դա դրսևորվում է նրանց վարքագծում, բնավորության ձևավորման, հաղորդակցման ընթացքում, ազգակցական, բարեկամական ամուր կապերում: Յուրաքանչյուր գյուղական բնակավայր ունի իր առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են բարբառներում, մտածելակերպում, սեռերի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, երեխաների դաստիարակությամբ: Աստիճանաբար գյուղական բնակավայրերը յուրացնում և ներգործվում են քաղաքի

վարք ու բարքով, կենցաղով, արժեքային համակարգով:

Քաղաքը, որպես կանոն, գյուղի համեմատությամբ ավելի մարդաշատ ու խոշոր բնակավայր է, որի բնակչությունը գերազանցապես զբաղված է ոչ գյուղատնտեսական բնագավառներում:

Քաղաքները երկրի տնտեսական, մշակութային ու գիտական կյանքի կենտրոններն են: Քաղաքներն առանձնացվում են՝ ըստ մարդաշատության (բնակիչների թվի), գործառույթների, աշխարհագրական դիրքի, հիմնադրման ժամանակի:

Մարդկանց չափից դուրս խտացումը հանգեցնում է լրացուցիչ դժվարությունների թե՛ ապրելակերպի, թե՛ մշակութային արժեքների, թե՛ ավանդույթների, սովորույթների պահպանման, թե՛ հաղորդակցման հարցերում: Քաղաքում հասարակության ներգրավվածության տոկոսը երկրի քաղաքական կյանքում զգալիորեն ավելի բարձր է, քան գյուղերում. առկա են հասարակության բևեռացումն ըստ սոցիալական շերտերի, սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքներ, հակասոցիալական ուղղվածություն ունեցող խմբավորումներ ու անձինք: Յուրաքանչյուր անձ ունի ընտրության բազմաթիվ հնարավորություններ: Այս տեսակետից քաղաքում այդպիսի այլընտրանքային հնարավորությունները շատ են՝ դրական և բացասական առումներով: Քաղաքում նաև տեղեկատվության և մշակութային կենտրոնացվածության խնդիր կա: Քաղաքը հագեցած է նաև սոցիալական բազմաթիվ հաստատություններով, որոնք ապահովում են մարդու նպատակամետ կամ տարերային սոցիալականացումը, ուր նա հնարավորություն ունի ընտրելու արժեքների իր համակարգը, ապրելու անհատական ոճով, ընտրելու հաղորդակցման իր միջավայրը, դիրքորոշումները և այլն: Քաղաքում տեղեկատվական հոսքը հաղորդակցման բազմաբնույթ հնարավորություններ է ընձեռում, ուստի անձը միաժամանակ կարող է տարբեր

սոցիալական խմբերի անդամ լինել՝ բավարարելով իր պահանջ-մունքներն ու սպասելիքները միջավայրից:

ՄԻԿՐՈԳՈՐԾՈՆՆԵՐ

Ընտանիք: ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված է. «Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է»[42]: Արտահայտության մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ մարդու բնական և սահմանադրական իրավունքներից է նաև ամուսնանալը և ընտանիք կազմելը: Ամուսնությունը յուրաքանչյուր տղամարդու և կնոջ ազատ ու կամավոր միությունն է, որը պետք է հիմնված լինի փոխադարձ սիրո և հարգանքի վրա: ՀՀ-ում արգելվում է բազմակնությունը, որը չի ընդունում նաև Հայ առաքելական եկեղեցին: Ընտանիքի ձևավորման համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ ամուսնությունը չի թույլատրվում ազգակցական կապ ունեցող, նույն մորից ծնված երեխաների, որդեգրողների և որդեգրվածների միջև: Ընտանիքն ազգի դիմագիծն է՝ իր լեզվով, հոգեբանությամբ, ավանդույթներով, սովորույթներով և ծեսերով: Յուրաքանչյուր ազգի ընտանիք էապես տարբերվում է այլ ազգության ընտանիքներից: Հազարամյակներ շարունակ մեր ազգի գոյապահպանական հիմքը հայ ընտանիքն է: Ընտանիքը կատարում է **վերարտադրողական, տնտեսական, սոցիալական, դաստիարակչական** գործառույթներ:

[42] ՀՀ Սահմանադրություն: Հոդված 35: Ընդունվել է 06.12.2015 թ.:



Գծապատկեր 16. Ընտանիքի գործառույթները

Վերարտադրողական գործառույթ: Ընթանում է տեսակային սերնդափոխություն, ապահովվում է սերունդների շարունակականությունը. ծնվում են երեխաներ, որոնք կյանքը շարունակողներն են: Վերարտադրողականությունը բնականոն երևույթ է՝ հիմնված կամավորության, սիրո, համատեղ կյանքը շարունակելու բնականոն պահանջի, ընդհանուր նպատակի հիման վրա: Երեխայի ծնունդը ոչ միայն լուծում է ներընտանեկան շարունակելիության խնդիր, այլ նաև պետության քաղաքացու, ազգային գոյապահպանական խնդիր: Երեխայի ծնունդն ավետում է ծնողների միջև միջանձնային փոխհարաբերությունների, նրանց իրավունքների և պարտականությունների հստակեցում: Նոր որակական փոխհարաբերություններ են ձևավորվում ընտանիքում՝ ծնող-ծնող, ծնող-երեխա, երեխա-երեխա, երեխա-հարազատներ հաղորդակցման ընթացքում:

Տնտեսական գործառույթ: Յուրաքանչյուր ընտանիքին բնորոշ են միկրոտնտեսությունը վարելու առանձնահատկությունները, եկամուտներն ու ծախսերը, բյուջեն տնօրինելու դժվարություններն ու ձեռքբերումները: Ընտանիքում տնտեսությունը վարում են ծնող-

ները. նրանց աշխատանքային գործունեության հաշվին ձևավորվում է ընտանեկան բյուջեն, սակայն կարող են լինել նաև արտաբյուջետային եկամուտներ հարազատների, բարեկամների նվիրատվությունների հաշվին: Ընտանիքի տնտեսական վիճակն ուղղիղ համեմատական է պետության տնտեսության վիճակին: Սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, գործազրկությունն ու աղքատությունը, հասարակության ծայրահեղ բևեռացումը, արտագնա աշխատանքը, արժեքային համակարգի կտրուկ փոփոխությունները ներազդում են ոչ միայն ընտանիքի պահպանման վրա, այլև մեծացող երեխայի սոցիալականացման վրա: Երբեմն դրանց արդյունքում ոչ միայն ընտանիքներ են քայքայվում, այլև խաթարվում է երեխայի սոցիալականացման գործընթացը:

Սոցիալական գործառույթ: Յուրաքանչյուր ընտանիքում ծնողները պարտավոր են երեխաների համար ստեղծել բարենպաստ (նվազագույն, անհրաժեշտ, պարտադիր) պայմաններ նորմալ ապրելու, զարգանալու, սովորելու, աշխատելու, հանգստանալու համար: Վերը թվարկածն ուղղակիորեն բխում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի համաձայնագրից[43]: Սակայն սոցիալական գործառույթն իրագործելու համար անհրաժեշտ են բազմաթիվ սոցիալական պայմաններ՝ ընտանիքի սոցիալ-տնտեսական բարեկեցիկ վիճակը, ծնողների կարգավիճակը, նրանց աշխատունակությունը, պատասխանատվության աստիճանը, ներընտանեկան միջանձնային փոխհարաբերությունները, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը և այլն: Ընտանիքում սոցիալական բազմաթիվ խնդիրները մեղմելու, դժվարությունները հաղթահարելու համար

[43] Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին: Ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1989 թ. նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով և ուժի մեջ է մտել 1990 թ. սեպտեմբերի 2-ին՝ համաձայն 49-րդ հոդվածի:

պետությունը նշանակում է տարբեր բնույթի և չափի նպաստներ: Դրանք են՝ երեխաների նպաստները, ընտանեկան նպաստները, կենսաթոշակները, նյութական և ֆինանսական օգնությունը սոցիալապես անապահով ընտանիքներին:

Դաստիարակչական գործառույթ: Ընտանիքը կատարում է նաև դաստիարակչական գործառույթ: Ընտանիքը երեխայի անձի ձևավորման և զարգացման բնօրրանն է, սոցիալական ինստիտուտը, ուր սկսվում և շարունակվում է երեխայի սոցիալականացումը, դաստիարակությունը: Բարոյական, գեղագիտական, իրավական նորմերի, ինչպես նաև մարդասիրական արժեքների սերմանումը և սեռային առանձնահատկությունների, մտածելակերպի, վարքագծի դաստիարակումը սկսվում է ընտանիքում, ուր կարևոր դերակատարություն ունեն ծնողների անձնական օրինակն ու դրական կերպարը: Երեխաների դաստիարակությամբ պարտավոր են զբաղվել երկու ծնողներն էլ: Ընտանիքում անհրաժեշտ է ապահովել ծնողների պահանջների, մոտեցումների ընդհանրություն, նրանց խոսքի և գործի միասնություն: Ընտանիքում մեծացող երեխաները շատ արագ են զգում և գիտակցում եղած հակասությունները, միջանձնային խնդիրները ու փորձում են դրանցից երբեմն օգտվել:

Ընտանիքը եռամիասնական կառույց է՝ բաղկացած ծնողներից (հայր և մայր) և երեխաներից: Գոյություն ունեն ընտանիքների բազմաբնույթ դասակարգումներ: Ըստ կառուցվածքի՝ տարբերում են **միջուկային** և **ընդլայնված ընտանիքներ**: Միջուկային են այն ընտանիքները, որոնցում պահպանված է եռամիասնական կառուցվածքը՝ ծնողներ, երեխա կամ երեխաներ: Ընդլայնված ընտանիքներում, բացի ծնողներից և երեխաներից, ապրում են նաև ազգակցական, արյունակցական այլ հարազատներ:

«Դպրոց» սոցիալական կառույցն արմատապես փոխում է սոցիալականացման ընթացքը: Նպատակասլաց սոցիալականացման արդյունքում իմաստավորվում է կրթության, ուսուցման և դաստիարակության դերակատարությունն անձի զարգացման գործում: Սոցիալական միջավայրը, միջանձնային փոխհարաբերությունները դիտվում են դպրոցական չափանիշների լույսի տակ: «Դպրոց» սոցիալական ինստիտուտում սովորողներին համակողմանի գիտելիքների փոխանցման, կարողությունների ու հմտությունների ձեռքբերման արդյունքում ձևավորվում են գիտական աշխարհայացք և արժեքային համակարգ նպատակասլաց ու արդյունավետ սոցիալականացման համատեքստում:

Հարևաններ: Սոցիալականացման տեսակետից հարևաններն այն անձինք են, որոնք ընտանիքի նախաձեռնությամբ և ընտրությամբ, երբեմն, ըստ ստեղծված տարածքային պայմանների, հայտնվում են անձի միկրոմիջավայրում: Նրանց ներգործությունը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի, դրական կամ բացասական: Հարևանների դերակատարությունը նշանակալի է հատկապես նախադպրոցական, դպրոցական և դեռահասության տարիքներում, երբ ձևավորվում և յուրացվում են անձի նոր բառապաշարը, մտածելակերպը, դիրքորոշումները, հակվածությունները, վարքագծային նորմերը, արժեքային համակարգը, կախվածություններն ու հետաքրքրությունները: Հարևանների ներգործությամբ անձը կարող է ստանձնել դրական կամ բացասական սոցիալական դերեր: Հարևանների միջև միջանձնային հարաբերություններն ու առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը կարող են հանգեցնել անձի մեջ բազմաթիվ դրական որակների ձևավորման՝ համախմբվածության, դիմացինին օգնելու ցանկության, կարեկցանքի, բարության, հանդուրժողականության զգացման, դիմա-

ցինի իրավունքները հարգելու և սեփական պարտականությունները չանտեսելու գիտակցման: Ազգային առանձնահատկությունները, սովորույթները, ավանդույթներն իրենց ներգործություն ունեն հարևանների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործում: Հասարակության մեջ հարևանների խումբը կարող է ձևավորել առանձին համակեցություն, որը կարող է առանձնանալ հասարակությունից՝ ստեղծելով սեփական արժեքային համակարգը, սկզբունքները, բարոյական նորմերը, ընդունելի վարքագծերը, սովորությունները, հաղորդակցման չափերն ու մեխանիզմները, միջանձնային հաղորդակցման առանձնահատկությունները, որոնք հարևանների խմբի սահմաններից դուրս կարող են չընդունվել:

Հասակակիցներ: Հասակակիցներն երեխայի սոցիալականացման գործընթացում կարող են ունենալ կարևոր դերակատարություն: Նրանց ներգործությունը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Ս. Շացկին կարևորում էր հասակակիցների հետ հաղորդակցումը՝ նշելով, որ այն առկա է անձի բնածին հատկանիշներում[44]: Հասակակիցների միջավայրը հնարավորություն է տալիս.

- անձին ազատ ինքնադրսևորվելու, ինքնաբացահայտվելու. մեծահասակների միջավայրում, ընտանեկան միջավայրում այդ ազատությունը երբեմն սահմանափակվում է:
- Հասակակիցների միջավայրում պահանջմունքները, ուղղվածությունները, դրդապատճառները կարող են ընդհանրական լինել՝ դրական (դրական սոցիալական դերերի իրականացման ընթացքում) և բացասական (բացասական դերերի) առումներով: Չի բացառվում նաև հասակակիցների կողմից ճնշումը, հաղորդա-

[44] **Шацкий С. Т.,** Избранные педагогические сочинения, т. 2, М., 1980, стр. 304.

կցման սահմանափակումը միջավայրում, որը անձին զարգացման նոր որակի է դրդում, իրավիճակից դուրս գալու համար լուծումներ պահանջում:

- Հասակակիցների միջավայրում արժեքների, դիրքորոշումների բազմազանությունը, երևույթների ընկալման նորույթը, աստիճանաբար բավարարվածության զգացողությունը, սահմանափակումների վերացումն ինքնաճանաչման հնարավորություն են տալիս: Հնարավոր է նաև բացասական ներգործություն: Անդրադառնալով այս խնդրին՝ Ս. Շացկին նշում է, որ հասակակիցների «բացասական միջավայրը» դաստիարակության թշնամին է, որի արդյունքում դրսևորվում են ագրեսիվ վարքագծեր, անհանդուրժողականություն, անմարդկային վերաբերմունք շրջապատի նկատմամբ[45]:
- Հասակակիցները կարող են դրդել հակահասարակական վարքագծերի, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործման և սոցիալականացման ընթացքում այլ բացասական դերերի ստանձման: Սոցիալականացման ընթացքում երեխան կարող է հայտնվել ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի մեջ:

[45] **Фрадкин Ф. А., Малинин Г. А.,** Воспитательная система С. Т. Шацкого, М., 1993, стр. 176.



Գծապատկեր 17. Սոցիալականացման միկրոգործոնները

Ս. Շացկին կարևորում է հասակակիցների հաղորդակցման «միջավայրի մանկավարժացումը»: Այն հնարավոր է համապատասխան բարենպաստ պայմանների ձևավորմամբ, ներդաշնակ միջանձնային հարաբերությունների ստեղծմամբ, առողջ բարոյահոգեբանական պայմանների առկայությամբ: Վերը թվարկված դիրքորոշումը նա առաջարկում էր կիրառել հատկապես այն հասակակիցների նկատմամբ, որոնք հայտնվել են փողոցային պայմաններում՝ նրանց անվանելով «փողոցի երեխաներ»: Այդ նպատակով Ս. Շացկին ստեղծել է «սոցիալ-մանկավարժական» կենտրոններ[46], որտեղ փորձում էին հաղթահարել երեխայի սոցիալականացման ընթացքում ծագող հիմնախնդիրները՝ իրականացնելով աջակցող, ախտորոշող, վերականգնող, կանխարգելող գործառույթներ:

[46] **Шацкий С. Т.,** Школа для детей или дети для школы. Педагогические сочетания, М., 1964, т. 2, стр. 116.

Այսպիսով՝ կենսաբանական և սոցիալական գործոնների ներգործությամբ են պայմանավորված անձի սոցիալականացման առանձնահատկությունները:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Գործոն, ազդակ:

ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են սոցիալական գործոնները:
2. Թվարկի՛ր միկրոգործոնները՝ բնութագրելով դրանք: Ի՞նչ կարևորություն ունեն դրանք սոցիալականացման ընթացքում:
3. Թվարկի՛ր մեզոգործոնները, բնութագրի՛ր դրանք: Թվարկված գործոններից որո՞նք ունեն տարերային ներգործություն:
4. Բնութագրի՛ր մակրոգործոնները և ներկայացրո՛ւ դրանց ներգործությունը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- *Կազմակերպե՛ք ծնող-երեխա դերային երկխոսություն՝ «Դու նրա հետ ընկերություն չպետք է անես, որովհետև...» թեմայով: Լսարանում քննարկե՛ք երկխոսության արդյունքները:*
- *Պատրաստե՛ք զեկուցում՝ «Սոցիալական գործոնների հարաբերակցությունը» թեմայով:*
- *Լսարանում պատրաստե՛ք զեկուցումներ՝ «Ժամանակի բոլո՞ր մարտահրավերներն են օգտակար սոցիալականացման գործընթացի համար» թեմայով:*
- *«Փոփոխված արժեքների հիերարխիան սոցիալականաց-*

ման ընթացքում» թեմայի շրջանակներում պատրաստե՛ք հարցաթերթիկ և իրականացրե՛ք սոցիոլոգիական հարցում տասը մարդու շրջանում: Արդյունքների վերլուծությունը քննարկե՛ք լսարանում:

2.3. Սոցիալականացման փուլերը

Սոցիալական մանկավարժության կարևոր հիմնախնդիրներից մեկը սոցիալականացման գործընթացի փուլերն են, որոնց ընթացքում կարևորվում են յուրաքանչյուր փուլին բնորոշ օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Մարդը՝ որպես բանական էակ (homo sapiense), կազմում է բնության անբաժանելի մի մասնիկը և անցնում է զարգացման չորս աստիճան.

- որպես կենսաբանական էակ՝ բնութագրվում է AQ գենետիկական գործակցով,
- սոցիալական էակ,
- որպես բանական էակ՝ բնութագրվում է ինտելեկտուալ IQ գործակցով,
- հոգեբանական էակ:



Գծապատկեր 18. Մարդու զարգացման աստիճանները

Մարդու զարգացման երեք աստիճանների (սոցիալական, բանական, հոգեբանական) որակական հիմքը կենսաբանական ժառանգականությունն է, որի արդյունքում գենետիկական կոդի միջոցով փոխանցվում են բնածին հատկանիշներ: Երբ զարգացման կենսաբանական աստիճանում նկատվում են որոշակի կազմաբնախոսական փոփոխություններ, ապա դրանք ուղղակիորեն ներգործում են մյուս աստիճանների վրա: Արդյունքում խաթարվում են **մարդ-բնություն, մարդ-հասարակություն, մարդ-մարդ հարաբերությունների պատճառահետևանքային կապերը:** Մարդը՝ որպես կաթնասունների ներկայացուցիչներից կատարյալ, եզակի ներկայացուցիչ, ունի որոշակի նմանություններ և առանձնահատկություններ:

1. Մյուս կաթնասուն կենդանիների նման մարդն իր ֆիզիկական գոյը պահպանելու համար բնությունից վերցնում է պատրաստի բարիքներ, բավարարում ցածրակարգ պահանջմունքներ, սերնդին կերակրում կաթով, բացառիկ խնամք է տածում սերնդի նկատմամբ: Իր գոյության ընթացքում արագ հարմարվում է շրջակա միջավայրին:

2. Ի տարբերություն կենդանիների՝ մարդն օժտված է վերացարկված մտածողությամբ, կամային բարձր որակներով: Նա կարող է ներգործել և փոփոխել շրջապատող միջավայրի պայմանները, իր հերթին՝ ներգործվել միջավայրից: Մարդը սոցիալական զարգացման ընթացքում ոչ միայն օգտվում է միջավայրի պատրաստի բարիքներից, այլ նաև աշխատանքով ստեղծում է նորերը, նոր արժեքներ, նվաճում է տիեզերքը, պեղում ընդերքը, արտահանում օգտակար հանածոները: Միշտ չէ, իհարկե, որ մարդածին (անթրոպոգեն) գործոնը դրական է ազդում միջավայրի վրա. վկայությունը բազմաբնույթ էկոլոգիական խնդիրներն են, որոնք, որպես հետևանք, աղետային-ճգնաժամային իրավիճակներ են ստեղծել մարդու միջամտության արդյունքում: Սակայն, մարդը բանական էակ է: Նա կարողանում է իրավիճակային, ճկուն մոտեցմամբ արագ հարմարվել, օգտվել, օգտագործել, անհրաժեշտության դեպքում փոփոխել թե՛ սոցիալական, թե՛ էկոլոգիական միջավայրը:

Զարգացումը բնության, հասարակության և մարդու ընդհանուր հատկություն է: Թվարկվածներից յուրաքանչյուրին բնորոշ են զարգացման համապատասխան օրինաչափությունները, առանձնահատկությունները, շարժիչ ուժերը, զարգացման հետագա հնարավոր միտումները: Եթե բնությանը բնորոշ են հաջորդական և թռիչքային զարգացման ձևերը, ապա հասարակությանը՝ էվոլյուցիոն և հեղափոխական ձևերը: Առավել ինքնատիպ են մարդու **անհատական (օնտոգենեզ)** և **պատմական (ֆիլոգենեզ)** զարգացման ձևերը, դրանց հարաբերակցությունը դրսևորվում է **բիոգենետիկ** օրենքում: Այն ձևակերպվում է այսպես. օնտոգենեզը՝ անհատական զարգացումը, ֆիլոգենեզի համառոտ կրկնությունն է:

Մարդու սոցիալական զարգացումը բարդ, երկարատև, անընդհատ, բազմաշերտ, հակասական գործընթաց է՝ պայմանավորված

արտաքին, ներքին, կառավարելի, ոչ կառավարելի, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, որոնք առկա են սոցիալական միջավայրում:

Մարդու զարգացման քանակական և որակական փոփոխություններն ընթանում են ամբողջ կյանքի, սոցիալականացման ընթացքում, երբ մարդը ձեռք է բերում սոցիալական փորձ, սոցիալական նորմեր, համապատասխան վարքագիծ, որոնք տարիների ընթացքում կարող են փոփոխության ենթարկվել արժեքային համակարգի, նրա ակտիվության արդյունքում: Մարդու զարգացումը գծային անփոփոխ բնույթ չունի: Այն փոփոխության է ենթարկվում՝ կախված մարդու ակտիվությունից, տարիքից, փորձից, խառնվածքից և նյարդային համակարգից, արտաքին միջավայրից: «Նկատելի փոփոխությունների մակարդակը դասակարգվում է երկու խմբի.

ա) ակտուալ-կոնկրետ,

բ) պոտենցիալ ներհայեցողական»:

ա. Ակտուալ, երբ մարդը սոցիալականացման ընթացքում ինքնուրույնաբար կարողանում է լուծել կոնկրետ խնդիրներ, ըստ Լ. Վիգոտսկու՝ զարգացման «մերձավոր գոտում»:

բ. Պոտենցիալ, երբ մարդու սոցիալական զարգացման մակարդակը, ըստ Մերի Էյնվերտի, Դ. Բոբի, սոցիալականացման փուլերին համապատասխան պոտենցիալ հնարավորություն ունի զարգացման նոր ձեռքբերումների, սոցիալական նոր դերերի, գործունեության որևէ ոլորտում մասնագիտական աճի[47]:

«Միջավայրի նպատակասլաց ներգործությունը մարդու վրա կոչվում է սոցիալական դաստիարակություն: Սոցիալական դաստիարակությունը բազմամակարդակ գործընթաց է գիտելիքների,

[47] **Мардахаева Л. Б.,** Социальная педагогика, М., 2003, стр. 43.

վարքագծային նորմերի, հասարակությունում միջանձնային փոխհարաբերությունների իմացություն»[48]:

Սոցիալական դաստիարակությունն է, որ ապահովում է թե՛ ակտուալ և թե՛ պոտենցիալ սոցիալական զարգացումը:

Կենսաբանական և սոցիալական զարգացումն ընթանում է սոցիալականացման գործընթացի փուլերի ընթացքում: Կենսաբանական զարգացումը պայմանավորված է կազմաբնախոսական, մորֆոլոգիական, բիոքիմիական փոփոխություններով: Փոփոխության են ենթարկվում անձի հասակը, կշիռը, արյան, ոսկորների հյուսվածքի բաղադրությունը, սեռական հասունացման փուլերը և այլն:

Մարդու սոցիալական զարգացումը որակական և քանակական փոփոխություններ են, որոնք արտահայտվում են նրա գիտակցության, գործունեության, վարքագծի, մարդկանց և շրջակա միջավայրի համագործակցության ընթացքում: Ֆիզիկականը, հոգևորը, մտավորը, դիտարկելով դիալեկտիկական եռամիասնության մեջ, ձևավորում են մարդկային բնութագիրը, որն արտահայտվում է անձնային որակներում, իսկ հետագայում՝ գործունեության, սոցիալականացման փուլերին համապատասխան:

Մարդու կենսաբանականից սոցիալ-հոգեբանական էակի ձևավորման գործընթացը կոչվում է սոցիալականացման գործընթաց:

Անձի ձևավորման գործընթացում առանձնացվում են սոցիալականացման հետևյալ փուլերը.

---

[48] **Мудрик А. В.,** Социализация. Российская педагогическая энциклопедия в 2 т., т. 2, М., 1999. стр. 359-361.



Գծապատկեր 19. Սոցիալականացման փուլերը

Սոցիալականացման փուլերն են.

1. մարդը ծնվում է անհատ,
2. ձևավորվում է անձ (անձնավորություն),
3. վերածվում է անհատականության:

Սոցիալականացման փուլերի ընթացքում անհատից մինչև անհատականություն մարդն ինքնաճանաչումից, ինքնագիտակցումից անցնում է առավել բարձր մակարդակ՝ ինքնահիրացման, ինքնակառավարման: Սոցիալականացման փուլերի ընթացքում անձի ակտիվությանը համապատասխան բավարարվում են պահանջմունքներ: Դրանք են՝

- կենսաբանական, ֆիզիկական, նյութական,
- սոցիալական,
- հոգևոր:

Առաջին խմբի պահանջմունքները համարվում են ցածրակարգ, առաջնային, «պարզունակ», սոցիալական պահանջմունքները՝ միջին, իսկ հոգևորը՝ բարձրակարգ:

«Պահանջմունքը ծառայում է իբրև օրգանիզմի գոյատևման խթան և սուբյեկտի ակտիվության, ծավալման աղբյուր: Պահանջմունքը մարդու որևէ կարիքը, պակասը արտացոլող հոգեկան վիճակ է»[49]:

Պահանջմունքները մարդու պատմական ձևավորման արդյունք են, որոնք զարգանում են անձի ձևավորման ընթացքում: Հասարակության զարգացմանը զուգընթաց մարդկանց պահանջմունքները՝ որպես ընդհանուր օրինաչափություն, անընդհատ կատարելագործվում են և զարգանում՝ հաճախ գերազանցելով դրանց բավարարման հնարավորությունները:

Յուրաքանչյուր պահանջմունքի բավարարման ընթացքում առաջանում են հակասություններ՝

- անձի ցանկությունների և հնարավորությունների: Ցանկությունները պետք է լինեն իրատեսական: Անհրաժեշտ է վաղ տարիքից ձևավորել և չափավորել ցանկությունները: Ծնողները պետք է ախտորոշեն ցանկությունների առաջացման պատճառահետևանքային կապերը, նրանք ոչ թե պետք է ճզմեն դրանք՝ կտրուկ մերժելով, այլ հուսադրեն, որ ցանկությունները նպատակամետության, աշխատասիրության արդյունքում ժամանակի ընթացքում կբավարարվեն, եթե անհրաժեշտ նախադրյալներ և պայմաններ լինեն: Չանտեսենք, որ պայմանները գերակա են ցանկությունների նկատմամբ:

[49] **Розанова Б. А.,** Психология управления, М., 2009, стр. 287.

- Հակասություն կարող է առաջանալ բավարարվածության և ոչ բավարարվածության միջև: Չափի և տակտի զգացողությունը, ինչպես նախորդ դեպքում, նույնպես կարևորվում է: Ցանկությունների բավարարման հիերարխիայում նախորդից նորին՝ հաջորդին անցնելը պետք է լինի սահուն, տրամաբանված: Եթե որևէ պատճառով անձը չի լուծում երկրորդ խումբ հակասությունները, ապա նա փորձում է բավարարել նախորդը:
- Հակասություններ են առաջանում սոցիալականցման ընթացքում մարդու իրավունքների և պարտականությունների միջև: Սոցիալականավման ընթացքում պետք է սերմանել այն կարևոր միտքը, թե ամենամեծ ազատությունն օրենքի ազատությունն է: Իրավունքները և պարտականությունները դիալեկտիկական միասնության մեջ են գտնվում, որտեղ իրավունքներն են, այնտեղ էլ պարտականությունները և հակառակը:

Սոցիալականացման փուլերի ընթացքում դրսևորվող հակասությունները դասակարգվում են.

- արտաքին և ներքին,
- ընդհանուր և անհատական:

Սոցիալականացման փուլերի ընթացքում ներքին հակասությունները հանգեցնում են անհատականության զարգացման: Արտաքին հակասությունները դրսևորվում են մարդ-բնություն, մարդ-հասարակություն, մարդ-մարդ փոխհարաբերությունների ընթացքում: Ընդհանուր հակասությունները բնորոշ են հասարակական օրենքներով զարգացող մարդուն: Անհատական հակասությունները բնորոշ են «ես»-ի զարգացման ընթացքին, «ես» կոնցեպցիայով պայմանավորված բաղադրատարրերին, համարժեք՝ անձին և անհատականությանը:

Մարդն իր սոցիալականացման ընթացքում բավարարում է տարբեր պահանջմունքներ:

Անհատը կենսաբանական, բանական մարդն է, որը բավարարում է ցածրակարգ պահանջմունքներ: **Անհատ** (լատ. Individuum) բառացի թարգմանությամբ նշանակում է «անբաժանելի»: Լ. Մարդախաևան հիմնավորում է՝ բնության անբաժանելի մասնիկ: Ծնվելով՝ իր հետ բերում է գենետիկ կոդով ամրագրված ժառանգական նախադրյալներ, որոնք, սոցիալական միջավայրին և դաստիարակությանը համապատասխան, անհատական զարգացման ընթացքում համալրվում են ձեռքբերովի հատկանիշներով: «Անհատը բնութագրվում է բիոսոցիալական բնութագրով, իսկ անձը բնութագրվում է սոցիալ-հոգեբանական չափանիշներով: Այդ չափանիշներն են՝ աշխարհայացք, ինքնագնահատական, պատվախնդրություն, արժեքային համակարգի ուղղվածություն, հստակ սկզբունքներ, բարոյական, գեղագիտական նորմեր, իդեալներ, քաղաքական դիրքորոշում, պետական մտածողություն, կամային որակներ և այլն»[50]:

Անհատից անձնավորություն ձևավորման ընթացքում անձնավորում (լատ. persona –անձ) է կատարվում: Անձնավորման ընթացքում անձ-սուբյեկտն իր դերն ու տեղն է զբաղեցնում սոցիալական խմբում, հասարակության մեջ: Սակայն միշտ չէ, որ անձնավորումը ներդաշնակ է ընթանում: Երբեմն անձը ոչ թե փորձում է սոցիալական զարգացում ապրել, այլ իրեն է վերագրում շրջապատող մարդկանց նվաճումները, աշխատանքային փորձը, հաջողությունները, իսկ սեփական սխալներն ու թերությունները՝ ուրիշներին: Սոցիալականացման ընթացքում հնարավոր է նաև է, որ անհատից

[50] **Бочарова В. Г., Битинас Б. П.** Социальное воспитание учащихся. Опыт разработки концеп- ций воспитания: Ч. 1, Ростов-на-Дону, 1993, стр. 86-88.

անձ չձևավորվի: Մարդկությանը հայտնի են այդօրինակ դեպքեր՝ Մաուգլիի նախատիպը, տարբեր պատճառներով կենդանիների խմբում հայտնված երեխաները, երբ նրանք հնարավորություն չեն ունեցել հաղորդակցվելու իրենց նմանների՝ բանական տեսակի հետ: Տարբեր գիտությունների շրջանակներում փորձել են բնութագրել անձը: Թվարկենք դրանցից մի քանիսը:

- Անձը պատմական էվոլյուցիայի մասնիկ է՝ սոցիալական տարբեր դերեր կրող: Նա կարող է ընտրել իր կյանքի ճանապարհը, փոխադարձ աղերսներ ձևավորել բնության, հասարակության և ինքնաճանաչման ընթացքում:
- Անձը հասարակական էակ է, որին բնորոշ են հասարակական հաղորդակցման ձևերը, որոնք արտահայտվում են գործունեության մեջ, գիտակցության և վարքագծի, անհատական գծերի բացահայտման ընթացքում:
- Անձը բնութագրվում է նյարդային համակարգով, խառնվածքով, բնավորությամբ, ակտիվությամբ, կամային որակներով, վարքագծային դրսևորումներով:
- Անձը ֆենոմենալ զարգացման բազմազանություն է, բազմաբնույթ կապերը դրսևորվում են բնության էվոլյուցիայի, հասարակական պատմական զարգացման, մարդու ինքնազարգացման, ինքնաիրացման ընթացքում:
- Անձը հնարավոր չէ բնութագրել միայն մեկ գիտության շրջանակներում, քանի որ տարբեր գիտություններում նրան ուսումնասիրում են իրենց նպատակներից, խնդիրներից, դիրքորոշումներից ելնելով»[51]:

Համակարգելով եղածը՝ անձը կազմաբնախոսական, անհատական, հոգեբանական առանձնահատկությունների և հասարա-

[51] **Мардахаев Л. В.,** Социальная педагогика: Учебник, М., 2005, стр. 269.

կական հարաբերությունների, նպատակասլաց դաստիարակչական ներգործության արդյունք է: Նա սոցիալականացված անհատն է, որի մեջ միավորված են ազգային-համամարդկային և անհատական գծեր, որոնք ձևավորվում են կենսաբանական և սոցիալական գործոնների փոխներգործության շնորհիվ:

Անձը սոցիալականացման ընթացքում ձեռք է բերում ինքնատիպ, եզակի, միայն իրեն բնորոշ, շեշտադրված որակներ: Անհատականությունը պետք է առնվազն հարյուր և ավելի անձերից էապես տարբերվի՝ իր անհատական ինքնատիպ, եզակի բնութագրական որակներով: Անհատականությունն ունի դրսևորման տարբեր աստիճաններ, օրինակ՝ տաղանդը, հանճարը կոչվում են վառ անհատականություններ:

Հումանիստական մանկավարժության հայեցակարգերում մարդը դիտարկվում է որպես կատարյալ արժեք, իսկ սոցիալական դաստիարակության և միջավայրի ներգործությունը հնարավորինս պետք է ուղղորդի անհատականության ձևավորումը:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Սոցիալականացման փուլ, անհատ, անձ, անհատականություն, ակտուալ, պահանջմունք, զարգացում:

ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են մարդու զարգացման աստիճանները:
2. Ինչպիսի՞ պահանջմունքներ է բավարարվում մարդը սոցիալականացման գործընթացում:
3. Քանի՞ խմբերի են դասակարգվում պահանջմունքները:
4. Որո՞նք են սոցիալականացման փուլերը:
5. Ո՞րն է սոցիալականացման փուլերի ալգորիթմը:

6. Բնութագրե՛ք «անհատ», «անձ», «անհատականություն» հասկացությունները:

7. Ինչպիսի՞ հակասություններ կարող են ծագել սոցիալականացման գործընթացում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- *Նկարե՛ք «Զարգացող ծառ» և ծառի ճյուղերի վրա նշե՛ք այն նպատակները, դրդապատճառները, որոնք կնպաստեն անձի արդյունավետ սոցիալականացմանը:*
- *Լսարանը բաժանե՛ք մի քանի խմբերի: Յուրաքանչյուր խմբում բաժանե՛ք քարտեր՝ «անհատ», «անձ», «անհատականություն» բառերով: Բնութագրե՛ք հասկացությունները, դրանց բնորոշ որակները և առանձնահատկությունները:*
- *Ձեր ձեռքում «Ամենակարող կախարդական փայտիկն է: Ի՞նչ պահանջմունքներ կբավարարեք, ի՞նչ կփոխեք սոցիալականացման գործընթացում՝ Ձեր միջավայրում:*

2.3.1. Սոցիալականացման փուլերն ըստ մարդու աշխատունակության

Մարդու սոցիալականացումը տվյալ սոցիալական միջավայրում կենսաբանական և սոցիալական գործոնների ներգործությամբ, սոցիալական մեխանիզմների օգնությամբ համապատասխան սոցիալական դերերի ստանձնումն է անհատից անձ-անհատակություն ձևավորման, կայացման ընթացքում:

Սոցիալականացման հիմնախնդրի վերաբերյալ կան բազմաթիվ հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններ, իրարա-

մերժ տեսակետներ և դիրքորոշումներ, սակայն դրանք կարելի է համակարգված ներկայացնել երկու հիմնական ուղղվածությամբ[52]:

1. կենսահոգեբանական,
2. սոցիոլոգիական:

Առաջին ուղղության կողմնակիցներն (Տ. Պարսոնս, Է. Դյուրգհեյմ) ենթադրում են, որ մարդը սոցիալականացման ընթացքում ունի պասիվ կարգավիճակ: Նա բնածին հակումներով, նախադրյալներով, հատկություններով միայն հարմարվում է միջավայրի պայմաններին՝ յուրացնելով մշակութային փորձը, արժեքային համակարգը: Այս դիրքորոշումը սուբյեկտ-օբյեկտային է, որի ընթացքում հասարակությունը ներգործող սուբյեկտն է, իսկ մարդը՝ օբյեկտը:

Սոցիոլոգիական ուղղության կողմնակիցները (Չ. Կուլի, Ջ. Միդ) պնդում են, որ մարդն ակտիվորեն մասնակցում է սոցիալականացման գործընթացին, այդ ընթացքում ձևավորվում են համամարդկային և անհատական հատկանիշներ, որոնք սոցիալական դերերի յուրացման, կատարման, սոցիալական փոխներգործության (մարդ-մարդ, մարդ-հասարակություն) արդյունք են: Նմանօրինակ մոտեցումը սուբյեկտ-սուբյեկտային է, քանի որ սոցիալականացման բոլոր փուլերում ընթանում է մարդու զարգացումը, կարողությունների ընդլայնումը, ինքնագիտակցումը, ինքնակայացումը:

Մարդու սոցիալականացումն ունի փուլեր: Որոշ դեպքերում այդ փուլերը գրեթե նույնացվում են տարիքային շրջաբաժանման փուլերի հետ: Սակայն դա պայմանականորեն է դիտարկվում և նպատակահարմար չէ սոցիալական մանկավարժության դիրքորոշման տեսակետից: Սոցիալականացման փուլերի մասին առավել

---

[52] **Мудрик А. В.,** Социальная педагогика: Учеб. для студ. пед. вузов / Под ред. В. А. Сластенина, М., 2000, стр. 200.

ընդունելի տեսակետ է Յ. Գիլինսկու մոտեցումը[53]: Նա առաջարկում է սոցիալականացման փուլերի բաժանման չափանիշ ընդունել անձի հարաբերությունն աշխատանքային գործունեության նկատմամբ: Ըստ նրա՝ սոցիալականացման գործընթացի փուլերը երեքն են՝

1. մինչաշխատանքային,
2. աշխատանքային (18-ից մինչև 63-65 տ.),
3. հետաշխատանքային (63-65-ից հետո):



Գծապատկեր 20. Սոցիալականացման փուլերն ըստ Յ. Գիլինսկու

Մինչ սոցիալականացման փուլերին անցնելը ներկայացնենք գործունեությունն ու նրա տեսակները:

---

[53] **Гилинский Я. И.,** Стадии социализации индивида /Человек и общество/, Л., 1971, стр. 44-55.

Գործունեությունը մարդու մտավոր և ֆիզիկական նպատակաուղղված ակտիվության գործընթացն է որևէ ոլորտում համապատասխան զբաղվածությամբ, որի ընթացքում իրականացվում են նրա այս կամ այն դիրքորոշումը միջավայրի, մարդկանց, խնդիրների նկատմամբ:

Գործունեությունն ունի իր դրդապատճառները և հետապնդում է որոշակի նպատակ, կազմված է առարկայական և մտավոր գործողություններից: Առաջատար գործունեությունն անձի անհատական (օնտոգենետիկական) զարգացման տվյալ փուլում իրականացվող այն գործունեությունն է, որով պայմանավորված են մարդու հոգեկանում տեղի ունեցող հիմնական փոփոխություններն ու այն գործընթացները, որոնք նախապատրաստում են նրա անցումը զարգացման հաջորդ՝ ավելի բարձր փուլ:

Գործունեությունը ձևավորվում և զարգանում է, երբ անձի հոգեկանում ձևավորվում են համապատասխան դրդապատճառները: Գործունեությունը տարերային ակտիվություն չէ, այլ նպատակաուղղված ընթացք:

Նպատակ - դրդապատճառ - միջոց-գործունեության նկատմամբ վերաբերմունք + միջոցների կիրառման գործընթաց = արդյունք:

Նպատակը գործունեության արդյունքի իդեալական պատկերացումն է: Այն որոշվում է մարդու տարիքին, անհատական հակումներին համապատասխան դաստիարակության ընթացքում: Վաղ տարիքում գործունեությունը որոշակի պահանջմունքների, գիտելիքների բավարարվածություն է: Հետագա զարգացումն առավել ընդգծելի է դարձնում ձևավորվող մարդու անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները: Մասնագիտական գործունեության արդյունքում նպատակը դառնում է մասնագիտաց-

ման շարժառիթը: Գործունեության նպատակի ուղղվածությունները և պայմանավորվածությունները կարող են և չհամապատասխանել հասարակության կողմից ընդունելի պահանջներին: Նպատակները կարող են լինել բնական, նորմալ, համապատասխան, ստեղծագործական և այլն: Գործունեության նպատակի բնութագրին համապատասխան ձևավորվում է սուբյեկտը՝ աշխարհայացքով, ստեղծագործական որակներով, իդեալներով, բարոյական, գեղագիտական, իրավական նորմերով և վարքագծային առանձնահատկություններով:

Դրդապատճառները ձևավորվում են այն ժամանակ, երբ անձի պահանջմունքներն արտահայտվում են՝ ըստ դրանց հիերարխիայի և դասակարգման տիպաբանության՝ հիմք ընդունելով տարիքային, անհատական, սեռային, հոգեբանական առանձնահատկություններն ու սոցիալականացման փուլերը: Փաստորեն, դրդապատճառն առարկայացված պահանջմունք է: Այն չի նույնացվում միջոցների հետ:

Միջոցներն այն ամենն են, ինչ ընտրում և օգտագործում է մարդը գործունեության ընթացքում՝ իր նպատակին հասնելու համար: Ըստ սոցիալական կարևորության՝ միջոցները լինում են ընդունելի տվյալ տարիքային փուլի, սեռի, հնարավորությունների տեր անձի համար, որն ընդունված է հասարակության մեջ, մասնագիտական միջավայրում: Կախված նպատակների, միջոցների ընտրությունից՝ կենսագործունեության ընթացքում ձևավորվում է մարդու անձնային տեսակը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել հասարակության կողմից ընդունելի նորմերին: Միջոցները կիրառվում են նպատակին համապատասխան՝ կանխատեսելով որոշակի արդյունքներ, որոնք ուղղակիորեն ազդում են անձի կատարողական ունակությունների վրա: Արդյունա-

վետությունը պայմանավորված է տարբեր հնարների ընտրությամբ: Միջոցների ընտրության հարցում կարևորվում է նաև վերաբերմունքը: Այն կապ է, որը բնութագրում է մարդու ներքին վիճակը՝ արտացոլված գործունեության ընթացքում: Վերաբերմունքն անձի զգացական դրսևորումն է ինքն իր նկատմամբ գործունեության ժամանակ, գործունեության օբյեկտի, գործունեության ընթացքի և արդյունքի նկատմամբ: Վերաբերմունքը ժամանակագրական ընկալում ունի: Այն կարող է ենթարկվել փոփոխությունների:

Դրդապատճառների ձևավորման հետ զուգընթաց ձևավորվում է գործունեությունը, ուստի որպեսզի գործունեությունը չկրի տարերային բնույթ, այլ ունենա նպատակ, դրդապատճառների ձևավորման հետ միասին ձևավորվում է նաև նպատակը: Նպատակն այն կետն է, որին անձը ձգտում է հասնել խնդիրների լուծման արդյունքում գործունեության միջոցով: Հետևաբար, եթե նպատակը պատասխանում է «ի՞նչ եմ ուզում» հարցին, ապա դրդապատճառը՝ ինչո՞ւ եմ ուզում հարցին: Եթե նպատակը հիմնականում գիտակցված է, ապա դրդապատճառը կարող է նաև լինել չգիտակցված: Այս դեպքում նպատակին հասնելուց հետո անձը չի զգում բավարարվածության զգացողություն: Դրդապատճառը ձևավորվում է երկու գործառույթների շնորհիվ՝

- դրդող,
- իմաստավորող:

Դրդապատճառների հիերարխիան անցնում է երկու փուլով:

1. Բազմադրդապատճառություն (պոլիմոտիվացիա), երբ անձի վարքի և գործունեության հիմքում ընկած են բազմաթիվ դրդապատճառներ:

2. Գիտակցական կարգավորում. անձը գիտակցված, նպատակաուղղված ղեկավարում է դրդապատճառները:

Եթե հաջողվում է երկու փուլերի գործառույթների իրագործու-

մը, կարելի է ենթադրել, որ անձն ունի բարձր գիտակցական մակարդակ, հետևաբար գործունեությունն առավել կառուցողական է, բովանդակային, որակյալ, տրամաբանված: Երկրորդ գործառույթի կարևորությունն էական է անձի ձևավորման և զարգացման համար: Անձնային իմաստի գաղափարը դրդապատճառների հարաբերակցությունն է նպատակին, այսինքն՝ անձը գործունեության ընթացքում կարողանում է իմաստավորել, հասկանալ իր նպատակի խորքում ընկած իմաստը, ուստի ճիշտ է ընտրում նպատակին հասնելու մեխանիզմներն ու լուծումները: Հասկանալի է, որ անձը կարող է ունենալ գործունեության ոչ թե մեկ դրդապատճառ, այլ բազմաթիվ՝ յուրաքանչյուրն իր նպատակով: Այդ բոլորը միասին ձևավորում են անձնային իմաստների համակարգը: Անձի ձևավորման, սոցիալականացման հիմքում ընկած է անձնային իմաստների համակարգը, որն առօրեական կյանքում դրսևորվում է «կյանքի իմաստ»-ում՝ կազմելով մեր արժեքային համակարգը: Այն շատ տարաբնույթ է, բազմազան և կարող է ենթարկվել փոփոխությունների՝ անձի սոցիալականացման փուլերի ընթացքում: Արժեքային դինամիկան շարժուն է՝ անհատական, ազգային, համամարդկային:

Գործունեության ընթացքում անձն իր առջև դնում է նպատակ, նպատակին հասնելու համար լուծում խնդիրներ՝ կատարելով որոշակի գործողություններ:

Գործունեության ընթացքում նպատակը կարող է կորցնել իր նշանակությունը, կարևորությունը, այդ դեպքում առաջանում է նոր նպատակ՝ դրդապատճառի իմաստավորման հետ կապակցված:

Տարիքային տարբեր խմբերում գործունեության երեք տեսակ են տարբերում՝

- խաղ,
- ուսում,

- աշխատանք:

Գործունեության տարբերակումը պայմանավորված է գործունեության արդյունքների, կազմակերպման, դրդապատճառային առանձնահատկություններով: Բացարձակ արտահայտված գործունեության տեսակ գոյություն չունի: Դրանք պարզապես համապատասխան տարիքային շրջաբաժանման փուլերի ընթացքում կարող են գերակայել, տրամաբանորեն հաջորդել մեկը մյուսին, մեկի մեջ տարրեր պարունակել նախորդից, ունենալ զարգացողական բնույթ:

Անձի ձևավորման որոշ շրջանի համար առաջատար գործունեությունը կարող է լինել խաղը, մյուսինը՝ ուսումը, մեկ այլ դեպքում՝ աշխատանքը: Նախադպրոցական տարիքում գործունեության հիմնական տեսակը խաղն է, դպրոցական տարիքում գերակայողը՝ ուսումը, սակայն այն տարրեր է պարունակում խաղային գործունեությունից, չափահասության տարիքում գործունեության առաջատար տեսակը աշխատանքն է: Հաճախ ուսումը կարող է զուգակցվել աշխատանքային գործունեությամբ, և հակառակը՝ աշխատանքային գործունեության ընթացքում անձը կարող է ապահովել շարունակական կրթություն: Գործունեության բազմազան տեսակները լրացնում են միմյանց, փոխգոյակցում, փոխներթափանցում միմյանց մեջ: Նախակրթարանում նախադպրոցականը ոչ միայն խաղում է, այլև սովորում է հաշվել, նկարել և այլն: Դպրոցականը դասերից դուրս բավարարում է իր պահանջմունքը խաղային գործունեությամբ, ուսումնառության ժամանակ նույնպես տարբեր առարկաների դասավանդման ընթացքում կիրառվում են նորագույն ինտերակտիվ խաղային մեթոդներ: Խաղային գործունեությունն անհրաժեշտ է երեխայի լիարժեք սոցիալականացման համար:

Երեխայի խաղը հենվում է ակտիվության նկատմամբ բնածին կենսաբանական պահանջի վրա, որը հատուկ է ինչպես կենդանիներին, այնպես էլ մարդուն: Խաղային գործունեության վերլուծությունը փաստում է, որ երեխայի խաղը կարող է արտացոլել չափահասների աշխարհը՝ նրանց միջանձնային հարաբերությունները, սոցիալական դերերը, մոտեցումներն ու դիրքորոշումները: Երեխայի աշխարհընկալման ուղիներից մեկը սկզբնական շրջանում խաղային գործունեությունն է: Աստիճանաբար խաղային գործունեությունը պլանավորվում է՝ շարժումային, ճանաչողական մակարդակից անցնելով որակական, իմաստային, կառուցողական, սյուժետային բնույթի: Խաղային գործունեության աստիճանական բարդացումը տանում է համապատասխան խաղային ծրագրերի, կանոնների զարգացում, որոնք աստիճանաբար հանգեցնում են կոլեկտիվ խաղի: Այն իր բնույթով առավել բարդ է, քան անհատական խաղերը, քանի որ դրանք ենթադրում են վարքագծային նորմերի պահպանում, հաղորդակցման էթիկայի տիրապետում: Պահանջների այսպիսի ընդարձակումը դաստիարակչական բնույթ ունի, քանի որ անձի մեջ ձևավորվում են համագործակցային, հանդուրժողական, հարգանքի, վարքագծային նորմերի դրսևորումներ, արժեքային համակարգ: Հնարավոր են նաև բնավորության այլ որակների դրսևորումներ՝ նախանձ, անհանդուրժողականություն, չարություն, ագրեսիվություն, կոպիտ վարքագիծ, նյարդային լարվածություն և այլն: Ահա թե ինչու խաղային գործունեությունը ցանկալի է, որ ուղղորդվի մեծահասակների կողմից՝ ապահովելով միջանձնային դրական հարաբերությունները, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը: Դիդակտիկական խաղերը նախադրյալներ են ստեղծում ուսումնական գործունեության համար: Ուսումն աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների, կա-

րողությունների, հմտությունների համակարգ է ձևավորում: Ուսումնական գործունեությունը ենթադրում է երկու սուբյեկտների (սովորող-սովորեցնող) փոխներգործունեություն՝ հիմք ընդունելով անձնակողմնորոշիչ-զարգացնող-ձևավորող հարացույցն աշակերտակենտրոն ուսուցման ընթացքում: Նոր հարացույցն ենթադրում է ոչ միայն գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորում, այլ նաև սովորողի սոցիալականացման գործընթացի կարևորում: Ուսման ընթացքում հիմնարար նախադրյալներ են ձևավորվում հետագա աշխատանքային գործունեության համար: Ներդպրոցական կառավարման կառուցվածքային և որակական բարեփոխումները, դպրոցական պահանջների համակարգը, ծրագրերի աստիճանական բարդացումն ու զարգացումը և նորագույն տեխնոլոգիաները ենթադրում են նորովի պահանջներ կրթության որակին, որն էլ իր հերթին արտահայտվում է կրթական քաղաքականության մարտավարության ընթացքում, ապագա մասնագետների պատրաստման հիմնահարցերում:

Կարևորելով աշխատաշուկայի առաջարկն ու պահանջարկը՝ անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու արդյունավետ կադրային քաղաքականություն համապատասխան ոլորտներում՝ աշխատանքային գործունեության առանձնահատկությունները պլանավորելիս:

Աշխատանքը գործունեություն է, որն ուղղված է հասարակայնորեն օգտակար արդյունքի ստեղծմանը՝ անձի հոգևոր, նյութական պահանջմունքները բավարարելու համար: Աշխատանքում անձի ինքնահիրացման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ է ապահովել բարենպաստ պայմաններ: Աշխատանքային գործունեության ընթացքում անձը բարոյական, գեղագիտական, էկոլոգիական, իրավական համապատասխան նորմերի շրջանակներում

դրսևորում է համապատասխան վարքագիծ, որն էլ իր հերթին պայմանավորված է անձի անձնային ու մասնագիտական որակներով: Գործունեությունն ուղենշում է նաև անձի սոցիալականացման և ձևավորման ընթացքը: Գործունեությունը որոշում է կյանքի ճանապարհը: Գործունեության և հոգեկանի միջև գոյություն ունի բարդ հարաբերակցություն: Մի կողմից հոգեկանը ձևավորվում և հանդես է գալիս գործունեության մեջ, մյուս կողմից կարգավորում է գործունեությունը: Գործունեության կարգավորումը բազմամակարդակ է՝ պայմանավորված բազմաթիվ գործոններով, որտեղ առաջնայինը դրդապատճառանպատակային ոլորտի կարևորումն է, հաջողությունների, ձեռքբերումների, անհաջողությունների դրսևորումները: Հաջողություններն անձին մղում են նորանոր ձեռքբերումների, նպատակների իրականացման, գործունեության առաջընթացին, իսկ անհաջողությունները, ընդհակառակը, կարող են էապես փոխել անձի «կյանքի իմաստը», արժեքային համակարգը: Գործունեության ընթացքում դրսևորվում են անձի համոզմունքները, մոտեցումները, դիրքորոշումները, ստեղծագործական որակները, մարդկանց նկատմամբ ունեցած վերաբերմունքը, որոնք փոփոխվում են սոցիալական տարբեր դերերի ընթացքում: Գործունեության ընթացքում դրսևորվում է անձի աշխատանքային անհատական ոճը, որն արդյունավետ կլինի, եթե հաշվի առնվեն իրավիճակային մոտեցումները:

Այսպիսով՝ անձի ակտիվությունը դրսևորվում է գործունեության ընթացքում:

Այժմ դիտարկենք սոցիալականացման փուլերն ըստ մարդու աշխատունակության: Դրանք երեքն են՝

- մինչաշխատանքային,
- աշխատանքային,

- հետաշխատանքային:

1. Մինչաշխատանքայինն իր հերթին ընդգրկում է երկու շրջան.

ա) վաղ սոցիալականացում՝ ծնվելուց մինչև 15 տարեկան:

Վաղ սոցիալականացման կարևոր նախապայման է ներարգանդային զարգացումը, որի ընթացքում կենսաբանական գործոնը գերակայող է: Մոր և պտղի օրգանիզմների միջև տեղի է ունենում փոխադարձ համապատասխանություն՝ թե՛ նյութափոխանակության, թե՛ արյան շրջանառության, թե ՛արյան խմբերի առումով: Սոցիալական միջավայրի հետ առաջին ծանոթացումը և խոշոր առաջընթացը երեխայի ծնունդն է: Նրա առաջին ճիչը, թոքային շնչառության սկիզբն ավետում են սոցիալական միջավայրի պայմաններին հարմարվելու փաստը: Փոխվում են սոցիալական միջավայրի պայմանները, և երեխան ստիպված է հարմարվել ոչ կենսաբանական (աբիոգեն) և կենսաբանական (բիոգեն) գործոններին: Վաղ սոցիալականացման ընթացքում երեխան սոցիալական միջավայրին ներկայացնում է իր պահանջները՝ բավարարելով պահանջմունքները: Սոցիալականացման ընթացքում աստիճանաբար պահանջ է ձևավորվում հաղորդակցվելու հասակակիցների հետ, նրանց հետ համերաշխ խաղալու, խաղալիքները զիջելու, սիրելու, հարգելու նրանց: Նման վարքագծի ձևավորմանը նպաստում է նրա հետ տարվող տարիքին համապատասխան աշխատանքը: Այն մի կողմից նպաստում է կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մյուս կողմից՝ ընտանիքում ապահովում նպատակասլաց սոցիալականացման գործընթաց: Աստիճանաբար երեխան հասակակիցների հետ խաղում է ինչպես հավասարը հավասարի: Զարգանում են պաշտպանական մեխանիզմները:

Վաղ սոցիալականացման բնութագրող կարևորագույն չափա-

նիշներից մեկն էլ խաղային գործունեությունն է: «Խաղ կարելի է կոչել ցանկացած գործունեություն, որը հաճույք է պատճառում... Խաղն ազատ է, երեխային չի կարելի ստիպել, որ խաղա... Խաղը ազատության, ազատ ընտրության հնարավորություն է տալիս: Խաղի մեջ երեխաներն ազատվում են վարչական ճնշումից, նրանց մեջ ի հայտ են գալիս ինքնազարգացման բնական գործընթացներ...»[54]:

Խաղը նպաստում է հուզակամային որակների ձևավորմանը: Սոցիալականացման ընթացքում արդյունավետ են դերային, համատեղ համագործակցային խաղերը: Խաղը նպաստում է հաղորդակցման ժամանակ միջանձնային հարաբերությունների կառուցմանը, սեփական ուժերի բացահայտմանը, վարքագծի ձևավորմանը: Սոցիալական միջնորդները, ուղղորդելով սոցիալական գործընթացը, երեխային նախապատրաստում են գործունեության հաջորդ փուլին՝ դպրոցին:

Սոցիալականացման այս փուլը նպաստում է սովորողների աշխարհայացքի ընդլայնմանը, ինքնուրույն գիտելիքների ձեռքբերմանը, իսկ աշխատանքի բերկրանքի ընկալումն արթնացնում է հպարտության զարգացում: Սովորողը, գնահատելով իր աշխատանքը, հաջողությունները, համեմատելով ուժերը, ձեռք բերածը, փորձում է քննադատական կարծիք ձևավորել, ինքնավերլուծել, ինքնաբացահայտվել: «Դպրոց» սոցիալական կառույցում ձեռք բերված զարգացման մակարդակի համար նախահիմք է «ընտանիք» սոցիալական կառույցում ստացածը:

Սոցիալականացման բարդ, հակասական փուլերից է դեռահասության շրջանը: Այս շրջաբաժանման մասին կան բազմաթիվ հո-

---

[54] **Հովհաննիսյան Ա. և ուրիշներ,** Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ, Եր., 2006, էջ 123:

գեբանամանկավարժական ուսումնասիրություններ, գիտական հոդվածներ, որոնցում հիմնավորված են դեռահասի սոցիալականացման դժվարությունները, մտավոր, ֆիզիկական, հոգևոր զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Սակայն դեռահասությունից պատանեկություն սոցիալականացմանը կան արգելակող պատճառներ.

- բնախոսակազմախոսական, հոգեբանական պատճառներ,
- ծնողների ծայրահեղության հասնող հոգատարությունը, երբ փորձում են իրենք դեռահասի փոխարեն հաղթահարել սոցիալականացման դժվարությունները՝ ազատելով «կյանքի դժվարություններից»,
- տարիքին անհամապատասխան բազմաբնույթ տեղեկատվությունը,
- ակսելերացիայի երևույթը, սեռական զարգացումը:

Դեռահասի սոցիալականացման դժվարությունները պայմանավորված են նպատակասլաց և տարերային ներգործությունների հակասությամբ, որի արդյունքում փոխվում են ինքնագնահատման չափանիշները, միջավայրի օղակների ընտրությունը, արժեքային համակարգը: Սոցիալականացման արդյունքում դրսևորված դժվարությունները կարող են ձևավորել բնավորության, վարքագծային շեղումներ, ստացական բացասական որակներ, որոնք խոչընդոտում են սոցիալականացման մյուս փուլերը: Արդյունքում հնարավոր է, որ անձը ոչ ճիշտ սոցիալականացման զոհ դառնա: Իրավիճակը հնարավոր է շտկել սոցիալական մանկավարժի բազմաբնույթ գործունեությամբ, որի ընթացքում կիրականացվեն ախտորոշող, կանխատեսող, կանխարգելող և վերականգնողական աշխատանքներ:

Երեխաների աշխատանքային դաստիարակությունը, նրանց

մեջ աշխատանքի նկատմամբ սեր և հետաքրքրություն սերմանելն ու աշխատանքի մեջ ներգրավելն սկսվում են ընտանիքում:

Ծնողները խելացի ձևով և ժամանակին պետք է կազմակերպեն երեխաների աշխատանքային դաստիարակությունը երեխաների տարիքին համապատասխան՝ չվնասելով նրանց առողջությունը, աստիճանաբար նրանց ներգրավելով աշխատանքային փոքր հանձնարարությունների մեջ:

բ) Պատանեկան սոցիալականացումը 15-18 տարեկան պատանիների սոցիալականացման գործընթացն է:

Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, առողջական վիճակին և ունակություններին համապատասխան, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ՝ երեխան ունի աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք, այսինքն՝ աշխատանքային օրվա կարճ տևողություն, իր տարիքին համապատասխան թեթև աշխատանք և այլն:

Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարելի է կնքել 16 տարին, բացառիկ դեպքում՝ 15 տարին լրանալուց հետո միայն: Չի թույլատրվում երեխաների միջոցով ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքը, դրանց արտադրության և օգտագործման մեջ նրանց ներգրավումը:

Անթույլատրելի է, որ երեխաները կատարեն այնպիսի աշխատանք (ծանր ֆիզիկական, գիշերային, աշխատանքը թունավոր և ավտոմատացված արտադրամասերում), որը կարող է վնասել նրանց առողջությանը, ֆիզիկական և մտավոր զարգացմանը, խոչընդոտել լիարժեք կրթություն և դաստիարակություն ստանալուն: Այսօր մենք ականատես ենք լինում անչափահաս շատ երեխաների

ֆիզիկական ծանր, իրենց ուժերից վեր աշխատանքներ կատարելուն (բեռնակրություն):

Անթույլատրելի է երեխաներին կտրել կրթական գործընթացից և մասնակից դարձնել աշխատանքային գործունեությանը: Սրանով խախտվում է երեխաների զարգացման, կրթության և դաստիարակության ողջ գործընթացը, որը զրկում է նրանց իրենց հասակակիցների հետ շփվելու և հաղորդակցվելու հնարավորություններից[55]:

Պատանիների աշխատանքային իրավունքը ենթադրում է համալիր պայմանների առկայություն, այդ թվում՝ աշխատանք ընտրելու կամ չաշխատելու հնարավորության ազատություն, գործունեության կամ մասնագիտության ոլորտի ընտրություն, հարկադիր աշխատանքի արգելում, աշխատանքային գործունեության անհրաժեշտ ու բավարար պայմաններ, վարձատրության կարգ, աշխատանքի անվտանգության ապահովում, հանգստի իրավունք և այլն: Պատանիների աշխատանքի իրավունքի ապահովման խնդիրը մեծապես կախված է զբաղվածության հիմնախնդրի լուծումից, այսինքն՝ յուրաքանչյուր պետություն պարտավոր է ստեղծել այնքան աշխատատեղ, որպեսզի յուրաքանչյուր պատանի կարողանա գտնել իր համար ցանկալի աշխատանք: Սա իր հերթին նշանակում է, որ անհրաժեշտ է ապահովել պատանիներին գործազրկությունից պաշտպանվելու իրավունքը: Պետությունների այս պարտավորություններն արտացոլվել են տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրերում: Աշխատանքի իրավունքի ապահովման հարցում կարևոր է նաև պատանիների մասնագիտական ուսուցումը, որի կազմակերպման համար նույն-

---

[55] **Ստեփանյան Հ. Մ., Հարությունյան Ն. Կ.,** Մարդու իրավունքներ: Դասագիրք 8-րդ դաս. համար, Եր., 2001, էջ 128:

պես պատասխանատու է պետությունը: Աշխատանքի իրավունքն ամրագրված է միջազգային-իրավական փաստաթղթերում և ժողովրդավարական պետությունների գերակշիռ մասի սահմանադրություններում:

2. Աշխատանքային փուլում շարունակվում է սոցիալականացման գործընթացը:

Աշխատանքը մարդու մտավոր, ֆիզիկական, նյութական և հասարակական նպատակաուղղված գործունեությունն է՝ անհատական ու հասարակական կարիքները բավարարելու, կյանքն առավել հարմարավետ, ապահով ու բարեկեցիկ դարձնելու համար: Աշխատանքը մարդու գոյության պայման է, բնական անհրաժեշտություն, առանց որի չէր լինի մարդկային կյանքը:

Աշխատանքը վճռորոշ դեր է ունեցել մարդու ձևավորման գործում: Աշխատանքի շնորհիվ է մարդն առանձնացել կենդանական աշխարհից և նրանից տարբերվել՝ աշխատանքի գործիքներ պատրաստելով: Ի տարբերություն կենդանու բնազդային գործողությունների՝ մարդու աշխատանքային գործունեությունը հատկանշվում է որոշակի նպատակաուղղվածությամբ: Ներգործելով բնության վրա և վերափոխելով այն՝ մարդը միաժամանակ փոփոխում է նաև սեփական վարքագիծը: Աշխատանքում նա կատարելագործվում է, ամրապնդվում ֆիզիկապես և հոգեպես, ի հայտ են գալիս նրա շնորհքը ու ընդունակությունները, ընդլայնվում են գիտելիքները: Աշխատանքը մարդուն ուժ և վստահություն է հաղորդում, նրան օժտում կարգապահությամբ և պատասխանատվությամբ ստանձնած գործի նկատմամբ:

Անձն աշխատանքային գործունեության ընթացքում ոլորտին, ընտրած մասնագիտությանը, կրթությանը համապատասխան սոցիալական փորձն է յուրացնում, ինքնահիրացվում, մասնագիտա-

կան գիտելիքները, կարողություններն և հմտությունները կիրառում պրակտիկայում: Սոցիալական հաղորդակցումը լայն շրջանակներ է ստանում, աշխատանքային նոր կարողություններ, հմտություններ են ձևավորվում: Աշխատանքը լինում է մտավոր և ֆիզիկական, որոնք լրացնում են միմյանց: Մտավոր աշխատանքը կապված է ուղեղի գործունեության, բարձրագույն նյարդային համակարգի հետ: Մտավոր աշխատանքի հիմքում ընկած բանական գործընթացներն ամբողջությամբ իրականանում են մեծ կիսագնդերի ճակատային բլթում: Նրանք ամբողջացնում են նպատակաուղղված վարքի բարդ ձևերը, պատասխանատու են ստեղծագործական ակտիվության համար, որը ենթադրում է բարձր աստիճանի վերացարկում: Մտավոր աշխատանքային գործունեությունը բնութագրվում է օրգանիզմի ֆիզիոլոգիական գործառույթների փոփոխությամբ և նյարդային, մտավոր լարվածության բարձրացմամբ: Դա պայմանավորված է.

- մեծ ծավալով բազմաբնույթ տեղեկատվության ընդունմամբ և վերամշակմամբ,
- անհրաժեշտ ժամանակի ընթացքում որոշումների ընդունմամբ,
- ուշադրության կենտրոնացում մեկ գործողությունից մյուսին անցնելիս, տեղեկատվության տարբեր աղբյուրների օգտագործում,
- երկար ժամանակով հիշողության, ուշադրության, կենտրոնացվածության պահպանման անհրաժեշտությամբ,
- գիշերվա ժամերին մտավոր աշխատանքի կատարմամբ,
- ընդունվող որոշման, պարտականությունների հանդեպ բարձր պատասխանատվությամբ:

Մտավոր աշխատանքի արդյունավետությունը կախված է՝

- վեգետատիվ նյարդային համակարգի գործառական վիճա-

կից, ներքին օրգանների առողջ համաձայնեցված աշխատանքից,

- հուզական վիճակից,
- լսողական և տեսողական վերլուծիչների աշխատանքից:

Լարված մտավոր աշխատանքի ընթացքում գլխուղեղի աշխատողականության լարվածությունը մեծանում է, որը հանգեցնում է անոթների լարվածության և արյան ճնշման բարձրացման: Երկարատև անշարժ մտավոր աշխատանքը կարող է հանգեցնել ողնաշարի, կեցվածքի խանգարմանը, որովայնում ներքին օրգանների աշխատանքի գործունեության վնասակար փոփոխությանը: Մտավոր աշխատանքի ընթացքում սակավաշարժությունը կարող է հանգեցնել մարմնի քաշի ավելացմանը: Ուստի ռիսկայնությունը փոքրացնելու նպատակով անհրաժեշտ է մտավոր աշխատանքը հերթագայել ֆիզիկական աշխատանքով, վարժություններով: Ակտիվ մտավոր աշխատանքի ժամանակ աճում է ուղեղի պահանջը սննդանյութերի նկատմամբ, առաջանում է թթվածնային պակաս, որը բերում է հոգնածության և գերհոգնածության: Երկարատև նման վիճակը կարող է հանգեցնել մտավոր աշխատանքի որակի, ընկալման և արդյունավետության նվազմանը:

Աշխատանք ունենալը, համապատասխանաբար վարձատրվելը և պաշտպանված լինելը մարդու համար միշտ եղել են գերխնդիր: Զբաղված է համարվում այն անձը, որն ունի աշխատանք և բավարար վաստակ՝ բարեկեցիկ ապրելու համար: Յուրաքանչյուր անձ ունի աշխատանքի ընտրության ազատություն:

ՀՀ-ում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են «Աշխատանքային օրենսգրքով»[56]:

Նոր «Աշխատանքային օրենսգիրքը» կարևորում է պայմանագ-

[56] ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004 թ.:

ռային փոխհարաբերությունները: Աշխատանքային գործունեության իրականացման համար սահմանվում է աշխատաժամանակ. աշխատանքի նորմալ տևողությունը շաբաթական 40 ժամ է (օրեկան առավելագույնը՝ 8 ժամ): Կարելի է արտաժամյա աշխատանք, որը չի կարող օրեկան գերազանցել 12 ժամը, այն լրացուցիչ վարձատրվում է: Աշխատանքը գիշերային ժամերին արգելվում է մինչև 18 տարեկան անձանց, հղի կանանց և խնամքի տակ մինչև 3 տարեկան երեխա ունեցող մայրերին: Աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների մտավոր, ֆիզիկական և հոգևոր առողջությունն ապահովելու նպատակով աշխատանքային օրենսգրքով նախատեսվում է արձակուրդ: Գործատուի կամ աշխատողի ցանկությամբ կարող է տրամադրվել մասերով: Աշխատողին տրվում է ամենամյա արձակուրդ, որը կարող է տեղափոխվել գործատու-աշխատող փոխադարձ համաձայնությամբ: Ամենամյա արձակուրդը վճարվում է: Հղի կանանց տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդ:

Աշխատողի և հիմնարկության միջև կնքվում է աշխատանքային համաձայնագիր (պայմանագիր), որի մի կողմը՝ աշխատողը, հանձ է առնում կատարել որոշակի աշխատանքային պարտավորություններ, իսկ մյուս կողմը՝ գործատուն, պարտավորվում է կազմակերպել նրա աշխատանքը և վարձատրել՝ ըստ կատարված աշխատանքի որակի ու քանակի: Համաձայնագրով հաստատվում է նաև աշխատանքի կատարման կանոնակարգը:

Գոյություն ունեն աշխատանքի պետական և մասնավոր ոլորտներ: Պետական ոլորտի աշխատողները կոչվում են քաղծառայողներ: Վերջիններս պարբերաբար մասնակցում են քաղծառայողի մրցույթի. աշխատատեղը զբաղեցնում է մրցույթը շահած անձը: Մասնավոր ոլորտում գործարար անձը՝ գործատուն, իր առաջադ-

ռած պայմաններով ընդունում կամ վարձում է աշխատողին: Հատկապես այդ ոլորտում զբաղվածները համարվում են խոցելի շերտ և որոշակի իրավասու կառույցների աջակցության կարիք ունեն, նաև գործատուից պետք է պահանջեն իրենց շահերը պաշտպանող աշխատանքային բնականոն պայմաններ և աշխատանքին համարժեք վարձատրություն:

1992 թ.-ից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն առընթեր գործում է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը, որն իրականացնում է զբաղվածության կարգավորման պետական քաղաքականություն[57]:

Գործակալությունն աջակցում է աշխատանք փնտրողներին տեղավորվելու աշխատանքի, իսկ գործատուներին՝ ձեռք բերելու որակյալ մասնագետներ, նաև սահմանում է գործազրկության նպաստ՝ որոշակի ժամկետով, անցկացնում մասնագիտական ուսուցման անվճար դասընթացներ, համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնում աշխատաշուկայի կարգավորման համատեղ ծրագրեր:

3. **Հետաշխատանքային փուլ**. «Աշխատանքային օրենսգրքով» նախատեսված կամ հիվանդության պատճառով աշխատանքային գործունեություն այլևս չծավալող անձանց սոցիալականացման ընթացքն է: Սոցիալականացման հետաշխատանքային փուլում, տարիքի հետ կապված, կարող են ստանձնել նոր սոցիալական դերեր (թոշակառու, խնամակալ): Սոցիալական այս փուլում մարդը հարմարվում է սոցիալ-հոգեբանական նոր պայմաններին, դառնում պակաս շարժունակ, նկատվում է նախորդ փուլերում ձեռք բերված նվաճումների կորուստ: Տարիքային շրջաբաժանման ծերունական փուլին համապատասխան դրսևորվում են

[57] ՀՀ օրենքը զբաղվածության մասին: Ընդունվել է 11.12.2013 թ.:

տարաբնույթ հիվանդություններ, բնավորության, վարքագծային փոփոխություններ: Որոշ դեպքերում հետաշխատանքային փուլում գտնվող անձը կարող է դառնալ եսակենտրոն, կամ նրա մեջ կուժեղանա սոցիալ-բարոյական դիրքորոշումը: Երկու դեպքում էլ միջանձնային հարաբերությունների կառուցման լուրջ դժվարություններ կարող են ծագել հաղորդակցման ընթացքում: Հետաշխատանքային փուլում անձն իրականացնում է խաղային գործունեություն, որը, ըստ բնույթի և տեսակի, համապատասխանում է տարիքային շրջաբաժանման այդ փուլին: Խաղային գործունեությունն այս փուլում ունի ժամանցային (շախմատ, նարդի…) բնույթ: Հետաշխատանքային փուլում անձն իրականացնում է կենցաղային պարտականություններ, որոնք ընդգծում են նրա իրականացրած սոցիալական դերը՝ տարիքային, սեռային, անհատական, հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան:

Այսպիսով՝ սոցիալականացման գործընթացի փուլերի կարևոր կողմերից մեկն էլ անձի գործունեության ձևերի յուրացումն է: Ինչպես գործունեության երեք տեսակները, այնպես էլ սոցիալականացման փուլերն ունեն ստորակարգային (հիերարխիկ) բնույթ: Դրանք շարունակական են. յուրաքանչյուր հաջորդը պայմանավորված է նախորդով: Յուրաքանչյուր հաջորդի մեջ միշտ կան տարրեր նախորդից, սակայն սոցիալականացման որոշակի փուլում դրանցից մեկը գերակայող է:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Դրդապատճառ, ակսելերացիա:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ սկզբունքով են դասակարգվում սոցիալականացման փուլերը:
2. Ի՞նչ առանձնահատկություններ ունեն սոցիալականացման փուլերը:
3. Սոցիալականացման յուրաքանչյուր փուլում որո՞նք են խթանող և խոչընդոտող գործոնները:
4. Բնութագրե՛ք գործունեության տեսակները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- *Պատրաստե՛ք զեկուցում՝ «Սոցիալականացման փուլերն ըստ մարդու աշխատունակության» թեմայով:*
- *Առաջարկե՛ք նոր մեխանիզմներ սոցիալականացման փուլերում փոփոխություններ կատարելու համար, որոնք կնպաստեն ժամանակի նոր պահանջներին դիմակայելու:*
- *Լսարանում պատրաստե՛ք ցուցադրություն՝ «Գործունեության տեսակները» վերնագրով:*

2.4. Մարդը սոցիալականացման գործընթացում

Սոցիալականացման գործընթացի ընթացքում մարդ-հասարակություն փոխհարաբերությունները կարելի է դիտարկել հստակ դիրքորոշմամբ.

- մարդը որպես սոցիալականացման գործընթացի օբյեկտ,
- մարդը սոցիալականացման գործընթացի սուբյեկտ,
- մարդը սոցիալականացման գործընթացի անբարենպաստ պայմանների զոհ:

«Մարդու սոցիալական դերը նրա կարգավիճակի գործառույթն է սոցիումում, որը համապատասխանում է նրա ակտիվությանն ու պահանջմունքներին և դրսևորվում է որոշակի համապատասխան գործունեության ընթացքում»[58]:

Մարդը տարիքային շրջաբաժանման փուլերի ընթացքում ստանձնում է տարբեր սոցիալական դերեր: Հասարակությունը կիրառում է տարաբնույթ սոցիալական մեխանիզմներ ներգործելու մարդու վրա՝ որպես օբյեկտի: Մարդուն առաջադրվում են մի շարք պարտադիր սոցիալական դերեր, որոնք կոնկրետ սոցիալական գործոնների, սոցիալական դաստիարակության և միջավայրի ներգործության արդյունքում պայմանավորում են սոցիալականացման տեսակը: Տարբերում ենք հետևյալ տեսակները[59].

- **սեռադերային**. մարդն իր սեռին համապատասխան յուրացնում է սոցիալական փորձը, սեռային վարքագիծը, սեռին բնորոշ մտածելակերպը, սոցիալական դերերը՝ դրանք դրսևորելով սոցիալական գործընթացի ընթացքում՝ տարիքին համապատասխան հասարակության մեջ գրաված դիրքի (տղա կամ աղջիկ, հարսնացու կամ փեսացու, կին կամ ամուսին, հայր կամ մայր, որդի կամ դուստր):
- **Ընտանեկան-կենցաղային**. մարդը սոցիալական դերը դրսևորում է առօրյա կյանքում և ընտանիքում: Ընտանիքը՝ որպես առաջնային սոցիալական ինստիտուտ, ապահովում է մարդու սոցիալականացման գործընթացը, ունի մի շարք առանձնահատկություններ: Կարևորվում են ընտանիքի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը և կառուցվածքային տիպը: Ներընտանեկան փոխ-

---

[58] **Мардахаева Л. Б.,** Социальная педагогика, М., 2008, стр. 48.

[59] **Мудрик А. В.,** Социальная педагогика: Учеб. для студ. пед. вузов / Под ред. В. А. Сластенина, М., 2000, стр. 75.

հարաբերությունների ընթացքում սովորույթների, ավանդույթների պահպանումը, գեղագիտական, իրավական, բարոյական նորմերը որոշակի ներգործություն են ունենում մարդու անձի ձևավորման վրա սոցիալականացման գործընթացում:

- **Մասնագիտական-աշխատանքային.** համապատասխան մասնագիտական ոլորտում, աշխատանքում մարդը յուրացնում է սոցիալական փորձը, նա տիրապետում է մասնագիտական գիտելիքներին, դրանց հիման վրա ձևավորվում են մասնագիտական կարողություններ և հմտություններ, որոնք ներդրվում են աշխատանքային գործունեության ընթացքում: Մասնագիտական-աշխատանքային սոցիալականացումը ենթադրում է որակապես տարբերել մարդու անձնային և մասնագիտական որակները: Դրանք միմյանց նկատմամբ կարող են գերակայող լինել: Առավել հաջողված տարբերակն է, երբ երկուսը ներդաշնակ են՝ և՛ լավ մարդ, և՛ կայացած մասնագետ:
- **Մշակութային սոցիալականացում**. մարդը մշակութային միջավայրում ձեռք է բերում արժեքային համակարգ: Մշակութային դաշտը ձևավորվում է տարբեր գործոնների ներգործությամբ: Մշակութային յուրաքանչյուր ոլորտ ունի իր առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Մշակութային եզրագծերը տարբերվում են ըստ ազգության, տարածաշրջանի, լեզվամտածողության, վարքագծային դրսևորումների, կրոնական պատկանելիության, արժեքային համակարգի, սովորույթների, ավանդույթների, պատմության:

Մարդը, դրսևորվելով որպես սոցիալականացման գործընթացի օբյեկտ, բավարարում է ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ սոցիալական խմբերի, սոցիալական ինստիտուտների պահանջները: Է. Դյուրգհեյմը սոցիալականացման գործընթացում

գերագնահատում է հասարակության դերը՝ նրան վերագրելով սուբյեկտի կարգավիճակ: «Հասարակությունը կարող է գոյատևել, եթե հասարակության անդամները միանման են, իսկ հասարակությունը փորձում է մարդուն-օբյեկտին ձևավորել ըստ իր նկարագրի»[60]:

Է. Դյուրգհեյմի տեսակետները համալրվեցին Տ. Պարսոնսի «Սոցիալական տեսության» հիմնադրույթներով, համաձայն որի՝ հասարակությունը գործառական համակարգ է, իսկ մարդը պարտավոր է ինտեգրվել սոցիում: Ինտեգրման ընթացքում մարդը յուրացնում է սոցիալական-մշակութային փորձը, հասարակական բարքերն ու առաջադրվող նորմերը: «Մարդը դիտարկվում է որպես անհատ-օբյեկտ, իսկ հասարակությունը՝ սուբյեկտ»[61]: Այսօրինակ դիրքորոշումն ընդունված է անվանել սուբյեկտ (հասարակություն)-օբյեկտային (մարդ):

Սոցիալական մանկավարժության զարգացման ընթացքը ձևավորեց հակակշիռ դիրքորոշում՝ սուբյեկտ-սուբյեկտային: Համաձայն այդ դիրքորոշման՝ մարդը լիարժեք անդամն է հասարակության: Մարդ-հասարակություն փոխհարաբերությունները համագործակցային են, ակտիվ, ժողովրդավարական, սուբյեկտ-սուբյեկտային: Մարդը յուրացնում է սոցիալական փորձը, արժեքային համակարգը, դրսևորում է ակտիվություն, միտում ունի ինքնազարգացման, ինքնաիրացման, հնարավորություններ ունի կատարելագործման: Չ. Կուլին սոցիալականացման գործընթացում մարդու սուբյեկտային կարգավիճակը հիմնավորում է «Հայելային ես»-ի

---

[60] **Галагузова М. А.,** Социальная педагогика: Курс лекций, М., 2003, стр. 95-100.
[61] **Василькова Т. А., Василькова Ю. В.,** Социальная педагогика, М., 2010, стр. 25.

տեսությամբ[62]: «Ես»-ը միջանձնային հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում նոր որակներ՝ միկրո միջավայրում (ընտանիք, հասակակիցների խումբ): Սոցիալական երևույթը և գործընթացն արդյունք են մարդու գիտակցված գործունեության: Մարդը, ուսումնասիրելով տարբեր իրավիճակներ, իրականացնում է սոցիալական դերեր, այդ ընթացքում առաջադրում է իր ակտիվ տեսակետը, դիրքորոշումը, դրսևորում վարքագիծ, որն էլ իր հերթին ապահովում է մարդ (սուբյեկտ)-հասարակություն (սուբյեկտ) համագործակցությունը: Փոքր-ինչ այլ է Դ. Միդի դիրքորոշումը. նա սուբյեկտ-սուբյեկտային համագործակցությունը քննարկում է «միջանձանային, անհատական փոխազդեցությամբ[63]: Դրանք պայմանականորեն ձևավորում են թե՛ անձին և թե՛ հասարակությունը»: Մի կողմից «ես»-ի դրսևորման ռեակցիաները բազմազան են և կախված են ձևավորված համակարգի ներգործումից, մյուս կողմից «ես»-ի մշտապես շարժունակությունն ապահովում է նաև հասարակության զարգացումը: Ըստ այս դիրքորոշման՝ «սոցիալականացումը հասարակության և անձի կապող հաղորդակցումն է համակարգում»[64]:

Մարդ-սուբյեկտի ձևավորումն օբյեկտիվ իրատեսական է, քանի որ ամբողջ կյանքի ընթացքում, ըստ սոցիալականացման փուլերի, մարդն առաջադրում է նպատակ և այդ նպատակին հասնելու համար մշակում ռազմավարություն, պլանավորում իր գործունեությունը, լուծում բազմաբնույթ խնդիրներ, կանխատեսում արդյունքները: Շարունակական զարգացման ընթացքը հանգեցնում է մարդու կայացմանն ու կատարելագործմանը: Սակայն երբեմն մարդը

---

[62] **Кули Ч. Х.,** Человеческая природа и социальный порядок / Пер. с англ. под ред. А. Б. Толстова, М., 2000, стр. 320.

[63] **Мид Дж. Г.,** Избранное: Сб. переводов, Сост. и переводчик В. Г. Николаев. Отв. ред. Д. В. Ефременко, М., 2009, стр. 290.

[64] **Мудрик А. В.,** Социальная педагогика, М., 1999, стр. 19.

կարող է դառնալ սոցիալականացման գործընթացի անբարենպաստ պայմանների զոհ: Նա ստիպված հաղթահարում է բազմաբնույթ դժվարություններ և արգելքներ, որը միշտ չէ, որ նրան հաջողվում է: Որպես սոցիալականացման գործընթացի անբարենպաստ պայմանների զոհ՝ սոցիալականացման յուրաքանչյուր փուլում Ա. Մուդրիկը տարբերակում է կոնկրետ ու տիպիկ դրսևորումներ[65]:

1. **Ներարգանդային զարգացման ընթացքում** (մինչև ծնվելը) անբարենպաստ պայմանների զոհ հնարավոր է դառնալ ծնողներից ժառանգած անբարենպաստ գենետիկական նախադրյալների, ծնողական պարտքի չգիտակցման, նրանց շեղված վարքագծի՝ հարբեցողության, թմրամոլությոան, մարմնավաճառությաւն, քրեական վարքագծի, բժշկական վրիպումների, էկոլոգիական միջավայրի արդյունքում:

2. **Նախադպրոցական տարիք**. հիվանդությունները, հոգեկան, ֆիզիկական խնդիրները, ծնողների անտարբեր, անմարդկային վերաբերմունքը, ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, մթնոլորտը, մյուս սոցիալական ինստիտուտներում անբարենպաստ պայմանները, խեղված տեղեկատվությունը և այլն;

3. **Դպրոցական տարիք**. ծնողների հակահիրավական, ոչ մարդկային նկարագիրը, սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքները, խորթ ծնողների ներգործությունը, ընտանիքի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, երեխայի անտեսումը, կամ ֆետիշացումը, ժխտողական երևույթը կրթության նկատմամբ, բացասական վերաբերմունքը մեծահասակների և հասակակիցների նկատմամբ, ծխելու, խմելու, գողության, մարմնավաճառության համար

---

[65] **Мудрик А. В.,** Социальная педагогика: Учеб. для студ. пед. вузов / Под ред. В. А. Сластенина, М., 2000, стр. 200.

«բարենպաստ» պայմանների առկայությունը, հոգեբանական, սեռային շահագործումը, ինքնասպանության փորձերը:

4. **Դեռահասության տարիք**. հարբեցողություն, թմրամոլություն, մարմնավաճառություն, վարքագծային շեղումներ, ծնողների և ուսուցիչների սխալներ ու վրիպումներ, արատներ, հիվանդություններ, սթրեսներ, ակսելերացիայի հետևանքներ, անցանկալի հղիություն, ծնողների հետ կապված խնդիրներ, ծնողների ամուսնալուծություն, հեղինակության անկում, կյանքի նկատմամբ հետաքրքրությունների բացակայություն, իդեալների արժեքային համակարգի կորուստ, սոցիալական դերի թերացում, սոցիալական կարգավիճակի խախտում:

Բոլոր տարիքային փուլերում թվարկված հակասությունները նկատելի են, սակայն կարևոր հարց է, թե մարդը որքանով կներգործվի անբարենպաստ պայմաններից և օբյեկտիվ գործոնների դեպքում որքանով կկարողանա դիմագրավել թվարկված խնդիրներին: Դա պայմանավորված է մարդու տարիքային, անհատական, սեռային, հոգեբանական առանձնահատկություններով, սոցիալական միջավայրով և գործոններով, սոցիալական դաստիարակությամբ:

Սոցիալականացման անբարենպաստ պայմանների զոհերին պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝

1. իրական,
2. պոտենցիալ,
3. լատենտային (գաղտնի):

Իրական զոհեր են համարվում հաշմանդամները, հոգեմարմնական խնդիրներ ունեցող, շեղումներով մարդիկ, հասարակության կամ պետության խնամքի տակ գտնվող որբերը, ծնողազուրկները և ռիսկի խմբի տարբեր երեխաներ:

Պոտենցիալ զոհեր են դեռահասները, երբ իրական հոգեկան սահմանային վիճակներում են գտնվում, բնավորության ծայրահեղ դրսևորումներ են ցուցաբերում: Պոտենցիալ զոհեր են նաև օտարության մեջ գտնվող գաղթականները, կրթական ցածր մակարդակ ունեցող ընտանիքներում ծնված երեխաները, միատար էթնոսներում գտնվող մետիսները, օտար ազգի ներկայացուցիչները:

Լատենտային (թաքնված) զոհեր. դրանք այն անձինք են, որոնք, չունենալով անհրաժեշտ գենետիկական նախադրյալներ, չեն կարողանում ինքնահիրացվել և զարգացնել իրենց ներքին ընդունակությունները՝ կապված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հետ:

Տարածված է այն կարծիքը, թե օժտված, տաղանդավոր մարդիկ անբարենպաստ պայմանների արդյունքում կարող են դառնալ սոցիալականացման ընթացքի զոհ, քանի որ նրանք դժվարանում են հարմարվել սոցիալական միջավայրում, իսկ շրջապատող հասարակության տարբեր սոցիալական խմբերը չեն բացահայտում թաքնված ֆենոմենը: Ինչպես խառնվածքային տիպերն ու նյարդային համակարգերը, թվարկված զոհերից ոչ մի տեսակն էլ լրիվ գերակա ձևով չի դրսևորվում: Այն կարող է դրսևորվել համակցված վիճակում: Նորմայում սոցիալական գործընթացին զուգահեռ ընթանում է զոհ դառնալու (վիկտիմալացման) գործընթաց:

Սոցիալականացման գործընթացի անբարենպաստ պայմանների զոհ դարձած մարդուն ուսումնասիրում է սոցիալական մանկավարժության վիկտիմոլոգիա գիտությունը (**viktim**՝ զոհ, **logos**՝ գիտություն): Այն ուսումնասիրում է մարդկանց ռիսկի այն խմբերը, որոնք որոշակի օբյեկտիվ, սուբյեկտիվ, նպատակամետ և տարերային ներգործությամբ կարող են դառնալ սոցիալականացման գործընթացի անբարենպաստ պայմանների զոհ: Վիկտիմալացումը

գործընթաց է և արդյունք, երբ մարդը կամ սոցիալական խումբը դառնում է սոցիալականացման անբարենպաստ պայմանների զոհ: Այդպիսի օբյեկտիվ գործոնները բազմաթիվ են, օրինակ՝ տվյալ տարածաշրջանի բնակլիմայական պայմանները, էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ֆիզիկական, հոգեկան, հուզակամային, մշակութային զարգացման խոչընդոտները, նորմայից շեղումները: Զոհ դառնալու պատճառ կարող են լինել նաև սոցիալական ինստիտուտները, ընտանիքը, կրթադաստիարակչական հաստատությունները, հասարակությունը, պետությունը: Էկոլոգիական վտանգավոր աղտոտումները, ճառագայթման բարձր մակարդակը, օդի բարձր աղտոտվածությունը, կլիմայական և էկոլոգիական այլ պայմանները որոշ դեպքերում կարող են հանգեցնել հակասոցիալական վտանգավոր վարքագծային դրսևորումների՝ հարբեցողություն, թմրամոլություն: Պատմությանը հայտնի են բազմաթիվ իրադարձություններ, որոնց արդյունքում զոհ են դառնում բնակչության մեծ խմբեր (բնական աղետներ, պատերազմներ, հեղափոխություններ և այլն): Վերը թվարկվածն ազդում է տվյալ սերնդի, ինչպես նաև հաջորդ սերունդների վրա: Հոգեբանների, մանկավարժների դիտարկումները փաստում են, որ ծայրահեղ պայմաններում մարդու մոտ նկատելի են հատկանիշներ, որոնք նրան դարձնում են հանգամանքների զոհ: Օրինակ՝ մարդը ապրում է պատերազմի հետ կապված զգացողությունները նաև պատերազմից հետո: Երբ ուսումնասիրել են Վիետնամի, Կորեայի, աղվանական պատերազմները, Չեռնոբիլի, Ճապոնիայի ատոմակայանների վթարները, Հայաստանում 1988 թվականի երկրաշարժի հետևանքները, բացահայտվել են, որ դրանք վերապրած մարդիկ ունենում են հետվնասվածքային սթրեսային համախտանիշ, որը երբեմն խանգարում է նրանց լիարժեք սոցիալականացմանը: Ահա թե ինչու նման հիմնախնդիրներից հետո չափազանց անհրաժեշտ են սոցիալա-

կան, հոգեբանական, մանկավարժական տարաբնույթ ծառայություններն ու աջակցությունը, սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքները:

Այսպիսով՝ մարդը սոցիալականացման գործընթացում կարող է լինել որպես օբյեկտ, սուբյեկտ և անբարենպաստ պայմանների զոհ:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Սուբյեկտ, օբյեկտ, պոտենցիալ, լատենտ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ դիրքորոշմամբ կարելի է դիտարկել մարդ-հասարակություն փոխհարաբերությունները:
2. Ի՞նչ եք հասկանում՝ մարդը սոցիալականացման սուբյեկտ ասելով է:
3. Հնարավո՞ր է արդյոք սոցիալականացման ընթացքում մարդը դառնա օբյեկտ:
4. Ի՞նչ եք հասկանում՝ սեռադերային սոցիալականացում ասելով:
5. Ինչպես՞ է ընտանեկան-կենցաղային սոցիալականացումը ներգործում անձի ձևավորման վրա:
6. Ի՞նչ արժեքներ կարող են ձևավորվել, փոփոխվել մշակութային սոցիալականացման ընթացքում:
7. Մասնագիտական-աշխատանքային սոցիալականացումը կարո՞ղ է հանգեցնել անձնային և մասնագիտական նոր որակների ձևավորմանը: Հիմնավորե՛ք:
8. Ի՞նչ է վիկտիմությունը:

Ինքնուրույն աշխատանք

1. Գրե՛ք զեկուցումներ և պատրաստե՛ք սահիկների ցուցադրություն լսարանում՝ «Մարդու սեռադերային, մշակութային սոցիալականացում» թեմայով:

2. Գրե՛ք զեկուցում՝ «Մարդկանց զոհ դառնալու» թեմայով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. «Սոցիալական մանկավարժ» մասնագիտության բնութագիրը

Հասարակությունը՝ որպես համակարգ իր զարգացման հնարավորությունները բացահայտում և ընդլայնում է հիմնականում փոփոխությունների միջոցով, որոնք արտահայտվում են բոլոր ժամանակներում, տարբեր որորտներում և մակարդակներում: Ժամանակի ընթացքում փոփոխություններ են կրում հասարակության մեջ գործող գրեթե բոլոր սոցիալական ինստիտուտները (ընտանիք, կրոն, կրթօջախներ, առողջապահություն և այլն), այդ ինստիտուտների ներսում առաջանում են նոր ենթակառուցվածքներ, փոփոխվում են նրանց կողմից իրականացվող գործառույթները, դերերն ու նշանակությունը:

Վերջին տարիներին մեծացել է կրթադաստիարակչական հաստատությունների դերը երեխաների կյանքում առաջացած դժվարությունների հաղթահարման, հիմնախնդիրների լուծման հարցերում: Մյուս կողմից կրթադաստիարակչական յուրաքանչյուր հաստատություն իր գործունեության ընթացքում բախվում է չլուծված սոցիալ-մանկավարժական բազմաթիվ հիմնախնդիրների, որոնք օրեցօր աճում են, և ակներև է դառնում կրթադաստիարակչական հաստատությունների սոցիալական գործառույթի բացառիկ նշանակությունը: Տարբեր հաստատություններում ընթացող կրթադաստիարակչական, սոցիալականացման գործընթացներում արտա-

ցոլվում է իրական կյանքը, որտեղ կան բազմաթիվ և բազմաբնույթ հիմնախնդիրներ՝ երեխաների նկատմամբ ծնողական խնամքի և հետևողականության բացակայություն, տարբեր առումներով աջակցության և պաշտպանության պակասություն, ուսուցիչների, հասարակության անտարբերություն, սոցիալական ինստիտուտների գործառության հետ կապված խնդիրներ և այլն: Երեխաների կյանքի և զարգացման համար անհրաժեշտ պայմանները դարձել են անկայուն, հաստատություններ են մուտք գործել բազմաթիվ ասոցիալ երևույթներ: Այսօր անհրաժեշտորեն պետք է ավելի ուշադիր լինել ամեն մի երեխայի, դպրոցի, նրանում ընթացող կրթադաստիարակչական, սոցիալականացման գործընթացների նկատմամբ: Այս առումով էլ «սոցիալական մանկավարժը և հոգեբանը կարևոր դեր ունեն ընտանիքի, դպրոցի և հասարակության կողմից երեխաների խնդիրների լուծման ջանքերը միավորելու հարցում»[66]:

«Դպրոցը պետք է պարզեցնի սոցիալական կյանքը, քանի որ այն այնքան բարդ է ներկա պայմաններում, որ երեխան չի կարող կապի մեջ մտնել նրա հետ առանց շփոթության և հուզմունքի»[67]:

Դպրոցի գործունեության հիմքում ընկած են.

- հասարակության կրթադաստիարակչական բոլոր ուժերի ներգրավումը, դպրոցի, մյուս սոցիալական ինստիտուտների օրգանական ամբողջությունը,
- մարդասիրությունը յուրաքանչյուր երեխայի հանդեպ՝ որպես հասարակության բարձրագույն սոցիալական արժեք,
- տարբերակումն ու անհատականացումը, այնպիսի պայման-

---

[66] **Հովհաննիսյան Տ.,** Հանրակրթության հիմնախնդիրները և պետական կրթակարգը, «Մանկավարժական միտք», Եր., N 1-2, 2006:

[67] Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում: Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար.: Եր., 2003, էջ 404:

ների ստեղծումը, որտեղ հնարավոր կլինի լիարժեքորեն բացահայտել և զարգացնել սովորողների ընդունակությունները,

- կրթության ժողովրդավարացումը, նախաձեռնության և ստեղծագործական զարգացման համար պայմանների ստեղծումը, սովորողների, մանկավարժների և ծնողների միջև համագործակցության ապահովումը,
- սովորողների նպատակները, ընդունակությունները, հնարավորությունները, նրանց գործունեության դրդապատճառները, անձնային կառույցի ձևավորումն ու զարգացումը:

Դպրոցի գործունեության հիմքում ընկած նման պահանջներից ելնելով՝ կարևոր և դրական քայլ ենք համարում սոցիալական մանկավարժի մուտքը հանրակրթական դպրոց, որն ամրագրված էր դեռևս 2004 թվականի ՀՀ հանրակրթության պետական կրթակարգի հիմնադրույթներում: Աշխատելով կրթադաստիարակչական տարբեր հաստատություններում՝ սոցիալական մանկավարժը գործում է կայուն արժեքային կողմնորոշմամբ, հստակ սահմանված սկզբունքներով և նորմերով: ՀՀ կրթության և գիտության նախարարի 29 հունվարի 2007 թ. թիվ 41-Ա/Ք հրամանով սահմանվել են ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը, որտեղ ներկայացված են նաև սոցիալական մանկավարժի պարտականությունները:

Մասնագիտությունը գիտելիքների, կարողությունների, հմտությունների ամբողջություն է, որի միջոցով անձը գործունեության կոնկրետ տիրույթում ինքնահիրացվում է մասնագիտական որակների տեսանկյունից: Մասնագիտությունը աշխատանքային գործունեության կամ զբաղվածության տեսակ է, որը պայմանավորված է աշխատանքի արտադրական-տեխնոլոգիական բաժանմամբ և

գործառութային բովանդակությամբ:

Սոցիալական մանկավարժն այն մասնագետն է, որն ընդգրկված է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում և կրթադաստիարակչական հաստատություններում գոյություն ունեցող սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների լուծման գործընթացներում և արագ արձագանքում է գործունեության իր տիրույթում տեղի ունեցող փոփոխություններին՝ պարբերաբար վերափոխելով, փոփոխելով նաև իրականությունը: Սոցիալական մանկավարժը, իր մասնագիտական ավանդը բերելով հասարակական կյանքի կրթադաստիարակչական բնագավառ, նպատակ ունի իրականացնելու հիմնարար բարեփոխումներ՝ ուղղված հասարակության զարգացմանն ու աճող սերնդի կյանքի որակի բարձրացմանը:

Սոցիալական մանկավարժի գործունեության նպատակն է ստեղծել երեխայի պահանջմունքների բավարարման համար անվտանգության, հոգեբանական բարենպաստ մթնոլորտ, սոցիալական, իրավական, հոգեբանական, մանկավարժական մեխանիզմների օգնությամբ կանխարգելել և հաղթահարել այն բացասական երևույթները, որոնք գոյություն ունեն ընտանիքում, դպրոցում, մոտակա շրջապատում և այլուր: Նախքան նպատակային գործունեություն իրականացնելը սոցիալական մանկավարժը պետք է լավ պատկերացնի այն միջավայրի առանձնահատկությունները, որտեղ երեխան մեծանում ու զարգանում է: Ընդգծենք, որ երեխան, որպես կանոն, չի կարող կամ դժվարանում է գիտակցել, բացահայտել և ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք ինքն ունի, ուստի այստեղ անհրաժեշտ է բացահայտելու, կանխատեսելու ունակություն և այլ մասնագիտական կարողություններ:

Երբեմն սոցիալական մանկավարժը չի կարող միայնակ կանխատեսել պայմաններ, ընտրել մեթոդներ և միջոցներ, անհրաժեշտ

արդյունքի հասնելու համար (առողջության, նյութական միջոցների հետ կապված): Նա կարող է հանդես գալ որպես միջնորդ կամ համակարգող տարբեր մասնագետների համար (հոգեբան, բժիշկ, իրավաբան և այլն), որպեսզի հիմնախնդիրն ունենա համալիր լուծում: Սոցիալական մանկավարժի գործունեության նպատակներից է նաև սոցիալական տարբեր ծրագրերի և նախագծերի մշակումն ու իրականացումը, որոնք օգնում են երեխայի լիարժեք զարգացմանը: Նա կարող է աշխատել առանձին մարդկանց, երեխաների, խմբերի և ողջ հասարակության հետ, ծրագրեր մշակել, հետազոտություններ կատարել, առաջարկներ հիմնավորել կամ ներկայացնել և այլն:

Ըստ առաջադրված նպատակի՝ ցուցաբերվում է օգնություն, և վերլուծվում, ընդհանրացվում և տարածվում է դրական փորձը: Սոցիալական մանկավարժը պետք է կարողանա երեխայի գործողություններն ուղղորդել ինքնադաստիարակության, ինքնակրթության և սեփական կյանքն ինքնուրույն կազմակերպելու կարողությունների զարգացմանը:

Սոցիալական մանկավարժը պետք է կարողանա կազմակերպել տարբեր մասնագետների, կազմակերպությունների համակարգված գործունեությունը, որոնք կարող են որոշարկել երեխայի հիմնախնդիրները կամ մասնակցել դրանց լուծմանը, պաշտպանել երեխաների իրավունքները:

Այսպիսով՝ ձևակերպվում են սոցիալական մանկավարժության կիրառական հետևյալ խնդիրները:

1. Երեխայի մեջ դաստիարակել բարություն, արդարություն, սեր մերձավորի, մարդկանց և ընդհանրապես կենդանի էակի, բնության նկատմամբ:

2. Օգնել երեխաներին հաղթահարել խնդրահարույց իրավի-

ճակները, սովորել շրջապատող մարդկանց հետ հարաբերվել, առաջադրել նպատակներ:

3. Զարգացնել երեխաների ֆիզիկական և հոգեկան հատկությունները, առաջացնել իրավունքներն ու պարտականությունները ճանաչելու ձգտում:

4. Երեխաների սեփական արժանապատվության, ինքնուրույնության և վստահության զարգացում:

5. Երեխաների մոտ ձևավորել մարդկային փոխհարաբերությունների կարևորության նկատմամբ դրական վերաբերմունք, մարդկանց հետ փոխհարաբերվելու ցանկություն և այլն:

Այս խնդիրները կարելի է ընդհանրական կերպով ձևակերպել այսպես՝ օգնել սովորել սեփական կյանքը ճիշտ կազմակերպել, զարգացնել ճանաչողական հետաքրքրություններ, օգնել ճիշտ օգտագործել սեփական ընդունակությունները և այլն:

«Սոցիալական մանկավարժ» մասնագետի գործունեությունն իրականացվում է սոցիալական քաղաքականության շրջանակում, որտեղ նրա կարևորագույն նպատակը հասարակության կոնկրետ անդամի կրթական կարիքների, հասարակության անդամների կենսական պահանջմունքների առավել լիակատար բավարարումն է, նրանց պաշտպանվածությանն ուղղված աջակցության ապահովումը, և որը պարունակում է ծառայությունների իր յուրահատուկ կազմը: Սոցիալական մանկավարժն իր պրակտիկ գործունեությամբ ապահովում է երեխաների իրավունքների, սոցիալական արդարության պաշտպանությունը կրթադաստիարակչական հաստատություններում, մասնակցում է երեխաների անձի, հաստատությունների զարգացմանն ուղղված ծրագրերին, համագործակցում է ծնողների, ուսուցիչների, պետական, հասարակական կառույցների հետ: Այսինքն՝ սոցիալական մանկավարժի գործունեության դաշտն

այն մասնագիտական տարածքն է, որտեղ ընթանում են գործընթացներ երեխաների պաշտպանության, նրանց պահանջմունքների լիարժեք բավարարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով:

«Սոցիալական մանկավարժ» մասնագիտությունը մեր երկրում արդեն կայացել է: «Սոցիալական մանկավարժ» մասնագետներ պատրաստում են ԵՊՀ-ում և Հայաստանի մանկավարժական բուհերում: Մասնագետներն այսօր ունեն ոչ միայն հարուստ տեսական գիտելիքներ, այլև գործունեության լայն դաշտ և փորձառություն: Նրանք հիմնականում աշխատում են ՀՀ դպրոցներում, ներառական ծրագրերում, իրականացնում են մասնագիտական արդյունավետ գործունեություն տարբեր կառույցներում:

Կրթության կազմակերպման, հանրակրթության հիմնական խնդիրների իրագործման տեսանկյունից օրեցօր ամրապնդվում է «սոցիալական մանկավարժ» մասնագետի գործունեության անհրաժեշտությունը մեր երկրում:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Սոցիալական պաշտպանություն, սոցիալական քաղաքականություն, հասարակություն, կրթություն, իրավունք:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞վ է պայմանավորված սոցիալական մանկավարժի գործունեության անհրաժեշտությունն այսօր:

2. Ինչպիսի՞ գործունեություն կարող է ծավալել սոցիալական մանկավարժը կրթադաստիարակչական հաստատություններում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հիմնավորե՛ք սոցիալական մանկավարժի մասնագիտության անհրաժեշտությունը հասարակության զարգացման տեսանկյունից:

3.2. Սոցիալ-մանկավարժական գործընթացի էությունն ու բովանդակությունը

Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացություններից է սոցիալ-մանկավարժական գործընթացը, որը ենթադրում է որոշակի պարտադիր մի արարողակարգ, որն ունի համապատասխան սոցիալ-մանկավարժական երևույթների զարգացման շարժընթաց, որտեղ կան փոխգործողություններ, փոխազդեցություններ, որոնց միջոցով հասնում ենք մեր առջև դրված սոցիալ-մանկավարժական նպատակին:

Ըստ Վ. Ա. Նիկիտինի՝ սոցիալ-մանկավարժական գործունեությունն ունի հետևյալ կառուցվածքը[68].

- **գործունեության սուբյեկտ**. նա, ում իրականացնում է գործունեությունը,
- **գործունեության օբյեկտ**. նա, ում համար հատուկ կազմակերպված, և ում ուղղված է այդ գործունեությունը,
- **նպատակ**, որին ձգտում ենք տվյալ գործունեության արդյունքում,
- **գործառույթներ**, որոնք իրականացվում են գործունեության ընթացքում,

[68] Социальная педагогика: Учеб. для студ. высш. учеб. заведений: /Под ред. В. А. Никитина, М., 2000, стр. 50.

- **միջոցներ**, որոնք այն մեթոդներն ու տեխնոլոգիաներն են, որոնց օգնությամբ հասնում ենք մեր առջև դրված նպատակին:

Սոցիալ-մանկավարժական գործընթացի նպատակն է ստեղծել երեխայի պահանջմունքների բավարարման համար անվտանգության, հոգեբանական բարենպաստ միջավայր, պայմաններ, սոցիալական, իրավական, հոգեբանական, մանկավարժական մեխանիզմների օգնությամբ կանխարգելել և հաղթահարել այն բոլոր բացասական երևույթներն ու խնդիրները, որոնք գոյություն ունեն ընտանիքում, դպրոցում, մոտակա շրջապատում և այլն:

Ցանկացած սոցիալ-մանկավարժական գործընթաց ունի իր զարգացման փուլերը: Դրանք սոցիալ-մանկավարժական, սոցիալ-հոգեբանական այն փոփոխություններն են, որոնք որոշակի որակական, քանակական բնութագրեր ունեն, և որոնց միջոցով մեկ փուլի առանձնահատկությունները տարբերվում են մյուսից:

Սոցիալ-մանկավարժական գործընթացի բովանդակությունը լայն առումով մարդու սոցիալական կայացման և զարգացման գործընթացն է ամբողջ կյանքի ընթացքում: Սոցիալ-մանկավարժական այդպիսի գործընթացում պետք է հաշվի առնել անձի տարիքային առանձնահատկությունները, պահանջմունքները (տարիքային զարգացման առումով), հասարակության պահանջներն ու հնարավորությունները: Ուստի սոցիալական մանկավարժի գործունեության բնույթն ու նպատակը որոշվում է այդ գիտելիքների ամբողջությամբ, որոնք կարող են հանդես գալ որպես այդ գործունեության բնութագրիչներ:

Նեղ իմաստով սոցիալ-մանկավարժական գործընթացը կարելի է դիտարկել որպես մարդու այս կամ այն որակի, վարքի ձևերի, նրա անհատական հնարավորությունների փոփոխություն, որը տե-

ղի է ունենում սոցիալական մանկավարժի նպատակաուղղված ներգործության արդյունքում, որտեղ հաշվի են առնվում սոցիալական միջավայրի, սոցիալական ինստիտուտների ազդեցությունները, և որը կարող է բերել անձի ինքնազարգացմանն ու ինքնակատարելագործմանը:

Այսպիսով՝ սոցիալ-մանկավարժական գործընթացը սոցիալական մանկավարժի կողմից իրականացվող նպատակաուղղված գործողությունների մի ամբողջություն է, որն ուղղված է սոցիալ-մանկավարժական նպատակի ձեռքբերմանը: Շատ կարևոր է, որ այդ գործողությունները լինեն արդյունավետ, և արդյունքները բավարարեն և՛ գործունեության օբյեկտին, և՛ սուբյեկտին: Ընդ որում, գործունեության օբյեկտ կարող է լինել ողջ հասարակությունը, խումբը, անձը, որպես սուբյեկտ կարող են հանդես գալ պետությունը, մասնագիտական խումբը, սոցիալական մանկավարժը և վերջապես անձը, որը կարող է ինքնադաստիարակության, ինքնակատարելագործման, ինքնազարգացման գործընթացներում ձևավորել սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերություններ: Մասնագիտական գիտելիքները, սոցիալական փորձը, տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող պահանջներն ու պատվերները որոշում են գործունեության սուբյեկտի դիրքը տվյալ հասարակությունում, և ըստ այդմ էլ բնութագրում նրա գործունեությունը: Իհարկե, հասարակությունը, ազգը, պետությունը միշտ կողմնորոշում են գործունեության սուբյեկտի գործողությունները:

Սոցիալ-մանկավարժական գործընթացի բովանդակությունն ու ուղղվածությունը որոշվում են նաև օբյեկտի միջոցով, որտեղ հաշվի են առնվում օբյեկտի անհատական առանձնահատկությունները, հնարավորությունները, սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների առաջացման պատճառահետևանքային կապերը, օբյեկտ-

սուբյեկտ փոխհարաբերությունները և այլն:

Սոցիալ-մանկավարժական ցանկացած գործընթաց կարելի է բաժանել փուլերի և ենթափուլերի: Ըստ Վ. Ա. Նիկիտինի՝ առանձնացվում են սոցիալ-մանկավարժական գործընթացի հետևյալ փուլերը՝

1. նախապատրաստական փուլ,
2. անմիջական գործողությունների փուլ,
3. արդյունքների ամփոփման փուլ[69]:

Վ. Նիկիտինը տալիս է փուլային կառուցվածքի հետևյալ նկարագրերը:

Նախապատրաստական փուլ: Հայտնի է, որ որքան լավ է նախապատրաստված գործունեությունը, այնքան լավ են նրա իրականացման հնարավորությունները: Նախապատրաստական փուլը ներառում է ենթափուլեր, որոնք որոշում են սոցիալ-մանկավարժական գործընթացի բովանդակությունը:

Առաջին ենթափուլն օբյեկտի անհատական առանձնահատկությունների բացահայտումն ու ախտորոշումն է: Սոցիալ-մանկավարժական գործընթացը հասցեական է, և այն ուղղված է կոնկրետ անձի: Անձի ամենօրյա սոցիալական վարքի յուրատիպությունը կախված է նրա սոցիալական հիմնախնդիրներից, անհատական հնարավորություններից, սահմանափակումներից և այլն:

Ախտորոշման միջոցով հնարավոր է բացահայտել.

- անձի ինքնահիրացման, զարգացման վրա ազդող անհատական շեղումները, դրանց կապը սոցիալ-մանկավարժական հիմնախնդրի հետ,
- անձի անհատական առանձնահատկությունները, հնարա-

[69] Социальная педагогика: Учеб. для студ. высш. учеб. заведений: /Под ред. В. А. Никитина, М., 2000, стр. 51.

վորությունները, որոնք կարող են անհատական զարգացման համար կարևոր նախապայմաններ լինել, կամ կարելի է դրանց միջոցով հաղթահարել զարգացման գործընթացում առկա բացթողումներն ու դժվարությունները,

- կյանքում անձի զբաղեցրած դիրքը, դրա առանձնահատկությունները, նրա վերաբերմունքը ինքնազարգացման, ինքնակատարելագործման, սոցիալ-մանկավարժական նպատակներին հասնելու հնարավորությունների առումով,
- այն բոլոր միջավայրերի ազդեցությունները, որտեղ անձն ինքնահիրացման հնարավորություններ ունի և այլն:

Նկատի ունենալով այն, որ սոցիալական մանկավարժը հաճախ է գործ ունենում հատուկ կարիքներով մարդկանց հետ, երբեմն ախտորոշման գործընթացին մասնակցում են մի քանի մասնագետներ՝ բժիշկներ, հոգեբաններ, մանկավարժներ և այլն: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս անձի մասին ունենալու առավել ամբողջական տեղեկատվություն, առանձնացնելու կարևոր ցուցումներն ու կարիքները, օբյեկտի և նրա շրջապատի հետ առավել արդյունավետ փոխգործունեության կառուցման համար անհրաժեշտ խորհուրդները և այլն: Ախտորոշիչ գործոնները հնարավորություն են տալիս բացահայտելու մարդու անհատական առանձնահատկությունները և անցնելու երկրորդ ենթափուլին:

Երկրորդ ենթափուլը սոցիալ-մանկավարժական հիմնախնդրի ձևակերպումն է: Այստեղ պետք է հասցեական գնահատումներ իրականացնել և հստակեցնել սոցիալ-մանկավարժական օգնության այն տեսակը, որն անհրաժեշտ է տվյալ անձին այդ իրավիճակում: Այնուհետև պետք է սոցիալ-մանկավարժական կանխորոշում իրականացնել, որի առարկան է.

- անձի (երեխայի) անհատական արդյունավետ զարգացումը,

վերադաստիարակությունը, վերականգնումն ու հարմարումը, ուսուցումը, ինքնասպասարկման, մասնագիտական կողմնորոշման ու պատրաստականության հետ կապված հարցերը,

- անձի (երեխայի) լիարժեք զարգացման կամ որևէ ուղղությամբ զարգացման հնարավորությունները,
- անձի (երեխայի) ուսուցումն ու դաստիարակությունն ապահովելու համար անհրաժեշտ մասնագետի գործունեության հնարավորությունները,
- սոցիալ-մանկավարժական որոշակի նպատակին հասնելու համար անհրաժեշտ սոցիալական մանկավարժի գործունեության հնարավորությունները,
- անձի (երեխայի) նպատակաուղղված զարգացման համար անհրաժեշտ սոցիալական մանկավարժի և այցելուի հնարավորությունների, պայմանների համապատասխանությունը:

Սոցիալ-մանկավարժական կանխորոշումը գործընթացի բարդ ենթափուլերից մեկն է, որը հիմնված է օբյեկտի մասին սոցիալական մանկավարժի ունեցած բավականին ամբողջական տեղեկատվության, անձնական փորձի, ինչպես նաև կռահողականության (ինտուիտիվ ճանաչողականության) հիման վրա: Սոցիալական մանկավարժը մասնագիտական գործունեության ընթացքում անընդհատ կատարելագործում է իր ունեցած գիտելիքները, կուտակում է մասնագիտական պրակտիկ փորձ, տարբեր խմբերի հետ աշխատանքում ընտրում է համապատասխան տեխնոլոգիաներ, զարգացնում է մանկավարժական կռահողականությունը, կարողանում է առավել վստահաբար կանխորոշել օբյեկտի և իր գործողությունների հետ կապված հեռանկարները: Հստակ պատկերացնելով սոցիալական պատվերի նշանակությունը՝ կապված սոցիալա-

կան օբյեկտի հետ, սոցիալական մանկավարժը որոշում է սոցիալ-մանկավարժական գործունեության նպատակն ու խնդիրները:

Մոդելավորումը սոցիալ-մանկավարժական գործընթացի նախապատրաստական փուլի հաջորդ ենթափուլն է, որը ենթադրում է մանկավարժական տեխնոլոգիաների առավել արդյունավետ տարբերակի ընտրություն, որը կտա ցանկալի արդյունք:

Տեխնոլոգիաների ընտրությունն ու դրանց իրականացման միջոցները նույնպես կարևոր ենթափուլեր են, քանի որ իր բովանդակությամբ սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիան դիտարկվում է որպես կոնկրետ կատեգորիաների մարդկանց (խմբի) հետ աշխատանքում սոցիալ-մանկավարժական գործունեության մեթոդների, միջոցների, փուլերի նկարագրություն (հիմնավորում), ինչպես նաև նպատակաուղղված փուլային գործողությունների իրականացման հերթականություն, որը կապահովի գործընթացի արդյունավետությունը: Այստեղ ընդգծվում է այն, որ մոդելավորումը գիտագործնական բնույթ ունի, և այն ապահովում է գործունեության որոշակի ծրագիր: Դա կարող է լինել պատրաստի կամ հատուկ մշակված և պետք է համապատասխանի օբյեկտի անհատական առանձնահատկություններին: Սոցիալ-մանկավարժական յուրաքանչյուր հիմնախնդրի համար կարող են մի քանի տեխնոլոգիաներ առաջադրվել: Իհարկե, յուրաքանչյուր տեխնոլոգիա ներառում է օբյեկտի, սոցիալ-մանկավարժական հիմնախնդրի առանձնահատկությունները, ընտրված տարբերակի գործունեության նկարագրությունը, իրականացման հետ կապված խորհուրդներն ու երաշխիքները: Նշենք, որ ընտրված տեխնոլոգիան իրականացվում է սոցիալական մանկավարժի անհատական մեթոդիկայի կիրառման միջոցով, ուստի տեխնոլոգիան կարող է լինել մեկը, իսկ նրա պրակտիկ իրականացման մեթոդիկաները՝ բազմաթիվ:

Այնուհետև տեղի է ունենում սոցիալ-մանկավարժական գործունեության պլանավորում, որը նախատեսում է ընտրված տեխնոլոգիայի իրականացման համար անհրաժեշտ գրաֆիկի (ընթացակարգի) կազմում: Այստեղ պետք է նկատի ունենալ մեթոդական և դիդակտիկ պարագաների առկայությունը ևս, որոնք իրենց հերթին կապահովեն որակյալ պարապմունքների, դաստիարակչական և այլ միջոցառումների անցկացումը:

Սոցիալ-մանկավարժական գործընթացի երկրորդ փուլը սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիայի անմիջական իրականացումն է, որտեղ օգտագործվում է մեթոդների, միջոցների, հնարների մի ամբողջություն: Այս փուլը ևս ունի ենթափուլեր, որոնցից է սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիայի փորձարկումը, քանի որ սոցիալական մանկավարժը հաճախ գործ ունի առանձին մարդկանց, խմբերի հետ, երբ պահանջվում է ցուցաբերել մանկավարժական տեխնոլոգիաների անհատականացվածություն: Այդ խնդիրը նկատվում է մանկավարժական շտկման, վերականգնման, անհատական ուսուցման և դաստիարակության հետ կապված գործնական աշխատանքներում:

Կարևոր ենթափուլ է սոցիալ-մանկավարժական գործունեությունում սուբյեկտի և օբյեկտի հարմարումը: Այստեղ օբյեկտի և սուբյեկտի միջև ձեռք է բերվում համաձայնություն, փոխադարձ վստահություն, միասնականություն՝ գաղափարների, գործողությունների, վարքի դրսևորման ձևերի առումներով և այլն: Պարզ է, որ եթե այստեղ լինեն բացթողումներ, ապա դրանք կանդրադառնան հետագա գործողությունների արդյունավետության վրա:

Հաջորդ ենթափուլն օբյեկտի ընդգրկումն է ինքնազարգացման, ինքնադաստիարակության գործընթացներում, որը կրում է անհատականացված բնույթ և կախված է սոցիալ-մանկավարժա-

կան գործունեության ոլորտներից: Տվյալ օբյեկտի հետ աշխատանքում, արդեն ունենալով որոշակի փորձ, սոցիալական մանկավարժը ջանքեր է գործադրում առավել մեծ արդյունքի հասնելու համար: Յուրաքանչյուր ենթափուլից մյուսին անցնելիս, երբ սոցիալական մանկավարժը համոզվում է տեխնոլոգիաների ընտրության ճշմարտացիության մեջ, նա ավելի վստահաբար է գործում: Ամբողջ գործընթացում սոցիալական մանկավարժից պահանջվում է ճկունություն, իր բացթողումները տեսնելու, նոր մեթոդներ և մեթոդական հնարներ փնտրելու կարողություն, որոնք կօգնեն նրան ընտրված մանկավարժական տեխնոլոգիայի արդյունավետ իրականացման համար անհատական շտկումներ, ճշտումներ բացահայտել: Ամեն մի գործողություն իրականացնելիս պետք է միաժամանակ վերլուծել դրա արդյունավետությունը, որը մասնագետին հնարավորություն կտա իր հետագա գործողություններում ավելի նպատակաուղղված օգտագործելու իր ջանքները, ամբողջ գործընթացը դարձնելու ավելի համընթաց և արդյունավետ:

Վերանայելով կատարված աշխատանքները, հավաքագրելով դրա մասին անհրաժեշտ տեղեկատվություն, վերլուծելով դրանք՝ սոցիալական մանկավարժը կարող է յուրաքանչյուր ենթափուլի, փուլի արդյունավետությունն արձանագրել, և, եթե անհրաժեշտ է, սոցիալ-մանկավարժական գործընթացում կատարել ընթացիկ շտկումներ, փոփոխություններ՝ հաշվի առնելով օբյեկտի և իրավիճակի առանձնահատկությունները:

Երրորդ փուլը ավարտական, արդյունքների ամփոփման փուլն է, որտեղ վերլուծվում և գնահատվում են կատարված աշխատանքները, այսինքն՝ համոզվում ենք ընտրված սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների իրավացիության մեջ, դիտարկվում, քննարկվում են ապագայի հետ կապված հեռանկարները և այլն:

Առաջին ենթափուլում կատարվում է սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների ազդեցության նախնական գնահատումը: Այս ենթափուլում սոցիալական մանկավարժի համար որոշակի է դառնում այն, թե որքանով է նրան հաջողվել լուծել երեխայի, խմբի խնդիրը: Մյուս կողմից՝ ավարտելով մասնագիտական պրակտիկ աշխատանքը, պետք է կատարված աշխատանքի արդյունավետությունը գնահատել: Գնահատումը սոցիալական մանկավարժին հնարավորություն է տալիս որոշում կայացնելու երեխայի վիճակի ու նոր պայմաններին նրա հարմարման մասին, այսինքն՝ այս ենթափուլում ամփոփվում են մանկավարժական շտկման, վերականգնման, վերադաստիարակման, հատուկ կազմակերպություններում և տնային պայմաններում ուղղման և այլ գործընթացների արդյունքները: Այն իրականացվում է այնպիսի պայմաններում, որոնք առավելագույն կերպով մոտ են երեխայի կենսագործունեության համար անհրաժեշտ բնական պայմաններին, որտեղ նա, իրոք, հնարավորություն ունի հասնելու ինքնահիրացման: Հարմարման գործընթացը հնարավորություն է տալիս օգտագործված տեխնոլոգիաների արդյունքները ամրակայելու, համոզվելու դրանց առավելությունների և թերությունների մեջ, հիմնավորելու դրանց ընտրությունը: Ընդգծենք, որ հարմարման գործընթացում պետք է հաշվի առնել խորհրդառուի անհատական առանձնահատկությունները, իրավիճակի և հարմարման յուրակերպությունը: Այս դեպքում միայն կարելի է երաշխավորել հարմարման գործընթացում խորհրդառուի ընդգրկվածությանը և ինքնահիրացմանը նպաստող գործունեության բարձր մակարդակ:

Հաջորդ ենթափուլում բացահայտվում են օգտագործված տեխնոլոգիաների դրական և բացասական կողմերը, դրանց իրականացման հնարավորությունները, ինչպես նաև բացահայտվում է

երեխայի՝ որպես ինքնակատարելագործման սուբյեկտի սեփական գործունեությունը: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքի, սոցիալ-մանկավարժական գործընթացի համար գոյություն ունեն գնահատման որակական, քանակական տարբեր ցուցանիշներ, որոնք պայմանավորված են գործունեության օբյեկտի և սուբյեկտի կողմից տրվող գնահատականների, ընդհանուր և մասնակի նպատակների, խնդիրների, տեխնոլոգիաների կիրառման գնահատականների, փուլային չափորոշիչների և դրանց ցուցանիշների, ցուցաբերված արդյունքների առկայությամբ:

Նշենք, որ պետք է տարբերել «սոցիալ-մանկավարժական գործընթաց» և «սոցիալական միջավայրում մանկավարժական գործընթաց» արտահայտությունները: Սոցիալական միջավայրում մանկավարժական գործունեությունը ենթադրում է, որ տվյալ միջավայրում իրականացվում է մանկավարժական ուղղվածություն ունեցող գործունեություն, այսինքն՝ խոսքն ավելի հաճախ գնում է տվյալ միջավայրը ներկայացնողի (միջավայրում գտնվողի), կոնկրետ մարդու դաստիարակության, ուսուցման, զարգացման մասին: Այսպիսի գործունեության ընթացքում, կոնկրետ սոցիալ-մանկավարժական նպատակներին հասնելու համար օգտագործվում են միջավայրի մանկավարժական հնարավորությունները, նպատակաուղղված կերպով միջավայրում ստեղծվում են մանկավարժական իրավիճակներ:

Դիտարկենք Վ. Ա. Նիկիտինի ներկայացրած սոցիալ-մանկավարժական գործընթացի կառուցվածքը:



Գծապատկեր 21. Սոցիալ-մանկավարժական գործընթացի ընդհանուր կառուցվածքն ըստ Վ. Ա. Նիկիտինի

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Սոցիալ-մանկավարժական գործընթաց, հարմարում, մշտադիտարկում (մոնիթորինգ), մանկավարժական պայմաններ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է սոցիալ-մանկավարժական գործընթացը:
2. Ի՞նչ փուլային կառուցվածք ունի սոցիալ-մանկավարժական գործընթացը:
3. Ի՞նչ գործոններ են ազդում սոցիալ-մանկավարժական գործընթացի արդյունավետության վրա:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լսարանը բաժան՛եք խմբերի և քննարկե՛ք ու ներկայացրե՛ք սոցիալ-մանկավարժական գործընթացի երեք փուլերն ու դրանց ենթափուլերը:

3.3. Սոցիալական մանկավարժի մասնագիտական որակներն ու պաշտոնային պարտականությունները

Անմիջականորեն անձի և նրա հետագա կենսագործունեության վրա էական ազդեցություն ունեցող մասնագիտություններում մեծ նշանակություն ունեն մասնագետի անձնային և մասնագիտական որակները, քանի որ այդ մասնագիտությամբ կարող են աշխատել այն մարդիկ, որոնք ունեն հատուկ անձնային որակներ: Այդ հատուկ անձնային որակների դրսևորման արդյունքում սոցիալական մանկավարժը ձեռք է բերում նաև մասնագիտական որակներ, որոնք միասին ապահովում են նրա արհեստավարժ, արդյունավետ գործունեությունը: Սոցիալական մանկավարժի մասնագիտական գործունեության հիմքում ընկած են սկզբունքներ, վարքային նորմեր ու կանոններ, որոնցով նա ղեկավարվում է իր մասնագիտական գործունեության ընթացքում: Սոցիալական մանկավարժի գործունեությունն ունի կայուն դրդապատճառներ՝ այլասիրությունը, սոցիալական արդարության պահպանումը, սոցիալական նախաձեռնության ու ակտիվության ցուցաբերումը, սոցիալական փոփոխությունների, սոցիալական պաշտպանության իրականացումը, սոցիալական պատասխանատվության և պարտքի զգացումը, լավատեսությունը, նորի զգացումը և այլն: Սոցիալական մանկավարժը պետք է լինի մարդասեր, ունենա բարոյական և հոգևոր բարձր ար-

ժեքներ, գիտակցի իր դերակատարությունը երեխայի կրթության, դաստիարակության, սոցիալականացման, զարգացման գործում, լինի սկզբունքային, բոլոր իրավիճակներում երեխաների շահերի պաշտպանությունը համարի առաջնային: Սոցիալական մանկավարժը պետք է լինի և՛ մանկավարժ, և՛ հոգեբան, ունենա կրթվածություն մարդագիտության ոլորտում: Սոցիալական մանկավարժի համար պակաս կարևոր չեն ֆիզիկական, նյարդահոգեբանական, մտավոր և սոցիալական հատկությունները, ամուր առողջությունն ու ֆիզիկական տոկունությունը, գործողությունների իրականացման եռանդն ու բարձր աշխատունակությունը, ուշադրության կայունությունը, բաշխումը, զգայական (էմոցիոնալ) կայուն վարքի դինամիկան, վառ արտահայտված երևակայությունն ու ինքնատիրապետումը, համառությունը, սերն ու բարությունը, հարգանքը մարդկանց նկատմամբ, արդարությունն ու ազնվությունը, սեփական ուժերի նկատմամբ վստահությունը, ինքնաքննադատությունը, ինքնակատարելագործման և ինքնազարգացման ձգտումը:

Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկություններից մեկն այն է, որ շատ հիմնախնդիրներ խիստ առանձնահատուկ, անհատական ու հակասական են: Իր ամենօրյա գործունեության ընթացքում սոցիալական մանկավարժն առաջնորդվում է էթիկական կոդեքսով, որը գործունեության սկզբունքների, արժեքների և մասնագիտական պարտականությունների ամբողջություն է: Երբ առանձնացվում է էթիկական պատասխանատվությունը երեխաների, տարբեր խմբերի, գործընկերների, մասնագիտության, հաստատությունների ու հասարակության հանդեպ, որոնց հետ և որտեղ սոցիալական մանկավարժն իր առօրյա գործունեությունն է իրականացնում, ապա հնարավոր է դառնում գնահատել սոցիալական մանկավարժի ոչ էթիկական վարքագիծը: Այստեղ պետք է

նկատի ունենալ, որ էթիկական կոդեքսը (բոլոր իրավիճակներում) սոցիալական մանկավարժի մասնագիտական գործունեության համար միշտ չէ, որ կարող է լինել նրա վարքագծի ճիշտ ալգորիթմը, և այն, որ էթիկական կոդեքսը միշտ չէ, որ կարող է սահմանափակել սոցիալական մանկավարժի մասնագիտական գործունեության շրջանակը: Լինում են անսովոր իրավիճակներ, երբ սոցիալական մանկավարժը կանգնում է բազմաթիվ երկընտրանքների առջև, օրինակ, երբ նա բախվում է մասնագիտական պարտականությունների կատարման և երեխայի կյանքի, շահերի պաշտպանության խնդրին, օրենքի գերակայության և երեխաների շահերի պաշտպանության խնդրին և այլն: Այդպիսի իրավիճակները սոցիալական մանկավարժի աշխատանքում անխուսափելի են, ուստի պահանջվում է առանձնահատուկ անհատական մոտեցում ցուցաբերել և առավել մանրամասն ուսումնասիրել ստեղծված իրավիճակները: Այնուամենայնիվ, սոցիալական մանկավարժներն իրենց մասնագիտական, պաշտոնային պարտականություններն իրականացնում են՝ համաձայն էթիկական կոդեքսի, որն երաշխավորում է նրանց գործունեության կանոնակարգվածությունը և արդյունավետությունը:

Սոցիալական մանկավարժն իր մասնագիտական գործունեության ընթացքում պատասխանատվություն է կրում խորհրդառուների, գործընկերների, կառույցի ղեկավարության, մասնագիտության, հասարակության հանդեպ: Դրանք Ռ. Օվչարովան առանձնացնում է հետևյալ կերպ[70]:

Խորհրդառուների (երեխաների) նկատմամբ էթիկական պատասխանատվությունն ենթադրում է սոցիալական մանկավարժի կողմից իր ուժերի և հնարավորությունների առավելագույն

[70] **Овчарова Р. А.,** Справочная книга социального педагогика, М., 2001, стр. 20.

օգտագործում երեխայի (խորհրդառուի) դաստիարակության և ինքնուրույնության, ակտիվության աճի նպատակով: Սոցիալական մանկավարժը խորհրդառուների հանդեպ ունի հետևյալ պարտականությունները.

- խորհրդառուի հետ հարաբերությունները չպետք է օգտագործել՝ ելնելով սեփական հետաքրքրություններից,
- բացառել բոլոր տեսակի խտրականությունների դրսևորումներ, բոլոր հնարավոր միջոցներով պայքարել դրանց դեմ,
- խուսափել խորհրդառուի համար վնասակար բոլոր տեսակի կապերից և փոխհարաբերություններից (սեռական, կախյալ փոխհարաբերություններ և այլն),
- երբ արդեն անհրաժեշտ չէ օգնություն իրականացնել և դա այլևս չի բխում երեխայի (խորհրդառուի) կամ ընտանիքի շահերից, ապա պետք է դադարեցնել մասնագիտական փոխհարաբերություններն ու ավարտել աշխատանքը,
- թույլ չտալ գործողություններ, որոնք խախտում են խորհրդառուի քաղաքացիական և այլ իրավունքները,
- չնվաստացնել խորհրդառուին՝ ելնելով խղճահարությունից և բարեգործական օգնությունից, այլ ապահովել նրա համար ակտիվ սուբյեկտի դիրք,
- սոցիալական մանկավարժը պարտավոր է հարգել խորհրդառուի գաղտնիության իրավունքը, մասնագիտական օգնության ընթացքում գաղտնիք երբեք չտարածել,
- պետք է խորհրդառուին տեղեկացնել նրա կողմից տրամադրված տեղեկատվության օգտագործման նպատակի, հրապարակման մասին,
- սոցիալական մանկավարժը չպետք է խորհրդառուի վերաբերյալ տեղեկատվությունը կամ նրա պատմությունն օգտագործի այլ նպատակներով,

- սոցիալական մանկավարժը պետք է համոզված լինի, որ տարբեր ձևերով ձեռք բերած երաշխիքներն արդարացի են և համապատասխանում են խորհրդառուի հնարավորություններին:

Սոցիալական մանկավարժի էթիկական պատասխանատվությունը գործընկերների հանդեպ ենթադրում է, որ սոցիալական մանկավարժը պետք է իր գործընկերների հանդեպ ցուցաբերի հարգանք, ազնվություն, քաղաքավարություն, վստահի նրանց.

- ելնելով մասնագիտական հետաքրքրություններից՝ դիմի գործընկերներին,
- վստահել գործընկերներին մասնագիտական փոխհարաբերություններում և փոխգործողություններում,
- ստեղծել իրավիճակներ, որոնք կնպաստեն գործընկերների էթիկական, մասնագիտական գրագետ գործողությունների իրականացմանը, աջակցել նրանց այդ իրավիճակներում,
- ստեղծել համատեղ գործունեության պայմաններ, մանրամասնորեն տեղեկացնել այդ մասին գործընկերներին նրանց հետ փոխհարաբերություններում, ըստ անհրաժեշտության՝ կատարել փորձագետի, ղեկավարի, աջակցող ընկերոջ դերեր,
- սոցիալական մանկավարժը նաև միջմասնագիտական խմբի անդամ է և պետք է նպաստի խորհրդառուի շահերին համապատասխանող որոշումների կայացմանը:

Կառույցի, նրա ղեկավարության հանդեպ սոցիալական մանկավարժի պատասխանատվությունը ենթադրում է, որ սոցիալական մանկավարժը պետք է ենթարկվի տվյալ կառույցի (որտեղ նա աշխատում է) ղեկավարության աշխատանքային պահանջներին, կատարի իր պարտականությունները.

- իր մասնագիտական գործունեությամբ պետք է բարձրացնի կառույցի հեղինակությունը,
- աշխատանքային գործունեության ընթացքում գրեթե բացառի սխալներն ու բացթողումները,
- օգտագործի ղեկավարության ռեսուրսները միայն այն դեպքում, երբ առաջացել է դրա անհրաժեշտությունը:

Սոցիալական մանկավարժի պատասխանատվությունն իր մասնագիտության հանդեպ ենթադրում է, որ սոցիալական մանկավարժը պետք է բարձրացնի իր մասնագիտության դերը հասարակության մեջ.

- լինի պատասխանատու, ակտիվ մասնակցություն ունենա մասնագիտության կատարելագործման գործընթացներում,
- համապատասխան միջոցներով ձեռնարկի նախազգուշական գործողություններ իր գործընկերների ոչ էթիկական վարքագծի նկատմամբ,
- սոցիալական մանկավարժի գործունեության իրավասությունների շրջանակում չպետք է գովազդի ծառայության որակն ու աշխատանքի արդյունքները, առավել ևս, երբ դրանք դեռ ձեռքբերման փուլում են,
- սոցիալական մանկավարժն իր ամենօրյա աշխատանքում պետք է օգնի մարդկանց, տեղեկացնի նրանց իր մասնագիտական գործունեության հասանելիության և կարևորության մասին,
- սոցիալական մանկավարժը պետք է պատասխանատվություն կրի իր մասնագիտական գիտելիքների զարգացման և օգտագործման առումով,
- մասնագիտական գիտելիքները կիրառի պրակտիկ գործունեության մեջ, զարգացնի դրանք, ձեռք բերի նոր գիտելիքներ:

Սոցիալական մանկավարժի պատասխանատվությունը հասարակության հանդեպ. սա ենթադրում է, որ նրա գործունեությունը պետք է նպաստի հասարակության զարգացմանն ու բարեկեցությանը.

- սոցիալական մանկավարժի գործողություններում պետք է բացառվեն մարդկանց կամ բնակչության խմբի նկատմամբ տարբեր տեսակի խտրականություններն ու նախապատվությունները,
- պետք է նպաստի բոլոր մարդկանց անձնային հնարավորությունների ընդլայնմանը՝ առավել ուշադրություն դարձնելով ռիսկի խմբերին, կարիքավոր մարդկանց,
- նպաստի, աջակցի հասարակության մաս կազմող տարբեր մշակույթ ունեցող մարդկանց նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու դրսևորմանը,
- ունենա մասնակցություն սոցիալական քաղաքականության մշակման, իրականացման գործում, աջակցի նաև հասարակության մասնակցությանը,
- նպաստի տարբեր սոցիալական ինստիտուտների գործառմանը, նոր ինստիտուտների ստեղծմանն ու կայացմանը:

Սոցիալական մանկավարժը հումանիստական մասնագիտության ներկայացուցիչ է: Նա կրթական և սոցիալական բոլոր կառույցներում մարդկանց, տարբեր խմբերի հետ իրականացնում է բազմաբնույթ, նպատակաուղղված մասնագիտական գործունեություն, որի նպատակն է մեկ օրգանական ամբողջության մեջ դիտարկել կրթական և սոցիալական հիմնախնդիրները, դրանց լուծումները, օգնություն ցուցաբերել առավել կարիքավորներին:

Վ. Նիկիտինը «Սոցիալական մանկավարժ» մասնագետի մանկավարժական մշակույթի և սոցիալ-մանկավարժական փորձի կառուցվածքը ներկայացնում է հետևյալ գծապատկերների տեսքով:



Գծապատկեր 22. Սոցիալական մանկավարժի մանկավարժական կուլտուրայի կառուցվածքը



Գծապատկեր 23. Սոցիալ-մանկավարժական փորձի կառուցվածքը

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է.

Էթիկական կոդեքս, էթիկական վարքագիծ, սովորույթներ, ինտուիցիա, ռեֆլեքսիա, էմպաթիա:

ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են սոցիալական մանկավարժի առավել կարևոր անձնային որակները, տվե՛ք այդ որակների դասակարգումը:

2. Ի՞նչ է սոցիալական մանկավարժի էթիկական կոդեքսը:

3. Ի՞նչ է իրենից ենթադրում սոցիալական մանկավարժի պատասխանատվությունը խորհրդառուների հանդեպ:

4. Ի՞նչ է իրենից ենթադրում սոցիալական մանկավարժի պատասխանատվությունը գործընկերների հանդեպ:

5. Ի՞նչ է իրենից ենթադրում սոցիալական մանկավարժի պատասխանատվությունը կառույցի, նրա ղեկավարների հանդեպ:

6. Ի՞նչ է իրենից ենթադրում սոցիալական մանկավարժի պատասխանատվությունը մասնագիտության հանդեպ:

7. Ի՞նչ է իրենից ենթադրում սոցիալական մանկավարժի պատասխանատվությունը հասարակության հանդեպ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համեմատե՛ք, խնդրեմ, սոցիալական մանկավարժի, հոգեբանի, իրավաբանի և բժշկի մասնագիտական էթիկայի մի քանի հարցեր, նշե՛ք դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

3.4. Սոցիալական մանկավարժի գործառույթները և դերերը

Սոցիալական մանկավարժի գործունեության բովանդակությունը բնութագրվում է նրա գործառույթների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է բովանդակությունն արտացոլող ուղղություններից որևէ մեկը: «Գործառույթը պարտականություն է, գործունեության շրջան և պարտավորություն»[71]: Սոցիալական մանկավարժն իր սոցիալ-մանկավարժական գործունեության ընթացքում իրականացնում է տարբեր գործառույթներ:

Լ. Մարդախաևն առանձնացնում է հետևյալ գործառույթները[72]:

Գիտաճանաչողական գործառույթ

Այս գործառույթն իրականացնելիս սոցիալական մանկավարժն ուսումնասիրում է սոցիալական զարգացումների օրինաչափություններն ու առանձնահատկությունները, մարդու սոցիալականացման գործընթացն ու դրա վրա ազդող գործոնները, մշակում է սոցիալ-մանկավարժական երևույթների, գործընթացների հիմնավորման տեսական հիմքերը, հետազոտում է սոցիալական մանկավարժի կամ սոցիալ-մանկավարժական գործունեություն իրականացնողների պրակտիկ աշխատանքը, բացահայտում է սոցիալ-մանկավարժական գործունեության իրականացման նոր հնարավորություններն ու առանձնահատկությունները:

Ախտորոշիչ գործառույթ

Ախտորոշիչ գործառույթն իրականացնելիս սոցիալական մանկավարժի կողմից ուսումնասիրվում և որքան հնարավոր է օբյեկտիվ գնահատվում է իրավիճակը, սոցիալական միջավայրի առանձնահատկությունները, դրա ազդեցության աստիճանն անձի

---

[71] **Мардахаев Л. В.,** Социальная педагогика: Учебник, М.,Тагдарики, 2003, стр. 15.
[72] **Овчарова Р. А.,** Справочная книга социального педагогика, М., 2002, стр. 15.

վրա, հստակեցվում է երեխայի կարգավիճակը, վերլուծվում են սոցիալական գործոնների ուղղվածությունները, ազդեցությունները, պարզվում են տարբեր ոլորտներում գործունեության հնարավորությունները, շփումները, բացահայտվում են երեխայի անձնային ձեռքբերումները, անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, որոշակիացվում և հստակեցվում են երեխաների վարքի շեղումները, դրանց պատճառները, ընտանիքի կարգավիճակը, հարմարման հնարավորությունները, բացահայտվում են օժտված, զգայական և մտավոր խանգարումներով երեխաները, իրականացվում է սոցիալ-մանկավարժական գնահատում՝ կապված տարբեր փաստաթղթերի ուսումնասիրությունների հետ, որոնք վերաբերում են ինչպես երեխաներին, այնպես էլ առանձին մարդկանց, մասնագետներին, հաստատություններին ու կառույցներին, դրվում է «սոցիալական ախտորոշում»:

Կանխորոշիչ գործառույթ

Այս գործառույթն իրականացնելիս սոցիալական մանկավարժը տարբեր փաստերի, գործոնների, սոցիալ-մանկավարժական իրավիճակների մանրամասն վերլուծության արդյունքում կատարում է ծրագրավորում, կանխորոշվում են երեխայի դաստիարակության, ուսուցման, զարգացման գործընթացները, դրանցում մասնակցող սուբյեկտների դերակատարությունները, երեխայի սոցիալականացման, զարգացման գործընթացում հնարավոր առաջընթացները, ձեռքբերումները: Կանխորոշվում են նաև միջավայրում ընթացող սոցիալ-մանկավարժական գործընթացների հնարավոր զարգացումները, երեխայի անհատական առանձնահատկությունների դրսևորումներն այդ իրավիճակներում, ինչպես նաև նպատակաուղղված ազդեցությունների հնարավորությունները, հետևանքները ու արդյունքները, այսինքն՝ կանխորոշվում են միջավայրում

ընթացող սոցիալ-մանկավարժական գործընթացներում երեխայի զարգացման հեռանկարները (հեռավոր և մոտակա ժամանակների համար):

Շտկողական գործառույթ

Սոցիալական մանկավարժի կողմից իրականացվում է նպատակաուղղված գործունեություն դաստիարակչական բոլոր ազդեցությունների շտկման առումով, որոնք ցուցաբերվում են ծնողների, դաստիարակների, տարբեր անձանց կողմից (այստեղ պետք է նկատի ունենալ նաև տարերային ազդեցությունները) և այլն: Կարգավորվում են ազդեցությունները, մեծացվում դրական ազդեցությունները, իրականացվում է դպրոցականի ինքնագնահատականի շտկում, եթե անհրաժեշտ է, կատարվում է նաև տարբեր սոցիալական միջավայրերում նրա սոցիալական կարգավիճակի շտկում, իրականացվում է օգնություն՝ վատ սովորություններից ազատվելու նպատակով:

Վերականգնողական գործառույթ

Սոցիալական մանկավարժն իրականացնում է գործողություններ հիվանդություններ, հաշմանդամություն և այլ խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-մանկավարժական աջակցության և վերականգնման նպատակով: Այդ մարդիկ կարող են լինել ազատազրկման վայրերից վերադարձածները, տարբեր տեսակի բռնությունների զոհերը, սոցիալ-տնտեսական, մասնագիտական դժվարություններ ունեցողները, սոցիալական անհարմարություն կրողները և այլն, այսինքն՝ մասնագետների կողմից իրականացվում է նպատակաուղղված գործունեություն մարդու անհատական հնարավորությունների վերականգնման նպատակով, որն ուղղված է նրա սոցիալական հարմարմանը, դաստիարակությանը, զարգացմանը, մասնագիտական գործունեությանը:

Կրթական գործառույթ

Սոցիալական մանկավարժը երեխաների, դաստիարակների, ծնողների և այլ խմբերի հետ կազմակերպում և իրականացնում է ուսուցողական դասընթացներ, հաղորդում է նրանց սոցիալական, ճանաչողական գիտելիքներ:

Կանխարգելող գործառույթ

Սա սոցիալական մանկավարժի նպատակաուղղված գործունեությունն է անձի, խմբի հանդեպ տարբեր տեսակի շեղումների կանխարգելման ու հաղթահարման համար:

Այս գործառույթի իրականացման արդյունքում նկատվում է սոցիալական մանկավարժի նպատակաուղղված ազդեցություն երեխայի անձի բարոյա-իրավական կայունության ձևավորման վրա: Իրականացվում է պաշտպանություն և օգնություն՝ ուղղված տարբեր խնդիրներ ունեցող երեխաներին, նրանց ծնողներին, ժամանակին ցուցաբերվում է անհրաժեշտ միջամտություն: Կազմակերպվում են միջոցառումներ ընտանիքում, այլ սոցիալական միջավայրերում կենսագործունեության հնարավորությունների բարելավման, փոխհարաբերությունների առողջացման նպատակով:

Հսկող-պաշտպանող գործառույթ

Սոցիալական մանկավարժն իրականացնում է երեխաների, երիտասարդական միավորումների, ծնողների և այլ մարդկանց իրավունքների ու շահերի պաշտպանություն՝ օգտագործելով իրավական նորմերի ողջ համակարգը: Իրավական պաշտպանություն իրականացնող տարբեր կառույցների հետ համատեղ նա միջոցներ է ձեռնարկում պատասխանատվության ենթարկելու այն մարդկանց, որոնք հակահիրավական գործողություններ են իրականացնում երեխաների կամ այլ մարդկանց նկատմամբ, համագործակցում է նաև սոցիալական պաշտպանություն և օգնություն իրականացնող տարբեր կառույցների հետ:

Հոգեթերապևտիկ գործառույթ

Այս գործառույթի իրականացման ընթացքում սոցիալական մանկավարժը հոգ է տանում երեխայի հոգեկան հավասարակշռության, նրա զգացմունքների, ապրումների մասին, հաստատում է վստահելի փոխհարաբերություններ, վերբալ (խոսքային), ոչ վերբալ ազդեցություն է գործում երեխայի զգացմունքների, ինքնագիտակցության վրա:

Ցուցաբերում է օգնություն տարբեր տեսակի կոնֆլիկտների հաղթահարման առումով, կարգավորում է միջանձնային հարաբերությունները, թուլացնում է դրանցում առկա լարվածությունները:

Իրականացնում է գործողություններ, որոնց նպատակն է փոխել երեխայի, մարդու վերաբերմունքը կյանքի, շրջապատի և ինքն իր նկատմամբ:

Ստեղծում է երեխայի, մարդկանց հաջողությունների ձեռքբերման, ունեցած կարողությունների զարգացման համար նպաստավոր պայմաններ:

Սոցիալ-մանկավարժական աջակցության և օգնության գործառույթ

Սոցիալական մանկավարժը ցուցաբերում է որակավորված սոցիալ-հոգեբանամանկավարժական օգնություն՝ ուղղված երեխայի անձի ինքնազարգացմանը, ինքնաճանաչմանը, ինքնաբացահայտմանը, ինքնահաստատմանը, ինքնավերականգնմանը, ինքնահրացմանը: Խորհրդառուների (երեխաների) հետ հաստատում է վստահելի փոխհարաբերություններ, ցուցաբերում է հարգանք նրանց նկատմամբ, փոփոխում է սոցիալական և մանկավարժական հարաբերությունները՝ դրանք դարձնելով առավել արդյունավետ և համապատասխան ստեղծված իրավիճակներին, երեխայի, մարդկանց հնարավորություններին:

Կազմակերպչական և հաղորդակցական գործառույթ

Սոցիալական մանկավարժն իր գործունեությամբ նպաստում է աճող սերնդի սոցիալական դաստիարակության գործընթացին բոլոր սուբյեկտների մասնակցությանը, կազմակերպում է համատեղ աշխատանքի և հանգստի հետ կապված միջոցառումներ, նպաստում է նրանց միջև անձնային և աշխատանքային հարաբերությունների հաստատմանը:

Կապեր է հաստատում տարբեր սոցիալ-մանկավարժական հաստատությունների միջև, ուշադրություն է դարձնում դրանց ազդեցությանը երեխաների, նրանց ընտանիքների վրա, նպաստում է երեխայի ընկերական շրջապատի և մեծահասակների միջև փոխօգնող հարաբերությունների հաստատմանը, բաց երկխոսության և համագործակցության, արդյունավետ փոխգործողությունների ձևավորմանը:

Համակարգող-կառավարող գործառույթ

Սոցիալական մանկավարժը կազմակերպում և իրականացնում է հիմնականում սոցիալական նշանակություն ունեցող գործունեություն՝ այդ գործունեության մեջ ներառելով դաստիարակչական տարբեր գործընթացներ: Համակարգում է սոցիալական դաստիարակության բոլոր սուբյեկտների գործունեությունը, համագործակցում է սոցիալական պաշտպանություն և օգնություն իրականացնող հաստատությունների հետ, հանդես է գալիս համամասնակցի դերում, իրականացնում է նպատակաուղղված գործունեություն երեխայի (մարդու) հնարավորությունների ակտիվացման ուղղությամբ:

Իրականացնում է նպատակաուղղված գործունեություն անձի սոցիալական ձևավորման գործընթացի, միջավայրում սոցիալ-մանկավարժական երևույթների կառավարման ուղղությամբ:

Մշակութային տարրերի ստեղծման և փոխանցման գործառույթ

Աշխատելով տարբեր սոցիալական ինստիտուտների հետ՝ սոցիալական մանկավարժը ծանոթանում է այդ հաստատության, սոցիալական ինստիտուտի մշակութային նորմերին ու արժեքներին, առանձնացնում է դրանցից այն կարևորն ու արժեքավորը, որոնք հասարակության, անձի զարգացման տեսանկյունից խիստ նպաստավոր են: Գործունեության ընթացքում նա նաև նպաստում է դրանց տարածմանը, նորերի ստեղծմանը: Այս առումով սոցիալական մանկավարժի գործունեությունը նպաստում է անձի արժեհամակարգի և նրա ինքնատիպ անհատական առանձնահատկությունների ձևավորմանն ու դրսևորմանը:

Մասնագիտական գործունեության ընթացքում սոցիալական մանկավարժը տարածում է նաև սոցիալական մանկավարժի ինստիտուտի մշակույթը, ինչպես նաև առանձին ենթակառուցվածքների գործառական տարրերը:

Սոցիալական մանկավարժի կողմից իրականացրած համապատասխան գործունեության ընթացքում մշակվում և հստակեցվում են դերեր, որոնք նա իրականացնում է իր գործունեության ընթացքում:



Գծապատկեր 24. Սոցիալական մանկավարժի կողմից իրականացվող դերերը

Սոցիալական մանկավարժն իր մասնագիտական գործունեության ընթացքում երբեմն հայտնվում է տարբեր, մասնավոր, անսովոր իրավիճակներում, որտեղ նա իրականացնում է նաև այլ սոցիալական ինստիտուտների համար նախատեսված գործառույթներ:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Սոցիալական դեր, սոցիալական ինստիտուտ, արժեհամակարգ, գործառույթ, հոգեկան առողջություն, իրավաբանական օգնություն:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է գործառույթը:
2. Որո՞նք են սոցիալական մանկավարժի գործառույթները:

3. Որո՞նք են սոցիալական մանկավարժի դերերը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ի՞նչ գործառույթներ, դերեր կարող է իրականացնել սոցիալական մանկավարժը դպրոցում՝ ծնողների և ուսուցիչների հետ աշխատանքում:

2. Ներկայացրե՛ք դեպք, իրավիճակ, որտեղ սոցիալական մանկավարժն իրականացնում է իրավապաշտպանի, հոգեթերապևտի, համակարգողի դեր:

3.5. Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկան և տեխնոլոգիաները

Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկան (հուն. methodike) սոցիալ-մանկավարժական գիտելիքների, գործունեության ձևերի, միջոցների, մեթոդների, ամբողջությունն է, որն ապահովում է սոցիալական մանկավարժի և երեխայի (խորհրդառուի) փոխադարձ, հաջորդական գործողությունների իրականացման ամբողջական համակարգի ստեղծումը, սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների սահմանումն ու արդյունավետ լուծումը: Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկան՝ որպես ինքնուրույն գիտական առարկա, կրում է տեսական և գործնական բնույթ:

Սոցիալական մանկավարժի աշխատանքի տեսությունը հիմնվում է համամանկավարժական գիտելիքների, ուսումնասիրությունների և հարակից այլ գիտությունների ձեռքբերումների վրա, որոնք անհրաժեշտ են սոցիալ-մանկավարժական արդյունավետ

գործընթացի իրականացման համար: Տեսությունը՝ որպես դրույթների համակարգ, որ կոչված է հետազոտական տարաբնույթ փաստերի համախմբմանն ու մեկնաբանմանը, համեմատաբար կայուն է և որոշակի առումով պահպանողական: Տեսական համակարգերը, սակայն, դոգմատիկ չեն. բնութագրվում են երբեմնի տեղի ունեցող զարգացումներով, շարժընթացով և ընդունակ են փոփոխությունների:

Պրակտիկան մասնագետների կողմից կոնկրետ պայմաններում և սոցիալ-մանկավարժական, սոցիալ-հոգեբանական, իրավական պաշտպանության նպատակաուղղված կոնկրետ գործընթացի կազմակերպումն ու իրականացումն է: Պրակտիկան ավելի շարժուն է և փոփոխական, քան տեսությունը, չնայած զրկված չէ հաստատուն կապերից, գործընթացում գոյություն ունեցող օրինաչափություններից և այլն: Մեթոդիկայի բովանդակության մեջ ընդգրկված է սոցիալ-մանկավարժական գործընթացի իրականացման փորձը, որն իմաստավորված, հիմնավորված է, և կարելի է ընթացքում հստակեցնել, ամփոփել, արձանագրել նորարարություններ, փաստեր, նկարագրել, կուտակել դրանք՝ հետագայում արդյունավետ և արժեքավոր մեթոդական տեղեկույթը տարածելու, օգտագործելու նպատակով:

Մեթոդիկայի բովանդակությունը կրում է կառուցողական, ստեղծագործական բնույթ, քանի որ իրականացվում են տեսական գաղափարներ, պատրաստվում են սոցիալական մանկավարժների համար լուրջ առաջարկներ, որոնք նպաստելու են մասնագետների անհատական ստեղծագործական գործունեության զարգացմանը:

Այսպիսով՝ սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկան.

1. սոցիալական մանկավարժի աշխատանքի նպատակի սահմանումն է,

2.երեխայի (խորհրդառոի) խնդրի և դրա լուծման միջոցների հայտնաբերումը, սահմանումն ու հստակեցումն է,

3.սոցիալական մանկավարժի և խորհրդառուի փոխադարձ հարաբերությունների բնույթի ձևակերպումը, որոշումը:

Այս ամենի մեջ կարևոր է աշխատանքի իրականացման ձևը, որը գործընթացի կազմակերպման միջոց է համարվում և արտացոլում է տարբեր բաղադրիչների ներքին կապը, ինչպես նաև սոցիալական մանկավարժի դերն այդ գործընթացում:

Լայն իմաստով այն բնութագրվում է որպես սոցիալ-մանկավարժական ամբողջական գործունեության կազմակերպում և իրականացում, որի արդյունքում արձանագրվում են դրական զարգացումներ, իսկ նեղ իմաստով այն արտահայտված է անհատական, խմբային, համայնքային աշխատանքների տեսքով, որտեղ տեսանելի են (ընդ որում՝ բավականին ակներև) սոցիալական մանկավարժի մասնագիտական գործունեության արդյունավետությունը, նշված խմբերի մասնակցությունը, հետաքրքրությունները, դրանց չափը, խնդրի լուծման արդյունավետությունը և այլն:

Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկայի հիմնական խնդիրներն են.

- տարբեր սոցիալական խմբերի հետ աշխատանքի հիմնական ուղղությունների, ձևերի, միջոցների, մեթոդների մշակում, որոնք կօգնեն սոցիալական մանկավարժին իր մասնագիտական գործունեության ընթացքում,
- հետազոտության մեխանիզմների մշակում, սոցիալական մանկավարժի աշխատանքում հայրենական և արտասահմանյան փորձի ներմուծում:

Սոցիալ-մանկավարժական աշխատանքի մեթոդիկան գործածվում է տիպական, կոնկրետ իրադրություններում, իրավիճակնե-

ռում, որոնցից յուրաքանչյուրի համար մասնագետը պարտավոր է կատարել սոցիալ-մանկավարժական միջոցների որոշակի ընտրություն, ունենալ համալիր գործիքներ, հիմնախնդիրների լուծման հարմար տարբերակներ և նախապատրաստվել գործունեության, գործողությունների իրականացման: Իհարկե, պակաս կարևոր չէ այդ ամենի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Սոցիալական մանկավարժն ընտրում է այն ուղին, որը, իր կարծիքով, ընդունելի ու նպատակահարմար է, այսինքն՝ գործառական, խնդրի դրսևորման (խորության, սրության, ազդեցության աստիճանի, տարածվածության վտանգավորության և այլնի), լուծման հնարավորությունների տեսանկյունից ավելի հարմար է և ամենակարևորը՝ հարմար է տվյալ իրադրությունում, ժամանակահատվածում, պայմաններում:

Սոցիալական մանկավարժի մեթոդիկայի բաղադրիչ տարրերից է «մեթոդը» (հուն. methodos՝ «ճանապարհ», «ուղի», որը տանում է դեպի դրված նպատակը):

Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդը սոցիալական մանկավարժի և երեխայի փոխգործունեության ուղին է, որը նպաստում է երեխայի սոցիալականացմանը, վերականգմանը, սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների լուծմանը: Յուրաքանչյուր մեթոդ հանդես է գալիս որպես գործիք, որի օգնությամբ մանկավարժն ազդում է երեխայի գիտակցության, զգացմունքների, վարքի վրա, և որը դիտարկվում է շրջապատող միջավայրի նկատմամբ նրա (երեխայի) ունեցած վերաբերմունքի փոփոխության տեսանկյունից:

Սոցիալ-մանկավարժական գործընթացում օգտագործվում են հնարներ, որոնք սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդի

բաղադրամասերն են: Հնարներն ապահովում են մեթոդի օգտագործումը որոշակի պայմաններում և կարող են հանդես գալ կապակցված տեսքով: Ձևը արհեստավարժ մասնագիտական մշակույթի ամրակայված, հաստատուն դրսևորումն է որոշակի պայմաններում, որն ապահովում է գործունեության եզակիությունը: Սոցիալական մանկավարժի աշխատանքի գործընթացում չի կարելի բավարարվել կազմակերպչական ինչ-որ մեկ ձևով: Սոցիալական մանկավարժի գործունեության կարևոր պահանջներից է կազմակերպման տարբեր ձևերի համադրումը, օգտագործումը:

Սոցիալ-մանկավարժական աշխատանքի միջոցներից է (լայն առումով) գործունեության այն տեսակը, որը նպաստում է սոցիալական հիմնախնդրի լուծմանը կամ կանխարգելմանը (կրթություն, աշխատանքային գործունեություն, սպորտ, տուրիզմ, ազատ ժամանակի, հանգստի կազմակերպում, հասարակական աշխատանք, բարեգործական, կամավորական գործունեություն և այլն): Նեղ առումով դրանք իրականության մեջ գոյություն ունեցող տարբեր (նյութական, հոգևոր և այլն) միջոցներն են, որոնք օգտագործվում են որպես գործունեության գործիք (տեխնիկական միջոցներ, արվեստի գործեր, գրքեր, ազգային սովորություններ, ավանդույթներ, կրոնական դավանանք, սոցիալական մանկավարժի խոսքը և այլն): Այդ միջոցները սոցիալական մանկավարժն իր մասնագիտական գործունեության ընթացքում օգտագործում է, իսկ մեթոդներն այն ուղիներն են, որոնց օգնությամբ դրանք օգտագործվում են:

Սոցիալ-մանկավարժական աշխատանքի մեթոդների, ձևերի, միջոցների ընտրությունը կախված է սոցիալ-մանկավարժական գործունեության նպատակից, դրված խնդիրներից ու բովանդակությունից, երեխայի տարիքային, անհատական առանձնահատկություններից, նրա սոցիալական միջավայրից, կրթական մակարդա-

կից, ինչպես նաև սոցիալական մանկավարժի մասնագիտական իրազեկվածությունից և վարպետությունից:

Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդները դասակարգվում են հատուկ հատկանիշներով կառուցված մի համակարգի միջոցով, որն ի հայտ է բերում մասնագիտական գործունեության մեջ ընդհանուրն ու առանձնակին, տեսության ու պրակտիկ գործունեության այն կողմերը, որոնք երաշխավորում և աջակցում են տվյալ տեխնոլոգիայի ընտրությունն ու արդյունավետ օգտագործումը: Ի՞նչ հատկանիշներով կարող են խմբավորվել սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդները: Դրանք առանձնացվում են հետևյալ կերպ.

- գործունեության կազմակերպման մեթոդներ և երեխայի սոցիալական փորձի ձևավորման մեթոդներ (վարժություններ, պահանջներ, դաստիարակող, մանկավարժական իրավիճակների ստեղծում և այլն),
- երեխայի գիտակցության ձևավորման մեթոդներ (բացատրություն, ներշնչում, զրույց, բանավեճ, օրինակի մեթոդ, աշխատանք գրքի (գրականության) հետ և այլն),
- երեխայի վարքի և գործունեության ձևավորման, հիմնավորման, ամրապնդման և խթանման մեթոդներ (զգացմունքային ազդեցություն, խրախուսանք, պատիժ, խաղային մեթոդներ և այլն),
- սոցիալ-մանկավարժական գործընթացի ազդեցության (բացահայտման) մեթոդներ (գործունեության արդյունքների վերլուծություն, սոցիալ-մանկավարժական ինքնավերլուծություն և այլն):

Սոցիալ-մանկավարժական աշխատանքը նաև հասարակական գործունեության ձև է: Ուստի հաշվի առնելով սոցիալական

մանկավարժի աշխատանքի օրինաչափ առնչությունները մանկավարժության, հոգեբանության, իրավագիտության, բժշկագիտության, սոցիոլոգիայի՝ վերջիններիս հատուկ մեթոդների հետ՝ սոցիալ-մանկավարժական գործունեության մեթոդները կարելի է դասակարգել հիմնականում ըստ կատարած գործառույթների՝

- հետազոտական,
- սոցիալ-մանկավարժական օգնության և աջակցություն,
- հոգեբանամանկավարժական ուղղման, շտկման,
- սոցիալական հարմարման (ադապտացիայի),
- նախազգուշական, կանխարգելիչ,
- վերականգնողական և այլն:

Սոցիալական մանկավարժի մասնագիտական գործունեության հիմնական ուղղությունների տեսանկյունից կարելի է առանձնացնել հետևյալ մեթոդները.

- սոցիալական ախտորոշում (հետազոտական աշխատանք, զրույց, անկետավորում, հարցազրույց, մշտադիտարկում, կենսագրական մեթոդ),
- երեխաների, կոնկրետ խմբերի հետ մասնագիտական փոխազդեցություն (համոզում, ներշնչում, տեղեկատվություն, անձի մշակութային հնարավորությունների իրագործման համար պայմանների ստեղծում, սովորույթների օգտագործում և այլն),
- սոցիալ-մանկավարժական աշխատանքի կազմակերպում (անհատական, խմբային, համայնքային աշխատանք),
- սոցիալ-տնտեսական աջակցություն (դրամական օգնություն),
- կազմակերպչական-կառավարող (նորմավորված ակտեր, պահանջներ կադրերի նկատմամբ և այլն):

Իրական պայմաններում սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդները հանդես են գալիս բարդ միասնության մեջ: Սոցիալ-մանկավարժական գործընթացի որոշակի փուլում այս կամ այն մեթոդը կարող է հանդես գալ ավելի ընդգծված, առանձնացված կամ հակառակը ուրիշ մեթոդների հետ համակցված, քանի որ շատ դեպքերում առանց փոխադարձ կապերի չի կարելի հասնել նախանշված նպատակին: Այսպես, օրինակ, անհատական աշխատանքի ձևով և զրույցի մեթոդով (երկխոսության եղանակով), որտեղ օգտագործվում են խոսքի, հարցերի, պատասխանների, օրինակների միջոցները, վստահության, ուշադրության, խրախուսանքի, խնդրանքի ցուցաբերման հնարները, սոցիալական մանկավարժը կարող է հասնել է իր առջև դրված խնդրի կամ խնդրի որևէ մասի լուծմանը:

Մեթոդների հետագա գիտական մշակման, ճշգրտման համար իրականացվում են սոցիալ-մանկավարժական աշխատանքներ, որոնց միջոցով հնարավորություն է ստեղծվում հստակեցնելու սոցիալական դերեր, դասակարգելու, միավորելու կամ առանձնացնելու գործառույթներ և այլն:

Ըստ Մ. Ա. Գալագուզովայի՝ «սոցիալական մանկավարժն իր մասնագիտական գործունեության ընթացքում օգտագործում է մեթոդներ, որոնք կազմված են առանձին հնարներից: Մեթոդները, հնարներն ու միջոցները իրար հետ փոխկապակցված են այնպես, որ առանձին դեպքերում մեթոդներն ու հնարները կարող են հանդես գալ որպես միջոցներ, իսկ միջոցներն իրենց հերթին կարող են լինեն շատ տարբեր»[73]:

---

[73] Методика и технологии работы социального педагога: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений/ Б. Н. Алмазов, М. А. Беляева, Н. Н. Бессонова и др.; под ред. М. А. Галагузовой, Л. В. Мардахаева, 3-е изд., стер., М., 2006, стр. 150.

«Տեխնոլոգիա» հասկացությունը (հուն. techne - արվեստ, վարպետություն, կարողություն, logos-գիտություն) սովորաբար բնորոշվում է որպես գիտելիքների ամբողջություն մեթոդների, մշակման միջոցների ու գործողությունների իրագործման մասին, ինչպես նաև գործողությունների ամբողջություն է, որտեղ այդ գործողություններն իրականանում են որոշակի կերպով և հաջորդականությամբ: Ըստ Ա. Մակարենկոյի՝ «մանկավարժական տեխնոլոգիա» ասելով հասկանում ենք մանկավարժական գործընթացի մասնակիցների արդյունավետ փոխներգործության ձևերի ամբողջություն, որոնք ուղղված են մանկավարժական միասնական տրամաբանության ձևավորմանն ու երեխայի՝ որպես հասարակության լիարժեք անդամի, ձևավորմանը: Ըստ Լ. Վ. Մարդախաևի՝ սոցիալական մանկավարժի գործունեության որոշ ոլորտների տեխնոլոգիացումն անխուսափելի է, քանի որ նմանատիպ իրադրություններում սոցիալական մանկավարժն աշխատում է հատուկ սահմանված (ավանդական) գործողությունների շարքով կամ՝ տեղի ունեցած փոփոխություններին համապատասխան ստեղծում է նոր տեխնոլոգիական գործընթացներ:

Տեխնոլոգիայի ընտրության համար կարևոր է պարզաբանել.

- կոնկրետ իրադրությունում (իրավիճակում) մասնագիտական գործունեության նպատակը,
- սոցիալ-մանկավարժական գործունեության առանձնահատկություններն ու հնարավորությունները,
- նպատակի իրագործման տեղային առանձնահատկություններն ու հնարավորությունները,
- իրագործման հնարավոր ձևերը,
- սուբյեկտի սոցիալ-մանկավարժական գործունեության հնարավորությունները:

«Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկա» և «աշխատանքի տեխնոլոգիա» հասկացությունների հարաբերակցության հարցը միանշանակ պատասխան չունի, և այն կարելի է դիտարկել հետևյալ կերպ. եթե խոսքը գնում է տեղային մակարդակում խնդիրների լուծման մասին, ապա կարող ենք տեխնոլոգիան դիտարկել որպես սոցիալ-մանկավարժական աշխատանքի մեթոդիկայի բաղկացուցիչ մաս (տարր), օրինակ՝ կանխարգելման աշխատանքի, կոնֆլիկտների հաղթահարման մեթոդիկաներ և այլն՝ հաշվի առնելով սոցիալական մանկավարժի գործունեության ուղղություններն ու գործառույթները: Եթե խոսքը գնում է որևէ համակարգի սոցիալ-մանկավարժական բնույթի նախագծման, մոդելավորման մասին, ապա տեխնոլոգիան հանդես է գալիս որպես խնդրի փուլային լուծումն իրականացնելու համար անհրաժեշտ ալգորիթմ: Տվյալ դեպքում սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիան ավելի ընդգրկուն է, քան մեթոդիկան:

Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիայի օբյեկտը սոցիալ-մանկավարժական գործընթացներն են, դրանց տարբեր մակարդակները: Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաներն այսօր գտնվում են գիտական հանրության լայն շրջանների ուշադրության կենտրոնում, քանի որ սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաները ներառում են նաև այլ մասնագիտությունների առանձին տեխնոլոգիաներ (սոցիոլոգիական, մանկավարժական, սոցիալական աշխատանքի):

Սոցիալ-մանկավարժական գործընթացը՝ որպես հատուկ մասնագիտական գործունեություն, ինքնուրույն համակարգ, հետազոտության օբյեկտ, բոլոր չափանիշներով համապատասխանում է տեխնոլոգիայի հիմնական դրույթներին, որտեղ խոսքը գնում է սոցիալական մանկավարժության պրակտիկայում առանձին տեխնո-

լոգիաների մշակման, արդիականացման և կիրառման հնարավորությունների մասին: Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաները կարող են հանդես գալ որպես սոցիալ-մանկավարժական գործընթացների պլանավորման ու կազմակերպման, կարգավորման միջոցներ, որոնք անընդհատ ընդլայնվում են՝ ընդգրկելով նաև կրթության կառավարումը, սոցիալական կառավարումը, կանխատեսումն ու ծրագրավորումը: Սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիայի բնագավառում պրակտիկ գործունեության համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

- ներգործության օբյեկտը պետք է ունենա որոշակի աստիճանի բարդություն, այսինքն՝ ունենա սոցիալ-մանկավարժական որոշակի ուրվագիծ,
- պետք է առանձնացվեն սոցիալ-մանկավարժական գործունեության օբյեկտի, դրա համակարգի տարրերի փոխներգործության գործառական և կառուցվածքային հատկությունները՝ մտավոր կարողությունները, սոցիալ-տնտեսական գործոնները, դերակատարումները, շեղումներն ու կախվածությունները, հաղորդակցման, փոխհարաբերությունների որակն ու ուղիները, նորմերն ու արժեքները և այլն:

Սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիան կարելի է դիտարկել լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով դա տեսական և պրակտիկ գիտելիքների համակարգ է, որտեղ սոցիալ-մանկավարժական գործունեության տարբեր ոլորտներում և մակարդակներում կազմվում է գործողությունների ալգորիթմ, և կիրառվում են ներգործության միջոցներ: Նեղ իմաստով դիտարկվում են մասնավոր տեխնոլոգիաները, որոնց առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես կոնկրետ սոցիալ-մանկավարժա-

կան գործունեության ոլորտի, օբյեկտի առանձնահատկություններով, այնպես էլ սուբյեկտի կողմից իրականացրած գործողությունների առանձնահատկություններով: Այսպես, օրինակ՝ հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիա, սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիա, սոցիալական մանկավարժի աշխատանքում հոգեթերապևտիկ գործառույթի իրականացման տեխնոլոգիա և այլն:

Սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների լուծման տեխնոլոգիաների մշակումը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի՝ տեսական, մեթոդական, ընթացակարգային, որոնք միասին ներկայացնում են մի ամբողջական համակարգ և ընդգծված են սոցիալական մանկավարժության սահմանման մեջ:

Տեսական փուլում ձևակերպվում է գործունեության նպատակը, այսինքն՝ տեղադրվում է առարկան, առանձնացվում են կառուցվածքային տարրերը, բացահայտվում են հետազոտության համար անհրաժեշտ կապերն ու հարաբերությունները:

Մեթոդական փուլում կատարվում է լուծման ենթակա հարցերի բնութագրում, սոցիալ-մանկավարժական գործունեության օբյեկտի մասին տեղեկատվության ստացման ձևերի ու ուղիների հստակեցում, տեղեկատվության հավաքում, կոնկրետ երաշխավորված գործունեության պլանավորում, կատարվում են հետևություններ:

Ընթացակարգային փուլում իրականացվում են պրակտիկ գործունեության ալգորիթմով նախատեսված գործողությունները, որոնք ենթադրում են խնդրի լուծում, ընդ որում՝ երաշխավորվում է ամբողջ գործընթացի արդյունավետությունը:

Հենվելով սոցիալական մանկավարժի գործունեության նպատակների և խնդիրների վրա՝ կարելի է առանձնացնել այն հիմնա-

կան տեխնոլոգիաները, որոնց կիրառությունն ուղղորդված է անհատական, խմբային ծրագրերի մշակմանը և իրականացման պայմանների ապահովմանը:

Կազմակերպական սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաներ, որոնց բաղադրիչներն են.

- երեխաների (շահառուների) տվյալների բազայի ձևավորումը՝ երեխաների տարբեր հարցերով զբաղվող (առողջապահություն, ոստիկանություն, սոցիալական ապահովություն և այլն) կառույցների, ներկայացուցիչների հետ համագործակցությամբ:
- Ձևավորելով տվյալների բազա և առաջնորդվելով գաղտնիության սկզբունքով՝ սոցիալական մանկավարժն այն օգտագործում է միայն ծառայողական նպատակների համար: Տվյալների հավաքագրումը հնարավորություն է տալիս տարբերակելու հիմնախնդիրը, ստեղծված իրավիճակը, որում հայտվել է:
- Սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտում հայտնված երեխաների (խորհրդառուների) անձնային և սոցիալական զարգացման խնդիրների ախտորոշում, որն անհրաժեշտ է տվյալների բազայում հայտնված յուրաքանչյուր երեխայի սոցիալական և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների հստակեցման համար: Սոցիալական մանկավարժն աշխատում է հիմնականում ծնողների կամ նրանց փոխարինողների, դասղեկի, ուսուցիչների հետ՝ ստեղծված իրավիճակի պարզաբանման նպատակով և կատարում հետևյալ աշխատանքները. ուսումնասիրում է երեխայի անհատական առանձնահատկությունները, բացահայտում է նրա հետաքրքրություններն ու պահանջմունքները, խնդիրներն ու դժվարությունները, վարքի շեղումները, կոնֆլիկտային իրավիճակները, դրանց առաջացման պատճառները, կատարում է դիտումներ:

- Երեխայի, խմբի, հանրության հետ տարվող սոցիալ-մանկավարժական գործունեության ծրագրի մշակում և հաստատում, որն ենթադրում է հոգեբանամանկավարժական, սոցիալական այնպիսի միջոցների ընտրություն, որն անհրաժեշտ է տվյալ խնդրի կամ խնդիրների արդյունավետ լուծման համար: Մշակվում են անհատական, խմբային և հանրության սոցիալ-մանկավարժական ծրագրեր, որոնց բնորոշ են տարբեր կառույցների նպատակահարմար ընդգրկումը, ինչպես նաև սոցիալ-մանկավարժական գործունեության մեթոդների ու ձևերի նպատակահարմարությունը, կանխատեսվածությունը և սպասվող արդյունքների չափելիությունը:
- Ծրագրի իրականացման պայմանների ապահովում, երբ սոցիալական մանկավարժը հանդես է գալիս մի քանի դերերում. տարածում է ծրագիրը, կազմակերպում է ծրագրի իրագործումը, կազմակերպում և համակարգում է աշխատանքները, հետևում է գործողությունների արդյունքներին, տեղեկացնում է համապատասխան կառույցներին և հետաքրքրված կողմերին:
- Սոցիալական մանկավարժի միջգերատեսչական կապերը ենթադրում են, որ սոցիալական մանկավարժն իրավունք ունի և պետք է կապեր պահպանի ու համագործակցի տարբեր սոցիալական կառույցների, վարչական, պետական մարմինների հետ, որոնք ի պաշտոնե զբաղվում են երեխաների խնդիրներով:

Սոցիալական մանկավարժի աշխատանքի հիմնական գործառույթներից են դաստիարակչական-խորհրդատվական գործառույթները, որոնք սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների ամենաառանցքային բաղադրիչներն են: Դաստիարակչական խորհրդատվության նպատակային խմբերի մեջ են մտնում ոչ միայն սոցիալ-մանկավարժական գործունեության բոլոր թիրախային խմբերը, այլև բոլոր այն երեխաները, որոնք հակում ունեն հայտնվելու

թիրախային խմբերում կամ արդեն մի անգամ պատկանել են այդ թիրախային խմբերից որևէ մեկին: Դաստիարակչական խորհրդատվությունն իրականացվում է հետևյալ պատճառներով, երբ առկա են.

- վարքային խնդիրներ (ագրեսիվություն, շփման դժվարություններ, անառողջ մրցակցություն),
- ուսումնառության հետ կապված խնդիրներ (դասերից հաճախակի բացակայություն, առաջադիմության անկում, դասերին անպատրաստ ներկայություն),
- ընտանեկան փոխհարաբերությունների հետ կապված խնդիրներ (լարված հարաբերություններ ընտանիքում, ճգնաճամեր, ծնողների ապահարզան, հեռացում, երեխաների հեռացում ընտանիքից),
- հուզական խնդիրներ (վախ, միայնակության զգացում, ընկճախտ),
- հոգեսոմատիկ խանգարումներ (խոսքի խանգարումներ, սննդակարգի խանգարումներ, անմիզապահություն):

Դաստիարակչական խորհրդատվության տեսակները, ըստ իրականացման ժամանակի, լինում են երկարաժամկետ, կարճաժամկետ և պարբերական:

1. **Երկարաժամկետ դաստիարակչական խորհրդատվություն**, որը բավականին արդյունավետ է, քանի որ այն իրականացվում է կոնկրետ ժամանակահատվածում՝ առանց ընդհատումների, ամեն երկու-երեք օրը մեկ 1-2 ժամ տևողությամբ, և, որը չի գերազանցում 4 շաբաթը: Այս ընթացքում սոցիալական մանկավարժը մանրամասնորեն ծանոթանում է խնդիրներին, դրանց առաջացման պատճառներին և խորհրդառուի հետ համագործակցությամբ փորձում է լուծումներ տալ:

2. **Կարճաժամկետ դաստիարակչական խորհրդատվություն**, որն իրականացվում է խորհրդառուի հետ երկու կամ երեք հանդիպման շրջանակում: Այն իրականացվում է, երբ խնդիրներն ակնառու են, և դրանք չեն պահանջում երկարատև աշխատանք, չկան առաջացման լուրջ պատճառներ, առնչություններ այլ մարդկանց հետ:

3. **Պարբերական դաստիարակչական խորհրդատվություն**, որն իրականացվում է այն խորհրդառուների հետ, որոնք պատկանում են սոցիալ-մանկավարժական գործունեության թիրախային խմբերին և ունեն սոցիալականացման գործընթացի հետ կապված խնդիրներ: Այս խորհրդատվության ընթացքում ճշտվում են նոր խնդիրների առաջացման հավանականությունները, խորհրդառուի հակվածությունը ոչ սոցիալամետ վարքին, տրվում են լուծումներ: Պարբերական միևնույն ժամանակ երկարաժամկետ խորհրդատվության միջոցով իրականացվում են նաև կանխարգելող, վերահսկողական աշխատանքներ:

4.**Հրատապ-իրավիճակային դաստիարակչական խորհրդատվություն**, որն իրականացվում է անհապաղ, ոչ սովորական պայմաններում, անկանխատեսելի հանգամանքների ծավալմամբ: Նման իրավիճակներում սոցիալական մանկավարժի գործողություններն ուղղված են խորհրդառուի նյարդային-հուզական ապրումների մեղմացմանը, այնուհետև՝ դաստիարակչական խորհրդատվական տեխնիկաների կիրառմանը:

Դաստիարակչական խորհրդատվության փուլային կառուցվածքն այսպիսին է. նախախորհրդատվական փուլ, որն ուղղված է խորհրդառուների, ստեղծված իրավիճակի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացմանը, որին մասնակցում են նաև այլ մասնագետներ, կազմակերպություններ և կառույցներ:

Ըստ կիրառվող տեխնիկաների՝ տարբերակվում են դաստիարակչական խորհրդատվության հետևյալ տեսակները՝ կանխատեսման, ծրագրավորման, ապրումակցման և տեխնոլոգիական, որոնք իրականացվում են բուն խորհրդատվական փուլում՝ դաստիարակչական փոփոխության և արդյունքի հասնելու նպատակով: Այդ փոփոխությունները պետք է լինեն ոչ միայն կանխատեսելի և ակնառու, այլ նաև չափելի: Փոփոխությունների ստուգման համար կարևոր են չափանիշների սահմանումը, հետազոտման և հատուկ մեթոդիկաների միջոցով դրանց շարժընթացին հետևելը և անհրաժեշտ արդյունքների արձանագրումը:

Հետխորհրդատվական փուլում իրականացվում են կանխարգելիչ աշխատանքներ, որտեղ կարևոր են խորհրդառուի ներգրավվածությունն այդ աշխատանքներում, ստացված արդյունքի կապվածությունը նրա հետաքրքրությունների, կյանքի իմաստի ու նպատակի հետ, ինչպես նաև այդ արդյունքի պահպանման գործում խորհրդառուի պատասխանատվության անհրաժեշտությունը:

Դաստիարակչական խորհրդատվություն իրականացնելիս պետք է պահպանել հետևյալ սկզբունքները.՝

- չվնասել,
- լինել պատրաստակամ բոլոր տեսակի խնդիրների լուծման հարցերում,
- պահպանել բարի կամքի և կամավորականության սկզբունքը,
- ընդունել մարդուն այնպիսին, ինչպիսին նա կա,
- պահպանել տեղեկատվության և աշխատանքի գաղտնիությունը,
- հնարավորինս նվազագույնի հասցնել մասնագիտական բառերի օգտագործումն աշխատանքում,

- չխլել երեխայից սեփական արարքների համար պատասխանատու լինելու իրավունքն ու պարտականությունը,
- երեխաներին պետք է օգնել, աջակցել և ուղղորդել, ոչ թե մխիթարել:

Սոցիալական մանկավարժի աշխատանքում առանձնահատուկ նշանակություն ունեն վերականգնողական-շտկողական-հոգեթերապևտիկ գործառույթների իրականացման տեխնոլոգիաները՝ խաղային, ընթերցողական, պարային-շարժողական, երաժշտական և այլ թերապիաների կիրառությունները, որոնք միտված են կոնկրետ նպատակի ու արդյունքի և կարող են ապահովել իրականացվող գործունեության արդյունավետությունը, նպաստել սոցիալ-մանկավարժական գիտելիքների զարգացմանն ու փորձի ձևավորմանը:

Այսպիսով՝ սոցիալ-մանկավարժական աշխատանքի տեխնոլոգիան գործունեության ալգորիթմ է, որի միջոցով հասնում ենք սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների լուծմանն ու նպատակների իրականացմանը, այն խնդրի լուծման ծրագիր է, դրա ճիշտ պատկերումը, ներգործման, ազդեցությունների, տարբեր գործողությունների հերթականություն, որոնք ուղղված են օբյեկտի սոցիալ-մանկավարժական վերափոխմանը, փոփոխություններին և ցանկալի, ընդունելի արդյունքի ձեռքբերմանը:

Գործունեությունը չի ենթադրում միայն մեկ ազդեցություն կամ ներգործություն, այլ մի ամբողջական գործընթաց է իր բովանդակությամբ, ձևերով, մեթոդների համակցությամբ, որը պարբերաբար կրկնվում է սոցիալ-մանկավարժական աշխատանքում յուրաքանչյուր նոր խնդրի լուծման ժամանակ: Խնդրի սահմանումից, ախտորոշումից մինչև լուծումը տեխնոլոգիական գործընթաց է, և եթե կա խնդիր, կա լուծում:

Տեխնոլոգիական գործընթացում կարևոր է հաշվի առնել տնտեսական, սոցիալ-հոգեբանական, մանկավարժական տարբեր երևույթների ազդեցությունները, ինչպես նաև սուբյեկտիվ գործոնների դերը: Ամբողջ տեխնոլոգիական գործընթացը վիճակի փոփոխություն է, որն իրականացվում է որոշակի ժամանակահատվածում (սկսած խնդրի կամ նպատակի սահմանումից մինչև լուծումը), ուղղված է մարդու ու նրա շրջապատի միջև գոյություն ունեցող փոխազդեցություններին (ներդաշնակության և համապատասխանության հաստատման առումով), և որտեղ մեծ է արտաքին ու ներքին գործոնների, միջոցների նշանակությունը:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Մեթոդ, մեթոդիկա, մեթոդաբանություն, տեխնոլոգիա, սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիա, ալգորիթմ, համակարգ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկան:

2. Որո՞նք են սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկայի խնդիրները:

3. Ի՞նչ է սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիան:

4. Ի՞նչ է ալգորիթմը:

5. Ի՞նչ փուլերից է կազմված սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծման տեխնոլոգիան:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խմբային աշխատանքի միջոցով փորձե՛ք մշակել սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիաներ՝ ըստ սոցիալ-մանկավարժական գործունեության ոլորտի, օբյեկտի, սուբյեկտի առանձնահատկությունների: Ներկայացրե՛ք այդ աշխատանքում կիրառվող մեթոդները, միջոցները, հնարներն ու ձևերը:

3.6. Սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները

Ժամանակակից պայմաններում, երբ քաղաքական, տնտեսական, սոցիալական առումներով բարդացել է կյանքը, երբ իրականության մեջ անորոշությունը, տարբեր բախումները, կտրուկ, անսպասելի փոփոխություններն ու մարտահրավերներն առավել հաճախ են դրսևորվում, մարդիկ, հասարակության որոշ սոցիալական խմբեր, տարբեր սոցիալական ինստիտուտներ բազմիցս հայտնվում են դժվարին ու անսովոր իրավիճակներում: Առաջանում են գործառական դժվարություններ կամ անկարողություն, որի պատճառով էլ մեծանում է նրանց սոցիալական պաշտպանության, ապահովության և աջակցության իրականացման անհրաժեշտությունը: Այս առումով էլ սոցիալական մանկավարժի գլխավոր խնդիրն է երեխաներին, մարդկանց ցուցաբերել օգնություն և աջակցություն կյանքի դժվարին իրավիճակներում, աջակցել նրանց հոգեպես, սովորեցնել դիմակայել դժվարություններին, հաղթահարել դրանք, գտնել խնդիրների լուծման ուղիներ, կայացնել որոշումներ, հավատ ներշնչել, համոզել, որ նրանց կյանքում էլ կարող են

լինել դրական տեղաշարժեր, փոփոխություններ, որ նրանք նույնպես կարողունակ են և այլն: Միայն այդպիսի մասնագիտական գործունեության միջոցով է հնարավոր երկրում հիմնել երեխաներին, սոցիալական խմբերին օգնության կազմակերպման արդյունավետ համակարգ, լուծել մանկության ապահովության և պաշտպանության հիմնախնդիրը: Այսպիսի ցանկացած գործունեություն մարդասիրական բնութագիր ունի, քանի որ այդ գործունեության նպատակն է պաշտպանել երեխաներին կյանքի դժվարին իրավիճակներում, հաղթահարել նրանց մեկուսացումն ու լուծել այն բոլոր հիմնախնդիրները, որոնք խանգարում են նրանց զարգացմանը, համարժեք սոցիալականացմանը, սոցիալական բարեկեցությանը: «Սոցիալական մանկավարժի գլխավոր առաքելությունը երեխայի սոցիալական պաշտպանությունն է, բժշկական, սոցիալական օգնության ցուցաբերումն է նրան, կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ունակությունն է, երեխայի վերականգնումն ու հարմարումն է հասարակության մեջ»[74]:

Բոլոր հասարակություններում էլ որակյալ վերարտադրության, և ընդհանրապես զարգացած հասարակության ձևավորման համար կարևոր նախապայմաններ են երեխաների համար առողջ, անվտանգ ու ապահով կյանքի ապահովումը, հասարակության կուտակած փորձի նրանց արդյունավետ փոխանցումը, համարժեք սոցիալականացումը: Կրթության և դաստիարակության շնորհիվ մարդու մոտ ձևավորվում և զարգանում են նրա ընդունակությունները, մտավոր կարողությունները, հոգեկան և սոցիալական զգացմունքները (հետաքրքրությունները), բավարարվում են պահանջմունքներ, որոնք մարդուն լիարժեք կյանքով ապրելու, իրեն հասա-

[74] **Василькова Ю. В.,** Социальная педагогика: Курс лекций. Учеб. пособие для студ. пед. учеб. заведений, М., 2004, стр. 61.

ռակության հետ միասնության մեջ զգալու հնարավորություններ են տալիս: Այդ իսկ պատճառով այսօր զարգացած երկրներում գործում է անընդհատ կրթության համակարգը, որի հիմքում ընկած են կրթություն ողջ կյանքի ընթացքում և մարդու հնարավորությունների ընդլայնման գաղափարները: Մանկավարժությունը համապատասխան կրթադաստիարակչական գործունեությամբ հանդես է գալիս ինչպես մարդկանց կյանքին, սոցիալական փոփոխություններին հարմարման, այնպես էլ նոր տեսակի հասարակության ձևավորման միջոց: Յուրաքանչյուր հասարակությունում ընթացող կրթադաստիարակչական գործընթացներում կարևորվում են սոցիալական երևույթների (աղքատություն, գործազրկություն, թմրամոլություն և այլն), միջավայրի, սոցիալական ինստիտուտների (ընտանիք, կրթություն, առողջապահություն և այլն) ազդեցությունները, դրանց ներսում առաջացած փոփոխությունները, դժվարությունները, որոնք հաճախ կրթության առջև դրված նպատակների իրականացման հետ կապված լուրջ հիմնախնդիրներ են առաջադրում: Եվ նկատում ենք, որ «մարդու կյանքի սոցիալական և հոգևոր պայմանները, մանկավարժական պատճառահետևանքային հարաբերություններն ու օրինաչափությունները փոխակերպվում են սոցիալ-մանկավարժական հարաբերությունների»[75]:

Սոցիալ-մանկավարժական գործունեության արդյունքում փոփոխվում է այս կամ այն առանձնահատկությունն ունեցող երևույթը, նրա ազդեցությունը մարդու սոցիալական կայացման, զարգացման վրա (շատ դեպքերում ազդեցության կանխում է տեղի ունենում), փոփոխվում, զարգանում են մարդու կարողությունները:

---

[75] **Шептенко П. А., Воронина Г. А.,** Методика и технология работы социального педагога. Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений /Под. ред. В. А. Сластенина, 2002, стр. 21.

Անձնային, սոցիալական զարգացման և դրանց փոխգործողությունների մակարդակներում նույնպես տեղի են ունենում փոփոխություններ, որոնց արդյունքում բարելավվում են անձ-հասարակություն փոխհարաբերությունները, հավասարակշռություն է հաստատվում երկուստեք պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների միջև:

Եթե ուսուցչի գործունեությունն ուղղված է դեպի այն հաստատությունները, որտեղ նա ծավալում է միայն կրթադաստիրակչական գործունեություն, ապա սոցիալական մանկավարժի գործունեությունն ուղղված է կրթական և սոցիալական բոլոր հաստատությունները, որտեղ լուծվում են պաշտպանության կարիք ունեցող տարբեր խմբերի սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրները, օգտագործվում են մանկավարժական տեխնոլոգիաներ, լուծվում են նաև կրթադաստիարակչական հիմնախնդիրներ, որոնք նպաստում են երեխայի համարժեք սոցիալականացմանը, նրա հարմարմանը, վերականգնմանը, ներառմանը սոցիալական միջավայր և հասարակություն: Այսպիսի լայն գործունեության շրջանակներում կարևոր է դառնում սոցիալական մանկավարժի աշխատանքը տարբեր հաստատություններում տարբեր մասնագետների կողքին:

Սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները բազմազան են, դրանք այն հաստատություններն են, որոնք զբաղվում են երեխաների, երիտասարդների կրթադաստիարակչական և սոցիալական հիմնահարցերով, որտեղ նրանց ցուցաբերվում են համապատասխան օգնություն և աջակցություն: Սոցիալական մանկավարժը մասնագիտական գործունեություն է ծավալում.

- բոլոր կրթական հաստատություններում,
- ընտանիքներում,
- երեխաների, երիտասարդության հարցերով զբաղվող հաստատություններում (կենտրոններում),

- առողջապահական հաստատություններում (մանկական համաբուժարաններ, հիվանդանոցներ, հատուկ հիվանդանոցներ և այլն),
- սոցիալական պաշտպանություն իրականացնող հաստատություններում (սոցիալական ծառայությունների գործակալություններ, ընտանիքի և երեխաների սոցիալական պաշտպանության կենտրոններ, մանկատներ, սոցիալ-վերականգնողական կենտրոններ, երեխաների օգնության և աջակցության ցերեկային կենտրոններ, թափառող և մուրացիկ երեխաների խնդիրներով զբաղվող կազմակերպություններ, սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների համար վերականգնողական կենտրոններ և այլն),
- ներքին գործերի համակարգի ենթակայության տակ գտնվող հաստատություններում (հատուկ ինտերնատներ իրավախախտ երեխաների համար, ոստիկանության բաժնի մանկական սենյակ, անչափահասների հարցերով զբաղվող բաժանմունք և այլն),
- երեխաների պաշտպանության և աջակցության հիմնահարցերով զբաղվող պետական, մարզային, տեղական կառույցներում և այլն:

Այսօր մեր երկրում տարածված է կամավորական շարժումը, որի շրջանակներում սոցիալական մանկավարժներն անհատույց մասնագիտական գործունեություն են իրականացնում նաև հասարակական հատվածում, կյանքի են կոչում տարբեր ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբի երեխաների և նրանց ընտանիքների պաշտպանությանն ու օգնությանը: Վերը նշված ոլորտներում սոցիալական մանկավարժի մասնագիտական գործունեությունը հիմնված է ոչ միայն գիտատեսական գիտելիքների և պրակտիկ փորձի ձեռքբերման, այլ նաև անընդհատ ինքնակատարելագործման վրա:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Մանկավարժական հիմնախնդիր, սոցիալական հիմնախնդիր, խոցելի խումբ, կամավորական գործունեություն:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչպիսի՞ ազդեցություն ունեն սոցիալական հիմնախնդիրները մանկավարժական գործընթացի վրա:

2. Որո՞նք են սոցիալական մանկավարժի և մանկավարժի մասնագիտական գործունեության ընդհանրություններն ու տարբերությունները:

3. Առանձնացրե՛ք, խնդրեմ, սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները:

4. Որո՞նք են այն կառույցները, որտեղ սոցիալական մանկավարժները կարող են մասնագիտական գործունեություն իրականացնել:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Բաժանվե՛ք խմբերի, յուրաքանչյուր խմբում, ըստ նախապես ընտրված գործունեության ոլորտի, ներկայացրե՛ք այդ ոլորտի (կառույցի) գործունեության նշանակությունը հասարակության մեջ, այդ կառույցներում սոցիալական մանկավարժի տեղն ու դերը: Ներկայացրե՛ք սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկություններն այդ ոլորտներում:

3.7. Սոցիալական մանկավարժի աշխատանքն ընտանիքի հետ

Ընտանիքը հասարակության այն կարևոր սոցիալական ինստիտուտն է, որն ապահովում է հասարակության ինքնավերարտադրությունը: «Ընտանիքն առաջացել է այն պարզ պատճառով, որ, ի տարբերություն կենդանական մյուս բոլոր տեսակների, մարդկային տեսակի երեխաներն ունեն ամենաերկարատև մանկությունը: Երեխաների կախումը ծնողներից տևում է 15-18 տարի»[76]: Ըստ Ա. Ի. Կրավչենկոյի՝ ընտանիքը սահմանվում է որպես «ամուսնության կամ արյունակցության վրա հենված փոքր խումբ, որի անդամները կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխօգնությամբ, բարոյական և իրավական պատասխանատվությամբ»[77]:

Ընտանիքի՝ որպես առանձնահատուկ սոցիալական խմբի համար հատկանշական է մի շարք հասարակական գործառույթների և նպատակների առկայությունը, որոնք վերափոխման են ենթարկվում ընտանիքի տարբեր կենսափուլերում: Յուրաքանչյուր կենսափուլ կարելի է բնութագրել որոշակի (նաև մասնակի) ձեռքբերումներով և կորուստներով, որտեղ փոփոխվում են սոցիալական դերեր, առաջանում են նոր սոցիալական դերեր, կամ պահպանվում են դրանք, սակայն դրանց բովանդակության, ձևերի ու եղանակների մեջ նույնպես զգալի փոփոխություններ են արձանագրվում: Սոցիոլոգներն ընտանիքի կենսափուլերը բաժանում են ութ աստիճանի, որոնք տարբերվում են միմյանցից «իրենց տևողությամբ, բովանդակությամբ և հագեցվածությամբ: Դրանք են.

---

[76] **Կրավչենկո Ա. Ի.,** Սոցիոլոգիա (դասագիրք): Ռուսերենից թարգմանեց Վ. Աբրահամյանը, Եր., 2004, էջ 232:

[77] Տե՛ս նույն տեղում, էջ 237:

- ընտանիքի սկզբնավորում, ամուսնական զույգեր, առանց երեխաների, 2 տարի,
- երեխաների ծնունդ, նրանց նկատմամբ ծնողական հոգածություն, 2,5 տարի,
- մինչդպրոցական տարիքի երեխաներով (մինչև 6 տարեկան) ընտանիք, 3,5 տարի,
- դպրոցական տարիքի երեխաներով (6-ից մինչև 13 տարեկան) ընտանիք, 7 տարի,
- հասուն դպրոցական և ուսանողական տարիքի երեխաներով (13-ից մինչև 20 տարեկան) ընտանիք, 7 տարի,
- երեխաների նոր օջախ ստեղծող, ճյուղավորվող ընտանիք, 6,5 տարի,
- երեխաների բաժանումից մինչև կենսաթոշակային տարիքի ժամանակն ընդգրկող միջին շրջանի ընտանիք, 13,5 տարի,
- տարեց ընտանիք (կենսաթոշակի անցնելուց մինչև ամուսինների վախճանը), 16 և ավելի տարի»[78]:

Այս աստիճանական բաժանման մեջ կարելի է նկատել, թե ընտանիքն ինչ խնդիր է լուծում, որ խնդիրներն են ընտանիքի համար համարվում առաջնային, որտեղ է ծնողների ծանրաբեռնվածությունը մեծ և այլն: Ընտանիքի հետ աշխատանքում սոցիալական մանկավարժը պետք է ուշադրություն դարձնի ընտանիքի ձևավորումից մինչև տվյալ աստիճանական բաժանման փուլն ընկած ժամանակահատվածում առկա խնդրին կամ խնդիրներին, քանի որ այդ ընթացքում հաճախ ձևափոխվում է ընտանիքի կառուցվածքը, բարդանում են գործառույթները, փոխվում է ընտանիքի տիպաբանությունը, ուժգնանում են ապակառուցողական գործընթացները, ի

[78] **Կրավչենկո Ա. Ի.,** Սոցիոլոգիա (դասագիրք), Եր., 2004, էջ 241:

հայտ են գալիս նոր կողմնորոշումներ, վերափոխվում է ընտանիքի մշակույթը, որոնք կարող են ունենալ խիստ բացասական ազդեցություններ՝ անդրադառնալով ընտանիքի կայունության, բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտի ձևավորման վրա:

Պակաս կարևոր չէ ընտանիքի գլխավորի խնդիրը: Սովորաբար, առավել ևս հայ հասարակությունում, ընտանիքի գլխավորը լինում է տղամարդ ամուսինը կամ նրա ծնողները: Մնացած անդամները կարծես թե կախված են նրանցից, քանի որ նրանք ավելի բարձր սոցիալական դիրք են գրավում ընտանիքում, վաստակում են, ուժեղ են և ունեն փորձ: Կանայք ավելի պատասխանատու են երեխաների խնամքի, դաստիարակության, տարեց անդամների խնամքի, կենցաղավարության, հանգստի կազմակերպման համար: Ժամանակակից ընտանիքի մոդելում նախապատվությունը տրվում է հավասարազոր հարաբերություններին, իրավունքներին, քանի որ կանայք, չափահաս երեխաները նույնպես կարող են վաստակել (անգամ տղամարդուն հավասարազոր կամ ավելին) հասարակության մեջ հեղինակություն լինել, գրավել առավել բարձր դիրք և այլն:

Այսօր ընտանիքը բախվում է նյութական, կենցաղային, բնակարանային, զբաղվածության, հոգեբանական, բժշկական, հանգստի և ազատ ժամանակի կազմակերպման հետ կապված տարբեր խնդիրների, որոնք շատ հաճախ փոխկապված են և ստանում են տարբեր դրսևորումներ: Մեծացել է միայնակ մարդկանց,-մայրերի և ամուսնությունից դուրս ծնված երեխաների թիվը: Վերը նշված խնդիրների և ընտանիքի դերի փոփոխությունների (արժեզրկման) արդյունքում մեծացել է ամուսնալուծությունների թիվը:

Ընտանիքի կարևոր, տարբերակվող, բնութագրական հատկանիշը սերն է, որն ընկած է նրա հիմքում: Երեխան չի կարող լիար-

ժեք ապրել ու մեծանալ առանց ընտանիքի, ծնողների: «Երեխայի համար մոր սիրտն է ցավում, հոր՝ ձեռքերը»[79]:

Բ. Սպոկը, դաստիարակության գործում կարևորելով ծնողների զգացմունքը երեխաների նկատմամբ, համարում է, որ «այն ունի նույն նշանակությունը երեխայի էմոցիոնալ զարգացման համար, ինչպես մայրական կաթը՝ ֆիզիկականի»[80]: Ա. Ս. Մակարենկոն համոզված էր. «Ծնողական պահանջները ձեր անձի, ծնողական հարգանքն ընտանիքի, ծնողական հսկողությունը ձեր կողմից կատարած ամեն մի քայլի նկատմամբ համարվում են դաստիարակության առաջին և գլխավոր մեթոդները, և եթե ինչ-որ բան այն չէ ձեր երեխայի հետ, նախապես պետք է ձեզ մանրադիտակով դիտարկեք»[81]:

Ծնողներն եղել և մնում են երեխաների առաջին պաշտպաններն ու դաստիարակները: Անկասկած, ընտանիքում առկա են թաքնված, դաստիարակչական խորը հնարավորություններ:

Վերջապես, որքան ամուսիններն ընտանիքի գործառույթների իրականացման գործում փորձում են հավասարաչափ ջանքեր ներդնել (յուրաքանչյուրն իր հնարավորություններին համապատասխան), այնքան ընտանիքն ամուր է և կայուն, ընտանեկան կյանքը՝ հետաքրքիր, հարաբերությունները՝ կանոնավորված:

Այն բոլոր հիմնախնդիրները, որն ունի ժամանակակից ընտանիքը, և որոնց անխուսափելիորեն առնչվում է սոցիալական մանկավարժն ընտանիքի հետ աշխատանքում, առնչվում են ընտանիքի հարմարմանը հասարակության մեջ: Հարմարման գործընթացի

---

[79] Արևելքի ժողովուրդների առածներ և ասացվածքներ, Եր., 1969, էջ 32:

[80] **Василькова Ю. В.,** Социальная педагогика: Курс лекций. Учеб пособие для студ., М., 2004, стр. 323.

[81] Տե՛ս նույն տեղում:

բնութագրման հիմքում հանդես է գալիս ընտանիքի կարգավիճակը, որի մեջ են մտնում կառուցվածքային և գործառութային մի շարք բնութագրումներ, ընտանիքի անդամների փոխազդեցություններն ու փոխգործակցությունները, ինչպես նաև ընտանիքի անդամների անհատական առանձնահատկությունների վերլուծությունը:

Կարելի է առանձնացնել ընտանիքի կառուցվածքային հետևյալ բնութագրումները՝ ամուսնական զույգերի առկայություն, ընտանիքի կյանքի գոյության ընթացքը, սերունդների, երեխաների քանակն ընտանիքում և ճկուն հարմարվողականության, ընտանեկան հիմքերի ու ավանդույթների կարծրացման, լիակատար քաոսի ու հնարավոր այլ վիճակները:

Ընտանիքի հետ սոցիալական մանկավարժն աշխատում է հանրակրթական, հատուկ հաստատություններում, մանկատներում, ընտանիքի և երեխաների աջակցության կենտրոններում, ընտանիքի վերականգնողական և այլ սոցիալական ծառայություններում, պետական և ոչ պետական կառույցներում: Սոցիալական մանկավարժը սոցիալական տարբեր ծրագրերում կարող է հանդես գալ որպես բազմամասնագիտական խմբի անդամ:

Սոցիալական մանկավարժի աշխատանքի հիմնական նպատակներն են՝ ընտանիքի և նրա անդամների պաշտպանությունը (հատկապես երեխաների պաշտպանությունը), ընտանիքի ներուժի բացահայտումն ու օգտագործումը, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների կարգավորումն ու վերականգնումը, արդյունավետ փոխգործակցությունների ապահովումը:

Դիտելով ընտանիքը որպես սոցիալական համակարգ՝ սոցիալական մանկավարժը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ գործոններին, որոնք ընտանիքին գործառական այս կամ այն հնարավորությունն են տալիս, դրանք են.

- սոցիալ-տնտեսական գործոնները,
- ընտանիքի անդամների սոցիալական դերերը, այն կանոնները, որոնց միջոցով կարգավորվում է ընտանիքի անդամների վարքը,
- ընտանիքի հաղորդակցման ցանցը, շփումները, ընտանիքի ներսում գոյություն ունեցող ենթահամակարգերը,
- ընտանիքի կարիքները (ֆիզիկական և էմոցիոնալ), ընտանեկան արժեքները, ձգտումներն ու նպատակները:

Կառուցվածքային և գործառական բնութագրումների հետ մեկտեղ, որոնք ամբողջությամբ ազդում են ընտանիքի կենսագործունեության վրա, սոցիալական մանկավարժի գործունեության համար կարևոր են նաև ընտանիքի անդամների անհատական առանձնահատկությունները (ազգություն, տարիք), զարգացման մակարդակը (կրթական, ֆիզիկական, հոգեբանական), հետաքրքրություններն ու այլ հնարավորությունները: Ընտանիքի անդամների անհատական առանձնահատկությունների համադրումը՝ նրա կառուցվածքային և գործառական բնութագրումներով, ընկած է ընտանիք ամբողջական բնութագրման հիմքում և հանդես է գալիս որպես ընտանիքի կարգավիճակ: Ըստ Մ. Ա. Գալագուզովայի՝ ընտանիքի ունեցած կարգավիճակը բնութագրում է նրա հարմարման հնարավորությունները հասարակության մեջ[82]:

Մ. Ա. Գալագուզովան ընտանիքի սոցիալական հարմարման առաջին բնութագրիչը համարում է ընտանիքի նյութական դրությունը: Ընտանիքի նյութական բարեկեցության գնահատականը, որը ձևավորվում է դրամական և ունեցվածքային ապահովվածությունից, անհրաժեշտ որակական և քանակական մի քանի չափա-

[82] Социальная педагогика: Курс лекций / Под общей ред М. В. Галагузовой, М., Гуманит изд. центр Владос, 2000, стр. 174.

նիշներ ևս ունի՝ ընտանիքի եկամտի քանակը, բնակարանային պայմանները և այլն: Եթե ընտանիքի եկամտի մակարդակը ցածր է, բնակարանային, կենցաղային պայմաններն անբարենպաստ են և ցածր որոշակի հաստատագրված նորմերից, ապա այդպիսի ընտանիքը համարվում է աղքատ, նրա սոցիալ-տնտեսական կարգավիճակը՝ ցածր:

Սոցիալական հարմարման երկրորդ բաղադրիչը պայմանավորված է ընտանիքի սոցիալ-հոգեբանական դրությամբ: Դա քիչ թե շատ զգայական հաստատուն վիճակն է, որը ձևավորվում է որպես արդյունք ընտանիքի անդամների տրամադրության, նրանց հոգեկան ապրումների, միմյանց և ուրիշների նկատմամբ հարաբերությունների, աշխատանքի, տարբեր իրադարձությունների նկատմամբ դիրքորոշումների և այլն: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական կարգավիճակը գնահատել կարողանալու համար նպատակահարմար է տարանջատել բոլոր փոխհարաբերությունները (ամուսնական փոխհարաբերություններ, երեխա-ծնող փոխհարաբերություններ, շրջապատի, մարդկանց նկատմամբ փոխհարաբերություններ և այլն) առանձին-առանձին, անգամ ըստ գործունեության ոլորտների, նրանցում մասնակցող սուբյեկտների սկզբունքների և արժեքների:

Որպես կարևոր բնութագրական ցուցանիշներ՝ ընդգծվում են.

- էմոցիոնալ հարմարավետության մակարդակը,
- տագնապայնության աստիճանը,
- փոխհամաձայնության, միմյանց նկատմամբ հարգանքի աստիճանը,
- աջակցության, օգնության, ապրումակցման և փոխազդեցության աստիճանն ընտանիքի ներսում և նրանից դուրս,
- ժամանցի ու հանգստի անցկացման և կազմակերպման տեսակը, ընտանիքի բաց լինելը և այլն:

Բարենպաստ են համարվում այն հարաբերությունները, որոնք կառուցված են իրավահավասարության, համագործակցության սկզբունքով, որտեղ դրսևորվում է անձի իրավունքների նկատմամբ հարգանք, որտեղ ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ կապվածությունը նկատելի է, կա զգայական մերձեցում, և ամենակարևորը, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամին բավարարում են այդպիսի հարաբերությունները: Այս դեպքում ընտանիքի սոցիալ-հոգեբանական կարգավիճակը գնահատվում է բարձր:

Ընտանիքի սոցիոմշակութային մակարդակը համարվում է բարձր, եթե ընտանիքն իրականացնում է ավանդույթների, սովորույթների և տոների պահպանողի իր դերը, նպաստում և մասնակցում է ընտանիքի անդամների հոգևոր պահանջմունքների բավարարմանն ու զարգացմանը, երբ ընտանիքում ռացիոնալ կերպով կազմակերպված են կենցաղը, հանգիստը, ընտանիքի անդամները տիրապետում են հանգստի և կենցաղի գործունեության համատեղման տարբեր ձևերին, ընտանիքը կողմնորոշված է դեպի երեխայի ու մյուսների համակողմանի (գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային) դաստիարակությանը և աջակցում է առողջ ապրելակերպին: Եթե ընտանիքի հոգևոր պահանջմունքները զարգացած չեն, հետաքրքրությունների շրջանակը սահմանափակ է, կենցաղն անկազմակերպ է, բացակայում են ընտանիքը միավորող մշակույթը, ժամանցի և աշխատանքային գործունեությունը, թույլ են ընտանիքի անդամների վարքի կարգավորիչները (կիրառում են կարգավորման բռնի մեթոդներ), ընտանիքը վարում է անառողջ, անպարենպաստ կենսագործունեություն, ապա նրա սոցիոմշակութային մակարդակը ցածր է:

Հաջորդ ցուցանիշը, որը բնութագրում է ընտանիքը, իրադրադերային հարմարումն է, որը կապված է ընտանիքում երեխայի

նկատմամբ դրսևորված վերաբերմունքի, երեխաների և ընտանիքի մյուս անդամների համարժեք (ադեկվատ) փոխհարաբերությունների, դերային գործառույթների իրականացման հետ: Երբ ընտանիքում երեխայի նկատմամբ դրսևորվում է հոգատար, հարգալից վերաբերմունք, երեխա-ծնող փոխհարաբերությունները կառուցվածքային են, երեխաների հիմնախնդիրների լուծման նկատմամբ ընտանիքի կողմից ցուցաբերվում են ակտիվություն և բարձր կուլտուրա, ապա նրա իրադրադերային կարգավիճակը բարձր է: Եթե երեխաների հետ փոխհարաբերություններում առկա է շեշտադրում երեխայի հիմնախնդիրների վրա, ապա կարգավիճակը միջին է, իսկ եթե անտեսվում են երեխայի կարիքներն ու խնդիրները, երեխայի նկատմամբ դրսևորվում է բացասական վերաբերմունք, նրա հետ հարաբերություններն ուղեկցվում են ցածր կուլտուրայով և ակտիվությամբ, ապա կարգավիճակը համարվում է ցածր:

Ընտանիքի կառուցվածքային և գործառական բնութագրումների վերլուծության, ինչպես նաև նրա անդամների անհատական առանձնահատկությունների հիման վրա որոշվում է նրա գործառական (ֆունկցիոնալ) - կառուցվածքային տեսակը, որն իր հերթին հնարավորություն է տալիս համապատասխան եզրակացություն անելու ընտանիքի, հասարակության մեջ նրա սոցիալական հարմարման մասին:

Սոցիալ-մանկավարժական աշխատանքի գործունեության օբյեկտ կարող են լինել երեխան ընտանիքում, ընտանիքի մյուս անդամները, ընտանիքն ամբողջությամբ, ինչպես նաև համայնքը:

Սոցիալական մանկավարժի գործունեությունն ընտանիքի հետ, ըստ Մ. Ա. Գալագուզովայի, ներառում է 3 հիմնական օգնության (գործունեության) տեսակ՝ **կրթական, հոգեբանական** և **միջնոր-**

դավորված[83]: Դիտարկենք դրանք:

Կրթական օգնության տեսակը ներառում է սոցիալական մանկավարժի գործունեության երկու ուղղություն՝ օգնություն ուսուցման և դաստիարակության հարցերում:

Օգնությունն ուսուցման մեջ ուղղորդված է ընտանեկան հիմնախնդիրների առաջացման կանխարգելմանը և ծնողների մանկավարժական կուլտուրայի ձևավորմանը:

Առավել տիպիկ և շատ հանդիպող սխալները դաստիարակության մեջ ոչ լրիվ պատկերացումներն են դաստիարակության նպատակների, խնդիրների և մեթոդների մասին: Միասնական պահանջների բացակայությունը դաստիարակության վերաբերյալ ընտանիքի բոլոր անդամների կողմից, երեխայի նկատմամբ կույր սերը, անչափ խստության դրսևորումը ճգնաժամային տարիքում, ծնողների վեճերը, մանկավարժական տակտի բացակայությունը երեխաների հետ փոխհարաբերություններում, ֆիզիկական պատժամիջոցների կիրառումը և այլն կարող են առաջացնել մանկավարժական լուրջ հիմնախնդիրներ: Այստեղ սոցիալական մանկավարժի գործունեությունը նախատեսում է ծնողների հետ լուսաբանել հետևյալ հարցերը.

- երեխաների դաստիարակության հարցում ծնողների մանկավարժական և սոցիալ-հոգեբանական նախապատրաստվածությունը,
- ծնողների անձնական օրինակների և հեղինակության դերն ու նշանակությունը երեխայի դաստիարակության գործում, մոր և հոր դերերի կատարման ընթացքում մանկավարժական հնարավոր ներգործությունները,

---

[83] Социальная педагогика: Курс лекций /Под общей ред. М. В. Галагузовой, М., 2000, стр. 176.

- ծնողների, ընտանիքի մյուս անդամների, տարբեր սերունդների հետ դրական փոխհարաբերությունների կարևորությունը,
- երեխաների բարոյական, ֆիզիկական, գեղագիտական, սեռական դաստիարակության կարևորությունը,
- երեխաների համար ժամանցի և հանգստի կազմակերպման, զարգացման առանձնահատկությունների, ալկոհոլիզմի, թմրամոլության պատճառների և հետևանքների հետ կապված հիմնախնդիրները:

Այս տեսակի գիտելիքների հաղորդումը սոցիալական մանկավարժը կարող է կազմակերպել ինքնուրույն կամ այլ մասնագետների օգնությամբ, կարող են գործնական պարապմունքներ անցկացնել, որոնք որոշ չափով կօգնեն ծնողներին, ընտանիքին:

Օգնությունը դաստիարակության գործում սոցիալական մանկավարժն իրականացնում է տարբեր խորհրդատվությունների կազմակերպման միջոցով: Երեխաների, նրանց ծնողների հետ ստեղծում է դաստիարակչական հատուկ իրադրություններ (որպեսզի ընտանիքին օգնությունը ժամանակին լինի)՝ նպատակ ունենալով առավելագույն կերպով օգտագործել ընտանիքում առկա ռեսուրսները, ինչպես նաև ամրապնդել ընտանիքի դաստիարակչական ներուժը:

Ընտանեկան կյանքի հիմնական ոլորտները, որտեղ իրականանում է դաստիարակչական գործառույթը, ծնողական պարտականությունների, սիրո և հետաքրքրությունների ոլորտներն են: Այս ոլորտներում ակտիվ, բովանդակալից կենսագործունեության բացակայությունը զրկում է ընտանիքին երեխաների վրա արդյունավետ ազդեցության հնարավորությունից: Այս ոլորտներից որևէ մեկի շեշտադրումը նույնպես վնասում է դաստիարակության գործընթա-

ցին՝ զրկելով նրան ամբողջականությունից և համակարգվածությունից:

Պարտականությունների բովանդակությունը բացահայտվում է մեծերի և երեխաների, միմյանց ու մյուսների նկատմամբ պատասխանատվության միջոցով: Ընտանեկան ընդհանուր հետաքրքրությունները միավորում են ծնողներին և երեխաներին մեկ համերաշխ կոլեկտիվում, որի հիմքն է համատեղ, արդյունավետ, ցանկալի և օգտակար գործունեությունը: Սերը դաստիարակվում է միայն սիրո մթնոլորտում, որն օրգանապես սնուցվում է երեխային, և որը ձևավորում է որոշակի կամային-զգայական վերաբերմունք՝ մարդկանց ու հասարակության նկատմամբ, վստահելի, փոխօգնող հարաբերություններ: Այսպիսով՝ ընտանեկան կյանքի հիմնական ոլորտների փոխկապվածության և փոխազդեցության զարգացումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնելու դաստիարակչական գործառույթները:

Սոցիալական մանկավարժի կողմից ընտանիքին օգնություն կազմակերպելու ընթացքում անհրաժեշտ է տարբերակել ծնողների կողմից իրականացվող դաստիարակչական մեթոդները և օգնությունը դարձնել ավելի համարժեք (ադեկվատ): Հայտնի է, որ ընտանեկան դաստիարակության մեթոդները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը կազմում են ամենօրյա հաղորդակցման մեթոդները, աշխատանքային վստահելի փոխգործունեությունը և փոխազդեցությունները: Սոցիալական մանկավարժը ծնողներին պետք է ներկայացնի, թե ինչպիսի միջոցներով, ինչ պայմաններում դրանք կարելի է կիրառել: Մեթոդների երկրորդ խումբը կազմում են մանկավարժական և հոգեբանական այն մեթոդները, որոնք երեխայի անձի վրա ազդում են գիտակցության և վարքի շտկման նպատակով: Այստեղ որպես միջոց կարելի է օգտագործել պարզա-

բանումները, բացատրությունները, ուրախության զգացման արթնացումը, երազանքի իրականացումը, հարաբերություններում լարվածության մեղմացումը և այլն: Երեխաների մոտ պետք է արթնացնել խղճի, արդարության զգացում, զարգացնել ինքնասիրության, խղճահարության, գթասրտության, քաջության դրսևորումներ՝ օգտագործելով պատժի, խրախուսանքի միջոցները և այլն:

Հոգեբանական օգնությունը ներառում է երկու բաղադրիչ՝ սոցիալ-հոգեբանական աջակցություն և շտկում: Աջակցությունն ուղղված է անգամ կարճաժամկետ ճգնաժամի ընթացքում ընտանիքում բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը: Սոցիալական մանկավարժը կարող է ինքնուրույն կամ հոգեբանի հետ միասին կազմակերպել այդ աջակցությունը: Առավել արդյունավետ է այն աշխատանքը, երբ ընտանիքին օգնում են համալիր կերպով: Սոցիալական մանկավարժը որոշում է խնդիրը, պարզաբանում է ընտանիքում միջանձնային հարաբերությունները, երեխայի դիրքն ընտանիքում, ընտանիքի հարաբերությունները հասարակության հետ, իսկ հոգեբանը բացահայտում է այն հոգեկան փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ընտանիքի ամեն մի անդամի հետ, որոնք միջանձնային փոխհարաբերություններում բերում են բախումների, լարվածությունների, այնուհետև նրանք համատեղ անցնում են խնդրի լուծմանը:

Միջանձնային հարաբերություններում շտկումը կատարվում է այն դեպքում, երբ ընտանիքում գոյություն ունի հոգեկան բռնություն երեխայի նկատմամբ, որը շատ հաճախ բերում է նրա ֆիզիկական և հոգեկան խանգարմանը: Մինչև վերջին ժամանակներս այս երևույթին պատշաճ ուշադրություն չի դարձվել: Այսպիսի բռնությունների թվին են պատկանում դեռահասներին վիրավորելը, վախեցնելը, հանցագործ խմբերի մեջ նրանց ներգրավելը, պատվի

և արժանապատվության նվաստացումը, անվստահությունը և այլն: Սոցիալական մանկավարժը պետք է կարողանա այնպես շտկել հարաբերությունները, որ ընտանիքում ստեղծվեն պայմաններ, որոնք հիմնված են միայն հարգանքի, մարդկային արժանապատվության և իրավունքների պաշտպանության վրա:

Սոցիալ-հոգեբանական շտկումը հասարակության և ընտանիքի միջև փոխհարաբերությունների առումով հետևյալն է՝ օգնել ընտանիքի անդամներին՝ հասկանալու, թե ինչպես կարող են նրանք համագործակցել, փոխգործակցել հասարակությունում, հասարակության անդամների հետ և ինչպես դրանք դարձնել ավելի կառուցողական:

Միջնորդավորված օգնության այս տեսակը ներառում է օգնության կազմակերպման երեք ենթատեսակ՝ կազմակերպչական, համակարգող (կոորդինացնող) և տեղեկատվական օգնություն: Կազմակերպչական օգնությունն ուղղված է ընտանեկան ժամանցի կազմակերպմանը, ընտանեկան, ավանդական տոների, հանգստի, բարեգործական ակցիաների, առք ու վաճառքի կազմակերպմանը և այլն:

Համակարգող օգնությունն ուղղված է տարբեր վարչություններ-ի, ծառայությունների ակտիվացմանը, որոնք անհրաժեշտ են հիմնախնդրի լուծման համար: Այդպիսի հիմնախնդիրներ կարող են լինել խնամատար կամ խնամակալ ընտանիքի հետ աշխատանքների կազմակերպումը, որդեգրումը, երեխաների հանձնումն այլ կառույցներին և այլն, օրինակ՝ ցերեկային կամ գիշերային խնամքի կենտրոններ, ժամանակավոր կացարաններ, ընդունիչ-բաշխիչ կողմնորոշող կենտրոններ, կանանց համար ապաստաններ, սոցիալական հյուրանոցներ և այլն:

Տեղեկատվական օգնությունն ուղղված է ապահովելու ընտանիքին անհրաժեշտ տեղեկատվությամբ, հիմնականում սոցիալա-

կան պաշտպանության հետ կապված հարցերի առումով, և այն իրականացվում է հիմնականում խորհրդատվության տեսքով: Հարցերը կարող են վերաբերել կյանքի, ընտանիքի, ամուսնության, քաղաքացիական, կենսաթոշակային օրենսդրությանը, երեխաների, կանանց, հաշմանդամների իրավունքներին և ընտանիքի ներսում գոյություն ունեցող այլ հիմնախնդիրներին:

Ընտանիքի հետ աշխատանքում նկատելիորեն կարևորվում է խորհրդատվության դերը, որն իրականացվում է երեխայի սոցիալականացման և դաստիարակության, շտկողական, կանխարգելող, զարգացնող գործընթացներին առնչվող խնդիրների լուծման, միջանձնային հարաբերություններում բախումների նախազգուշացման և կարգավորման, տարբեր իրավիճակներում տագնապայնության, հուզական լարվածության թուլացման ժամանակ: Ընտանիքի հետ խորհրդատվական աշխատանքները նպատակ ունեն օգնելու երեխաներին, ծնողներին, ընտանիքին՝ արդյունավետ լուծելու սոցիալ-մանկավարժական տարբեր հիմնախնդիրները, որոնց մշտապես առնչվում են նրանք:

Նշված աշխատանքներում սոցիալական մանկավարժն իրականացնում է ախտորոշիչ, կանխատեսող, միջնորդող, շտկող-վերականգնող, հսկող-պահպանող, նախազգուշացնող-կանխարգելող և այլ գործառույթներ, որոնք պայմանավորված են հիմնախնդիրների առանձնահատկություններով, դրանց արտահայտվածության, ընդգրկունության և խորության աստիճանով, ընտանիքի կառուցվածքով, նյութական վիճակով, ընտանիքում գոյություն ունեցող ներքին հարաբերությունների, փոխազդեցությունների բնույթով և այլն:

Այսպիսով՝ ընտանիքի հետ աշխատանքի արդյունքում սոցիալական մանկավարժը կարող է օգնել լուծել գոյություն ունեցող

տարբեր հիմնախնդիրները, կանխարգելել ընտանեկան անբարենպաստ զարգացումները, վերականգնել, վերափոխել ընտանեկան հարաբերությունները, փոխազդեցությունները, ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ՝ ուղղված հասարակության մեջ ընտանիքի, նրա առանձին անդամների հարմարմանը, նրանց գործառական հնարավորությունների բարձրացմանն ու կայունացմանը, ունենալ ակտիվ դերակատարություն ընտանիքի աջակցության և սատարման գործընթացներում:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Միջանձնային հարաբերություններ, մոդել, սոցիալական համակարգ, խորհրդատվություն:

ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են ընտանիքի հիմնական գործառույթները, նշե՛ք դրանց առանձնահատկությունները:

2. Որո՞նք են ընտանիքի կենսափուլերը, տվե՛ք դրանց բնութագրումները:

3. Ներկայացրե՛ք ընտանեկան դաստիարակության նշանակությունը երեխայի կյանքում:

4. Որո՞նք են ընտանիքի կարգավիճակը բնութագրող հարմարման տեսակները, առանձնացրե՛ք դրանք՝ ըստ համապատասխան աստիճանների:

5. Որո՞նք են ընտանիքի հետ սոցիալական մանկավարժի գործունեության տեսակները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Քննարկե՛ք լսարանում այն հիմնախնդիրները, որոնք այսօր առկա են հայ ընտանիքներում, և որոնք ստեղծում են խնդիրներ հատկապես երեխաների համար:

2. Քննարկե՛ք լսարանում երեխաների հետ կապված այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ ընտանիքի տարբեր կենսափուլերում:

3.8. Սոցիալական մանկավարժի աշխատանքը հանրակրթական դպրոցում

Կրթությունը հասարակական զարգացման որոշիչ և հիմնական ցուցանիշ է, որի բովանդակությունը, կառուցվածքը, գործառույթները չեն մնում անփոփոխ, այլ ձևափոխվում են՝ կապված քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական զարգացումների հետ, փոփոխվում է դպրոցի նկատմամբ հասարակության պահանջը: Դպրոցը նոր հասարակություն է կրթում և դաստիարակում, ուստի պահանջվում է համաձայնություն միջազգային կրթական չափանիշներին և սկզբունքներին, իրականացվում են նաև ազգային դպրոցի կայացմանն ու տնտեսության մեջ հաստատվող շուկայական հարաբերությունների զարգացմանն ուղղված ռազմավարություններ:

Դպրոցում են ձևավորվում այնպիսի արժեքներ, որոնք անհրաժեշտ են երեխաներին իրենց հետագա կենսագործունեության համար: Դպրոցը միջամտում է անձի ազատ ընտրության ձևավորմանը, դպրոցում երեխան զարգանում է ֆիզիկապես, մտավորապես, հոգեպես: Դպրոցում երեխան հանդիպում է բազմաթիվ հիմնա-

խնդիրների, որոնք հասարակության մեջ տիրող տարբեր սոցիալական երևույթների, փոփոխությունների, փոխհարաբերությունների արդյունք են, որոնց զանազան կողմերը շոշափվում, համադրվում, տարանջատվում են հենց դպրոցում՝ տարբեր համակարգերում առաջացնելով փոփոխություններ, դժվարություններ, հիմնախնդիրներ:

«Մեր օրերում սոցիալական մանկավարժության տեսության և պրակտիկայի կարիքը (պահանջը) չի անհետացել, այլ, ընդհակառակը, ուժեղացել է, քանի որ մի կողմից մեծացել է սոցիալական գործոնների ազդեցությունը հասարակության և առանձին մարդկանց վրա, մյուս կողմից չի նվազել, այլ մեծացել է այն երեխաների ու հասարակության հասուն անդամների թիվը, որոնք ընդհանրապես սոցիալական պաշտպանության, հատկապես սոցիալ-մանկավարժական օգնության կարիքն են զգում»[84]: Այդ իսկ պատճառով սոցիալ-մանկավարժական գործունեությունն իրականացվում է տարբեր մակարդակներում (մակրո, մեզո, միկրո), «որտեղ (պայմանավորված օբյեկտի առանձնահատկությամբ) հատուկ տեղ են զբաղեցնում անհատների, խմբերի կրթադաստիարակչական հիմնախնդիրները, որոնց սոցիալականացումը խախտված է, և որոնք ունեն մանկավարժական օգնության կարիք»[85]:

Սոցիալ-մանկավարժական գործունեության թիրախը ակնհայտորեն դպրոցն է՝ իր գործառական ռեսուրսների (երեխաներ, ծնողներ, ուսուցիչներ, համայնք և այլն) ամբողջությամբ: Դպրոցի գործունեությունը կարգավորված է: Այնտեղ տարբեր մասնագետների կողմից իրագործվում են սովորողի ներքին հոգեվիճակի, նրա ան-

---

[84] Социальная педагогика: Учеб. для студ. высш. учеб. заведений: /Под ред. В. А. Никитина, М., 2000, стр. 27.
[85] Նույն տեղում, էջ 32:

ձի ձևավորման ու զարգացման ուղղվածությամբ կրթադաստիարակչական գործընթացներ:

Հայաստանում դպրոցն իրականացնում է 12-ամյա կրթություն, որտեղ կուտակվում են բազմաթիվ խնդիրներ՝ կապված սովորողների հարմարման, տեղաշարժի, կրթական ծրագրերի, գնահատման, մասնագիտական կողմնորոշման, սովորողների նկատմամբ առաջադրված նոր պահանջների հետ:

Այսօր արդիական է դարձել սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների կրթության կազմակերպման հարցը, և առաջադրվում է կրթական հատուկ կարիքներին համապատասխան սոցիալ-մանկավարժական աշխատանքներ և ծառայություններ իրականացնելու անհրաժեշտությունը դպրոցում, ինչը նկատելիորեն ընդգծում է սոցիալական մանկավարժի դերը բազմամասնագիտական թիմում:

Դպրոցում աշխատող սոցիալական մանկավարժից առանձնահատուկ ուշադրություն է պահանջվում մի խումբ գործոնների նկատմամբ, քանի որ դրանց առկայությունը հիմնականում պատճառ է դառնում խոցելիության, սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների, հոգեկան լարվածության, տարբեր անբարեհարմարությունների առաջացման: Առանձնացնենք այդ գործոնները:

Առաջին խումբն ընդգրկում է ընտանեկան անբարենպաստ պայմանները: Սոցիալ-տնտեսական ճգնաժամի պատճառով ընտանիքի հնարավորությունները բավականին սահմանափակ են դարձել: Ժամանակակից ընտանիքն ապրում է դժվարին ու ծանր ժամանակաշրջան: Հիմնական ուժերն ու ժամանակը ծնողները ծախսում են միայն նյութական ապահովման, բայց ոչ երեխաների հոգևոր զարգացման և երեխայի անձի ձևավորման վրա: Ոչ կայուն նյութական վիճակը, գործազրկության վտանգը, դրանով պայմա-

նավորված նյութական և հոգեբանական խնդիրները, կենցաղային լարվածության մեծացումն իրենց դրսևորումներն են գտնում երեխաների և ծնողների փոխհարաբերություններում: Միջանձնային հարաբերություններում նկատվում է բախումների, լարվածության մեծացում: Ազգակցական կապերի խզումն էլ իր հերթին բարդացնում է սերունդների փոխհարաբերությունները, բացասականորեն անդրադառնում աճող սերնդի սոցիալականացման գործընթացի, մշակութային և հոգևոր ավանդույթների փոխանցման, փոխգործողության, համագործակցության, ընդունակությունների և այնպիսի որակների ու հատկությունների դաստիարակության վրա, ինչպիսիք են՝ այլասիրությունը (ալտրուիզմ), մարդասիրությունը (հումանիզմը) և այլն, անգամ թուլանում կամ խարխլվում է սոցիալական նորմերի հեղինակությունը:

«Ներկա պայմաններում ավելի անհրաժեշտ է դառնում արհեստավարժ հոգեբանների, սոցիալական մանկավարժների, սոցիալական աշխատողների և այլ մասնագետների կողմից երեխաների դաստիարակության գործում օգնությունը ծնողներին: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նշված մասնագետների խորհրդատվության կարիք զգում են ոչ միայն անբարենպաստ, այլ նաև լիովին բարենպաստ ընտանիքները»[86]:

Գոյություն ունեն ընտանիքներ, որտեղ գլխավոր ուշադրությունը երեխայի նյութական ապահովվածությունն է, որտեղ անդամների հարաբերությունները զուրկ են հոգևոր հիմքերից: Հույս ունենալով, որ իրենց ապագան ապահովված է, երեխաները լիովին չեն օգտագործում իրենց հնարավորությունները և իրենց ազատ ժամանակը լրացնում են այլ հետաքրքրություններով: Կան շատ ծնողներ,

---

[86] Социальная педагогика: Курс лекций /Под общей ред. М. А. Галагузовой, М., 2000, стр. 167.

որոնք սահմանափակում են երեխաների գործունեության ոլորտները:

Երկրորդ խմբի մեջ են մտնում դպրոցի աշխատանքներում տեղ գտած թերությունները, որոնք պատճառ են դառնում ուսման, աշխատանքի նկատմամբ բացասական դիրքորոշումների առաջացմանը: Այսօր սկսել են գործել ցերեկային տարբեր կենտրոններ, որոնք կարծես փորձում են լրացնել ուսման և դաստիարակության մեջ առկա բացթողումները, սակայն, դրանք պետք է լինեն դպրոցներին կից, դպրոցական գործընթացում գտնվող մասնագետների, ծնողների մասնակցությամբ: Շատ հաճախ ուսուցիչները դժվարանում են կողմորոշվել, թե ինչ է կատարվում աշակերտների հետ: Ավելին, երբեմն հենց իրենք են ստեղծում հիմնախնդիրներ, քանի որ նրանց կողմից չի ճանաչվում, օբյեկտիվորեն չի գնահատվում աշակերտի զարգացման մակարդակը, նրա հնարավորությունները, համոզմունքները ու պահանջմունքները: «Չեն պարզաբանվում յուրաքանչյուր աշակերտի ետ մնալու հոգեբանական-մանկավարժական և այլ կոնկրետ պատճառները, որոնք հաճախ տարբեր են լինում և պահանջում են անհատական մոտեցում»[87]:

Հաճախ բացակայում են մանկավարժական տակտն ու վարպետությունը, ստեղծվում են հակասություններ ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-հանրույթ փոխհարաբերություններում, որի արդյունքում սահմանափակվում են նրանց համագործակցության հնարավորությունները:

Հասարակության մեջ տիրող տարբեր հարաբերություններն իրենց արտահայտությունն են գտնում դպրոցում, տարբեր է մանկավարժական կոլեկտիվի անդամների մանկավարժական և սոցիալական ակտիվությունը, որի հետևանքով ուսուցիչ-ուսուցիչ, ու-

---

[87] Մանկավարժության ընդհանուր հիմունքներ (ուսումնական ձեռնարկ բուհերի համար), (խմբ.՝ Հ. Մ. Մախչանյան), Եր., 1997, էջ 80:

սուցիչ-կոլեկտիվ հարաբերություններում ևս կարող են առաջանալ տարբեր դժվարություններ ու հիմնախնդիրներ: Դրանք այսօր կարող են առավել հաճախ դրսևորվել՝ կապված ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ ավանդական ու նոր մոտեցումների, ուսուցիչների նյութական և հոգևոր խթանման բացակայության հետ: Սակայն պետք է իմանալ և կարևորել այն, որ «Ծնողները զավակներին միայն ապրել են տալիս, իսկ ուսուցիչները՝ լավ ապրել»[88]:

Երրորդ խումբը համալրում են այն գործոնները, որոնք պայմանավորված են դպրոցականի ընկերական շրջապատի ազդեցությամբ: Դպրոցում աշակերտի մոտ առաջանում է տարբեր խմբերի, ընկերների հետ հարաբերություններ ձևավորելու, շփվելու անհրաժեշտություն:

Դպրոցականի անձի զարգացման վրա շրջակա միջավայրի ազդեցությունը հանդես է գալիս կազմակերպված և տարերային: Դպրոցում, արտադպրոցական բոլոր հաստատություններում երեխաների հետ զբաղվում է մասնագետ մանկավարժը, որտեղ երեխան գտնվում է ուշադրության կենտրոնում, նա նաև ազատ է իր զբաղմունքի ընտրության մեջ, բացահայտվում են նրա պահանջմունքները, հնարավորությունները: Նման պարապմունքների շնորհիվ աշակերտները ձեռք են բերում մինչմասնագիտական կրթության հնարավորություն:

Արտաքին տարբեր բացասական ազդեցությունների նկատմամբ հատկապես մեծ է դեռահասների ընկալունակությունը: «Բակում, փողոցում ծնվում են հակահասարակական խմբավորումներ, որոնք բացասական ներգործություն են թողնում պատանիների և

---

[88] Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի, Խրատի թանգարան, Էջմիածին, 2004, էջ 428:

հատկապես անկայուն դեռահասների վրա»[89]:

Երբեմն այդ խմբավորումներից հեռանալը դեռահասների և պատանիների համար անհնարին է դառնում, մեծանում է ասոցիալ ազդեցությունների ռիսկի գործոնը: Որպես կանոն՝ «երեխան, կարծես թե անընդմեջ փնտրում և գտնում է այն միջավայրը, որը նրա համար քիչ թե շատ հարմարավետ է, որտեղ նրան ավելի լավ են հասկանում, որտեղ նրա հետ հարգալից են վերաբերվում և այլն: Այդ իսկ պատճառով նա կարող է մեկ միջավայրից տեղափոխվել մեկ այլ միջավայր»[90]:

Այսպիսով՝ առանձնացնելով դպրոցում հիմնախնդիրների առաջացմանը նպաստող գործոնները՝ նկատում ենք, որ սոցիալական մանկավարժի գործունեությունը դպրոցում անհրաժեշտություն է, որի նպատակն է.

- օգնել աշակերտներին, ուսուցիչներին, ծնողներին տիրապետել նոր մանկավարժական, սոցիալական հմտություններին,
- ծանոթացնել նրանց հասարակության մեջ իրենց սպասվող (իրենց համար նախատեսված) դերային, զարգացման հնարավորություններին,
- նպաստել սոցիալական, կրթական գործընթացների զարգացմանն ուսուցման, մասնագիտության ընտրության գործում,
- նպաստել մանկավարժական կոլեկտիվում հնարավոր լարվածության թուլացմանը,

---

[89] Մանկավարժության ընդհանուր հիմունքներ (ուսումնական ձեռնարկ բուհերի համար), (խմբ.՝ Հ. Մ. Մախչանյան), Եր., 1997, էջ 140:

[90] Социальная педагогика: Учеб. для студ. высш. учеб. заведений: /Под ред. В. А. Никитина, М., 2000, стр. 75.

- կազմել դպրոցական և համայնքային տարբեր ծրագրեր, մասնակցել դրանց իրականացմանը:

Այս նպատակների իրականացման համար սոցիալական մանկավարժը՝

- օգտագործում է խրախուսման, պատժի, վերլուծության, խորհրդատվության, ակտիվացման մեթոդները,
- իրականացնում է իր գործունեությունը հոգեբանների, բժիշկների, մասնագիտական կողմնորոշման խորհրդատուների սերտ համագործակցությամբ՝ միաժամանակ ձգտելով ներգրավել համագործակցության մեջ այն ուսուցիչներին, որոնք ցուցաբերում են հետաքրքրություն և ըմբռնում սոցիալ-մանկավարժական աշխատանքը,
- ցուցաբերում է բազմակողմանի օգնություն առանձին աշակերտների, աշակերտների խմբերի, աշխատում է ուսուցչական կոլեկտիվի, ծնողների և ծնողների խմբերի հետ,
- հաստատում է սոցիալ-մանկավարժական փոխներգործություն դպրոցում, դպրոցի շրջանակներից դուրս:

Սոցիալական մանկավարժը դպրոցում, իր գործունեության ընթացքում կատարում է հետևյալ գործառույթները՝

- ախտորոշիչ,
- կանխարգելող,
- միջնորդավորված,
- շտկող-վերականգնող,
- հսկող-պահպանող,
- նախազգուշացնող,
- օգնող-հայտնաբերող,
- պաշտպանող,
- վերահսկող:

Սոցիալ-մանկավարժական գործունեությունը նաև հասցեական է: Դպրոցում սոցիալ-մանկավարժական գործունեության բնորոշ առանձնահատկություններն են՝

- բազմագործունեությունը. ծավալում է բազմատեսակ, ամբողջական գործունեություն,
- գաղտնիությունը. ստացված տեղեկատվությունը պահպանվում է փակ համակարգում, ապահովում է գաղտնիքի պահպանման լրիվությունը,
- խորհրդառուի անանունությունը,
- օբյեկտիվությունը. հնարավորինս հաշվի են առնվում գոյություն ունեցող մեծ թվով փաստերը,
- ինքնուրույնությունը, երբ շատ դեպքերում գործունեությունն անկախ է դպրոցի, կրթության կառավարման և այլ իշխանական մարմիններից,
- ներկայացուցչական լինելը, երբ կապ է պահպանվում դպրոցում առկա բոլոր սոցիալական խմբերի ներկայացուցիչների հետ, հավաքվում և հաշվառվում են նրանց հետաքրքրությունների մասին տեղեկատվություններ:

Դպրոցում սոցիալ-մանկավարժական գործունեությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝ աշխատանք երեխաների, ընտանիքի, մանկավարժական կոլեկտիվի, երեխային շրջապատող միջավայրի հետ, ինչպես նաև համագործակցություն համայնքի, տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային կառույցների հետ և այլն:

Դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքն ընտանիքի հետ: Դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացման գործում շատ կարևոր է դպրոցի և ընտանիքի պահանջների միասնականությունը: Միասնական կազմակերպված գործու-

նեության արդյունքում դպրոցն ու ընտանիքը, ուսուցիչներն ու ծնողները դառնում են իսկական գործընկերներ, որտեղ յուրաքանչյուրն ունի իր որոշակի խնդիրները և իրականացնում է գործի իր մասը: Սոցիալական մանկավարժը, իմանալով երեխայի կարիքներն ու դժվարությունները, հաճախում է ընտանիքներ, խրախուսում է ծնողներին առավելագույնս օգտագործել դպրոցի հնարավորությունները: Այսպես, օրինակ՝ երեխան ուսումնառության ընթացքում ցուցաբերում է հատուկ հետաքրքրություն ինչ-որ առարկայի կամ գործունեության նպատմամբ: Սոցիալական մանկավարժն առաջարկում է օգտագործել դպրոցում առկա լրացուցիչ կրթության հնարավորությունները, կազմակերպում և տրամադրում է նրանց տարբեր տեսակի օգնություն և այլն: Առավել դժվարություն են ներկայացնում այն դեպքերը, երբ երեխաներն ու նրանց ընտանիքներն ունեն բարձր ռիսկի աստիճան՝ ըստ կարիքի բնույթի և աստիճանի: Այսպիսի իրավիճակներում անպայմանորեն համագործակցում են տաբեր մասնագետներ: Ծնողների հետ աշխատանքում սոցիալական մանկավարժը.

- օգնում է ծնողներին հասկանալ իրենց երեխաների կարիքները և դրանց բավարարման համար անհրաժեշտ միջոցները,
- օգնում է ընտանիքին անհրաժեշտ տեղեկատվությամբ, խորհրդատվությամբ,
- խթանում է ծնողների մասնակցությունը դպրոցի միջոցառումներին,
- ապահովում է ծնողների մասնակցությունը կրթական ծրագրերի կազմման գործին և այլն:

Իհարկե, «սոցիալական մանկավարժը չի կարող ընտանիքի փոխարեն լուծել նրա բոլոր հիմնախնդիրները, նա պետք է միայն

ակտիվացնի ընտանիքի գործունեությունն ընտանեկան հիմնախնդիրների լուծման գործում, հասնի ծագած հիմնախնդիրների գիտակցմանը, ստեղծի պայմաններ դրանց լուծման համար»[91]:

Դպրոցում սոցիալական մանկավարժն ուսուցիչների հետ աշխատանքում.

- կատարում է հետազոտական աշխատանքներ, մշակում տեղեկատվություն,
- մանկավարժի համաձայնությամբ և դպրոցի ղեկավարության գիտությամբ կազմակերպում է անանուն հարցումներ տարբեր թեմաներով, որի շրջանակներում տրվում է ուսուցչի մասնագիտական գործունեության, կազմակերպչական, դաստիարակչական գործի գնահատականը,
- մասնակցում է բոլոր խորհրդակցություններին, համագործակցում է ուսուցիչների և այլ մասնագետների հետ՝ աշակերտների կարիքների գնահատման և նրանց օգնություն ցույց տալու նպատակով,
- մասնակցում է այլընտրանքային կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:

Դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքը սովորողների և նրան շրջապատող միջավայրի (հասակակիցների) հետ:

Հասարակության մեջ ընթացող ակտիվ գործընթացները նպաստում են ավանդական ընտանիքի դերի թուլացմանը, որի պատճառով միշտ չէ, որ երեխաներն աջակցություն, խնամատարություն են ստանում իրենց ծնողների կողմից: Շատ հաճախ այդ բացը լրացվում է հասակակիցների, շրջապատի տարբեր մարդ-

[91] Социальная педагогика: Учеб. для студ. высш. учеб. заведений: /Под ред. В. А. Никитина, М., 2000, стр. 191.

կանց կողմից: Դպրոցականի կողմնորոշումը դեպի իր շրջապատը բավականին մեծ է, «առաջանում է հասակակիցների հետ շփման պահանջմունք, որն ունի ինքնահաստատման նպատակ, և այն անբարենպաստ պայմաններում կարող է հանգեցնել շեղվող վարքի տարբեր ձևերի...»[92]:

Եվ երբ դպրոցականին օգնություն է ցուցաբերվում, այն չի կարող սահմանափակվել միայն նրանով, որ ցուցաբերվել է օգնություն, այլ պետք է նաև ազդեցություն ունենա նրան շրջապատող միջավայրի վրա, եթե անհրաժեշտ է համագործակցել տարբեր կառույցների հետ: Այս դեպքում սոցիալական մանկավարժը.

- ճշտում է սովորողների հետաքրքրությունները, հնարավորությունները, պահանջմունքները, սովորողի և նրան շրջապատող միջավայրի հետ ունեցած հարաբերություններում առկա ռիսկի գործոնները,
- ուսումնասիրում և բացահայտում է միջավայրի տարբեր ազդեցությունները,
- օգնում է հաղթահարել ռիսկի գործոնները, որոնք ազդում են դպրոցականի զարգացման վրա,
- ճշտում է սովորողների մասնագիտական ուղղվածությունը,
- ըստ անհրաժեշտության միջավայր է ներմուծում այլ ռեսուրսներ,
- կազմակերպում է տարբեր խորհրդատվություններ միջավայրում առկա խնդիրների վերաբերյալ:

Դպրոցում սոցիալական մանկավարժի գործունեությունը խիստ մարդասիրական է, որի հիմքում ընկած են դպրոցականի առողջության պաշտպանության, մտքի, խղճի դավանանքի ազատության,

---

[92] Социальная педагогика: Курс лекций /Под общей ред. М. А. Галагузовой, М., 2000, стр. 167.

աշխատանքի, հանգստի, կրթության, մշակութային արժեքներին հաղորդակցվելու իրավունքները, այն պայմանների ստեղծումը, որոնք անհրաժեշտ են դպրոցականի ընդունակությունների, ստեղծագործական ներուժի, հնարավորությունների զարգացման համար:

«Սոցիալ-մանկավարժական գործունեությունը համարվում է գործընթաց, այդ իսկ պատճառով գործունեության արդյունքները չեն կուտակվում մի վայրկյանում, պահանջվում է ժամանակ դրված նպատակների և խնդիրների իրականացման համար»[93]:

Այսօր ժամանակն է բոլոր հանրակրթական դպրոցներում իրականացնել սոցիալ-մանկավարժական ծառայություններ, ձևավորել համապատասխան ենթակառույց, որտեղ տարբեր մասնագետների (սոցիալական մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, բուժաշխատող) կողմից կմատուցվեն որակյալ մասնագիտական ծառայություններ: Այսպիսի գործընթացներում հիմնախնդիրները կարող են առանձնացվել, մեկնաբանվել, տարբերակվել, բավականաչափ համակարգվել ըստ առաջացման պատճառների, հետևանքների, հստակ սահմանազատվել, որը կնպաստի սովորողի անձի ձևավորման, սոցիալականացման, զարգացման հետ կապված դժվարությունների, հակասությունների, խնդիրների հաղթահարմանը, նպատակադրված բարեփոխումների ուղղվածության կարգավորմանը, իրականացման ակտիվացմանը, նորարարությունների խթանմանը:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Սոցիալական միջավայր, համայնք, մանկավարժական կոլեկտիվ, երեխաների պաշտպանություն:

---

[93] Социальная педагогика: Учеб. для студ. высш. учеб. заведений: /Под ред. В. А. Никитина, М., 2000, стр. 172.

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն է կրթության դերն անձի զարգացման գործընթացում:
2. Ի՞նչ հիմնախնդիրներ կան հանրակրթական դպրոցում:
3. Ի՞նչ դերակատարություն ունի սոցիալական մանկավարժը դպրոցում:
4. Նշե՛ք սոցիալական մանկավարժի գործառույթները դպրոցում, տվե՛ք գործունեության նկարագիրը:
5. Ներկայացրե՛ք, խնդրեմ, սոցիալական մանկավարժի աշխատանքի ուղղությունները դպրոցում, այդ ուղղությունների առանձնահատկությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Լսարանում կազմակերպե՛ք հետևյալ թեմայի քննարկումը՝ «Ինչպե՞ս կհիմնավորե՛ք սոցիալական մանկավարժի գործունեության անհրաժեշտությունը դպրոցում»:

2. Ներկայացրե՛ք սոցիալական մանկավարժի աշխատանքը արտադպրոցական միկրոմիջավայրում:

3.9. Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները հատուկ և այլընտրանքային խնամքի հաստատություններում

Մանկության պաշտպանության գործում հիմնական դերը պատկանում է պետությանն ու հասարակությանը, որոնք ձևավորում են մանկության պաշտպանության ընդհանուր հայեցակարգը, հիմնական ուղղությունները, ապահովում իրավական և օրենսդրական հիմքերը:

Խորհրդային Միության փլուզումից հետո սոցիալական ապահովության միասնական ցանցի բացակայության, տնտեսության քայքայման, քաղաքական, տնտեսական կարգի փոփոխությունների, աղքատության, երկրաշարժի, պատերազմի հետևանքով ավելացավ որբ, լքված, անօթևան, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թիվը: Հետխորհրդային Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգն անկարող էր արագորեն արձագանքել տեղի ունեցած փոփոխություններին, առկա հիմնախնդիրներին և երեխաների կարիքներին: Դրա հետևանքով էլ առաջացան այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ երեխաների թափառաշրջիկությունն ու մուրացկանությունը, մանկական հանցագործությունները, իրավախախտումները, երեխաների վաղ ներառումը աշխատաշուկա, նրանց անտեսումը, ունեցած կարիքների բավարարման անկարողությունը և այլն, որոնց հետևանքով մեծ թվով երեխաներ հայտնվեցին խնամքի և կրթության հատուկ հաստատություններում: Այդպիսի հաստատությունների կարիքը զգացվում է հիմնականում ընտանիքի բացակայության կամ նրա անբարենպաստ լինելու պատճառով: Ընտանիքից դուրս խնամքը համարվում է ծայրահեղ միջոց, որովհետև հաստատության պայմաններում դժվար է կազմակերպել այնպիսի պայմաններ, ցուցաբերել անհատական մոտեցում, որը հնարավոր է միայն ընտանեկան միջավայրում:

ՀՀ կառավարությունը ստեղծել է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ, որը կազմված է Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովից՝ ազգային մակարդակում, Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններից՝ մարզային մակարդակում և խնամակալության և հոգաբարձության մարմիններից՝ որպես տեղական ինքնակառավարման մարմիններ:

«Ազգային մակարդակը պատասխանատու է երկրում երեխաների պաշտպանության ընդհանուր համակարգի գործառման, օրենսդրական բարեփոխումների, ռազմավարական պլանների, ընթացակարգերի և կանոնակարգերի մշակման, ինչպես նաև դրանց իրագործման հանդեպ ընդհանուր վերահսկողություն սահմանելու համար: Մարզային համակարգը տեղայնացնում է ազգային ծրագրերը՝ մարզի շրջանակներում: Համայնքային մակարդակը ապահովում է երեխաների (ընտանիքների) շահերի պաշտպանությունը որոշակի պարտականությունների և լիազորությունների շրջանակում»[94]:

Երեխաների պաշտպանության գլխավոր կառույցն ազգային մակարդակում Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովն է:

ՀՀ-ում որպես երեխայի պաշտպանության մեխանիզմեր նշվում են.

- երեխայի հարազատ ընտանիքին ուղղված աջակցությունը,
- խնամակալության և հոգաբարձության զարգացումը,
- որդեգրումը,
- «խնամատար ընտանիքի ինստիտուտի» հնարավոր զարգացումը»[95]:

Հայաստանի Հանրապետությունում որդեգրման, խնամակալության և հոգաբարձության գործընթացը կանոնակարգելու նպատակով ընդունվել են «Երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին», «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կա-

---

[94] Երեխաների պաշտպանության համակարգը Հայաստանում: Տեղեկագիրք, Եր., 2009, էջ 14:

[95] **Անտոնյան Մ., Գմյուր-Կարապետյան Ա., Դուրյան Ն.,** Երեխաների պաշտպանություն: Ուսումնաօժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար (խմբ.՝ Հարությունյան Ա.), Եր., 2009, էջ 115:

նոնադրությունը հաստատելու մասին» որոշումները, որոնցով առաջնորդվում է սոցիալական մանկավարժն իր գործունեության ընթացքում:

Երեխաների պաշտպանության հիմնահարցերի լուծման քաղաքականության հիմնական ուղղվածության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում երեխաների խնամքը, կրթությունը և պաշտպանությունն իրականացնող հաստատությունների գործունեության բարելավումը՝ հաշվի առնելով մանկատներում, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների թվի նվազեցման անհրաժեշտության խնդիրը: ՀՀ-ում երեխաների խնամքի և պաշտպանության ապահովումն իրականացվում է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 8 մանկատներում, խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 7 հաստատություններում, երեխաների ցերեկային հոգածության 2 կենտրոններում, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Տավուշի մարզի 4 ցերեկային կենտրոններում և այլ հասարակական, միջազգային բարեգործական կառույցներում:

Երեխայի պաշտպանությունն իրականացնող հիմնական ծառայությունների և կառույցների ցանկն այսպիսին է.

- անչափահասների ոստիկանական բաժանմունք,
- դատախազություն
- մարդու իրավունքների պաշտպան,
- բուժհիմնարկներ (առաջնային, երկրորդային),
- բժշկական, հոգեբանական կենտրոններ,
- մանկապարտեզներ, նախադպրոցական հաստատություններ,

- դպրոցներ, հատուկ դպրոցներ,
- ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներ,
- մանկատներ,
- անչափահասների որդեգրման հանձնաժողովներ, տեղական ինքնակառավարման խնամակալության հանձնաժողովներ,
- համայնքային կենտրոններ,
- սոցիալական ծառայության տարածքային գործակալություններ,
- ցերեկային խնամքի կենտրոններ,
- հասարակական կազմակերպություններ:

Նշվածներից յուրաքանչյուրն ուղղակիորեն պատասխանատվություն է կրում երեխայի պաշտպանության գործընթացում և ունի իր պարտականությունները՝ կապված տարբեր խնդիրների լուծման, դրանց ուսումնասիրության, վերահսկողության, կանխարգելման և իրավունքների պաշտպանության իրականացման հետ:

Սոցիալական մանկավարժը մանկատներում, երեխաների խնամքի և հոգածության, հատուկ կրթական, գիշերօթիկ հաստատություններում զբաղված է երեխաների բոլոր իրավունքների, առավել ևս կրթական և սոցիալական իրավունքների պաշտպանությամբ, ընդգրկված է գրեթե բոլոր գործընթացներում, աշխատում է տարբեր խմբերի, ծնողների, համայնքի, տեղական, մարզային և պետական, հասարակական կառույցների հետ:

Հիմնվելով հումանիզմի, բնահարմարության, մշակութահարմարության սկզբունքների վրա՝ սոցիալական մանկավարժն այդ հաստատություններում իրականացնում է սոցիալ-մանկավարժական աշխատանքներ՝ հետևյալ ուղղություններով. երեխաների զարգացման

համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, կրթադաստիարակչական, համապատասխան սոցիալականացման գործընթացի իրականացում, հարմարվողականության ամրապնդում, սոցիալականորեն ընդունելի վարքի և անձնային անհրաժեշտ որակների, արժեքավոր, արդյունավետ սոցիալական հարաբերությունների ձևավորում և զարգացում:

Որպես սոցիալական մանկավարժի հիմնական գործառական պարտավորություններ՝ Ռ. Ա. Օվչարովան նման հաստատություններում առանձնացնում է[96].

1. մանկավարժական բոլոր գործընթացներում երեխաների իրավունքների, հետաքրքրությունների, առողջության պահպանումն ու պաշտպանությունը,

2. երեխայի անձի ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ բարենպաստ պայմանների ստեղծումն ու անվտանգության ապահովումը,

3. երեխայի անհատական առանձնահատկությունների, զարգացման կենսական պայմանների, սոցիալական իրավիճակների ուսումնասիրումը,

4. երեխայի պահանջմունքների և հետաքրքրությունների, դժվարությունների ու հիմնախնդիրների, շեղումների բացահայտումը,

5. սոցիալականացման գործընթացում սոցիալ-մանկավարժական աջակցության ցուցաբերումը,

6. երեխաների տարատեսակ սոցիալապես արժեքավոր գործունեության կազմակերպումն ու համակարգումը,

7. սոցիալ-մանկավարժական վերականգնողական աշխատանքների իրականացումն ապահարմարման խնդիրներ և սո-

---

[96] **Овчарова Р. А.,** Справочная книга социального педагогика, М., 2002, стр. 162.

ցիալական, մանկավարժական բացթողումներ ունեցող երեխաների հետ,

8. երեխաների, ծնողների, ընտանիքի մյուս անդամների, կառույցի աշխատակիցների և սոցիալական ինստիտուտների միջև միջնորդական գործունեության իրականացումը,

9. երեխայի աջակցության, օգնության նպատակով տարբեր մասնագետների, ծնողների կամ նրանց փոխարինողների փոխգործակցության կազմակերպումը,

10.երեխայի կյանքի պայմանների բարելավման նպատակով սոցիալական ծառայությունների հետ համագործակցությունները:

Իր մասնագիտական գործունեության ընթացքում սոցիալական մանկավարժն իրականացնում է սոցիալ-մանկավարժական գործունեության հետևյալ տեսակները.

- սոցիալ-մանկավարժական ախտորոշում և խորհրդատվություն,
- սոցիալ-պրոֆիլակտիկ (կանխարգելիչ) աշխատանքներ,
- շտկողական-վերականգնողական աշխատանքներ, սոցիալական դաստիարակություն[97]:

Սոցիալ-մանկավարժական ախտորոշման և խորհրդատվական աշխատանքների իրականացման նպատակն է.

- ուսումնասիրել երեխայի տարիքային, անհատական, սոցիալական հարմարման առանձնահատկությունները,
- բացահայտել նրա հետաքրքրություններն ու պահանջմունքները, հիմնախնդիրներն ու դժվարությունները, սոցիալ-կենցաղային հմտություններն ու կարողությունները, վարքի շեղումներն ու դրանց առաջացման պատճառները,

[97] **Овчарова Р. А.,** Справочная книга социального педагогика, М., 2002, стр. 164.

- ուսումնասիրել երեխայի կենսագործունեության միկրոմիջավայրի կառուցվածքը, հարաբերությունների առանձնահատկությունները, ազդեցությունները, դրանց բնույթն ու ուղղվածությունը, փոխազդեցությունների բնույթը հասակակիցների, մեծահասակների, ծնողների, աշխատակիցների հետ, կազմել երեխայի անհատական զարգացման քարտ, նախանշել զարգացման միջոցները:
- անցկացնել խորհրդատվություն այն անձանց հետ, որոնք հետաքրքրված են երեխայի սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների լուծման գործում:

Սոցիալ- կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) աշխատանքների իրականացման նպատակն է.

- նախազգուշացնել երեխայի զարգացմանը վտանգող երևույթների, իրավիճակների, հնարավոր խախտումների մասին,
- պաշտպանել երեխային անբարենպաստ ազդեցություններից, հնարավոր բախումներից,
- պաշտպանել երեխայի իրավունքները, կիրառել պաշտպանության տարբեր մեխանիզմներ և համագործակցել տարբեր մասնագետների հետ,
- օգնել երեխային յուրացնել վարքի դրական որակներ, ստեղծել պայմաններ անձնային դրական փոփոխությունների, զարգացման համար,
- տրամադրել հուսալի տեղեկատվություն ասոցիալ, վտանգավոր երևույթների մասին, անցկացնել դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումներ, խորհրդատվություններ:

Շտկողական-վերականգնողական աշխատանքների, սոցիալական դաստիարակության նպատակն է.

- սոցիալ-մանկավարժական վերականգնողական և սոցիալական դաստիարակության ծրագրերի միջոցով ակտիվորեն ներազդել երեխայի սոցիալականացման գործընթացի վրա,

- արժեքային կողմնորոշումների, դիրքորոշումների, վերաբերմունքի փոփոխությունների միջոցով օգնել երեխային վերափոխել անձնային բացասական որակներն ու վարքային կառուցվածքները, վերականգնել և ամրապնդել դրականը,
- ակտիվացնել երեխայի օգտակար գործունեությունը, ներգրավել նրան սոցիալականորեն նշանակալի աշխատանքներում, ներկայացնել երեխայի հետաքրքրությունները, կարողությունները և իրականացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ,
- կազմել ճգնաժամային իրավիճակներում անհրաժեշտ միջամտության կազմակերպման ծրագրեր:

Հատուկ և այլընտրանքային խնամքի հաստատություններում սոցիալական մանկավարժը նպատակաուղղված գործունեություն իրականացնելիս կատարում է հետևյալ գործառույթները.

- կազմակերպչական գործառույթ, որը միավորում է իրավական, մանկավարժական, սոցիալական խնդիրների հետ կապված գործառույթները, ինչպես նաև իրագործում է տարբեր խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր գործնական քայլեր,
- միջնորդական գործառույթ, երբ նա հանդես է գալիս որպես միջնորդ երեխայի և ծնողների, երեխայի և խնամողների, երեխայի և այլ մասնագետների, կառույցների միջև,
- վերահսկողական գործառույթ. սոցիալական մանկավարժը պարտավոր է երեխայի հետ աշխատանքի ամբողջ ընթացքում հետևել նրան, նրա կրթության, զարգացման գործընթացին, գործընթացի առանձնահատկություններին և նրա շրջապատին՝ բացասական ազդեցությունները ժամանակին կանխելու նպատակով,
- կանխարգելող գործառույթ, որը ներառում է երեխայի նկատմամբ հնարավոր բոլոր վնասների կանխումը, դրան ուղղված գործողությունների իրականացում,

- ախտորոշիչ գործառույթ, երբ նա մասնակցում է հնարավոր և առկա խնդիրների, իրավիճակների գնահատման ու ուսումնասիրման գործընթացին՝ նպատակ ունենալով բազմամասնագիտական թիմի հետ հստակեցնել ստեղծված իրավիճակը,
- շտկող, օգնող գործառույթ, որի նպատակն է մշակել և իրականացնել խնդրի լուծմանն ուղղված շտկման, փոփոխման համար անհրաժեշտ գործողությունները,
- խորհրդատվական գործառույթ կամ թերապևտիկ, որի նպատակն է թեթևացնել երեխայի հոգեվիճակը, նպաստել նրա հարմարմանը, աշխատանք իրականացնել ծնողների կամ ծնողներին փոխարինող խնամողների հետ և այլն:

Իրականացվող աշխատանքների արդյունավետության կարևոր պայմաններից են մեթոդների ճիշտ ընտրությունը և կիրառությունը: Վերը ներկայացված աշխատանքներում սոցիալական մանկավարժն օգտագործում է դաստիարակչական թեմաներով պատմությունների, զրույցների, դասախոսությունների, բանավեճերի, օրինակների, խաղի, վարժությունների, հրահանգավորման և պահանջների, խրախուսանքի և պատժի մեթոդները, օգտվում է դաստիարակող իրադրությունների ստեղծման, աշխատանքային գործունեության, փոխգործունեության կազմակերպման, հաղորդակցման, հոգեթերապևտիկ և այլ մեթոդներից: Սոցիալ-մանկավարժական գործընթացում կարելի է մեթոդների միաժամանակյա ընդգրկվածություն ապահովել՝ ելնելով խնդրի լուծման առանձնահատկություններից, սոցիալական մանկավարժի մասնագիտական կարողություններից և առկա այլ հնարավորություններից:

Սոցիալ-մանկավարժական գործունեության տեսակների միասնությամբ, ամբողջականությամբ, հետևողականությամբ, տարբերակվածությամբ, ուղղվածությամբ, ժամանակին դրանց իրակա-

նացմամբ և բոլոր գործոնների, մոտեցումների, առաձնահատկությունների հաշվառման համադրմամբ է պայմանավորված սոցիալական մանկավարժի աշխատանքի արդյունավետությունը հատուկ և այլընտրանքային խնամքի հաստատություններում:

ԳԻՏԵ՞Ք ԻՆՉ Է:

Խնամակալություն, հոգաբարձություն, որդեգրություն, սոցիալական խնամք, հատուկ հաստատություն:

ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են երեխայի զարգացման համար անհրաժեշտ պայմանները:

2. Որո՞նք են երեխաների պաշտպանության եռաստիճան մակարդակներում իրականացվող գործընթացները:

3. Հնարավո՞ր է խնամակալության ինստիտուտի զարգացումը Հայաստանում:

4.Ինչպիսի՞ն են սոցիալական մանկավարժի գործունեության առանձնահատկությունները տարբեր սոցիալական կառույցներում:

5. Որո՞նք են սոցիալական մանկավարժի գործառույթները երեխաների խնամքի և պաշտպանության կառույցներում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լսարանում կազմակերպե՛ք քննարկում հետևյալ թեմայով՝ «Ինչո՞վ է պայմանավորված, որ երեխայի որդեգրումը Հայաստանում տարածված երևույթ և գործընթաց չէ»: Հիմնավորե՛ք:

3.10. Սոցիալական մանկավարժի աշխատանքը դեռահասների և պատանիների հետ

Ժամանակակից աշխարհը բավականին բարդ է իր սոցիալականացման միտումներով, որտեղ սոցիալ-տնտեսական, մշակութային, տեխնոլոգիական, բնապահպանական և այլ զարգացումները հաճախ ունեն ճգնաճամային բնույթ, մյուս կողմից գերհագեցած, անկառավարելի տեղեկատվական հոսքերը և քաղաքակրթական արժեքային փոփոխությունները նոր մարտահրավերներ են ներկայացնում դեռահասության, պատանեկության առանց այդ էլ դժվար շրջանին: Այսինքն՝ ներկայումս հասարակությունն ունի բուռն զարգացող անձի վրա դրական ներգործությունների սակավ հնարավորություններ, որի պատճառով կարևոր նշանակություն է ստանում սոցիալական մանկավարժի աշխատանքը դեռահասների և պատանիների հետ:

Դեռահասությունն ու պատանեկությունը հակասություններով և դժվարություններով լի ժամանակաշրջան են, որտեղ նկատվում են ֆիզիկական, մտավոր, բարոյական և սոցիալական կողմերի չափազանց արագ, առանձնահատուկ զարգացումներ: Մանկավարժության մեջ դեռահասությունը ներառում է 11-15 տարեկան երեխաներին՝ որպես միջին դպրոցական տարիք՝ նկատի ունենալով անձնային դաշտում սոցիալ-հոգեբանական զարգացումների համախմբությունն այս շրջանում:

Նշված տարիքային փուլում տեղի են ունենում դեռահասի օրգանիզմի կազմաբնախոսական վերակառուցումը. նկատվում է հասակի երկարում, քաշի ավելացում, կրծքավանդակի շրջագծի ավելացում, ավելանում է դեռահասի մկանային ուժը, ծավալվում է նաև սեռական հասունացման գործընթացը: «Դեռահասության տարիքը

մի կողմից բնութագրվում է եռանդի աճով, իսկ մյուս կողմից՝ հիվանդագին ազդեցությունների նկատմամբ սուր զգայունակությամբ»[98]:

Առաջին անգամ դեռահասը փորձում է տալ սեռական կյանքին առնչվող հարցերին պատասխաններ, դեռահասների մոտ ձևավորվում են վերարտադրողականության վերաբերյալ իրական պատկերացումներ, ակտիվանում է սեռազգացությունն ու ցանկասիրությունը: Նրանց համար քիչ հասկանալի են բուռն կերպով ծնունդ առնող սեռական ապրումները, հակասական են ինտիմ զգացմունքները:

Դեռահասության շրջանի կարևոր առանձնահատկությունն այն է, որ արտաքնապես և ձգտումներով դեռահասն արդեն կարծես հասուն է, սակայն ներքին առանձնահատկություններով և հնարավորություններով նա շարունակում է մնալ երեխա: Այստեղից էլ դեռահասի մոտ կա ուշադրության, քնքշության պահանջ, հետաքրքրություն խաղերի, զվարճանքների նկատմամբ: «Երբեք չպետք է կարծել, թե դեռահասն ինքը չի զգում իր սոցիալական անլիարժեքությունը: Ճիշտ և ճիշտ հակառակը, նա խորն է ապրում այդ, և որպես փոխհատուցում նրա մեջ առաջանում է չափահաս դառնալու անհաղթահարելի ցանկությունը: Այդ զգացումի առաջին նշանն է՝ դեռահասը պահանջում է, որ շրջապատի մարդիկ իրեն վերաբերվեն որպես մեծի»[99]:

Մեծահասակ լինելու զգացմանը զուգահեռ ակտիվ ձևավորման ընթացք են մտնում ինքնագիտակցությունը, սեփական անձի գերակայությունը, սեռային պատկանելության զգացումները: Դեռահասները բավականին հիվանդագին են վերաբերվում այն ամենին,

---

[98] Տարիքային և մանկավարժական հոգեբանություն (խմբագիր՝ Ա. Վ. Պետրովսկի), Եր., 1997, էջ 132:

[99] **Պետրունեկ Վ. Պ., Տառան Լ. Ն.,** Տագնապային տարիք, Եր., 1975, էջ 20:

ինչը գնահատական է տալիս ոչ միայն իրենց, այլև իրենց ընտանիքի, ծնողների, հարազատների, սիրելի ուսուցիչների առավելությունների և թերությունների նկատմամբ: Այս դեպքում նրանք կարող են մտնել խորը կոնֆլիկտի մեջ վիրավորողի հետ, կարող են հակազդել տարբեր կերպ՝ փակվել իրենց մեջ, դառնալ կոպիտ, կամակոր, ագրեսիվ՝ դրսևորելով ցուցադրական հակադրություն, հակվել վնասակար սովորությունների՝ ծխել, օգտագործել ալկոհոլ և թմրանյութեր, ունենալ կասկածելի ծանոթություններ, հեռանալ տանից և այլն: Զարգացման սոցիալական իրադրության կազմում ընդգրկված գործոնների անբարենպաստ հարաբերակցությամբ ու ազդեցությամբ էլ մեկնաբանվում են դեռահասության տարիքային բախումները:

Պատանեկության տարիքն ևս բնութագրվում է ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, սոցիալական զարգացումներով, ակտիվանում է արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը: Սա թերևս անձի անհատական զարգացման ամենաբարդ շրջանն է, որտեղ ձևավորվում են գիտակցված վարքի հիմքերը, ծավալվում են ինքնագիտակցության գործընթացները, ի հայտ է գալիս սեփական «ես»-ի մասին պատկերացումների համակարգը, ուրվագծվում է արժեքային, բարոյական կողմնորոշումների և սոցիալական դիրքորոշումների ընդհանուր ուղղվածությունը: Պատանեկությունը հոգեֆիզիկական, հոգեսոցիալական բուռն զարգացման, ինքնության կազմավորման, սոցիալական, անձնային, բարոյական, մասնագիտական-գործնական ինքնորոշման շրջանն է: Պատանին կարող է տարվել նոր գաղափարներով, սակայն դժվարությամբ է հրաժարվում սեփականներից: Ինքնության աստիճանական բացահայտումը, անձնային տարածքի եզրագծումը հուզականորեն հարուստ գործընթացներ են, որոնք ուղեկցվում են տարաբնույթ իրադարձություններով ու հակասական ապրումներով:

Պատանեկության սոցիալական կարգավիճակը միանշանակ և համասեռ չէ: Այս փուլում գործունեությունն ու անձի դերային կառուցվածքը ձեռք են բերում մի շարք նոր, արդեն հասուն որակներ: Ընդարձակվում է հասարակական, քաղաքացիական դերերի, դրանց հետ կապված հետաքրքրությունների ու պատասխանատվության միջակայքը: Պատանեկության տարիքում աղջիկներն ավելի հանգիստ են ու կարգապահ, քան տղաները, ինչն ունի ֆիզիոլոգիական, հոգեբանական, սոցիալական հիմնավորում: Ինչպես նշել է լեհ անվանի մանկավարժ Յանուշ Կորչակը, «աղջիկները հաճախ ձգտում են իրենց ավելի լավ ցուցադրել, քան կան, մինչդեռ տղաները, սովորաբար, իրենց ավելի վատ են պահում, քան իրենք իրականում կան»[100]:

Սոցիալական մանկավարժի աշխատանքում ուշադրության գլխավոր օբյեկտ են համարվում դեռահասը, պատանին, նրա ընտանիքն ու ծնողները, սոցիալական միջավայրն ու ազդեցությունները, տարբեր փոխհարաբերությունները: Դեռահասների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հետևյալ հանգամանքներով.

- օրեցօր առավել անհանգստացնող են դառնում դեռահասների ֆիզիկական և հոգեկան առողջության խնդիրները,
- մեծացել են դեռահասների նկատմամբ դրսևորվող տարբեր բռնություններն ու չարաշահումները,
- վերահսկողությունից դուրս են մնացել աշխատող դեռահասներն ու պատանիները,
- մեծացել է թափառող, մանկավարժական շեղում ունեցող դեռահասների ու պատանիների թիվը,

---

[100] **Պետրունեկ Վ. Պ., Տառան Լ. Ն.,** Տագնապային տարիք, Եր., 1975, էջ 40:

- իրական կյանքում առկա են բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրներ և դժվարություններ, որոնք երբեմն դեռահասներին ու պատանիներին մղում են հակասոցիալական գործողությունների (հանցագործություն, իրավախախտումներ, ալկոհոլի և թմրանյութի օգտագործում և այլն),
- դեռահասներին ու պատանիներին շատ հաճախ հետամտում է սոցիալական անպաշտպանվածության վտանգը,
- նրանք երբեմն հայտնվում են տարբեր վտանգավոր խմբավորումներում,
- թուլացել է ընտանիքի, ծնողների դերը դեռահասների կյանքում,
- հաճախ խախտվում են շրջապատող միջավայրի նկատմամբ դեռահասի հարմարման մեխանիզմները՝ պայմանավորված ընտանիքում տիրող տևական անբարեհաջող իրավիճակներով, ինչպես նաև նրանով, որ ուսուցիչների, ընկերների կողմից դեռահասին երբեմն ուղղվում են անտեղի, հանկարծակի վիրավորանքներ, կոպիտ, անզգույշ խոսք և այլն:

Նշված խնդիրները փոխկապակցված են բազմաթիվ առումներով, սակայն դրանք ունեն դրսևորման առանձնահատկություններ, հատուկ, նպատակային նշանակություն դեռահասի անձի զարգացման համար: Սոցիալական մանկավարժի գործունեությունն առաջին հերթին ուղղված է դեռահասների և պատանիների սոցիալական կյանքի, շրջապատող միջավայրի առողջացմանը, նրանց հասարակական կյանքի որակի բարենորոգմանը: Իհարկե, կարևոր նշանակություն է ստանում բոլոր հասարակական զարգացումներին համապատասխան դաստիարակչական գործընթացի համարժեք կառուցումը, որը կնպաստի դեռահասի անձի նորմալ զարգացմանը:

Դեռահասների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքը ենթադրում է առողջապահական, կրթական, հոգեբանական, սոցիալական, իրավական բոլոր ինստիտուտների դաստիարակչական ուժերի միավորում, ինչպես նաև առանձին մասնագիտացված գործառույթների իրականացում: Կարևոր է նաև դեռահասների և պատանիների նկատմամբ ընդհանուր հասարակության կողմից ցուցաբերած վերաբերմունքի հումանացումը: Դա կարող է դրսևորվել.

- օրենսդրական, դաստիարակչական, վերադաստիարակչական, կրթական ոլորտներում,
- դեռահասներին և պատանիներին տարբեր տեսակի օգնությունների և աջակցության ցուցաբերման գործընթացներում,
- դեռահասի սոցիալական, բժշկական, հոգեբանական կարգավիճակի և դաստիարակվածության մակարդակի ախտորոշման գործընթացում,
- դեռահասի ընտանիքում, ինչպես նաև նրան շրջապատող, նրա համարժեք սոցիալականացմանը նպաստող բոլոր սոցիալական ինտիտուտների գործառույթներում,
- դեռահասի ընտանիքին աջակցող բոլոր սոցիալական ինստիտուտներում, ծառայություններում և այլն:

Դեռահասների և պատանիների, նրանց ընտանիքների, շրջակա միջավայրի հետ սոցիալական մանկավարժի աշխատանքն ունի գործունեության կազմակերպչական, տեղեկատվական, խորհրդատվական, դաստիարակչական, պաշտպանական, սոցիալ-իրավական, բժշկական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական աջակցության և օգնության ուղղվածություններ: Նշենք, որ օգնության և աջակցության իրականացման ձևերը, մեթոդները

չպետք է նսեմացնեն դեռահասի անձը, նրա ինքնասիրությունը, պատիվն ու արժանապատվությունը: Դեռահասների և պատանիների հետ աշխատանքում հատուկ նշանակություն են ստանում մասնագիտական կողմնորոշման հարցերը: Երբ մասնագիտության ընտրությունը հաջող և ճիշտ է կատարվել, ապա մասնագիտական դաշտում մեծ են երիտասարդի հարմարման հնարավորությունները: Սովորողների մասնագիտական կողմնորոշումը պայմանավորված է ինչպես այլ մասնագետների ազդեցություններով, այնպես էլ նրանց հետ սոցիալական մանկավարժի արդյունավետ գործունեությամբ: Սոցիալական մանկավարժի աշխատանքն այդ տեսանկյունից ունի հիմնականում հետևյալ բովանդակությունը:

- Օգնել սովորողներին մասնագիտական կողմնորոշման հարցերում, կազմակերպել տարբեր միջոցառումներ, հանդիպումներ, քննարկումներ, կատարել այցելություններ, օգնել նրանց ընդգրկվել հոսքային դասարաններում, ավելի մոտիկից ծանոթանալ ընտրած ապագա մասնագիտական գործունեությանը, դրա առանձնահատկություններին, այլապես շատ դեպքերում «սովորողները չեն ընտրում այս կամ այն մասնագիտությունը, այլ նրանց վերցնում են այս կամ այն մասնագիտության համար»[101]:
- Սոցիալական մանկավարժը հոգեբանի, ուսուցիչների, ծնողների հետ համատեղ, աշխատանքի տարբեր ձևերի, միջոցների օգնությամբ բացահայտում է սովորողների մասնագիտական հակումներն ու հետաքրքրությունները, պատրաստականությունը, անձնային առանձնահատկությունները, ծնողների մտադրություններն ու սպասումները, մասնագիտության հեռանկարները և մաս-

[101] Методика и технологии работы социального педагога: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений/ Б. Н. Алмазов, М. А. Беляева, Н. Н. Бессонова и др.; под ред. М. А. Галагузовой, Л. В. Мардахаева, 3-е изд., М., 2006, стр. 103.

նագիտական ինքնորոշման առումով ցուցաբերում է սոցիալ-մանկավարժական օգնություն:

- Իրականացվում են նաև ախտորոշիչ, կազմակերպչական, միջնորդավորված, ուսուցողական, խորհրդատվական բնույթ ունեցող աշխատանքներ ծնողների, ուսուցիչների հետ:

Ռ. Ա. Օվչարովան դպրոցում դեռահասների հետ աշխատանքի սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների օրինակում ներկայացնում է հետևյալ աշխատանքները:

1. Կազմակերպչական աշխատանք, որը ենթադրում է հարցումների անցկացում դեռահասների, ծնողների, ուսուցիչների շրջանում, հանդիպումներ նրանց հետ, տեղեկատվության հաղորդում, փոխանակում, վերամշակում, այլ մասնագետների գործունեության պլանավորում անհրաժեշտ համալիր գործունեության կազմակերպման տեսանկյունից:

2. Ախտորոշիչ աշխատանք, որը ենթադրում է դեռահասի անձին ուղղված ուսումնասիրություններ, անհատական հանդիպումների կազմակերպում՝ խնդիրներ ունեցող դեռահասների ծնողների, ուսուցիչների հետ հանդիպումներ, քննարկումներ, ուսուցման պայմանների ու գործընթացի կազմակերպման վերաբերյալ և այլն:

3. Խորհրդատվական, մեթոդական աշխատանք, որը ենթադրում է անհատական աշխատանք սոցիալական մանկավարժին դիմած դեռահասի, նրա ծնողների հետ, մանկավարժական խորհրդում, հանրույթում ելույթներ, մասնագիտական քննարկումներ և այլն:

4. Դեռահասների համար թրեյնինգների անցկացում, որը նպաստում է նրանց կյանքի հմտությունների ձևավորմանը, անձնային աճին և այլն:

5. Մասնագիտական կողմնորոշման աշխատանք, որը ենթադրում է յուրաքանչյուր դեռահասի հետ անհատական զրույցների անցկացում, դասղեկի հետ աշխատանք, տարբեր մասնագետների հետ հանդիպումներ, բազմամասնագիտական թիմի աշխատանք, աշխատանքի արդյունքների ամփոփումներ և այլն:

Այսօր գոյություն ունեն դեռահասների սոցիալ-մանկավարժական, սոցիալ-հոգեբանական վերականգնողական տարբեր բնույթի աջակցության ցերեկային, վերականգնողական թերապիա իրականացնող կենտրոններ, որոնց գործունեությունը բազմագործառութային է, և իրականացվում են կանխարգելիչ, խորհրդատվական, թերապևտիկ և այլ աշխատանքներ:

Պատանիների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի հիմնական ձևերն են՝ նախազգուշացումը, կանխարգելումը, անհրաժեշտության դեպքում՝ սոցիալական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական շտկումը և կարգավորումը:

Կանխարգելումը՝ պետական, հասարակական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-հոգեբանական միջոցառումների համախմբությունն է՝ ուղղված վարքային տարբեր շեղումների պատճառների նախազգուշացմանն ու վերացմանը:

Սոցիալական մանկավարժի կողմից իրականացվում են հետևյալ կանխարգելիչ աշխատանքները.

- սոցիալական միջավայրի կազմակերպում, որի օբյեկտներ են հասարակությունը, առանձին ընտանիքը, սոցիալական խումբը նաև կոնկրետ անձը,
- տեղեկատվություն՝ դասախոսություններ, սեմինարներ, զրույցներ, գրականության, տեսաֆիլմերի տարածում,
- առողջ ապրելակերպի կազմակերպում,
- այլընտրանք հանդիսացող գործունեության՝ ճանապարհոր-

դությունների, արշավների, սպորտային միջոցառումների, ստեղծագործական գործունեության, արժեքավոր հարաբերությունների, ճանաչողական հանդիպումների կազմակերպում և այլն:

Դեռահասների և պատանիների համար առաջնային խնդիրն «իրեն հասկացող և սրտակից» մարդ գտնելն է, որին նա կվստահի գաղտնիքները, որն ունի խորհրդատվական հմտություններ և կարող է օգնել հաղթահարել ստեղծված դժվարություններն ու հիմնախնդիրները: Այս պարագայում դաստիարակչական խորհրդատվությունը, որը սոցիալ-մանկավարժական գործունեության տեխնոլոգիաների առանցքային բաղադրիչն է, կարող է ապահովել դաստիարակչական փոփոխություններ: Այդ փոփոխություններն իրականացվում են խորհրդառուին դաստիարակչական ուղղորդման և կողմնորոշման միջոցով՝ սոցիալականացման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու միտումով: Հարկ է նշել, որ սոցիալական մանկավարժը խորհրդատվությունը կարող է իրականացնել ոչ միայն դեռահասի, պատանու, այլև նրա ընտանիքի, ընտանիքի առանձին անդամների, ընկերների հետ:

Խորհրդատվությունն իրականացվում է հետևյալ փուլերով:

- Նախապատրաստական փուլ, որն ուղղված է խորհրդառուների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվության ստացմանը, հստակեցմանը:
- Բուն խորհրդատվական փուլ, որն ուղղված է խորհրդատվական արդյունավետ գործողությունների իրականացմանը, և որը պայմանավորված է այդ ընթացքում կիրառվող տեխնիկաներով և դրա իրականացման մեթոդներով ու մեթոդիկաներով, որոնց կիրառումն առնչվում է սոցիալ-մանկավարժական հիմնախնդրի, խորհրդառուի անհատական առանձնահատկությունների, սոցիա-

լական մանկավարժի մասնագիտական կարողությունների դրսևորմանը:

- Հետխորհրդատվական փուլ, որը ենթադրում է կանխարգելիչ աշխատանքների իրականացում, դրսևորվում է մասնագիտական հետաքրքրություն խորհրդառուի նկատմամբ նոր հնարավոր խնդիրների բացահայտման նպատակով:

Դեռահասների և պատանիների հետ իրականացվող շտկողական աշխատանքները ներառում են շտկման ծրագրի մշակումն ու իրականացումը, ընթացքի և արդյունավետության վերահսկումը: Այդպիսի ծրագրերը հիմնականում ուղղված են առավել դժվար դեռահասներին և պատանիներին, որոնք իրենց սոցիալական, դաստիարակչական, հոգեբանական հատկանիշներով հարում են ռիսկի խմբին: Այդպիսի ծրագրերի նպատակն է շտկել դեռահասների, պատանիների վարքը, օգնել հաղթահարել կրթական խնդիրներն ու բացթողումները, ներգրավել նրանց դաստիարակչական, ինքնակրթության, ինքնադաստիարակության, վերադաստիարակության գործընթացներում, ապահովել սոցիալական և հոգեբանական անհրաժեշտ հարմարումը, բարձրացնել անձնային կարգավիճակը: Այդպիսի ծրագրերում հիմնականում առաջադրված են հետևյալ աշխատանքները.

- թուլացնել հուզական լարվածությունն ու տագնապայնությունը տարբեր իրավիճակներում,
- օգնել փոփոխելու շեղվող վարքի նկատմամբ դրական վերաբերմունքը,
- ամրապնդել վարքի դրական ձևերն ու փորձը,
- զարգացնել համագործակցության, նախաձեռնության, ինքնուրույնության ընդունակությունները,
- բարձրացնել նրանց պատասխանատվությունը բոլոր գործ-

ընթացներում, ինքնավստահությունը,

- օգնել դեռահասին և պատանուն իրական ինքնագնահատականի ձևավորման հարցերում,
- ինքնադաստիարակության խթանման միջոցով անդրադառնալ նրա անձի ինքնակատարելագործմանը:

Այստեղ կարևոր են ակնկալվող փոփոխությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և պատանու, դեռահասի հոգևոր, անձնային ոլորտի բացահայտումը: Իրականացվող աշխատանքները ներառում են ախտորոշիչ գործընթացներ, շտկողական, զարգացնող միջոցառումներ, ցուցումներ, հրահանգներ, պահանջներ, պարապմունքների կազմակերպում և անցկացում, անհատական, խմբային խորհրդատվություններ, կրթական միջավայրի և բարոյահոգեբանական անհրաժեշտ մթնոլորտի ստեղծում:

Այսպիսով՝ դեռահասության, պատանեկան տարիքում անձը գտնվում է իր հիմնարար որակների ձևավորման փուլերից մեկում, որտեղ առաջատար գործունեություն են համարվում կյանքում իր տեղի և կոչման որոնումը, անձնային ինքնորոշումը:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Երեխա, դեռահասություն, պատանեկություն, կոնֆլիկտ, տարիքային ճգնաժամ, խոցելիություն:

ՀԱՐՑԵՐ

1.Որո՞նք են դեռահասության տարիքի առանձնահատկությունները:

2.Որո՞նք են պատանեկության տարիքի առանձնահատկությունները:

3.Ինչպիսի՞ սոցիալ-մանկավարժական խնդիրներ ունեն դեռահասներն ու պատանիները:

4.Ինչպիսի՞ կանխարգելիչ միջոցառումներ է իրականացնում սոցիալական մանկավարժը դեռահասների հետ աշխատանքում:

5.Ներկայացրե՛ք դաստիարակչական խորհրդատվության էությունն ու փուլային կառուցվածքը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Թեմա 1. Քննարկե՛ք ընտանիքում աշխատող դեռահասների ունեցած հնարավոր խնդիրները, նրանց ունեցած դժվարությունները հասարակության մեջ:

Թեմա 2. Առանձին խմբերով քննարկե՛ք, թե ինչը կարող է հայրերի ու որդիների միջև կոնֆլիկտի, փոխադարձ անըմբռնողության պատճառ հանդիսանալ:

3.11. Սոցիալական մանկավարժի աշխատանքը սահմանափակ կարողություններով երեխաների հետ

Սահմանափակ կարողություններով երեխաների խմբին են պատկանում այն երեխաները, որոնք ունեն գործունեության այս կամ այն նշանակալի սահմանափակումները, որոնց պատճառով նրանց ներգրավումը կրթադաստիարակչական գործընթացներում ընթանում է առանձնահատուկ կամ սահմանափակ կերպով: «Սահմանափակ կարողություններով երեխաներ» ձևակերպումը հնարավորին չափ մարդասիրական ձևակերպում է, որը զարգացնում է սահմանափակ կարողությունների կամ որոշ կարողությունների վերականգնման, հասարակության մեջ նրանց ներառման և լիարժեք

կյանքով ապրելու իրավունքի գաղափարներն ու մոտեցումները:

Հաշմանդամությունը լինում է բնածին և ձեռքբերովի, մտավոր և ֆիզիկական: Մտավոր հետամնացությունն ամբողջ օրգանիզմի և գլխուղեղի դեզօնտոգենեզի արդյունք է, դա մտավոր անբավարարություն է, երբ նկատվում է բարձրագույն հոգեկան գործառույթների ձևավորման խանգարում, որն արտահայտվում է ճանաչողական, մտածական գործընթացների թուլությամբ, փոխակերպմամբ, հուզակամային և հենաշարժողական ոլորտների շեղումներով: «Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը» (ԱՀԿ) մտավոր հետամնացության դասակարգման մեջ ներառել է նաև վարքագծային խախտումները, որոնք հաճախ լինում են մտավոր հետամնաց երեխաների մոտ, և ինչն առավել դժվարացնում է նրանց սոցիալական հարմարումը: ԱՀԿ-ն մտավոր հետամնացությունը դասակարգում է թեթև, մեղմ (չափավոր), ծանր, խորը աստիճանների, և կրթության կազմակերպման մասին եզրակացությունը կազմվում է այդ ախտորոշման հիման վրա: Օգտագործվում է նաև ըստ վարքագծային խախտումների աստիճանի դասակարգումը. փոքր վարքային խախտումներ, նշանակալի վարքային խախտումներ, որոնք պահանջում են ուշադրություն կամ բժշկական միջամտություն: Առանձնանում են ընտանեկան միջավայրում սահմանափակվող վարքի, վարքի ոչ սոցիալականացված, վարքի սոցիալականացված, հակադրության հրահրող, վարքի և հույզերի խառը խանգարումներ և այլն: Այստեղ գլխավոր հիմնախնդիր է համարվում սահմանափակ կարողություններով երեխաների նախասիրությունների, հետաքրքրությունների, նրանց ընդունակությունների ու հնարավորությունների բացահայտումը, դրանց առավելագույն օգտագործումը և այդ ուղղությամբ նման երեխաների հետ անհատական, խմբային և այլ աշխատանքների իրականացումը:

Թուլամտության (օլիգոֆրենիա) առկայության պայմաններում անգամ, երբ երեխան գտնվում է բուժական կամ սոցիալական այլ կառույցներում, մեկուսացված չէ ընտանիքից, հասարակությունից, երբ նա ներառված է կրթադաստիարակչական գործընթացներում, ապա արագ միջամտության, նպատակաուղղված սոցիալ-հոգեբանական աջակցության, սոցիալ-մանկավարժական գործունեության արդյունքում նա կարող է ոչ միայն յուրացնել ուսումնական գիտելիքների և սոցիալական նշանակության հմտությունների որոշակի ծավալ, այլ նաև կարող է տիրապետել սոցիալական համակեցության կանոններին: Ընդունված են թուլամտության հետևյալ տարբերակումները՝ ապուշություն (տգետ, անընդունակ), իմբեցիլություն (անօգնական), դեբիլություն (տկարություն): Դեբիլությունը թուլամտության թույլ աստիճանն է: Մտավոր հետամնաց երեխաների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքն առաջին հերթին ուղղված է նրանց զարգացմանը, որի բովանդակությունը հետևյալն է. մտավոր հետամնաց մարդու զարգացման համար (նրա կյանքի տարիքային բոլոր փուլերում) կազմակերպել իրավասու ուղեկցություն: Այսինքն՝ սոցիալական մանկավարժի միջնորդական գործունեության արդյունքում օգնող սոցիալական ինստիտուտների մասնակցությամբ ստեղծվում են մտավոր հաշմանդամ երեխաների համապատասխան զարգացման համար անհրաժեշտ պայմաններ: Սոցիալական մանկավարժի գործունեությունը պետք է ուղղված լինի նաև նման երեխաների համալիր սպասարկմանը, նրանց սոցիալական հմտությունների ուսուցման կազմակերպմանը, որոշակի կարողությունների, անձնային որակների, հասարակության պահանջներին հարմարվելու, ինքնուրույն գործելու կարողությունների զարգացմանը, այլ մարդկանցից նրանց կախվածության թուլացմանը:

Սոցիալական մանկավարժը մտավոր հետամնաց երեխաների

հետ աշխատանքում իրականացնում է.

- փոխգործունեություն բժշկական հաստատությունների և ծառայությունների հետ՝ այդ խնդիրներով երեխաների բացահայտման և նրանց հաշվառման առումով,
- հսկողություն՝ ծնողներին տրամադրվող տեղեկատվության վերաբերյալ, երեխային և նրա ընտանիքին տրամադրվող օգնության, այդ կառույցների գործունեության նկատմամբ,
- կազմակերպում՝ բժշկասոցիալական, մանկավարժական խնդիրների լուծման հետ կապված ծառայություններ, ընտանեկան և այլ պայմաններում մանկավարժական միջավայրի ձևավորում, օգնություն ծնողներին երեխաների ուսուցման գործընթացը ներկա և հետագա ժամանակահատվածում իրականացնելու հարցերում,
- օգնություն մտավոր հետամնաց երեխաների և նրա հասակակիցների, ընտանիքի անդամների, հարևանների, բարեկամների հետ փոխհարաբերությունների հաստատման գործում,
- օգնություն մասնագիտական կողմնորոշման, մասնագիտական ուսուցման, լրացուցիչ կրթության ստացման, հանգստի կազմակերպման հարցերում և այլն:

Հոգեկան հիվանդությունները հուզակամային ոլորտի և բազմաթիվ այլ խանգարումներ են, որոնք բացասական կերպով ազդում են անձի ճանաչողական, սոցիալական գործառույթների ձևավորման վրա և արտահատվում են խորը վարքային խախտումներով: Մանկական հասակում հոգեկան հիվանդություններն արտահայտվում են արդեն ձևավորված մտածական գործընթացների անկմամբ, նահանջով: Այն բնութագրվում է հուզական ռեակցիաների անհավասարակշռությամբ, խոսքի, հաղորդակցման խանգարումներով, միջավայրի պահանջներին անհամապատասխան, սխալ ուղղվածությամբ:

Թեթև հոգեկան շեղումները (հուզական և վարքային ոլորտի խախտումներ) մեծ մասամբ առաջանում են մանկության, դեռահասության և պատանեկության հատվածում՝ չբացառելով մյուս տարիքային շրջաբաժանումները: Այս առումով սոցիալական մանկավարժի ուշադրության կենտրոնում են երեխաների ունեցած սթրեսները, նրանց արձագանքները սթրեսներին, դրանցում երեխայի ունեցած ապրումները, խելագարությունները՝ դիտարկելով և հստակեցնելով դրանք այլ մասնագետների հետ (հոգեբույժ, հոգեթերապևտ, մանկավարժ, սոցիալական աշխատող և այլն): Այստեղ անհրաժեշտ է այնպիսի պայմանների ստեղծում, աջակցության կազմակերպում, որոնք հնարավորություն կտան նման հիվանդություններով տառապող մարդկանց հնարավորինս լիարժեքորեն ապրելու իրենց սովորական միջավայրում, շրջապատող մարդկանց հետ:

Վաղ մանկական աուտիզմը բնութագրվում է որպես զարգացման ընդհանուր խանգարում կամ անձի զարգացման ընդհանրական խախտումներ՝ սոցիալական հարաբերությունների խախտումներ, խոսքի հետ կապված խանգարումներ (հապաղումներ), վարքագծային խախտումներ: Այսօր աուտիզմով հիվանդ երեխաների հետ աշխատանքում կարևորվում է ոչ միայն դեղորայքային բուժումը, այլ նաև առանձնահատուկ ձևով կազմակերպված հատուկ ուսուցումն ու դաստիարակությունը: Փորձը ցույց է տալիս, որ որոշ աուտիկ երեխաններ, եթե առավել վաղ են ստանում զարգացման ազդակներ, ապա կարող են սովորել հանրակրթական դպրոցներում: Սոցիալ-մանկավարժական օգնության կազմակերպման առանձնահատկությունն այն է, որ այն առաջին հերթին ուղղված է նրանց հաղորդակցական (կոմունիկատիվ) գործունեության, տարբեր իրավիճակներում մարդկանց հետ շփման կարողությունների զարգացմանը, սոցիումի տարբեր մակարդակներում սեփական

վարքի կառավարմանը: Աուտիկ երեխաների հետ աշխատանքում փոխհարաբերությունների հաստատման (առավել ևս առաջնային) փուլում պետք է խուսափել այնպիսի իրավիճակներից, որոնք ենթադրում են լարվածություն կամ երեխայի նկատմամբ ճնշում: Շփման, հաղորդակցման նկատմամբ երեխան պետք է ցուցաբերի հետաքրքրություն, ունենա դրական զգացողություններ, զգա պաշտպանվածություն:

Հենաշարժական համակարգի խանգարումներով երեխաները մասնակի կամ ամբողջությամբ սահմանափակված են իրենց շարժումներում: Երեխաների այդ խումբը պայմանականորեն բաժանվում է երեք առանձին խմբի.

1. հենաշարժական համակարգի խանգարումներ, որոնք պայմանավորված են կենտրոնական նյարդային համակարգի վնասվածքներով՝ գլխուղեղի վնասվածքներ (մանկական ուղեղային կաթված, ուռուցքներ, տրավմատիկ վնասվածքներ), վերջույթների կաթված, ողնուղեղի վնասվածքներ,

2. կենտրոնական նյարդային համակարգի և հենաշարժական համակարգի վնասվածքների համակցություն (ծննդաբերական տրավմաների հետևանքով),

3. հենաշարժական համակարգի խանգարում՝ պահպանված ինտելեկտով:

Լսողական խանգարումներ ունեցող երեխաները, ըստ իրենց լսողական խնդիրների, բաժանվում են երկու խմբի՝ խուլ և թույլ լսող երեխաներ: Խուլ երեխաներն ունեն շատ ցածր լսողություն, նույնիսկ, երբ օգտագործում են ձայնաուժեղացուցիչ սարքեր, նրանք դժվարությամբ կամ չեն ընկալում խոսքը, խոսքի առանձին հատվածները: Այս ամենն իր հետ բերում է հաղորդակցման գործառույթի տիրապետման զգալի դժվարություններ, որն ուղեկցվում

է խոսքի բացակայությամբ: Տարեցտարի մեծանում է այս խնդիրներով երեխաների թիվն աշխարհում: «Ամբողջ աշխարհում բնակչության 4-6% ունի լսողական խանգարումներ, դրանք այն աստիճանի խանգարումներ են, որոնք դժվարացնում են նրանց շփումները շրջապատի հետ, ինչը բացասաբար է ազդում հասարակությունում նրանց սոցիալական հարմարման և ներառման վրա: Այս առումով էլ խնդիրը սոցիալական է»[102]:

Լսողական խանգարումներ ունեցող երեխաների նկատմամբ առանձնանում է երկու մոտեցում: Համաձայն առաջին մոտեցման՝ հասարակության մեջ նման խնդիրներով մարդկանց համար լսողների միջավայրում պետք է ստեղծվեն բարենպաստ պայմաններ: Այսպես՝ առողջ մարդիկ իրենք սովորեն ժեստերի լեզուն և հաղորդակցվեն նման խնդիրներով մարդկանց հետ, իսկ նման խնդիրներով աշակերտներին հանրակրթական դպրոցներում ուղեկցեն ժեստերի լեզվի թարգմանիչները: Պակաս կարևոր չէ այդ մասնագետների աշխատանքը լսողական խնդիրներ ունեցող երեխաների ընտանիքի, ընկերների ու երեխային սպասարկող անձնակազմի հետ: Համաձայն երկրորդ մոտեցման՝ լսողական խնդիրներ ունեցող մարդիկ դիտարկվում են որպես հատուկ սոցիալական խումբ, որն ունի հատուկ սոցիալական կարիքներ՝ հաղորդակցման դժվարություններն ու սահմանափակումները հաղթահարելու առումով: Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները լսողական խնդիրներ ունեցող երեխաների հետ հետևյալն են.

- տրամադրել ծնողներին լիարժեք տեղեկատվություն հաստատության գործունեության ձևերի և առանձնահատկությունների մասին,

---

[102] **Аксенова Л. И.,** Социальная педагогика в специальном образовании, М., 2001, стр. 138.

- ծնողների կողմից ընտրված համակարգի շրջանակներում ստեղծել երեխաների ուսուցման և զարգացման համար անհրաժեշտ համալիր պայմաններ,
- փոխգործունեություն տարբեր սոցիալական կառույցների հետ (առողջապահական, բժշկափորձագիտական, կրթական, վերականգնողական և խնամքի կենտրոններ), որոնք կնպաստեն երեխայի հաղորդակցական կարողությունների և ընդհանուր զարգացմանը,
- լսողական խնդիրներ ունեցող երեխաների զարգացման ծրագրերի կազմում, իրականացում, բազմազան միջոցառումների կազմակերպում, անցկացում, որոնք կնպաստեն հասարակության մեջ նրանց լիարժեք ներառմանը:

Տեսողական խնդիրներ ունեցող երեխաների թիվը գնալով աճում է աշխարհում, սակայն առավել ծանր խնդիրներ ունեն թույլ տեսնող և կույր երեխաները, որոնք մասամբ են ճանաչում աշխարհն իր բազմաբազանության մեջ: Նման երեխաներն առավելապես վաղ հասակում ունեն հատուկ կազմակերպված աջակցության, որոշակի ծավալի միջամտական աշխատանքների, օգնության կարիք: Բնածին տեսողական խնդիրներով երեխաների զարգացման գործում հատուկ նշանակություն ունեն ընտանիքը, սոցիալական միջավայրը, որում գտնվում է երեխան: Երբ լսողական խնդիրներով երեխաները սովորում են իրենց պահպանված զգայարաններն առավելագույն կերպով օգտագործել, ապա կարողանում են նաև հարստացնել իրենց պատկերացումները շրջապատող առարկայական աշխարհի մասին: Դա կօգնի նրանց ինքնուրույն գործունեության զարգացմանը, տարածության մեջ նրանց արագ կողմնորոշմանը, արագ օգտագործել ջերմային, լսողական, համ ու հոտի հետ կապված առարկաների հատկանիշները, զգալ օդի ճնշման փոփո-

խությունները և այլն: Հատուկ կրթական հաստատություններում սոցիալական մանկավարժի գործունեությունն ուղղված է երեխաների մոտ խորը տեսողական խանգարումների հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարմանը, նրանց սոցիալական վերականգնմանը, որքան հնարավոր է՝ ինքնուրույն կյանքի պատրաստմանը: Նման երեխաները կարող են սովորել նաև հանրակրթական դպրոցում, սակայն պետք է նշել, որ այստեղ ևս կառաջանան բազմաթիվ խնդիրներ (հարմարման, միջանձնային, խմբային, կրթության կազմակերպման հետ կապված և այլն), կա նաև լրացուցիչ հատուկ պայմանների, հատուկ մասնագիտական գործունեության, կույր երեխաների ուսուցման մեթոդիկայի կիրառման (տիֆլոմանկավարժություն) և սոցիալ-մանկավարժական օգնության անհրաժեշտություն: Նման երեխաներն իրենց կյանքի բոլոր փուլերում իրավասու մասնագետների ուղեկցության կարիքն ունեն:

Հաճախ երեխաներն իրենց սահմանափակումները թաքցնելու համար մեկուսանում են, ավելի քիչ են շփվում իրենց հասակակիցների, մեծահասակների հետ, որի պատճառով փոքրանում է նրանց շփումների, հաղորդակցման շրջանակը: Նրանց մոտ ձևավորվում է ցածր ինքնագնահատական, խախտվում են «անհատ-միջավայր» փոխհարաբերությունները, նկատվում են ծանրության տարբեր աստիճանի հուզական խախտումներ՝ կապված վախի, անհանգստության, ֆիզիկական ցավի և այլ ապրումների հետ: Սրանք բացասաբար են ազդում երեխաների վարքի վրա, մեծացնում են նրանց մոտ մարմնական (սոմատիկ) հիվանդությունների և սոցիալ-հոգեբանական շեղումների առաջացման հավանականությունը: Այսպիսի իրավիճակները երեխաների կյանքում կարող են երկարատև լինել, ինչը նշանակալիորեն սահմանափակում է երեխաների շփման հնարավորությունները, նվազեցնում նրանց ակտիվությունը, ազ-

դում նրանց անձի ձևավորման վրա: Այս առումով էլ սոցիալական մանկավարժի կողմից իրականացվող շտկող, վերականգնող ուղղվածություն ունեցող բոլոր աշխատանքներում որոշիչ նշանակություն ունեն հուզական կապի վերականգնումն ու վստահելի հարաբերությունների հաստատումը: Երեխան չպետք է զգա իրեն մեծահասակների ներգործության օբյեկտ (անկախ գործունեության տեսակից). նա պետք է լինի իրականացվող այս կամ այն միջոցառման, գործընթացի ակտիվ համամասնակիցը: Նման երեխաների հետ աշխատանքում պետք է արագ արձագանքել երեխայի կյանքում տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխությանը (ընդհանուր վիճակ, վարք, տրամադրություն), այդ փոփոխություններով պայմանավորված՝ առաջացող վնասներին ու վտանգներին: Պակաս կարևոր չէ ընտանիքի և այլ համակարգերի հնարավորությունների գնահատումը, քանի որ հաշմանդամ երեխան փոխազդեցության մեջ է գտնվում նրանց հետ: Այս առումով պետք ուշադրություն դարձնել ընտանիքի կարիքներին, ընտանիքի մտավոր գործառմանը, եկամուտների մակարդակին, արժեքային, մշակութային համակարգին, հարմարվողականությանը, հաղորդակցման ցանցին և այլն: Հաշմանդամ երեխային առաջին ճանաչողն ու ընդունողը նրա ծնողները և ընտանիքի մյուս անդամներն են: Այս տեսանկյունից սոցիալական մանկավարժը կարող է օգնել ընտանիքի հնարավորությունների զարգացմանը, տեղեկություններ տրամադրել, խնդիրների լուծման նոր ուղիներ որոնել, նպաստել նոր հարաբերությունների կառուցմանը և այլն: Իրականացված այս աշխատանքները հնարավորություն կտան ծնողների և ընտանիքի մյուս անդամների մոտ ձևավորելու համարժեք պատկերացումներ երեխայի զարգացման հնարավորությունների, կրթության, դաստիարակության, սոցիալականացման մասին: Համատեղ գործըն-

թացներում բացահայտվում են խնդիրների լուծման այլընտրանքային ուղիներ, ձևեր, փոփոխվում են ծնողների բացասական ապրումները, ձևավորվում է լավատեսություն ապագայի նկատմամբ, ամրանում են նոր արժեքներ: Ձևավորվում է նաև երեխայի, ծնողների, ընտանիքի անդամների համատեղ գործունեության որոշակի մակարդակ, զարգանում են նոր հարաբերություններ, նկատվում է հոգեհուզական վիճակի կայունացում:

Սահմանափակ կարողություններով երեխաների հետ սոցիալական մանկավարժի գործունեությունը հենվում է հետևյալ սկզբունքների վրա.

- սահմանափակ կարողություններով մարդն ինքն իր համար հիմնախնդիր կամ դժվարություններ ստեղծող չի կարող համարվել. դրանք ստեղծում է հաշմանդամությունը,
- հաշմանդամությունը ոչ միայն բժշկական, այլ նաև սոցիալական, սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր է, անհավասար կարողությունների, առանձնահատուկ կրթական կարիքների խնդիր,
- հաշմանդամության հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման հրաշագործ միջոցներ չկան, այդ առումով պետք է օգտագործել հասարակության մեջ գոյություն ունեցող բոլոր ռեսուրսները, հնարավորությունները,
- անձնային ուղղվածությամբ իրականացվող օգնության հիմքում ընկած է յուրաքանչյուր անձի բացառիկության, մարդկային արժեքի և արժանապատվության ճանաչումը, սահմանափակ կարողությունների որոշակի աստիճանի առկայությունը, ինչպես նաև կոնկրետ ստեղծված իրավիճակի առանձնահատկությունը:

Սոցիալական մանկավարժը սահմանափակ կարողություններով երեխաների հետ աշխատանքում.

1. ուսումնասիրում, հետազոտում, բացահայտում և գնահատում է երեխայի ուսումնառության ընթացքում ի հայտ եկած մտավոր և ֆիզիկական խնդիրները, կրթական կարիքները,

2. ուսումնասիրում է սովորողների գիտելիքների առաջընթացի և կարողությունների, հմտությունների զարգացման շարժընթացը, առաջարկում կրթական կարիքներին համապատասխան մանկավարժական մեթոդներ, աշխատանքի ձևեր,

3. սոցիալ-մանկավարժական տարբեր հիմնախնդիրների լուծման նպատակով անցկացնում է անհատական, խմբային պարապմունքներ,

4. անցկացնում է դասալսումներ՝ երեխայի ուսումնական գործունեության արդյունավետությունը պարզելու, բարձրացնելու, ինչպես նաև սոցիալ-մանկավարժական անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու նպատակով.

ա) հսկում, վերահսկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան գիտելիքների, կարողությունների, հմտությունների պարտադիր նվազագույն մակարդակի ապահովումը,

բ) մասնակցում է բոլոր ուղղություններով իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքներին, անցկացնում է խորհրդատվություններ, ներկայացնում է հաշվետվություններ դպրոցի ղեկավարությանը կամ նման երեխաների հետ տարվող աշխատանքները համակարգողին,

գ) ապահովում է սահմանափակ կարողություններով երեխաների առողջության և անվտանգության պահպանումը կրթադաստիարակչական գործընթացներում և այլն:

Սոցիալական մանկավարժը տարբեր սոցիալական ինստի-

տուտներում հաշմանդամների հետ շտկող, վերականգնող, փոխհատուցվող ուղղվածությամբ աշխատանքներում իրականացնում է մի շարք գործառույթներ: Դիտարկենք դրանք:

1. Տեղեկատվական-վերլուծական գործառույթ, տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն, որոնք վերաբերում են բուժական, կրթական, դաստիարակչական, վերականգնողական, սպորտային, հանգստի, հասարակական և այլ սոցիալական ինստիտուտների գործունեության ու ծառայությունների իրականացմանը, որոնք կարող են համալիր, ամբողջական աջակցություն ցուցաբերել ինչպես սահմանափակ կարողություններով երեխային, այնպես էլ նրա ընտանիքին:

2. Համակարգող-միավորող (հաղորդակցող) գործառույթ, երբ անհրաժեշտ է համախմբել երեխայի խնդիրների լուծմանը, նրա պաշտպանությանն առնչվող բոլոր սոցիալական ինստիտուտների միջոցներն ու առկա պայմանները, նրանց միջև հաստատել երկարաժամկետ փոխգործակցություն, կապ՝ ուղղված երեխայի սահմանափակ կարողությունների և նրա ընտանիքի զարգացմանը:

3. Կանխատեսող գործառույթ, որը հնարավորություն է տալիս տեղեկատվության վերլուծության և տարբեր սոցիալական ինստիտուտների ներկայացուցիչների հետ ունեցած անձնական կապերի միջոցով կանխորոշելու սահմանափակ կարողություններով երեխայի զարգացման առաջընթացը՝ հաշվի առնելով տարբեր ենթակառույցների, երեխայի անհատական հնարավորությունները:

4. Կանխարգելող գործառույթ, որն ուղղված է առողջ, մարդասիրական, դաստիարակչական հարաբերությունների ձևավորմանը հասարակության մեջ, ռիսկի խմբի ընտանիքների ժամանակին հայտնաբերմանը, որտեղ հնարավոր է սահմանափակ կարողություններով երեխաների ծնունդ կամ առկայություն, նաև այդպիսի

ընտանիքներին առաջին օգնության ցուցաբերմանը: Սոցիալական մանկավարժի աշխատանքում նախատեսված է նպատակաուղղված գործունեություն մանկական հաշմանդամության, շեղվող վարքի, միջանձնային հարաբերություններում կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելման գործում:

5. Կազմակերպչական գործառույթ, որն ուղղված է սահմանափակ կարողություններով երեխայի անձի զարգացմանը, երեխայի և նրա ընտանիքի անձնական և սոցիալական հիմնախնդիրների լուծմանը, դաստիարակչական, մանկավարժորեն կազմակերպված միջավայրի ստեղծմանը, որոնք հնարավորություն են տալիս վերականգնելու խորհրդառուի և նրա ընտանիքի սոցիալական կարգավիճակը: Սոցիալական մանկավարժը կարող է օգնել երեխային և նրա ընտանիքին հանգստի, լրացուցիչ կրթության կազմակերպման, ընտանեկան, բարեկամական փոխհարաբերությունների կարգավորման հարցերում, երեխայի սոցիալական դաստիարակության գործընթացում ընդգրկել տարբեր սոցիալական ինստիտուտներ, համակարգել դրանց գործունեությունը:

6. Վերականգնողական գործառույթ, որը ներառում է այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք հնարավորություն կտան ստանալու սահմանափակ կարողություններով երեխայի վերականգնման և սոցիալական հարմարման համար անհրաժեշտ ծառայությունների ամբողջական պատկերը:

Սոցիալական մանկավարժը սահմանափակ կարողություններով երեխաների հետ աշխատանքում իրականացնում է նաև ընտանեկան հարաբերությունների ամրապնդման, սոցիալ-իրավական, սոցիալ-աշխատանքային աջակցության գործառույթներ, որոնք պահանջում են ինչպես մասնագիտական գիտելիքներ, այնպես էլ անձնային պատրաստվածություն, համապատասխան մաս-

նագիտական էթիկական նորմերի և սկզբունքների պահպանություն: Սոցիալական մանկավարժի աշխատանքի արդյունավետության գնահատականը արտահայտվում է անձի (սահմանափակումների պայմաններում զարգացող) և հասարակության միջև փոխազդեցությունների կայացման, օգնության ցուցաբերման գործընթացում, երբ սոցիալական մանկավարժի գործունեության արդյունքում հնարավոր է դարձել հասարակության մեջ սահմանափակ կարողություններով երեխայի համար առավելագույնս կերպով ապահովել անկախություն (անկախ գործունեություն), բարձրացնել նրանց սոցիալական հարմարման, հասարակության մեջ ներգրավման մակարդակը:

Սահմանափակ կարողություններով երեխաների ներգրավումը հասարակություն ենթադրում է սոցիալ-մանկավարժական նպատակաուղղված գործունեություն, որը կազմված է հետևյալ փուլերից:

- **Առաջին փուլ**՝ սիգրեգացիա - կատարվում է մասնատում փոքր խմբերի, որի նպատակն է իրականացնել ախտորոշիչ աշխատանքներ՝ ըստ տարիքի, արատի տեսակի, բնույթի, աստիճանի:
- **Երկրորդ փուլ**՝ ինտեգրացիա - տարբեր խմբերի ներգրավումը գործընթացներում, որի նպատակն է շփման, հաղորդակցման, որոշակի գործունեության վերականգնումը, հնարավոր դժվարությունների կանխարգելումն ու հաղթահարումը, օրինակ՝ հանրակրթական դպրոցներում հատուկ դասարանների բացումը:
- **Երրորդ փուլ՝ ինկլուզիա** - այն ենթադրում է ներառում, որն ապահովում է լիարժեք զարգացումը, օրինակ՝ սահմանափակ կարողություններով երեխայի ընդգրկումը սովորական հանրակրթական դպրոցում, սովորական դասարանում:

Հաշմանդամություն ունեցող երեխաների համար առաջնա-

հերթ աջակցություն են նրանց կրթության գործի կազմակերպումն ու իրականացումը:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 25.05.2005 թվականին, կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու իրավական, կազմակերպչական և ֆինանսական հիմքերը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման բնագավառում հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Այդ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է այն մասին, որ խոսքի, լսողական և տեսողության խանգարումներ, մտավոր հետամնացություն, հենաշարժական համակարգի խախտումներ, հոգեկան զարգացման խնդիրներ, վարքային և հուզական ոլորտի խանգարումներ ունեցող երեխաները կարող են կրթություն ստանալ հատուկ և ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում, որտեղ պետք է ստեղծվեն պայմաններ, կարող են առանձնացվել հատուկ կրթության կառուցվածքային ստորաբաժանումներ՝ նման երեխաների կրթության իրավունքն ապահովելու նպատակով: Հաշմանդամություն ունեցող երեխաներն օգտվում են ինչպես հանրակրթական հաստատություններում սովորողների իրավունքներից և պարտականություններից, այնպես էլ հաշմանդամության դեպքում օրենքով սահմանված արտոնություններից: Անգամ ստացիոնար բուժական հաստատություններում գտնվելու պարագայում կրթության և առողջապահական մարմինները պարտավոր են կազմակերպել երկարատև բուժման մեջ (ոչ պակաս, քան 21 օր) գտնվող երեխայի ուսուցման գործընթացը:

Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխա-յակենտրոն մանկավարժական մոտեցումն է: Յուրաքանչյուր երե-խայի կարիքների գնահատումը, նրա անհատական զարգացման հնարավորությունների բացահայտումն ու զարգացումը նպաստում են երեխայի մասնակցությանը կրթական գործընթացին, հասարա-կությունում նրա գործառական ակտիվացմանն ու ներառմանը:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Ներառական կրթություն, հենաշարժական համակարգ:

ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են բնածին և ձեռքբերովի հաշմանդամության տար-բերություններն ու ընդհանրությունները:
2. Ինչպիսի՞ն է հաշմանդամության խնդրին հասարակության վերաբերմունքի կարևորության հարցի նշանակությունը:
3. Որո՞նք են այն հիմնախնդիրները, որոնք ունեն հաշման-դամ երեխա ունեցող ընտանիքները:
4. Ի՞նչ սոցիալական դերեր է իրականացնում սոցիալական մանկավարժը հաշմանդամ երեխաների հետ աշխատանքում:
5. Որո՞նք են ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները (դժվարություններն ու առավելություն-ները):
6. Ըստ հաշմանդամության տեսակների՝ որո՞նք են սոցիալա-կան մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Լսարանում քննարկե՛ք այն հնարավոր խնդիրները, որոնք ի հայտ են գալիս տարրական դպրոցի ներառական ուսուցման գործընթացում: Ինչպե՞ս հաղթահարել դրանք, պարզաբանե՛ք սոցիալական մանկավարժի հնարավոր մասնակցությունն այդ գործընթացում:

2.Ներկայացրե՛ք սոցիալական մանկավարժի աշխատանքը դպրոցի բազմամասնագիտական թիմում, առանձնացրե՛ք այն կառույցները, որոնք կարող են համագործակցել այդ թիմի հետ: Կազմե՛ք սխեմա:

3.Ներկայացրե՛ք հաշմանդամություն ունեցող հանրահայտ մարդկանց (պետական գործիչներ, գիտնականներ, երաժիշտներ, գրողներ, նկարիչներ) կյանքն ու գործունեությունը, քննարկե՛ք հաշմանդամության դերն ու ազդեցությունը նրանց կյանքում:

3.12. Սոցիալական մանկավարժի աշխատանքն օժտված երեխաների հետ

Մարդկության զարգացման բոլոր ժամանակներում գոյություն են ունեցել մարդկային վարքաձևերի շեղումներ՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական ուղղվածությամբ, օրինակ՝ նորմայից շեղումներ են համարվում և՛ մտավոր հետամնացությունը, և՛ մարդու օժտվածությունը, նրա տաղանդավոր, հանճարեղ լինելը:

«Առողջապահության համաշխարհային կազմակերպության» որոշմամբ օժտված երեխաները ևս համարվում են «ռիսկի խմբի» երեխաներ մտավոր հետամնացություն, իրավախախտ վարքագիծ,

ալկոհոլի օգտագործման հակում ունեցող երեխաների կողքին: Նրանց անհրաժեշտ են դաստիարակչական հատուկ միջոցներ ու մեթոդներ, անհատական զարգացման, հատուկ ուսումնական ծրագրեր, հատուկ պատրաստականություն ունեցող ուսուցիչներ, հատուկ դպրոցներ»[103]:

Օժտվածությունը մարդու բնածին առանձնահատկությունների ամբողջությունն է, որը նախադրյալ է ընդունակությունների զարգացման համար: Տարբերում են ընդհանուր օժտվածություն (որպես անձի բանականության ընդհանուր զարգացման նախադրյալ) և մասնավոր օժտվածություն (հատուկ՝ մաթեմատիկական, երաժշտական և այլ ընդունակությունների զարգացման նախադրյալները): Արտակարգ օժտվածությունը նախապայման է տաղանդի և հանճարի զարգացման համար:

Պարզ է, որ բազմակողմանիորեն օժտվածության պարագայում երեխաները դպրոցում հեշտությամբ են յուրացնում գիտելիքները, և շատ հաճախ նրանց հետագա գործունեությունն ուղղվում է ինքնուրույն կերպով գիտելիքների յուրացմանը, սեփական ուժերի ու ընդունակությունների ճանաչմանն ու բացահայտմանը: Սակայն, երբեմն օժտված երեխաները հանդիպում են բազմաթիվ դժվարությունների իրենց հնարավորությունները բացահայտելու, տեղեկատվության ստացման, սեփական ուժերը կառավարելու, աշխատանքի ու աշխատունակության ուղղորդման, վերահսկման, գիտելիքների համակարգման, մասնագիտական կողմնորոշման և այլ տեսանկյուններից: Դրական շեղումները ծառայում են մարդու, հասարակության զարգացմանը և համարվում են հին նորմերը նորով փոխարինելու կարևոր նախապայման: Օժտված երեխաներն

---

[103] **Василькова Ю. В.,** Социальная педагогика: Курс лекций. Учеб. пособие для студ., М., 2004, стр. 381.

առանձնանում են իրենց հուզակամային, վարքագծային որակներով, գիտելիքների խորը իմացությամբ, ստեղծագործական բացառիկ կարողություններով, մեծերի, իրենց հասակակիցների հետ ոչ սովորական փոխհարաբերություններով և այլն: Այսպիսի երեխաները սոցիալական միջավայրում առավել զգացմունքային են, աշխատում են շփվել մեծահասակների հետ, փորձում են նրանց զարմացնել, հիացմունք պատճառել, իրենց վերաբերյալ մեծահասակներից ստանալ լուրջ, հիմնականում դրական գնահատականներ և այլն: Մեծահասակների կողմից օժտված երեխաների ընդունակությունների չափից ավելի գովաբանումն ու մեծարումը երբեմն հանգեցնում է նրանց մոտ բնավորության այնպիսի գծերի ձևավորմանը, ինչպիսիք են՝ մեծամտությունն ու պարծենկոտությունը, եսասիրությունն ու պահանջկոտությունը, համարձակությունն ու անուշադրությունը շրջապատի նկատմամբ և այլն: Հասակակիցների հետ օժտված երեխաների հարաբերությունները հաճախ անկայուն են, քանի որ նրանք ունեն առավելություններ և գրեթե միշտ ձգտում են իրենց առավելության ցուցադրման, որի ձգտման դրսևորման ձևերը բազմազան են: Դրանք են. ուրիշներին բացասական առումով գնահատելը, սեփական հնարավորությունները գերագնահատելը, հաջողությունների մասին հաճախակի խոսելը, նկատողություններ անելը, մեղադրանքը (երբեմն ոչ տեղին), խորհուրդների պարտադրումը և այլն: Նրանցից շատերի մոտ թույլ է արտահայտված ընկերասիրության զգացումը: Այդ իսկ պատճառով երբեմն հասակակիցները նրանց պիտակավորում են ու ծաղրում: Լինում է և հակառակը: «Կենցաղում այդպիսի երեխաները բոլորովին զուրկ են ինքնուրույնությունից, անշնորհք են նույնիսկ ամենատարրական ինքնասպասարկման հարցերում: Նրանք պահանջում են մշտական հոգացողություն իրենց նկատմամբ՝ բոլոր ծառայությունները դիտե-

լով մի ինչ-որ պարտավորություն իրենց նկատմամբ»[104]: Օժտվածությունը լինում է տարբեր: Յ. Վասիլկովան առանձնացնում է օժտվածության հետևյալ տեսակները.

- սոցիալական օժտվածությունը, որն անվանվում է նաև լիդերային. դա անհանգստություն չի պատճառում ո՛չ դպրոցում, ո՛չ ընտանիքում,
- գեղարվեստական օժտվածություն, որը բավականին ուսումնասիրված է, և այն ներառում է երաժշտական, կերպարվեստի, բեմարվեստի ոլորտները,
- հոգեշարժողական օժտվածությունը, որը ենթադրում է սպորտային բացառիկ կարողություններ,
- ակադեմիական օժտվածություն, որն արտահայտվում է սովորելու ոչ սովորական կարողություններում՝ նպաստելով ապագայում գերազանց մասնագիտացման ձեռքբերմանը,
- մտավոր օժտվածություն, որը մտածելու, փաստերը վերլուծելու, համադրելու, հակադրելու բացառիկ կարողություն է: Երբեմն նման երեխաները սովորում են մեկ-երկու առարկա այդ ձևով: Այդպիսի երեխաները դպրոցում սովորում են գերազանցությամբ,
- ստեղծագործական օժտվածություն, որն արտահայտվում է աշխարհի, տարբեր երևույթների նկատմամբ ոչ ստանդարտ մտածողությամբ, ընկալմամբ, բացահայտմամբ[105]:

Դպրոցում սովորում են տարբեր ընդունակություններ ունեցող երեխաներ, և դպրոցը կրում է պատասխանատվություն յուրաքանչյուր երեխայի ընդունակությունների, տարբեր կարողությունների

---

[104] **Պետրունեկ Վ. Պ., Տառան Լ. Ն.,** Տագնապային տարիք, Եր., 1975, էջ 77:

[105] **Василькова Ю. В.,** Социальная педагогика: Курс лекций. Учеб. пособие для студ., М., 2004, стр. 382.

զարգացման, նրանց կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար: «Գիտնականների հաշվարկներով դպրոցականների յուրաքանչյուր տարիքային փուլում 3%-ից մինչև 8%-ը օժտված են առանձնահատուկ կարողություններով ու տաղանդով»[106], ուստի մեծ պարտավորություններ ունեն ուսուցիչներն ու ծնողները, սոցիալական մանկավարժն ու տարբեր մասնագետները՝ տարբերակելու ու զարգացնելու յուրաքանչյուր երեխայի ընդունակությունները, առավելագույն կերպով օգտագործելով երեխայի ողջ ներուժը (ինչպես նաև գոյություն ունեցող արտաքին ռեսուրսները):

Ռուս մեծ մանկավարժ Վ. Ն. Սորոկա-Ռոսինսկին դժվար դաստիարակվող երեխաների երրորդ խումբը համարում էր օժտված երեխաների խումբը[107]: Այս խմբին են պատկանում հուզակամային, հուզահաղորդակցական խախտումներով և որոշակի օժտվածությամբ երեխաները, որոնց բնորոշ են ագրեսիվությունը, զգացողությունների անբավարար կառավարումը, բնավորության որոշ գծերի շեշտադրումը, մտածողության յուրատիպությունը, հակակարգապահական, հակասոցիալական արարքները, որոնք ինչ-որ իրավիճակում կամ պայմաններում կարող են փոխակերպվել օրինակելի վարքաձևերի: Միևնույն ժամանակ նրանք ունեն ստեղծագործական մեծ էներգիա, ընդունակություններ, հետաքրքրություններ, իրենց տարիքի երեխաներից տարբերվում են ուսման նկատմամբ ունեցած վերաբերմունքով, աշխատունակությամբ: Հնարավոր է, որ նման երեխաները չունեն վատ սովորություններ, նրանք կապվում են դպրոցին, այն մարդկանց, որոնք իրենց համարում են գիտակ-

---

[106] Համեմատական մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ /Հարությունյան Ա., Եր., 2011, էջ 43:

[107] **Мардахаев Л. В.,** Социальная педагогика: Учебник, М., 2003, стр. 142.

ներ, օգնում են նրանց բավարարելու իրենց գիտելիքի նկատմամբ ունեցած ծարավը: Առանձնանում են նաև երեխաներ, որոնք ֆիզիկապես թույլ են, ունեն հուզական և վարքային դժվարություններ, միջին ընդունակություններ, սակայն առանձնանում են հատուկ օժտվածությամբ (արվեստ, գրականություն և այլն): Իհարկե, կան նաև երեխաներ, որոնք հոգեպես, ֆիզիկապես առողջ են, տաղանդավոր, սակայն գտնվում են արտաքին գործոնների ազդեցությունների (ընտանիք, փողոց) ներքո և չեն ցուցաբերում նորմերից բարձր օժտվածություն: Սա բացասաբար է անդրադառնում ուսման նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի, արժեքային, բարոյական նորմերի պատկերացումների վրա: Մարդու ժառանգական, հոգեկան առանձնահատկությունները, վարքի ինքնատիպությունը, միջավայրի ազդեցությունները, ինքնակրթությունն ու ինքնադաստիարակությունը երբեմն նրան առանձնակի տարբերակվածության, այս կամ այն օժտվածության դրևորման հնարավորություն են տալիս:

Առանձնանում են նաև երեխաներ, որոնց օժտվածությունն արտահայտված չէ կամ թաքնված է: Այսպիսի դեպքերում առավել կարևոր նշանակություն է ստանում սոցիալական մանկավարժի աշխատանքը նման երեխաների, նրանց ծնողների և ուսուցիչների հետ: Օժտված երեխան ընտանիքի, ծնողների համար «ընտանքի կուռք, պաշտամունք» կարող է համարվել: Այս մոտեցման պայմաններում երբեմն ծնողներն իրենց երեխաների ընդունակությունները չափից բարձր են գնահատում, իրենք՝ երեխաները, ունեն բարձր ինքնագնահատական, որը հաճախ կարող է հանգեցել հուսալքության: Առավել ևս դա վտանգավոր է դառնում դեռահասության տարիքում: Ի՞նչ է տեղի ունենում: Ծնողներն իրենց երեխաների ունեցած այս կամ այն հաջողությունը, արարքները արձանագրում են

որպես երեխաների մոտ դրսևորվող օժտվածության փաստ: Այդ մասին նրանք միշտ պատմում են, խոսում են: Կատարվում են երեխաների բոլոր պահանջներն ու ցանկությունները, նրանց ամեն ինչ թույլատրվում է, ներվում են անգամ նրանց որոշ արարքներն ու բացթողումներն ուսման կամ այլ բնագավառներում: Եվ ահա գալիս է մի ժամանակ, երբ շատերի կողմից նկատվում է, որ երեխայի օժտվածության փաստը, կարծես, արդեն վառ արտահայտված չէ. երեխան չունի բացառիկ ընդունակություններ: Նախկինում, ունենալով օժտվածության գնահատումներ, նրանց չեն ներկայացվել բազմաթիվ այլ պահանջներ, առավել ևս, երբ օժտվածությունը մի որևէ բնագավառում է դրսևորվել: Արձանագրվում են բացթողումներ ուսման բնագավառում, դժվարություններ անձի ձևավորման առանձնահատկությունների զարգացածության, տարբեր սոցիալական փոխհարաբերությունների առումներով: Երեխաների մոտ թույլ են զարգացած կամ սկսում են թուլանալ ամենօրյա աշխատանքի ունակություններն ու հմտությունները: Նման երեխաներին երբեմն թվում է, որ բոլորն անարդարացի գնահատումներ են անում, միմյանց հետևից կրկնվում են անհաջողությունները, կամ նրան ինչ-որ մտացածին պատճառներով սկսում են անտեսել, այլևս անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում և այլն: Երեխան կամաց-կամաց զիջում կամ թողնում է դասարանում, ընտանիքում բացառիկ ընդունակություններ ունեցող աշակերտի, զավակի իր դիրքերը: Ստեղծվում է երեխայի անձի զարգացման տեսանկյունից վտանգավոր ու անբարենպաստ մի իրավիճակ: Այսպիսի իրավիճակներում երբեմն երեխաները փորձում են արտաքին տպավորություններ ստեղծել, հորինում են պատմություններ, դիմում են տարբեր հնարամտությունների, հիվանդ են ձևանում: Ուստի շատ կարևոր են դառնում ծնողների, ուսուցիչների, սոցիալական մանկավարժի և այլ մասնա-

գետների կողմից երեխայի օժտվածության փաստի ժամանակին և ճիշտ բացահայտումն ու ախտորոշումը:

«Սոցիալական մանկավարժը պետք է առաջին հերթին հիշի, որ ինչպիսի օժտվածությամբ էլ լինի երեխան, նա պետք է սովորի»[108]:

Սոցիալական մանկավարժն օժտված երեխաների հետ աշխատանքում պետք է կարողանա հստակորեն վերլուծել իր և երեխայի փոխհարաբերությունները, դրանով պայմանավորված՝ ընտրել նրա հետ փոխգործակցության, փոխազդեցության արդյունավետ ձևեր:

Օժտված երեխաների հետ սոցիալ-մանկավարժական աշխատանքի հիմնական ուղղություններն են՝

- ախտորոշիչ
- հոգեշտկողական,
- առողջապահական,
- կրթադաստիարակչական,
- սոցիալ-իրավական,
- խորհրդատվական,
- լուսավորչական:

Ախտորոշիչ ուղղությունը ենթադրում է համալիր բժշկահոգեբանամանկավարժական ախտորոշում՝ ուսումնասիրելով տարիքային, անհատական, հոգեկան զարգացման մակարդակը, շեղումները, ուսման ընթացքում հարմարման հետ կապված դժվարությունները, աստիճանը, խմբային փոխազդեցությունները:

Հոգեշտկողական ուղղությունը ենթադրում է անձնական բնույթի հոգեբանական բարդույթների հաղթահարում, վարքի դրական ձևերի ամրապնդում, հուզական լարվածության թուլացում, հո-

---

[108] **Василькова Ю. В.,** Социальная педагогика: Курс лекций. Учеб. пособие для студ., М., 2004, стр. 383.

գեբանական խնդիրների լուծման գործում օգնության ցուցաբերում:

Առողջապահական ուղղությամբ աշխատանքներն ենթադրում են ստեղծագործական գործունեության իրականացման համար անհրաժեշտ առողջ ապրելակերպի կազմակերպում, անհատական բժշկական, սպորտային միջոցառումների պլանավորում և անցկացում, անհատական առողջապահական ծրագրերի մշակում, կազմում:

Կրթադաստիարակչական ուղղությամբ աշխատանքները ենթադրում են օժտված երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, կրթական ծրագրերի մշակմանն ուղղված աշխատանքների կազմակերպում, համակարգում, զարգացման համար անհրաժեշտ այլընտրանքային ուղիների որոնում, տարբեր մակարդակներում նրանց հետաքրքրությունների ներկայացում:

Սոցիալ-իրավական ուղղությամբ աշխատանքները հիմնականում տարվում են օժտված երեխաների, նրանց ծնողների իրավունքների և շահերի պաշտպանության, մասնագիտության կողմնորոշման, մասնագիտության ընտրության հետ կապված հարցերում անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման նպատակով:

Խորհրդատվական ուղղությունը ներառում է ինչպես օժտված երեխայի, այնպես էլ նրա ընտանիքի, ընկերների, կրթական միջավայրի բոլոր սուբյեկտների հետ տարբեր խորհրդատվական աշխատանքների կազմակերպում, կոնֆլիկտների հաղթահարմանն ու կարգավորմանն ուղղված խորհրդատվական օգնության ցուցաբերում:

Լուսավորչական աշխատանքները հիմնականում ներառում են տեղեկատվության հավաքումը և տրամադրումը, որոնք վերաբերում են օժտված երեխաների հետագա գործունեությանն ու զար-

գացմանը, ինչպես նաև տեղեկատվական բանկի ստեղծումը, որտեղ տեղադրված են նման երեխաներին վերաբերող կարևոր տվյալներ, արձանագրված են նրանց ձեռքբերումներն ու նվաճումները:

Սոցիալական մանկավարժն օժտված երեխաների հետ աշխատելիս իրականացնում է տարբեր գործառույթներ՝ հետազոտող, ախտորոշող, կանխատեսող, խորհրդատվական և այլն՝ նպատակ ունենալով նրանց ուղեկցել կյանքի դժվարին ու բարդ իրավիճակներում: Այսպես օրինակ՝ ախտորոշող գործառույթի իրականացումը սկսվում է սոցիալ-հոգեբանամանկավարժական ամբողջական հետազոտությունից. ախտորոշվում են տվյալ երեխայի անհատական առանձնահատկությունները, նրա զարգացման յուրահատկությունները, օժտվածության տեսակը, աստիճանը, արվում են համեմատությունները, ընդգծվում են նրա տարբերակվածության դրսևորումները, հաջողությունները, ձեռքբերումները, սոցիալական միջավայրում նրա կողմից իրականացվող սոցիալական դերերը, բացահայտվում են միջավայրի և օժտված երեխայի փոխազդեցությունները, նրա սոցիալականացման վրա դրական և բացասական տարբեր գործոնների ազդեցությունները: Օգտագործվում են դիտման, հարցման տարբեր մեթոդներ (հարցազրույց, անկետաներ) և մեթոդիկաներ, օրինակ՝ հետազոտության սոցիոմետրիկ մեթոդիկայի միջոցով հնարավոր է պարզաբանել դասարանում միջանձնային հարաբերությունների բնույթը (համակրանքներն ու հակակրանքները): Օժտված երեխաների հետ աշխատանքում սոցիալական մանկավարժի կողմից կիրառվում են հաղորդակցական-տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնց միջոցով կարելի է ստեղծել փոխազդեցություններ և փոխներգործություններ, նոր վարքագծեր, ընկալել, գնահատել և մեկնաբանել մեկը մյուսի վարքագիծը, լուծել հուզող խնդիրները, բավարարել գոյաբանական, հոգևոր ու նյութա-

կան պահանջմունքները, զարգացնել ինքնաճանաչողությունը: Կիրառվում են նաև կազմակերպչական տեխնոլոգիաներ, իրականացվում է դաստիարակչական խորհրդատվություն (երկարաժամկետ, կարճաժամկետ, պարբերական, հրատապ-իրավիճակային) սոցիալ-մանկավարժական բոլոր ոլորտներում: Դաստիարակչական խորհրդատվական աշխատանքն օժանդակ օգնություն է բուն դաստիարակության գործընթացի իրականացման հարցում ոչ միայն կրթական հաստատությունում, այլև դրա շրջանակներից դուրս՝ ընտանիքում, հասակակիցների, ընկերական միջավայրում և այլն:

Անշուշտ, պակաս կարևոր չէ սոցիալական մանկավարժի աշխատանքն օժտված երեխաների ծնողների հետ: Ծնողները պետք է իմանան, որ.

- իրենց երեխայի ընդունակությունները բացառիկ են,
- նման երեխաները չպետք է դառնան ընտանիքի համար ամեն ինչ,
- ծնողական «կույր» սիրո պայմաններում վտանգվում է երեխայի հաջող սոցիալականացման գործընթացը,
- ընտանիքում կոնֆլիկտները նման երեխաների մոտ առաջացնում են խիստ ճնշվածություն,
- երեխայի անձնային ռեսուրսները (ինչ-որ առումներով) նույնպես կարող են սահմանափակ լինել,
- նման երեխաներն ունեն ոչ սովորական վարքագիծ. շատ հաճախ անհանդուրժող են, արագ փոխվում է նրանց տրամադրությունը,
- անհրաժեշտ է հետևել նրանց տարիքային զարգացման կենսաբանական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին,

- նման երեխաների մոտ բոլոր հնարավոր խնդիրների կանխարգելման, առաջացման, լուծման գործընթացում սոցիալական մանկավարժի աջակցությունն անհրաժեշտ է:

Օժտված երեխաների հետ սոցիալական մանկավարժի գործունեությունը նպատակաուղղված է երեխայի ունեցած հսկայական ներուժը ստեղծագործական աշխատանքի փոխակերպմանը, ստեղծագործական միջավայրի, երեխայի անձի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, նրանց անհրաժեշտ տարբեր տեսակի օգնության և աջակցության ցուցաբերմանը:

Մարդկային կյանքի, ողջ հասարակության ձեռքբերումները, ընթացող զարգացումները հիմնականում օժտված երեխաների, մարդկանց գիտելիքների, նրանց նպատակամետ գործունեության արդյունքն են:

ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:

Վարքի շեղում, օժտվածություն, հոգեկան հատկություններ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ դժվարություններ ունեն օժտված երեխաները:
2. Որո՞նք են երեխայի օժտվածությունը բնութագրող առանձնահատկությունները:
3. Որո՞նք են օժտվածության տեսակները:
4. Ինչպիսի՞ աշխատանքներ կարող է իրականացնել սոցիալական մանկավարժն օժտված երեխաների հետ:
5. Ինչպիսի՞ աշխատանքներ կարող է իրականացնել սոցիալական մանկավարժն օժտված երեխաների ծնողների հետ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Քննարկե՛ք «Դեռահասության փարիքում օժտված երեխաների ունեցած դժվարությունները, դրանց հաղթահարման ուղիներն ու ձևերը սոցիալական մանկավարժի աշխատանքի տեսանկյունից» թեման ամբողջ լսարանով և ներկայացրե՛ք լուծման առաջարկներ:

2. Քննարկե՛ք սոցիալական մանկավարժի աշխատանքում օժտված երեխայի վարքի դիտարկման անհրաժեշտությունը: Ներկայացրե՛ք վարքագծի դիտարկման արդյունքում արված որոշ մեկնաբանություններ:

ԲԱՌԱՐԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1.1

Համագործակցություն – միասին՝ փոխադարձաբար միմյանց օգնելով գործելը, միասնաբար և փոխօգնությամբ գործակցելը, միասին աշխատելը:

Վարքագծային նորմ – գործողությունների կամ արարքների կանոն կամ մոդել, որը բնորոշ է կոնկրետ իրավիճակին, գիտակցված ու ընդունված է հանրույթի կողմից:

Սոցիալական փորձ – գործողությունների արդյունք, որն առաջանում է շրջապատող միջավայրի հետ ակտիվ փոխներգործության ժամանակ և կուտակվում, հաստատվում ու փոխանցվում է հասարակության մեջ:

Սոցիալական երևույթ – սոցիալական իրականության տարր, որը գտնվում է սոցիալական տարածության մեջ, ունի սոցիալականին բնորոշ բոլոր հատկությունները:

1.2

Մանկավարժական օգնություն – մանկավարժի գործունեություն՝ ուղղված երեխաների ինքնուրույնության զարգացմանը:

Ասպեկտ – տեսանկյուն, հայեցակետ:

Հասարակականություն – հասարակական լինելը, հասարակական կյանքով ապրելու հատկությունը:

Ինտեգրատիվ գիտություն – ամբողջական գիտություն, որը բաղկացած է ներգրավված տարբեր մասերից կամ գիտություններից:

1.3

Օրինաչափություն – երևույթների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատճառահետևանքային անհրաժեշտ կապ, փոխադարձ պայմանավորվածություն:

Մեխանիզմ – սարքավորում, գործիքների համակարգ, գործիքակազմ:

Թերապևտիկ – բուժում՝ առանց վիրաբուժական միջամտության, ներքնաբուժություն:

Հայեցակարգային – գաղափարական, պատկերակցական, հասկացութային:

Սխեմա – կառուցվածք, դասավորություն, պարզեցրած գծագրական պատկեր:

1.5

Ռազմավարություն – հանգամանորեն մշակված ծրագիր մեկ կամ մի քանի նպատակների հասնելու համար՝ անկանխատեսելի ու անցանկալի իրավիճակներից խուսափելու նպատակով:

Կատեգորիա –հասկացություն:

1.6

Ինքնադաստիարակություն –Անձի գիտակցված ու նպատակաուղղված աշխատանքն իր դրական կողմերի ձևավորման ու կատարելագործման և բացասական կողմերի վերացման ուղղությամբ:

Կոորդինացում – կարգավորում, կանոնավորում:

1.7

Վարկած – որևէ խնդրի մասին արտահայտված գիտական ենթադրություն, որը դեռևս փորձնական կամ փաստացի ապացուցման կարիք ունի:

Ցուցանիշ – որևէ բանի զարգացումը, ընթացքը, վիճակը և

այլն բնութագրող տվյալ, փաստ, հանգամանք:

Հրահանգ – որևէ բան իրագործելու կարգն ու միջոցները սահմանող կանոնների ամբողջությունը, ղեկավար ցուցումներ:

Տակտ – չափի, չափավորության զգացում:

Խորհրդատվություն – որևէ կերպ վարվելու ցուցում, խրատ, առաջարկ:

Թրեյնինգ – մարզում, ակտիվ ուսուցման ձև՝ ուղղված գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանը՝ սոցիալական կարգավորիչների կիրառմամբ:

1.8

Նորմ – ընդհանուր ճանաչում գտած կարգ, կանոն: Որևէ բանի սահմանած չափ, քանակ:

Սոմատիկ – մարմնական, մարմնին վերաբերող:

Տրավմա – վնասվածք:

Դեբիլություն – մտավոր զարգացման թույլ արտահայտված խանգարում, մտավոր հետամնացության ամենաթեթև աստիճանը, որը պայմանավորված է զարգացման խանգարումներով կամ ներարգանդային զարգացման շրջանում պտղի ստացած վնասվածքով:

Աուտիզմ – ուղեղի կանոնավոր զարգացման փոփոխությունների մի ամբողջ համակարգ է, որը կարող է հանգեցնել շփման, բանավոր և ոչ բանավոր հաղորդակցության և կրկնվող վարքագծի տարբեր աստիճանների դժվարությունների:

Սուիցիդ – ինքն իրեն կյանքից դիտավորյալ զրկում, ինքնասպանություն:

Սոցիալական որբ – այն երեխան, որը ծնողներ ունի, բայց մնացել է առանց նրանց խնամքի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ. ՄԱՐԴՈՒ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1

Ներուժ – մեկի, մի բանի ներսում իբրև թաքնված ուժ, զորություն, որը համապատասխան սոցիալական միջավայրում և պայմանների, միջոցների առկայության դեպքում կարող է դրսևորվել:

Սոցիալական միջնորդ – սոցիալականացման ընթացքում անհատից անձ ձևավորման ընթացքում, սուբյեկտ-սուբյեկտ համագործակցության ժամանակ մարդուն աջակցող, օգնող անձ, որը, սոցիալականացման փուլերով պայմանավորված, իրականացնում է տարբեր սոցիալական դերեր:

2.2.1

Գեն – ա. ժառանգակիր, ժառանգականության տարրական միավոր, որը ԴՆԹ-ի հատվածն է և կրում է որոշակի ամբողջական տեղեկատվություն մեկ մոլ (չափման միավոր) սպիտակուցի մոլեկուլի կամ մեկ ՌՆԹ-ի մոլեկուլի կառուցվածքի մասին:

բ. Գենն ապահովում է որևէ հատկանիշի առաջացումն ու զարգացումը կամ մասնակցում օրգանիզմի մի քանի հատկանիշների ձևավորմանը: Գենների ամբողջությունը ծնողները փոխանցում են սերնդին բազմացման ընթացքում:

Ժառանգականություն – կենդանի օրգանիզմների՝ որոշակի հատկանիշներ պահպանելու և ծնողական օրգանիզմների՝ իրենց հատկանիշները և զարգացման առանձնահատկությունները հաջորդ սերնդին փոխանցելու հատկություն, որն իրականանում է բազմացման միջոցով: Ընդ որում, սեռական բազմացման դեպքում ժառանգականությունն ապահովվում է հատուկ սեռական բջիջների՝ գամետների (իգական-ձվաբջիջներ և արական-սպերմատա-

զոիդներ) միջոցով, իսկ անսեռ բազմացման ժամանակ՝ մարմնական (սոմատիկ) բջիջների միջոցով:

Ժառանգման մեխանիզմ – ծրագրավորման մեխանիզմ, որը թույլ է տալիս գեների փոխանցման արդյունքում ստեղծել մի նոր հատկանիշ կամ հատկություն:

2.2.2.

Գործոն – որևէ գործի իրողության ընթացքը պայմանավորող երևույթ, շարժառիթ, հանգամանք, ազդակ, որը հնարավորություն է տալիս բացահայտելու գործի, երևույթի առանձին մասերը կամ բովանդակությունն ամբողջությամբ:

Ազդակ – ա. այս կամ այն երևույթն առաջ բերող գործոն, պատճառ, հանգամանք,

բ. որևէ բանի նպաստող ու առաջ մղող հանգամանք, խթան:

2.3.

Սոցիալականացման փուլ – կյանքի ընթացքում անձնավորվելու պահանջմունքների բավարարաման ողջ ընթացքը, երբ անհատը անձ է դառնում՝ ձեռք բերելով հասարակական պատմական փորձ, այնուհետև իր վրա է վերցնում այդ փորձը մատաղ սերնդին փոխանցելու պարտականությունը:

Անհատ- կենսաբանական, բանական, չսոցիալականացված մարդը, որն իր տեսակին բնորոշ գենետիկական, ժառանգական հատկությունների կրողն է:

Անձ – սոցիալականացված անհատը: Անձը հասարակական հարաբերությունների և գիտակցված գործունեության սուբյեկտ է: Յուրաքանչյուր ոք ծնված օրվանից անհատ է, սակայն նա դառնում է անձ սոցիալականացման արդյունքում: Այսինքն՝ անհատը կենսաբանական էակ է, իսկ անձը՝ սոցիալ-հոգեբանական:

Անհատականություն – մարդու հոգեկան ու ֆիզիկական հատ-

կանիշների այն յուրահատկությունը, ինքնատիպությունը, որով նա տարբերվում է մնացած բոլորից: Անհատականության մեջ ընդգրկվում են անձնավորության համեմատաբար կայուն և մշտական հատկությունները: Անհատականությունը մարդու բնական (կենսաբանական) հատկանիշների ու հասարակական պայմանների փոխազդեցության արդյունք է:

Ակտուալ – արդիական, այժմեական, ժամանակակից, հրատապ:

Պահանջմունք – ա. նորմալ կենսագործունեության և հոգեկան ակտիվության համար անհրաժեշտ որևէ երևույթի, արժեքի կարիքը, օրգանիզմի գոյատևման խթան,

բ. այն ամենի ամբողջությունը, ինչի կարիքն ունի կենդանի օրգանիզմը՝ իր կենսագործունեությունը պահպանելու, գոյատևելու, հարմարվելու և զարգանալու համար:

Զարգացում – ա. վերընթաց պարուրաձև շարժում, շարժման բարձրագույն տեսակ՝ ստորինից, պարզից դեպի բարձրը, բարդը, հին որակից նոր որակն օրինաչափ անցումով,

բ. կեցության ու ճանաչողության համընդհանուր ու հիմնարար հատկություններից, օբյեկտների կառուցվածքի ու կազմության այնպիսի փոփոխություն է, որի հետևանքով առաջանում է որակական նոր վիճակ,

գ. դրսևորվում է էվոլյուցիայի և հեղափոխության ձևով:

2.3.1

Դրդապատճառ – մարդու այս կամ այն վարքի սուբյեկտիվ պատճառն է, պահանջմունքների կոնկրետ ու հուզականորեն հագեցված դրսևորումներն են կյանքի որոշակի իրադրություններում:

Ակսելերացիա – մտավոր, ֆիզիկական, հոգևոր զարգացման արագացում՝ նախորդ սերունդների համեմատ:

2.4

Օբյեկտ – ա. մեզանից դուրս և մեր գիտակցությունից անկախ գոյություն ունեցող արտաքին աշխարհը, նյութական աշխարհը, բ. գործողության, գործունեության առարկա:

Սուբյեկտ և օբյեկտ (լատ.՝ subjectus – ենթակա, լատ.՝ objectum – առարկա)

ա. Փիլիսոփայական հասկացություններ են: Սուբյեկտը հասարակական մարդն է, հասարակական խումբը կամ մարդկությունը (մարդն առհասարակ), որքանով, որ նա հանդես է գալիս որպես գործողություն կատարող ու ճանաչողության կրող, և համապատասխանաբար իրեն առանձնացնելով արտաքին աշխարհից՝ գիտակցում է իր ինքնությունը (որպես ես), իրեն հակադրում է ճանաչողության ու գործողության առարկային՝ որպես օբյեկտի:

բ. Իմացաբանական առումով ևս սուբյեկտը հանդես է գալիս որպես ակտիվ գործող, որն առանձնացնում է ճանաչողության իր օբյեկտը և ճանաչողության ընթացքում վերակառուցում է այն:

Պոտենցիալ – որևէ բանի, մեկի հզորության չափը, աստիճանը, որևէ նպատակով օգտագործվող և օգտագործելի հնարավորությունների, կարողությունների ամբողջությունը, ներուժը:

Լատենտ – գաղտնի, արտաքնապես չդրսևորված, զարգացման ընթացքում գտնվող, թաքնված: Անձ, որը, չունենալով անհրաժեշտ նախադրյալներ, չի ինքնահիրացվում սոցիումում՝ չկարողանալով զարգացնել ներքին ընդունակությունները:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1

Սոցիալական պաշտպանություն – քաղաքացիների՝ օրենսդրորեն ամրապնդված, սոցիալական, իրավական և տնտեսական երաշխիքների իրացման առաջնահերթությունների և մեխանիզմների համակարգը, որն ապահովում է կյանքի արժանապատիվ մակարդակն ու որակը:

Սոցիալական քաղաքականություն – պետության, հասարակության քաղաքական համակարգի այլ ինստիտուտների գործունեությունն ուղղված սոցիալական ոլորտի զարգացմանը՝ սոցիալական առաջնահերթությունների հաշվառմամբ:

Իրավունք – հասարակական պարտադիր նորմերի, նորմատիվային հարաբերությունների համակարգը, որն իրավաբանորեն ամրագրված է և պաշտպանվում է պետության կողմից:

Հասարակություն – մարդկանց կապերի ու փոխհարաբերությունների հանրագումարը, կենսագործունեության պատմականորեն զարգացող ձևը, համախմբությունը, որը զբաղեցնում է հարաբերականորեն սահմանափակ տարածություն, ունի շատ թե քիչ արտահայտված մշակութային ինքնատիպություն, տարաբնույթ ինստիտուտներ, կառուցվածքներ:

Կրթություն (ընդհանուր և հատուկ (մասնագիտական), ինքնակրթություն) – համակարգված գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման գործընթացն ու արդյունքը, որն անհրաժեշտ պայման է մարդու արդյունավետ կենսագործունեության համար: Տարբերակվում են ընդհանուր և հատուկ (մասնագիտական) կրթության ձևերը, որոնք բովանդակավորվում են հասարակական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, գիտա-

տեխնիկական, գաղափարաբանական զարգացումներով: Կրթության գործընթացում նշանակալից տեղ է զբաղեցնում ինքնակրթությունը:

3.2.

Սոցիալ-մանկավարժական գործընթաց – սոցիալ-մանկավարժական երևույթի զարգացման դինամիկան, նաև սոցիալական մանկավարժի գործողությունների սահմանված հաջորդականությունը, փոխազդեցությունը դաստիարակողի և դաստիարակվողի միջև, որն ապահովում է սոցիալ-մանկավարժական նպատակների ձեռքբերումը:

Մանկավարժական պայմաններ – մանկավարժական համակարգի բաղադրիչ, որն արտացոլում է միջավայրի կրթական, նյութական-տարածական հնարավորությունների հանրագումարը և կարող է ունենալ դրական կամ բացասական ազդեցություն համակարգի գործունեության ու զարգացման վրա: Առանձնացվում են կազմակերպչական-մանկավարժական, հոգեբանական-մանկավարժական, դիդակտիկ պայմանները:

Հարմարում – արտաքին կամ ներքին միջավայրի պայմանների փոփոխության դեպքում համակարգերի հարմարվողականության, այսինքն՝ հիմնական չափանիշների պահպանման գործընթացը և արդյունքը: Առանձնացվում են հարմարման ֆիզիոլոգիական, կենսաբանական, հոգեբանական, սոցիալական մակարդակները:

Մոնիթորինգ – որևէ երևույթի, գործընթացի մշտադիտարկումը՝ ցանկալի արդյունքներին կամ սկզբնական առաջարկություններին համապատասխանելիության բացահայտման նպատակով, այս կամ այն ամբողջական համակարգի, գործընթացի, երևույթի ախտորոշիչ դիտումների, վերլուծական գնահատումների և վիճակների

ու զարգացումների կանխատեսումների ամբողջությունը:

3.3.

Էթիկական կոդեքս – հասարակական կամ մասնագիտական խմբի բարոյական կոդեքսը, վարքային, էթիկական նորմերի, սկզբունքների, պահանջների ու կարգադրությունների հանրագումարը:

Էթիկական վարքագիծ – էթիկական կոդեքսին համապատասխան վարքը:

Սովորույթներ – կարծրատիպային վարքի համախմբությունը, որը վերարտադրվում է որոշակի հասարակության մեջ, սոցիալական խմբում և սովորական ու ընդունելի է համարվում սոցիումի բոլոր անդամների կողմից:

Ինտուիցիա – Մտածողության հատուկ տեսակ, յուրահատուկ մտածական գործընթաց, որը բերում է խնդրի լուծման հայտնաբերմանը՝ հենվելով որոնման այնպիսի կողմնորոշիչների վրա, որոնք կապված չեն տրամաբանորեն կամ բավարար չեն տրամաբանական եզրահանգման համար: Ինտուիցիան ճշմարտության բացահայտումն է անմիջական մտահայեցողությամբ:

Ռեֆլեքսիա – իմացության ձև, մտածողության սկզբունք: Ինքնավերլուծության, ինքնահասկացման, քննադատական ինքնագնահատման, ինքնության՝ սեփական գործողությունների, վարքի, խոսքի, փորձի, հարաբերությունների, զգացմունքների, հոգեվիճակների, ընդունակությունների, անձնային որակների, արժեքային կողմնորոշումների գիտակցման գործընթացը: Հասկացական, գործընթացային և գործառութային տեսանկյուններից ռեֆլեքսիան կապված է ինքնադիտման, ներհայեցողության, ինքնագիտակցության հետ:

Էմպաթիա – ապրումակցում, հուզական արձագանք: Մարդու ընդունակությունն է՝ նույնականացնելու սեփական «ես» կերպարի

տարբեր հատվածներն «ուրիշի» երևակայական կերպարի հետ, ապրելու, զգալու, մտածելու և գնահատելու այնպես, ինչպես «ուրիշը»: Էմպաթիան իռացիոնալ ներթափանցումն է «ուրիշի» ներաշխարհ, անհրաժեշտ պայմանն է խորաթափանցության մասնագիտական որակի զարգացման համար:

3.4.

Սոցիալական դեր – անձի նորմատիվային, հարաբերականորեն կայուն, սպասվող վարքը՝ որոշակի սոցիալական դիրքում որպես պարտականությունների և իրավունքների իրացում: Սոցիալական դերը սոցիալական կարգավիճակի շարժուն կողմն է:

Սոցիալական ինստիտուտ – սոցիալական կյանքի կազմակերպման հարաբերականորեն կայուն ձև, որն ապահովում է հասարակական կապերի և հարաբերությունների կայունությունը: Սոցիալական ինստիտուտի կարևոր գործառույթների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում մարդկանց գործողությունների ու հետաքրքրությունների ներառման և սոցիալական վերահսկողության իրականացման գործառույթները:

Իրավաբանական օգնություն – աջակցություն մարդուն և քաղաքացուն՝ իրացնելու իր հիմնարար իրավունքներն ու ազատությունները, կազմակերպությունների համար պահպանելու գործունեության օրինականությունը:

Հոգեկան առողջություն – մարդու հոգեկանի կայուն և համարժեք գործունեությունը: Համապատասխան «Առողջապահության համաշխարհային կազմակերպություն» (ԱՀԿ) սահմանման՝ բարեկեցության վիճակ է, որի դեպքում մարդը կարող է իրագործել իր ներուժը, հաղթահարել առօրյա սթրեսները, արդյունավետ ու բեղմնավոր աշխատել և ունենալ իր ներդրումը հանրության կյանքում: Առանձնացվում են հոգեկան առողջության հետևյալ չափա-

նիշները՝ անընդհատության, կայունության և նույնականության զգացում, քննադատականություն, համարժեքություն, վարքի ինքնակառավարման, ինքնավերահսկման, կենսագործունեության պլանավորման ընդունակություններ:

Գործառույթ – սոցիալական գործողություններ, որոնք կարգավորվում են որոշակի նորմերով և վերահսկվում են սոցիալական ինստիտուտների կողմից: Անձի և սոցիալական խմբի գործունեության ուղղվածությունը, կանխորոշվածությունը, նշանակությունը, սոցիալական համակարգում իրագործվող դերը, ինչպես նաև սոցիալական գործընթացների փոխադարձ կախվածությունը, որն արտահայտվում է փոփոխականների գործառութայնության մեջ:

Արժեհամակարգ – արժեքային կողմնորոշումների համախմբությունը, անձի աշխարհայացքի կամ խմբային գաղափարաբանության կարևոր բաղադրիչներից մեկը, որն արտահայտում է անձի կամ խմբի նախապատվությունները համամարդկային ընդհանրացված արժեքների հետ հարաբերակցության տեսանկյունից:

3.5.

Մեթոդ – իրականության օբյեկտիվ բացահայտման և յուրացման, իմացության և պրակտիկ գործունեության ուղին, հնարների ու գործառությունների հանրագումարը: Այս կամ այն մեթոդի կիրառումը որոշվում է իմացության և պրակտիկ գործունեության նպատակով, ուսումնասիրության առարկայով և պայմաններով, որոնցում իրականացվում է գործունեությունը:

Մեթոդիկա – կոնկրետ հետազոտության իրականացման համար նախատեսված մեթոդների, միջոցների, տեխնիկական հնարների հանրագումարը, նաև պրակտիկ գործունեության միջոցների հանրագումարը, որը հանգեցնելու է նախապես որոշված արդյունքին: Գիտական իմացության ոլորտում, ի տարբերություն մեթոդի,

մեթոդիկան չունի ստացված արդյունքների տեսական հիմնավորման խնդիր, այլ կենտրոնացած է գլխավորապես հետազոտության տեխնիկական կողմի և հետազոտողի գործողությունների կանոնակարգման վրա:

Մեթոդաբանություն – տեսական և պրակտիկ գործունեության կազմակերպման և իրականացման սկզբունքների ու միջոցների համակարգը և ուսմունքն այդ համակարգի մասին: Մեթոդաբանությունը հետազոտական ընթացակարգերի, տեխնիկաների ու մեթոդների հանրագումարն է, նաև ուսմունքը մեթոդների, ուսումնասիրության միջոցների մասին: Մեթոդաբանությունն արտահայտում է գիտական ուսումնասիրությունների տրամաբանությունը:

Տեխնոլոգիա – օբյեկտի վերամշակման և որակական վերափոխման ուղիների և միջոցների համակարգը: Տեխնոլոգիական գործընթացի էական բնութագրիչը միասնական ծրագրով իրականացվող գործունեության բովանդակության կայուն, կրկնվող, ժամանակի մեջ հաջորդական հերթափոխն է, իսկ հիմքը՝ գործողությունների ալգորիթմը: Տեխնոլոգիական գործընթացի կարևոր բաղադրիչ է գործիքակազմը:

Ալգորիթմ – ճշգրիտ ցուցում գործառությունների հաջորդականության վերաբերյալ, որոնք վերափոխելու են օբյեկտը՝ բերելով այն որոնվող ցանկալի վիճակին: Ալգորիթմը խնդրի լուծման ծրագիրն է, որը ելակետային տվյալներից հանգեցնում է վերջնական արդյունքին: Տիրապետել ճշգրիտ սահմանված խնդրի լուծման ընդհանուր մեթոդին, ըստ էության, նշանակում է գիտենալ ալգորիթմը:

Համակարգ – փոխկապակցված բաղադրիչ տարրերի, մասերի հանրագումարը, կառուցվածքային ամբողջությունը, որը կազմակերպված է որոշակի նպատակի համար, և որտեղ տարրերից

յուրաքանչյուրն իր գործառույթն է բերում համակարգային գործառույթի մեջ՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը: Տարրերի միջև օրինաչափ կապերի և հարաբերությունների հանրագումարն էլ ներկայացնում է համակարգի կառուցվածքը:

Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիա – սոցիալ-մանկավարժական պրակտիկայի տարբեր ոլորտներում, մասնավորապես կրթության ոլորտում գործողությունների իրականացման ալգորիթմը, մանկավարժական մեթոդների ու հնարների հանրագումարը, որը նպատակային ներգործում է մարդու՝ որպես սոցիումի անդամի, գիտակցության, վարքի ու գործունեության վրա նրա սոցիալականացման, նոր սոցիալական պայմաններին հարմարման գործընթացներում և սոցիալական կողմնորոշման գործունեության տեսակների շրջանակում:

3.6.

Մանկավարժական հիմնախնդիր – մանկավարժական տեսության մեջ և պրակտիկայում օբյեկտիվորեն ծագող խնդիրների համախմբությունը՝ կապված կրթության և դաստիարակության գործընթացների հետ:

Սոցիալական հիմնախնդիր – իրականության մեջ գոյություն ունեցող հակասությունների համախմբությունը, որն ունի զանգվածային բնույթ և վնասում է սոցիալական մեծ խմբերի, սոցիալական ինստիտուտների հետաքրքրությունները, հիմքեր է տալիս անհանգստությունների համար և առաջացնում միջամտության անհրաժեշտություն:

Խոցելի խումբ – խումբը կամ հասարակության հատվածը, որը, համեմատած այլ խմբերի կամ հասարակության մնացած հատվածի հետ, առավել ռիսկային է՝ բռնության, խտրական վերաբերմունքի ենթարկվելու, բնական, տեխնածին աղետների կամ

տնտեսական ճգնաժամերի, կոնֆլիկտների զոհ դառնալու տեսանկյունից (կանայք, երեխաներ, ծերեր):

Կամավորական գործունեություն – անվարձահատույց սոցիալական օգնության, ծառայությունների տրամադրման, հաշմանդամների, հիվանդների ու ծերերի, կյանքի դժվար պայմաններում հայտնված մարդկանց ու խմբերի նկատմամբ խնամակալության պարտականությունների ստանձնումը:

3. 7.

Միջանձնային հարաբերություններ – մարդկանց փոխազդեցություններն իրական խմբերում, հարաբերություններ, որոնք առաջ են գալիս համատեղ գործունեության և հաղորդակցման ընթացքում: Միջանձնային հարաբերությունների բնույթը հիմնականում պայմանավորված է ներգրավված կողմերի անձնային որակներով, արժեքային կողմնորոշումներով, մոտիվացիայով և այլն:

Սոցիալական համակարգ – սոցիալական տարբեր բաղադրիչներից (կապեր ու հարաբերություններ, փոխազդեցություններ, նորմեր, սոցիալական կառուցվածքներ և այլն) կազմված միասնական, ամբողջական կազմավորում՝ իր յուրօրինակ կառուցվածքով:

Մոդել – իմացության գործընթացում կամ պրակտիկայում բնօրինակի փոխանորդը, որևէ օբյեկտի, գործընթացի կամ երևույթի մտածական, պայմանական կերպարը, նմանօրինակը, որը խորհրդանշական ձևով վերարտադրում է դրանց հիմնական տիպական հատկանիշները, նաև որևէ կառուցվածքի, վարքի տեսակի, սոցիալական պրակտիկայում փոխազդեցությունների ձևերի խորհրդանշական պատկերը, ինչպես նաև ընդօրինակման նմուշ:

Խորհրդատվություն – մասնագետի կողմից անձին կամ օգնության տրամադրման տեխնոլոգիա, այս կամ այն հիմնախնդրի, գործընթացի վերլուծությունը, մեկնաբանությունն ու գնա-

հատումը, տեղեկատվության տրամադրումը և սրա հիման վրա խորհրդի մատուցումը՝ հնարավոր զարգացումների ու արդյունավետ ելքերի, վարքի անհրաժեշտ ձևերի վերաբերյալ, ինչպես նաև որոշումների կայացման և իրագործման ընթացքում խորհրդառուին աջակցումն ու սատարումը:

3.8.

Սոցիալական միջավայր – անհատի, խմբի կամ սոցիալական խավի գոյության, ձևավորման և կենսագործունեության հասարակական, նյութական ու հոգևոր պայմանները: Լայն իմաստով սոցիալական միջավայրն (մակրոմիջավար) ընդգրկում է հասարակական-քաղաքական համակարգը, հասարակական հարաբերությունների և ինստիտուտների հանրագումարը, հասարակական գիտակցությունն ու մշակույթը, նեղ իմաստով՝ մարդու անմիջական շրջապատը (ընտանիք, տարբեր խմբեր, աշխատանքային միջավայր):

Համայնք – սոցիալական կազմակերպվածության ձև՝ ընդհանուր ենթակառուցվածքներով և համայնքային հարաբերությունների համախմբությամբ՝ որպես անհատի սոցիալ-մշակութային միջավայր, մարդկանց մեծ խումբ, որոնք ապրում են նույն տարածքում, միավորված են ընդհանուր շահերով, պահանջմունքներով ու հիմնախնդիրներով:

Երեխաների պաշտպանություն – երեխաների իրավունքների, սոցիալական պաշտպանության գործողությունների համալիր՝ ընդդեմ ինստիտուցիոնալ բռնություններին (հիմնականում հոգեբանական և ֆիզիկական), երեխաների շահագործմանն ու անտեսմանը և ուղղված հանրային խնամքի ծառայությունների, երեխաներին սոցիալական օժանդակության տրամադրմանը, ինչպես նաև հաշմանդամ, վտանգի ենթակա և օրինազանց երեխաներին հասարակության մեջ վերստին ներառելուն:

Մանկավարժական կոլեկտիվ –միմյանց հետ աշխատող մանկավարժների խումբ, որն ունի ընդհանուր նպատակներ, որոնց իրականացումն այդ անդամների համար անձնական նշանակություն ունի և իրացնելով միջանձնային փոխհարաբերությունների ու փոխգործակցության գործընթացը՝ նպաստում է ընդհանուր նպատակների իրագործմանը: Մանկավարժական կոլեկտիվը համարվում է սոցիալական խմբի տարատեսակ, որտեղ միջանձնային հարաբերությունները կազմվում են հասարակական և անձնական հետաքրքրությունների ներդաշնակության հիման վրա:

3.9.

Խնամակալություն– անմեղսունակ մարդկանց, ծնողական հոգածությունից զրկված մանկահասակ երեխաների անձնային և գույքային իրավունքների, շահերի պաշտպանության ձև, որը սահմանվում է 15 տարեկանը չլրացած երեխաների, ինչպես նաև հոգեկան հիվանդության, որևէ այլ բնույթի տկարության հետևանքով կամ դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ:

Հոգաբարձություն –սահմանվում է 15-18 տարեկան անչափահասների, նաև չափահաս գործունակ անձանց նկատմամբ, եթե նրանք իրենց առողջական վիճակով չեն կարող ինքնուրույն կերպով իրագործել իրենց իրավունքն ու կատարել իրենց պարտականությունները: «Խնամակալություն» և «հոգաբարձություն» հասկացությունները նույնական են՝ որպես ընտանեկան դաստիարակության ձևեր:

Որդեգրություն – ծնողական հոգածությունից զրկված անչափահաս երեխաների խնամքի և դաստիարակության ստանձնումը, երբ որդեգիր ծնողի (ծնողների) և որդեգրվող երեխայի միջև հաստատվում են իրավական (անձնային և գույքային) հարաբերություն-

ներ, ինչպես կենսաբանական ծնողների պարագայում:

Սոցիալական խնամք – սոցիալական օգնության և աջակցության տրամադրումը խոցելի մարդկանց ու խմբերին՝ նրանց համար կենսագործունեության և զարգացման համար առավել արդյունավետ, բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

Հատուկ հաստատություն – այն նախատեսված է հոգեֆիզիկական զարգացման անկանոնություններով (անոմալիաներով) կամ վարքային շեղումներով երեխաների, դեռահասների ու մեծահասակների համար, որոնք ապահովում են բժշկահոգեբանական, սոցիալ-հոգեբանական վերականգնում, դաստիարակություն, կրթություն և մասնագիտական պատրաստություն, սոցիալական հարմարում և աջակցություն՝ ուղղված ընդհանուր առողջացմանը, վարքի շտկմանն ու անձի զարգացմանը:

3.10.

Երեխա – անհատ, սոցիալ-ժողովրդագրական խումբ մինչև չափահասություն (մինչև 18 տարեկան հասակը), որն ունի հատուկ պահանջմունքներ, հետաքրքրություններ, իրավունքներ, տարիքային, սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ: Երեխաները լիովին կախված են այն պայմաններից, որոնք առաջադրված են հասարակության, պետության կողմից և գործում են միկրոսոցիալական միջավայրում (ընտանիք, դպրոց): Իրավունքի տեսանկյունից հաշվի առնելով մեղսունակության հանգամանքը՝ առանձնացվում են մանկահասակ երեխաներն ու անչափահասները:

Դեռահասություն – անհատական զարգացման շրջան (10-11 մինչև 15 տարեկան), որն ընդգրկում է անցումը մանկությունից պատանեկություն: Դեռահասությունը օնտոգենեզի ծայրահեղ շրջաններից է և բնութագրվում է սեռական հասունացման շրջանակում օրգանիզմի բուռն հոգեֆիզիոլոգիական զարգացմամբ: Դեռահաս-

ների զարգացման սոցիալական իրադրության փոփոխությունը կապված է մեծահասակների աշխարհին հաղորդակից լինելու ակտիվ ձգտումների, դեպի այդ աշխարհի նորմերն ու արժեքները վարքի կողմնորոշման հետ: Դեռահասություն նորագոյացությունը հասունության զգացումն է, ինքնագիտակցության և ինքնագնահատականի զարգացումը, հետաքրքրությունը սեփական անձի, անձնային որակների, ընդունակությունների նկատմամբ: Դեռահասությունն ու պատանեկությունն ես-ի նույնականացման (էգո-իդենտիկության) հաստատման շրջաններն են:

Պատանեկություն – անհատական զարգացման շրջան, որն ընդգրկում է անցումը դեռահասությունից երիտասարդություն: Ժամանակագրական առումով առանձնացվում են վաղ պատանեկությունը (ավագ դպրոցական տարիք)՝ 15-17,18 տարեկան, և ուշ կամ բուն պատանեկությունը՝ մինչև 20, 21 տարեկան: Պատանեկության հոգեբանական բովանդակությունը կապված է ինքնագիտակցության զարգացման, ինքնորոշման, սոցիալական ինքնության ծավալման, մասնագիտական կողմնորոշման հետ: Պատանեկության շրջանում վերջնականապես հաղթահարվում է կախվածությունը մեծահասակներից, և ամրապնդվում է ինքնուրույն անձը: Պատանեկությունը բարոյական գիտակցության, արժեքային կողմնորոշումների, իդեալների, կայուն աշխարհայացքի, անձի քաղաքացիական ինքնության հաստատման շրջանն է:

Կոնֆլիկտ – ընդդիմադիր կողմերի, փոխազդեցության սուբյեկտների հակադիր ուղղվածության նպատակների, դիրքերի, հետաքրքրությունների, հայացքների ու տեսակետների բախումը՝ որպես մարդկանց և սոցիալական ինստիտուտների միջև հակադրությունների զարգացման բարձրագույն շրջափուլ: Կոնֆլիկտային իրավիճակն ունի իր սուբյեկտներն ու օբյեկտը: Փոխազդե-

ցության կողմ կարող են հանդես գալ ինչպես առանձին անձը (ներանձնային կոնֆլիկտ), այնպես էլ երկու և ավելի կողմեր (միջանձնային կոֆլիկտ): Կոնֆլիկտային իրավիճակներից կախված՝ կարելի է տարբերակել կոնֆլիկտների միջխմբային, միջպետական, ազգամիջյան և այլ ձևերը:

Տարիքային ճգնաժամ – անհատական զարգացման հատուկ, ժամանակային առումով ոչ տևական շրջաններ, որոնք բնութագրվում են հոգեբանական բուռն, կտրուկ փոփոխություններով: Ի տարբերություն տրավմատիկ, սոցիալական կամ այլ բնույթի ճգնաժամերի՝ տարիքային ճգնաժամերը գնահատվում են որպես նորմատիվային գործընթացներ, որոնք անհրաժեշտ են անձի նորմալ առաջընթացի, զարգացման համար: Տարիքային ճգնաժամերը դրսևորվում են տարիքային մեկ շրջափուլից մյուսին անցման ժամանակ և կապված են զարգացման սոցիալական իրադրության բոլոր բաղադրիչների համակարգային, որակական ձևափոխությունների հետ:

Խոցելիություն – այն վիճակը, երբ տարբեր կարողությունների սահմանափակության պատճառով կամ որոշակի սոցիալական պայմաններ առաջանալու հետևանքով մարդկանց և խմբերի պահանջմունքների բավարարումը վտանգվում է:

3.11.

Ներառական կրթություն – սահմանափակ կարողություններով անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումը հանրակրթական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ:

Հենաշարժական համակարգ – ոսկորների, կմախքի, մկանային-մարմնական համակարգի գործառութային հանրագումարը,

որը նյարդային կարգավորման միջոցով իրականացնում է շարժումներ, դիրքի, դիմախաղի, շարժողական այլ գործողությունների ապահովում և այլ օրգան համակարգերի հետ միասին կազմում է մարդու մարմինը: Համարժեքորեն կիրառվում են նաև «կմախքամկանային» կամ «շարժողական համակարգեր» հասկացությունները:

3.12.

Շեղվող վարք – մարդու այն սոցիալական գործողությունները, արարքները, գործունեությունը, որոնք ոչ թե համապատասխանում, այլ հակասում են տվյալ հասարակության մեջ ընդունված և գործածվող վարքի նորմերին:

Օժտվածություն – մարդու բնածին առանձնահատկությունների ամբողջությունը, որը նախադրյալ է ընդունակությունների զարգացման համար: Տարբերում են ընդհանուր օժտվածություն (որպես անձի բանականության ընդհանուր զարգացման նախադրյալ) և մասնավոր օժտվածություն (հատուկ՝ մաթեմատիկական, երաժշտական և այլ ընդունակությունների զարգացման նախադրյալները): Արտակարգ օժտվածությունը նախապայման է տաղանդի և հանճարի զարգացման համար:

Հոգեկան հատկություններ – անձի այն առանձնահատկությունները, որոնք բնութագրում են մտքի որակը, հուզական և կամային ոլորտները, խառնվածքը, ընդունակությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անտոնյան Մ., Գմյուր-Կարապետյան Ա., Դուրյան Ն., Երեխաների պաշտպանություն: Ուսումնաօժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար (խմբագիր՝ Հարությունյան Ա.), Եր., 2009:
2. Արևելքի ժողովուրդների առածներ և ասացվածքներ, Եր., 1969:
3. Երեխաների պաշտպանության համակարգը Հայաստանում, Տեղեկագիրք, Եր., 2009:
4. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում: Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Եր., 2003:
5. Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին: Ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1989 թ. նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով և ուժի մեջ է մտել 1990 թ. սեպտեմբերի 2-ին՝ համաձայն 49-րդ հոդվածի
6. Կրավչենկո Ա. Ի., Սոցիոլոգիա: Դասագիրք: Ռուսերենից թարգմանեց Վ. Աբրահամյանը, Եր., 2004:
7. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ /Հովհաննիսյան Ա. և ուրիշներ, Եր., 2006:
8. Համեմատական մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ / Հարությունյան Ա., Եր., 2011:
9. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004 թ.:
10. ՀՀ Սահմանադրություն: Հոդված 35: Ընդունվել է 06.12.2015 թ.:
11. ՀՀ օրենքը զբաղվածության մասին: Ընդունվել է 11.12.2013 թ.:
12. Հովհաննիսյան Տ., Հանրակրթության հիմնախնդիրները և պետական կրթակարգը, «Մանկավարժական միտք», Եր., 1-2, 2006:
13. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար (խմբագիր՝ Հ. Մ. Մախչանյան), Եր., 1997:
14. Մարդու իրավունքներ: Դասագիրք 8-րդ դաս. համար /Ստեփանյան Հ. Մ., Հարությունյան Ն. Կ., Եր., 2001:
15. Պետրունեկ Վ. Պ., Տառան Լ. Ն., Տագնապային տարիք, Եր., 1975:

16. Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի, Խրատի թանգարան, Էջմիածին, 2004:
17. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն (խմբագիր՝ Ա. Վ. Պետրովսկի), Եր., 1997:
18. Аксенова Л. И., Социальная педагогика в специальном образовании, М., 2001.
19. Аристотель, О возникновении животных. Перевод с греческого. Вступительная статья и примечания В. П. Карпова, М.-Л., 1940.
20. Бочарова В. Г., Битинас Б. П., Социальное воспитание учащихся // Опыт разработки концепций воспитания: Ч. 1, Ростов-на-Дону, 1993.
21. Василькова Ю. В., Василькова Т. А., Социальная педагогика, М., 1999.
22. Василькова Т. А., Василькова Ю. В., Социальная педагогика, М., 2010.
23. Василькова Ю. В., Социальная педагогика: Курс лекций. Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений, М., 2004.
24. Галагузова М. А. и др., Социальная педагогика, М., 2000.
25. Галагузова М. А., Штинова Г. Н., Социальная педагогика, М., 2000.
26. Галагузова М. А., Социальная педагогика: Курс лекций, М., 1999.
27. Галагузова М. А., Социальная педагогика: Курс лекций, М., 2003.
28. Галтон Г. Г., Описание наследственности признаков, М., 2004.
29. Гиддингс Ф. Г., Основания социологии. Анализ явлений ассоц. и соц. орг. / Пер. с англ. Спиридонова Н. Н., М., 1898.
30. Гилинский Я. И., Стадии социализации индивида /Человек и обществ/, Л., 1971.
31. Гиппократ, О природе человека, М., 2010.
32. Кон И. С., Социология личности, М., 1967.
33. Конвергенция биологических, информационных, нано- и когнитивных технологий: вызов философии. Вопросы философии, № 12, Декабрь, 2012.

34. Кули Ч. Х., Человеческая природа и социальный порядок / Пер. с англ., под ред. А. Б. Толстова, М., 2000.
35. Лихачев Б. Т., Проблемы индивидуальных особенностей, М., 2001.
36. Мардахаев Л. В., Социальная педагогика: Учебник, М., 2003.
37. Мардахаев Л. В., Социальная педагогика: Учебник, М., 2005.
38. Мардахаев Л. Б., Социальная педагогика, М., 2008.
39. Методика и технологии работы социального педагога: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений /Алмазов Б. Н., Беляева М. А., Бессонова Н. Н. и др., под ред. Галагузовой М. А., Мардахаев Л. В., М., 2006.
40. Мид Дж. Г., Избранное: Сб. переводов, Сост. и переводчик Николаев В. Г., отв. ред. Ефременко Д. В., М., 2009.
41. Мудрик А. В., Социальная педагогика, М., 1999.
42. Мудрик А. В., Социальная педагогика: Учеб. для студ. пед. вузов / Под. ред. Сластенина В. А., М., 2000.
43. Мудрик А. В., Социализация, Магистр., 1993, N3.
44. Мудрик А. В., Социализация человека. Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М., 2004.
45. Мудрик А. В., Введение в специальную педагогику, М., 1997.
46. Мудрик А. В., Социализация // Российская педагогическая энциклопедия в 2 т., т. 2, М., 1999.
47. Мустаева Ф. А., Основы социальной педагогики, М., 2001.
48. Никитина Л. Е., Социальная педагогика. Учеб. пособие для вузов, М., 2003.
49. Обухова Л. Ф., Детская психология: теории, факты, проблемы, М., 1998.
50. Овчарова Р. А., Справочная книга социального педагогика, М., 2002.
51. Розанова Б. А., Психология управления, М., 2009.
52. Семенов В. Д., Взаимодействие школы и социальное среды, М., 1986.

53. Сластенин В. А., Социальная педагогика и социальная работа, Тула, 1992.
54. Социальная педагогика: Курс лекций /Под. общей ред. М. В. Галагузовой, М., 2000.
55. Социальная педагогика: Учеб. для студ. высш. учеб. заведений / Под. ред. Никитина В. А., М., 2000.
56. Суворов А. В., Школа взаимной человечности, М., 1995.
57. Теплов Б. М., Проблемы индивидуальных различий. М., 1961.
58. Фрадкин Ф. А., Малинин Г. А., Воспитательная система С. Т. Шацкого, М., 1993.
59. Шацкий С. Т., Избранные педагогические сочинения, в 2 т., М., 1980.
60. Шацкий С. Т., Школа для детей или дети для школы // Педагогические сочетания, М., 1964.
61. Шептенко П.А., Воронина Г. А., Методика и технология работы социального педагога: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений/ Под. ред. Сластенина В. А., 2002.
62. Штинова Г. Н., Галагузова М. А., Социальная педагогика, М., 2008.
63. http://azps.ru/articles/age/teoriya_konvergencii_v_schterna.html

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ 8
1.1. Սոցիալական մանկավարժությունը որպես գիտություն. օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը: 8
1.2 Սոցիալական մանկավարժության պատմության համառոտ ակնարկ.....19
1.3. Սոցիալական մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում. կապն այլ գիտությունների հետ.....27
1.4. Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունները.....31
1.5. Սոցիալական մանկավարժության սկզբունքները 39
1.6. Սոցիալական մանկավարժության գործառույթները 50
1.7. Սոցիալական մանկավարժության մեթոդները..... 53
1.8. «Նորմեր» և «շեղում նորմերից» հասկացությունները սոցիալական մանկավարժության մեջ.....71
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ. ՄԱՐԴՈՒ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 81
2.1.Սոցիալականացումը որպես սոցիալական մանկավարժության գլխավոր հիմնախնդիր 81
2.2. Սոցիալականացման գործոնները..... 90
2.2.1. Կենսաբանական գործոններ.....91
2.2.2. Սոցիալական գործոններ.....102
2.3. Սոցիալականացման փուլերը.....120
2.3.1. Սոցիալականացման փուլերն ըստ մարդու աշխատունակության.....131

2.4. Մարդը սոցիալականացման գործընթացում 153
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 164
3.1. «Սոցիալական մանկավարժ» մասնագիտության
բնութագիրը..... 164
3.2. Սոցիալ-մանկավարժական գործընթացի էությունն
ու բովանդակությունը 171
3.3. Սոցիալական մանկավարժի մասնագիտական որակներն ու
պաշտոնային պարտականությունները 183
3.4. Սոցիալական մանկավարժի գործառույթները և դերերը..... 193
3.5. Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկան և
տեխնոլոգիաները 201
3.6. Սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները 220
3.7. Սոցիալական մանկավարժի աշխատանքն
ընտանիքի հետ..... 226
3.8. Սոցիալական մանկավարժի աշխատանքը
հանրակրթական դպրոցում 242
3.9. Սոցիալական մանկավարժի աշխատանքի
առանձնահատկությունները հատուկ և այլընտրանքային խնամքի
հաստատություններում 255
3.10. Սոցիալական մանկավարժի աշխատանքը
դեռահասների և պատանիների հետ 266
3. 11. Սոցիալական մանկավարժի աշխատանքը
սահմանափակ կարողություններով երեխաների հետ 278
3.12. Սոցիալական մանկավարժի աշխատանքն
օժտված երեխաների հետ 295
ԲԱՌԱՐԱՆ 308
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 329

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Կ., ՂԱՋԱՐՅԱՆ Ա. Փ.,
ՂՈՒԿԱՍՅԱՆ Լ. Հ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

(ԲՈՒՀԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 23.06.2017:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 21:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am